

ՎԱՐԴԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
2015 Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀԱՄԱՌՈՏ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 342.4  
ԳՄԴ 67.400.1  
Հ 247

Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը.-  
Հ 247 Եր.: Տիգրան Մեծ, 2016 - 448 էջ:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը (GIZ) զարգացող երկրների հետ իրականացվող համագործակցության համար ամբողջ աշխարհում ծառայություններ մատուցող ձեռնարկություն է: Որպես Գերմանիայի Դաշնային Հանրապետության մասնավոր տնտեսական կազմակերպություն՝ GIZ-ն իր գործունեությամբ հետապնդում է Հարավի և Արևելքի երկրներում մարդկանց կենսապայմանները տևականորեն բարելավելու և կյանքի բնական հիմքերը պահպանելու՝ զարգացող երկրների աջակցությանն ուղղված քաղաքական նպատակ:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության հանձնարարությամբ դատաիրավական բարեփոխումներին նպաստող մի քանի ծրագրեր է իրականացնում Հարավային Կովկասի երկրներում: Այդ ծրագրերի շրջանակում այս երկրներ են գործուղվում միջազգային երկարաժամկետ և կարճաժամկետ փորձագետներ, որոնք ի թիվս այլ միջոցառումների խորհրդատվություն և որակավորման բարձրացման միջոցառումներ են իրականացնում: Բացի այդ՝ Ընկերությունը օժանդակում է նոր օրենքների կիրառման վերաբերյալ տեղացի փորձագետների աշխատանքների հրատարակմանը:

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH ist ein weltweit tätiges Dienstleistungsunternehmen für Entwicklungszusammenarbeit. Sie arbeitet als privatwirtschaftlich organisiertes Unternehmen der Bundesrepublik Deutschland für das entwicklungspolitische Ziel, die Lebensbedingungen der Menschen in den Ländern des Südens und Ostens nachhaltig zu verbessern und die natürlichen Lebensgrundlagen zu erhalten.

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH führt im Auftrag des deutschen Bundesministeriums für wirtschaftliche Zusammenarbeit und Entwicklung (BMZ) in den Ländern des südlichen Kaukasus mehrere Projekte zur Unterstützung der Rechts- und Justizreformen durch. Im Rahmen dieser Projekte werden internationale Lang- und Kurzzeitexperten eingesetzt, die unter anderem beratende Tätigkeiten ausüben und Fortbildungsveranstaltungen durchführen. Weiter werden Publikationen von lokalen Experten zur Anwendung der neuen Gesetze unterstützt.

ՀՏԴ 342.4  
ԳՄԴ 67.400.1

© Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH, 2016 Hrsg.:

giz  
Programm:  
Rechtliche Annäherung an europäische Standards im Südkaukasus  
Baghramyan Str. 4/1  
0009 Jerewan, Armenien  
T+374 10 540981  
F +374 10 569496  
E [lusine.baghdasaryan@giz.de](mailto:lusine.baghdasaryan@giz.de)  
[www.giz.de](http://www.giz.de)

ISBN 978-99941-0-772-8



german  
cooperation

DEUTSCHE ZUSAMMENARBEIT

implemented by

giz Deutsche Gesellschaft  
für Internationale  
Zusammenarbeit (GIZ) GmbH

## ՆԱԽԱԲԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի միջոցով ընդունվեց սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որով ինչպես բովանդակային, այնպես էլ ծավալային առումով նշանակալից փոփոխություններ կատարվեցին Սահմանադրության մեջ: Դժվար է թերագնահատել այդ բարեփոխումների հետագա դերը Հայաստանի Հանրապետության ցանկացած քաղաքացու ճակատագրում ինչպես հայրենիքում, այնպես էլ դրանից դուրս: Սահմանադրական փոփոխությունների ընդգրկուն բնույթը ստեղծում է հասարակության հնարավորինս լայն շրջանակին Սահմանադրության էությունն ու իմաստը պարզաբանելու հրամայական: Ոչ մասնագետ քաղաքացու մոտ կարող է ձևավորվել կարծիք, որ Սահմանադրության նորմերը չափազանց պարզ ու հասկանալի են և մեկնաբանման ու պարզաբանման կարիք չունեն: Այնինչ սահմանադրական նորմերը, լինելով չափազանց համառոտ և ընդգրկուն, ունեն իրենց խորը փիլիսոփայական ու աշխարհայացքային արմատները, որոնք առաջին հայացքից կարող են ակնառու չլինել: Այդ իսկ պատճառով այս հրապարակումը նպատակ ունի յուրաքանչյուր քաղաքացու տեղեկացնելու այն փոփոխությունների մասին, որոնք կատարվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում:

Փոփոխված Սահմանադրությունը մատչելի դարձնելու համար, փոփոխությունների հակիրճ պարզաբանումներից զատ, ընթերցողին են ներկայացվում Սահմանադրության տեքստը, Սահմանադրության 2015 և 2005 թթ. խմբագրությունների համադրումը՝ համեմատական աղյուսակի տեսքով, ինչպես նաև Սահմանադրության դրույթների առարկայական ցանկը, ինչը կոչուրացնի Սահմանադրության համապատասխան դրույթների որոնումն ու դրանցից օգտվելը:

Պարզաբանումների նպատակն է համեմատական վերլուծության ենթարկել Սահմանադրության նոր և փոփոխված դրույթները ու հնարավորինս հանրամատչելի ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Սահմանադրական փոփոխությունների պարզաբանումները բաղկացած են երկու մասից: Առաջին մասում հակիրճ անդրադարձ է արվում սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությանը, այսինքն՝ այն թերություններին ու բացերին, որոնք առկա էին Հայաստանի Հանրապետության 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ և կարող էին հաղթահարվել միայն սահմանադրական փոփոխությունների ճանապարհով: Ներկայացվում են նաև սահմանադրական փոփոխությունների գործընթացը և ժամանակագրությունը:

Երկրորդ մասը նվիրված է 2005 թ. և 2015 թ. խմբագրություններով Սահմանադրության բոլոր գլուխների փոփոխությունների համեմատական վերլուծությանը: Հաշվի առնելով սահմանադրական կարգի և հիմնական իրավունքների վերաբերյալ Սահմանադրության առաջին երկու գլուխների հատուկ կարևորու-

թյունը՝ այդ գլխում կատարված փոփոխությունները ներկայացված են հոդված առ հոդված: Վերլուծությունը, որպես կանոն, չի անդրադառնում նորմերի բովանդակության ընդհանուր մեկնաբանմանը, եթե դրանք չեն փոփոխվել:

Հուսով ենք, որ այս գիրքը կօգնի յուրաքանչյուր քաղաքացու լինելու իրազեկված սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ, ճիշտ գնահատելու դրանց բովանդակությունը, ինչը կնպաստի երկրում սահմանադրականության արմատավորմանը, հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության ապահովմանը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գիրքը պատրաստվել է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ջանքերով, որը դեռևս 2001 թվականից լայնածավալ խորհրդատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետությանը սահմանադրական բարեփոխումների գործընթացում:

Եղի՛նակներն իրենց երախտագիտությունն են հայտնում Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի փորձագետներ Հրաչիկ Յարմալոյանին, Անի Չիլինգարյանին և Կարինե Կանտունիին՝ գիրքը կազմելիս ցուցաբերած աջակցության և արժեքավոր դիտարկումների համար:

### **Վարդան Պողոսյան**

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի ղեկավար Հայաստանում,

Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ (2013-2015 թթ.)

### **Նորա Սարգսյան**

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի իրավախորհրդատու, իրավաբանական գիտությունների թեկնածու

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>I. 2015 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ</b> .....	17
1. Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը .....	17
2. Սահմանադրական փոփոխությունների գործընթացը .....	20
<b>II. 2015 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	23
1. Սահմանադրության կառուցվածքը .....	23
2. Սահմանադրության նախաբանը .....	24
3. Սահմանադրական կարգի հիմունքները .....	24
3.1. Սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը և դերը .....	24
3.2. Սահմանադրության 1-ին գլխի փոփոխությունների համառոտ վերլուծությունը .....	25
Հոդվածներ 1 և 2 .....	25
Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները .....	26
Հոդված 4. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը .....	28
Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը .....	28
Հոդված 6. Օրինականության սկզբունքը .....	29
Հոդված 7. Ընտրական իրավունքի սկզբունքները .....	30
Հոդված 8. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը .....	31
Հոդված 9. Տեղական ինքնակառավարման երաշխավորումը .....	31
Հոդված 10. Սեփականության երաշխավորումը .....	31
Հոդված 11. Տնտեսական կարգը .....	31
Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը .....	32
Հոդված 13. Արտաքին քաղաքականությունը .....	33
Հոդված 14. Զինված ուժերը և պաշտպանությունը .....	33
Հոդված 15. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը .....	34
Հոդված 16. Ընտանիքի պաշտպանությունը .....	34
Հոդված 17. Պետությունը և կրոնական կազմակերպությունները .....	34
Հոդված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին .....	34
Հոդված 19. Հայկական սփյուռքի հետ կապերը .....	35
Հոդված 20. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն .....	35
Հոդված 21. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերը .....	35
Հոդված 22. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը .....	35
4. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները .....	35
4.1. Իրավիճակը 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո .....	35

4.2. 2015 թ. սահմանադրական բարեփոխումների ընդհանուր ընդգրկումը .....	36
4.2.1. Հիմնական իրավունքները՝ որպես օբյեկտիվ իրավունք և սուբյեկտիվ իրավունքներ .....	37
4.2.2. Անմիջականորեն գործող իրավունքների սահմանազատումը օրենսդրական երաշխիքներից ու պետության նպատակներից .....	39
4.2.3. Նոր հիմնական իրավունքների ամրագրումը.....	43
4.2.4. Հիմնական իրավունքների սահմանափակումները և դրանց ներկայացվող պահանջները .....	44
4.2.5. Սահմանադրության 2-րդ գլխի սիստեմատիկան .....	45
4.3. Սահմանադրության 2-րդ գլխի փոփոխությունների համառոտ վերլուծությունը .....	47
Հոդված 23. Մարդու արժանապատվությունը .....	47
Հոդված 24. Կյանքի իրավունքը .....	47
Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը .....	48
Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը.....	49
Հոդված 27. Անձնական ազատությունը.....	50
Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը.....	51
Հոդված 29. Խտրականության արգելքը.....	52
Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը .....	52
Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը .....	52
Հոդված 32. Բնակարանի անձեռնմխելիությունը .....	53
Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը .....	53
Հոդված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը .....	54
Հոդված 35. Ամուսնանալու ազատությունը .....	55
Հոդված 36. Ծնողների իրավունքները և պարտականությունները.....	55
Հոդված 37. Երեխայի իրավունքները.....	55
Հոդված 38. Կրթության իրավունքը.....	56
Հոդված 39. Մարդու ազատ գործելու իրավունքը .....	57
Հոդված 40. Ազատ տեղաշարժելու իրավունքը .....	57
Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը.....	57
Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը .....	58
Հոդված 43. Ստեղծագործության ազատությունը.....	59
Հոդված 44. Հավաքների ազատությունը.....	59
Հոդված 45. Միավորումների ազատությունը .....	61
Հոդված 46. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը .....	61
Հոդված 47. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը .....	62
Հոդված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը .....	64
Հոդված 49. Հանրային ծառայության անցնելու իրավունքը .....	65
Հոդված 50. Պատշաճ վարչարարության իրավունքը .....	65
Հոդված 51. Տեղեկություններ ստանալու իրավունքը .....	66

Հոդված 52.	Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը .....	66
Հոդված 53.	Հանրագիր ներկայացնելու իրավունքը.....	67
Հոդված 54.	Քաղաքական ապաստանի իրավունքը .....	67
Հոդված 55.	Արտաքսման կամ հանձնման արգելքը .....	67
Հոդված 56.	Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը .....	67
Հոդված 57.	Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները.....	68
Հոդված 58.	Գործադուլի իրավունքը .....	69
Հոդված 59.	Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը .....	69
Հոդված 60.	Սեփականության իրավունքը .....	70
Հոդված 61.	Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը .....	73
Հոդված 62.	Վնասի հատուցման իրավունքը .....	74
Հոդված 63.	Արդար դատաքննության իրավունքը .....	74
Հոդված 64.	Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը.....	76
Հոդված 65.	Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը .....	77
Հոդված 66.	Անմեղության կանխավարկածը .....	77
Հոդված 67.	Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը .....	78
Հոդված 68.	Կրկին դատվելու արգելքը.....	78
Հոդված 69.	Դատապարտվածի բողոքարկման իրավունքը .....	79
Հոդված 70.	Ներման խնդրանքի իրավունքը.....	79
Հոդված 71.	Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը.....	79
Հոդված 72.	Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը .....	80
Հոդված 73.	Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը .....	80
Հոդված 74.	Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ.....	80
Հոդված 75.	Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը .....	80
Հոդված 76.	Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ .....	81
Հոդված 77.	Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը .....	81
Հոդված 78.	Համաչափության սկզբունքը.....	82
Հոդված 79.	Որոշակիության սկզբունքը.....	82
Հոդված 80.	Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը.....	83
Հոդված 81.	Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան .....	83
5.	Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները.....	84
6.	Անցումը կառավարման խորհրդարանական համակարգին .....	86

6.1. Կառավարման կիսանախագահական համակարգից հրաժարվելու պատճառները.....	86
6.2. 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված խորհրդարանական կառավարման համակարգի հիմնական գծերը.....	91
6.3. Ազգային ժողովի առանցքային դերը խորհրդարանական կառավարման համակարգում.....	92
6.3.1. Ազգային ժողովի կարգավիճակը և հիմնական գործառույթները.....	93
6.3.2. Պատգամավորի սահմանադրաիրավական դիրքը.....	94
6.3.3. Օրենսդրական գործընթացի բարեփոխումները.....	98
6.3.4. Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների զարգացումը.....	100
6.3.5. Խորհրդարանական փոքրամասնության իրավունքների ընդլայնումը.....	103
6.3.6. Ազգային ժողովի դերակատարումը պետական մարմինների ձևավորման հարցում.....	107
6.3.7. Կայուն մեծամասնության հիմնախնդիրը.....	108
6.3.8. Ազգային ժողովի արձակումը.....	111
6.4. Կառավարությունը.....	112
6.4.1. Կառավարության տեղը գործադիր իշխանության համակարգում.....	112
6.4.2. Կառավարության կազմը և կառուցվածքը.....	113
6.4.3. Կառավարության կազմավորումը.....	114
6.4.4. Կառավարության լիազորությունների դադարումը.....	116
6.4.5. Իրավասությունների բաշխումը Կառավարության մեջ.....	118
6.4.6. Զինված ուժերի ղեկավարումը խորհրդարանական համակարգի պայմաններում.....	124
6.4.7. Վարչապետի ուժեղ դիրքին համարժեք պատասխանատվությունը.....	125
6.5. Հանրապետության նախագահի նոր դերը և լիազորությունները.....	127
7. Դատական իշխանությունը.....	130
7.1. Դատական իշխանության և դատավորի արտաքին և ներքին անկախության երաշխիքների ամրապնդումը.....	130
7.2. Դատական իշխանության ինքնակառավարման արդյունավետության բարձրացումը.....	135
7.3. Սահմանադրական դատարանի կարգավիճակի և լիազորությունների հստակեցումը.....	138
8. Դատախազությունը և քննչական մարմինները.....	140
9. Տեղական ինքնակառավարումը.....	141
10. Մարդու իրավունքների պաշտպանը.....	143
11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը.....	145
12. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը.....	147
13. Հաշվեքննիչ պալատը.....	147
14. Կենտրոնական բանկը.....	148
15. Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն.....	149
16. Եզրափակիչ և անցումային դրույթներ.....	150



**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

**Հայաստանի Հանրապետության Սահմանադրության  
փոփոխություններ.....**

152

**ԳԼՈՒԽ 1**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Հոդված 1. ....	152
Հոդված 2. ....	152
Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները .....	152
Հոդված 4. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը.....	153
Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը .....	153
Հոդված 6. Օրինականության սկզբունքը .....	53
Հոդված 7. Ընտրական իրավունքի սկզբունքները .....	153
Հոդված 8. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը .....	153
Հոդված 9. Տեղական ինքնակառավարման երաշխավորումը .....	154
Հոդված 10. Սեփականության երաշխավորումը .....	154
Հոդված 11. Տնտեսական կարգը .....	154
Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը .....	154
Հոդված 13. Արտաքին քաղաքականությունը .....	154
Հոդված 14. Զինված ուժերը և պաշտպանությունը .....	154
Հոդված 15. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը .....	155
Հոդված 16. Ընտանիքի պաշտպանությունը .....	155
Հոդված 17. Պետությունը և կրոնական կազմակերպությունները .....	155
Հոդված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին .....	155
Հոդված 19. Հայկական սփյուռքի հետ կապերը .....	155
Հոդված 20. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն .....	155
Հոդված 21. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերը .....	156
Հոդված 22. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը.....	156

**ԳԼՈՒԽ 2**

**ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ԵՎ ԱԶՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդված 23. Մարդու արժանապատվությունը .....	156
Հոդված 24. Կյանքի իրավունքը .....	156
Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը .....	156
Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը .....	157
Հոդված 27. Անձնական ազատությունը .....	157
Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը .....	158
Հոդված 29. Խտրականության արգելքը .....	158
Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը .....	158
Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը .....	158

Հոդված 32.	Բնակարանի անձեռնմխելիությունը .....	158
Հոդված 33.	Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը .....	159
Հոդված 34.	Անձնական տվյալների պաշտպանությունը .....	159
Հոդված 35.	Ամուսնանալու ազատությունը .....	159
Հոդված 36.	Ծնողների իրավունքները և պարտականությունները .....	160
Հոդված 37.	Երեխայի իրավունքները .....	160
Հոդված 38.	Կրթության իրավունքը .....	160
Հոդված 39.	Մարդու ազատ գործելու իրավունքը .....	160
Հոդված 40.	Ազատ տեղաշարժվելու իրավունքը .....	161
Հոդված 41.	Մտքի, խղճի և կրոնի ազատությունը .....	161
Հոդված 42.	Կարծիքի արտահայտման ազատությունը .....	161
Հոդված 43.	Ստեղծագործության ազատությունը .....	162
Հոդված 44.	Հավաքների ազատությունը .....	162
Հոդված 45.	Միավորումների ազատությունը .....	162
Հոդված 46.	Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը .....	163
Հոդված 47.	Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը .....	163
Հոդված 48.	Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը .....	164
Հոդված 49.	Հանրային ծառայության անցնելու իրավունքը .....	164
Հոդված 50.	Պատշաճ վարչարարության իրավունքը .....	165
Հոդված 51.	Տեղեկություններ ստանալու իրավունքը .....	165
Հոդված 52.	Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը .....	165
Հոդված 53.	Հանրագիր ներկայացնելու իրավունքը .....	165
Հոդված 54.	Քաղաքական ապաստանի իրավունքը .....	165
Հոդված 55.	Արտաքսման կամ հանձնման արգելքը .....	166
Հոդված 56.	Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը .....	166
Հոդված 57.	Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները .....	166
Հոդված 58.	Գործադուլի իրավունքը .....	167
Հոդված 59.	Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը .....	167
Հոդված 60.	Սեփականության իրավունքը .....	167
Հոդված 61.	Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը .....	168
Հոդված 62.	Վնասի հատուցման իրավունքը .....	168
Հոդված 63.	Արդար դատաքննության իրավունքը .....	168
Հոդված 64.	Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը .....	168
Հոդված 65.	Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը .....	169
Հոդված 66.	Անմեղության կանխավարկածը .....	169
Հոդված 67.	Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը .....	169
Հոդված 68.	Կրկին դատվելու արգելքը .....	169
Հոդված 69.	Դատապարտվածի բողոքարկման իրավունքը .....	169

Հողված 70.	Ներման խնդրանքի իրավունքը .....	170
Հողված 71.	Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը .....	170
Հողված 72.	Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը .....	170
Հողված 73.	Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը .....	170
Հողված 74.	Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ .....	170
Հողված 75.	Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը .....	170
Հողված 76.	Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ .....	171
Հողված 77.	Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը .....	171
Հողված 78.	Համաչափության սկզբունքը .....	171
Հողված 79.	Որոշակիության սկզբունքը .....	171
Հողված 80.	Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը .....	171
Հողված 81.	Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան .....	172

### ԳԼՈՒԽ 3

#### ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հողված 82.	Աշխատանքային պայմանները .....	172
Հողված 83.	Սոցիալական ապահովությունը .....	172
Հողված 84.	Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը .....	172
Հողված 85.	Առողջության պահպանությունը .....	172
Հողված 86.	Պետության քաղաքականության հիմնական նպատակները .....	173
Հողված 87.	Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը .....	173

### ԳԼՈՒԽ 4

#### ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Հողված 88.	Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները .....	174
Հողված 89.	Ազգային ժողովի կազմը և ընտրության կարգը .....	174
Հողված 90.	Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը .....	174
Հողված 91.	Ազգային ժողովի հերթական ընտրությունը .....	175
Հողված 92.	Ազգային ժողովի արտահերթ ընտրությունը .....	175
Հողված 93.	Ազգային ժողովի ընտրությունների նշանակումը .....	175
Հողված 94.	Ներկայացուցչական մանդատը .....	175
Հողված 95.	Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունը .....	175
Հողված 96.	Պատգամավորի անձեռնմխելիությունը .....	176
Հողված 97.	Պատգամավորի վարձատրության չափը և գործունեության այլ երաշխիքները .....	176

Հողված 98.	Պատգամավորի լիազորությունների դադարումը և դադարեցումը .....	176
Հողված 99.	Ազգային ժողովի հերթական նստաշրջանները .....	176
Հողված 100.	Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը և նիստը .....	176
Հողված 101.	Ազգային ժողովի նիստերի հրապարակայնությունը .....	177
Հողված 102.	Ազգային ժողովի նիստերի իրավազորությունը .....	177
Հողված 103.	Օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունումը .....	177
Հողված 104.	Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները և Ազգային ժողովի խորհուրդը .....	177
Հողված 105.	Ազգային ժողովի խմբակցությունները .....	178
Հողված 106.	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները .....	178
Հողված 107.	Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովները .....	178
Հողված 108.	Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովները .....	178
Հողված 109.	Օրենսդրական նախաձեռնությունը .....	179
Հողված 110.	Պետական բյուջեի ընդունումը .....	179
Հողված 111.	Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը .....	180
Հողված 112.	Պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը .....	180
Հողված 113.	Հարցապնդումները .....	180
Հողված 114.	Հրատապ թեմայով քննարկումները .....	180
Հողված 115.	Վարչապետին անվստահություն հայտնելը .....	181
Հողված 116.	Միջազգային պայմանագրեր վավերացնելը, կասեցնելը և չեղյալ հայտարարելը .....	181
Հողված 117.	Համաներումը .....	182
Հողված 118.	Պատերազմի հայտարարումը և խաղաղության հաստատումը .....	182
Հողված 119.	Ռեզոլուցիայի դրությունը .....	182
Հողված 120.	Արտակարգ դրությունը .....	182
Հողված 121.	Վարչատարածքային միավորները և բաժանումը .....	183
Հողված 122.	Ինքնավար մարմինները .....	183

## ԳԼՈՒԽ 5

### ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

Հողված 123.	Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները .....	183
Հողված 124.	Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջները .....	183
Հողված 125.	Հանրապետության նախագահի ընտրության կարգը .....	184
Հողված 126.	Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունը .....	184
Հողված 127.	Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը .....	185
Հողված 128.	Հանրապետության նախագահի ուղերձը .....	185
Հողված 129.	Օրենքի ստորագրումը և հրապարակումը .....	185
Հողված 130.	Կառավարության հրաժարականի ընդունումը .....	185
Հողված 131.	Փոփոխություններ Կառավարության կազմում .....	185

Հողված 132.	Հանրապետության նախագահի լիազորություններն արտաքին քաղաքականության բնագավառում .....	186
Հողված 133.	Հանրապետության նախագահի լիազորությունները զինված ուժերի բնագավառում .....	186
Հողված 134.	Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը .....	186
Հողված 135.	Ներում շնորհելը .....	186
Հողված 136.	Պարզևատրումը և պատվավոր կոչումների շնորհումը .....	186
Հողված 137.	Բարձրագույն դասային աստիճանների շնորհումը .....	187
Հողված 138.	Պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը .....	187
Հողված 139.	Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները .....	187
Հողված 140.	Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը .....	187
Հողված 141.	Հանրապետության նախագահի պաշտոնանկությունը .....	187
Հողված 142.	Հանրապետության նախագահի հրաժարականը .....	188
Հողված 143.	Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինությունը .....	188
Հողված 144.	Հանրապետության նախագահի լիազորությունների ժամանակավոր կատարումը .....	188
Հողված 145.	Հանրապետության նախագահի գործունեության ապահովումը .....	188

## ԳԼՈՒԽ 6

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հողված 146.	Կառավարության կարգավիճակը և գործառույթները .....	189
Հողված 147.	Կառավարության կազմը և կառուցվածքը .....	189
Հողված 148.	Կառավարության անդամին ներկայացվող պահանջները .....	189
Հողված 149.	Վարչապետի ընտրությունը և նշանակումը .....	189
Հողված 150.	Կառավարության կազմավորումը .....	190
Հողված 151.	Կառավարության ծրագիրը .....	190
Հողված 152.	Վարչապետի և Կառավարության մյուս անդամների իրավասությունները .....	190
Հողված 153.	Կառավարության նիստերը և որոշումները .....	191
Հողված 154.	Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը .....	191
Հողված 155.	Զինված ուժերը .....	191
Հողված 156.	Կառավարության տարեկան զեկույցն Ազգային ժողովին .....	192
Հողված 157.	Կառավարության վստահության հարցը .....	192
Հողված 158.	Կառավարության հրաժարականը .....	192
Հողված 159.	Պետական կառավարման համակարգի մարմինները .....	192
Հողված 160.	Կառավարության տարածքային քաղաքականության իրագործումը .....	193
Հողված 161.	Հանրային խորհուրդը .....	193

## ԳԼՈՒԽ 7

### ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հողված 162.	Արդարադատության իրականացումը .....	193
Հողված 163.	Դատարանները .....	193
Հողված 164.	Դատավորի կարգավիճակը .....	193

Հողված 165. Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները .....	195
Հողված 166. Դատավորների ընտրության և նշանակման կարգը .....	195
Հողված 167. Սահմանադրական դատարանը .....	196
Հողված 168. Սահմանադրական դատարանի լիազորությունները .....	197
Հողված 169. Սահմանադրական դատարան դիմելը .....	197
Հողված 170. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները .....	199
Հողված 171. Վճռաբեկ դատարանը .....	200
Հողված 172. Վերաքննիչ դատարանները .....	200
Հողված 173. Բարձրագույն դատական խորհուրդը .....	200
Հողված 174. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը .....	200
Հողված 175. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները .....	201

### ԳԼՈՒԽ 8

#### ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հողված 176. Դատախազությունը .....	202
Հողված 177. Գլխավոր դատախազը .....	202
Հողված 178. Քննչական մարմինները .....	203

### ԳԼՈՒԽ 9

#### ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հողված 179. Տեղական ինքնակառավարման իրավունքը .....	203
Հողված 180. Համայնքը .....	203
Հողված 181. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները .....	203
Հողված 182. Համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները .....	203
Հողված 183. Համայնքի գործերի կառավարման անմիջական մասնակցությունը .....	204
Հողված 184. Համայնքի սեփականությունը .....	204
Հողված 185. Համայնքի բյուջեն, տեղական հարկերը, տուրքերը և վճարները .....	204
Հողված 186. Համայնքի ֆինանսավորումը .....	205
Հողված 187. Տեղական ինքնակառավարումը Երևանում .....	205
Հողված 188. Իրավական և մասնագիտական հսկողությունը .....	205
Հողված 189. Միջհամայնքային միավորումները .....	205
Հողված 190. Համայնքների միավորումը և բաժանումը .....	205

### ԳԼՈՒԽ 10

#### ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ

Հողված 191. Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները և լիազորությունները .....	206
Հողված 192. Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը .....	206
Հողված 193. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները .....	206

ԳԼՈՒԽ 11

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 194. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթները, լիազորությունները և ընտրական հանձնաժողովների համակարգը ..... 207

Հոդված 195. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը ..... 208

ԳԼՈՒԽ 12

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 196. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները ..... 208

Հոդված 197. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը ..... 209

ԳԼՈՒԽ 13

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԸ

Հոդված 198. Հաշվեքննիչ պալատի գործառույթները և լիազորությունները ..... 210

Հոդված 199. Հաշվեքննիչ պալատի կազմը և կազմավորման կարգը ..... 210

ԳԼՈՒԽ 14

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ

Հոդված 200. Կենտրոնական բանկի հիմնական նպատակները և գործառույթները ..... 211

Հոդված 201. Կենտրոնական բանկի նախագահը և խորհուրդը ..... 211

ԳԼՈՒԽ 15

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆ

Հոդված 202. Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը ..... 212

Հոդված 203. Սահմանադրության անփոփոխելի հոդվածները ..... 213

Հոդված 204. Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հանրաքվեներ ..... 213

Հոդված 205. Վերաբերյալի միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և տարածքի փոփոխության հարցերով հանրաքվեները ..... 213

Հոդված 206. Հանրաքվեի նշանակումը ..... 213

Հոդված 207. Հանրաքվեի դրված ակտի ընդունումը ..... 214

Հոդված 208. Հանրաքվե անցկացնելու արգելքը ..... 214

ԳԼՈՒԽ 16

ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 209. Սահմանադրության առանձին դրույթների ուժի մեջ մտնելը ..... 214

Հոդված 210. Օրենքների համապատասխանեցումը Սահմանադրության փոփոխություններին ..... 215

Հոդված 211. Հանրապետության նախագահի ընտրության ժամկետը ..... 215

Հոդված 212. Կառավարության հրաժարականը ..... 215

Հոդված 213. Սահմանադրական դատարանի անդամների և նախագահի պաշտոնավարումը ..... 215

Հողված 214. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումը .....	216
Հողված 215. Դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների պաշտոնավարումը .....	216
Հողված 216. Գլխավոր դատախազի պաշտոնավարումը .....	216
Հողված 217. Համայնքի ավագանու անդամների և համայնքի ղեկավարի պաշտոնավարումը .....	217
Հողված 218. Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնավարումը .....	217
Հողված 219. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորումը ...	217
Հողված 220. Սահմանադրության 12-14-րդ գլուխներով նախատեսված մարմինների անդամների պաշտոնավարումը .....	217

## **ՀԱՎԵԼՎԱԾ 2**

<b>Սահմանադրության 2015 և 2005 թթ. խմբագրությունների համեմատական աղյուսակ .....</b>	<b>218</b>
---	------------

## **ՀԱՎԵԼՎԱԾ 3**

<b>2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության առարկայական ցանկ .....</b>	<b>429</b>
---	------------



# I. 2015 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

## 1. Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը

Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որը սահմանում է մարդու և պետության միջև փոխհարաբերությունների, ինչպես նաև պետական իշխանության կազմակերպման հիմնարար կանոնները: Յուրաքանչյուր ժամանակակից սահմանադրություն ունի երկու առաջնային խնդիր՝ երաշխավորել մարդու հիմնական իրավունքները և սահմանել ժողովրդավարության ու իրավական պետության պահանջներին համապատասխանող պետական իշխանության մարմինների համակարգ:

Սահմանադրություններն ի սկզբանե ստեղծվում են առավել երկար կյանք ունենալու ակնկալիքով: Սակայն հասարակությունն ինքնին հարափոփոխ է, հետևաբար, հրամայական է դառնում սահմանադրությունների այնպիսի ճկունությունը, որը նպաստում է հասարակության զարգացմանը: Առաջադիմական սահմանադրությունը պետք է ունենա այնպիսի բովանդակություն, որը մի կողմից հնարավորություն տա ընթացիկ օրենսդրության միջոցով արագ և արդյունավետ արձագանքելու հասարակական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններին, իսկ մյուս կողմից՝ թույլ չտա, որ ընթացիկ օրենսդրությունը նենգափոխի սահմանադրության էությունը:

Անկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին՝ համաժողովրդական հանրաքվեով: Այդ հանրաքվեին հաջորդել են երկու ծավալուն սահմանադրական փոփոխություններ, որոնք ընդունվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի և 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեներով: Ընդ որում՝ նշված սահմանադրական փոփոխությունները նշանակալի նոր կարգավորումներ են ներմուծել 1995 թ. Սահմանադրությունում, որոնք վերաբերել են Սահմանադրության բոլոր գլուխներին:

Պետք է նշել, որ ինչպես 1995 թ. Սահմանադրության սկզբնական տեքստը, այնպես էլ 2005 թ. սահմանադրական փոփոխությունները զգալի թերություններ են պարունակել, ինչն էլ պայմանավորել է 2015 թ. սահմանադրական փոփոխությունների լայնածավալ բնույթը:

Հակիրճ անդրադառնալով Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրության հիմնական թերություններին և խնդիրներին<sup>1</sup> մասնավորապես պետք է առանձնացնել հետևյալը.

<sup>1</sup> Այս մասին տես նաև Գ. Հարությունյան, Վ. Պողոսյան, Առաջաբան // Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 25-26:

- Այն «իշխանակենտրոն» սահմանադրություն էր՝ «անձնակենտրոն» իշխանական համակարգով: Այդ սահմանադրության առանցքը ոչ թե մարդն էր՝ իր հիմնական իրավունքներով, այլ Հանրապետության նախագահը՝ իշխանության բոլոր ճյուղերի նկատմամբ իր գերակա դիրքով:
- Ձևականորեն հռչակելով իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ այդ Սահմանադրությունն իր բոլոր կառուցակարգերով իշխանության միակ կենտրոն էր դարձնում Հանրապետության նախագահին՝ նրան ստորադասելով ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր և դատական իշխանությունները:
- Հանրապետության նախագահը իր հայեցողությամբ նշանակում և ազատում էր վարչապետին, նախագահում Կառավարության նիստերը, վավերացնում Կառավարության որոշումները:
- Հանրապետության նախագահը կարող էր գրեթե առանց սահմանափակումների արձակել Ազգային ժողովը:
- Հանրապետության նախագահը՝ որպես արդարադատության երաշխավոր, մի կողմից՝ գլխավորում էր Արդարադատության խորհուրդը, մյուս կողմից՝ ինքն իրեն առաջարկում էր դատավորների բոլոր թեկնածուներին:

Նման համակարգում, հատկապես հաշվի առնելով նորանկախ Հայաստանի իրավական և քաղաքական մշակույթի մակարդակը, գրեթե անհնար էր իրագործել նույն Սահմանադրության անփոփոխ 1-ին և 2-րդ հոդվածներում ամրագրված ժողովրդավարության և իրավական պետության սկզբունքները: Դրանց իրականացումը գերազանցապես պայմանավորված էր Հանրապետության նախագահի քաղաքական կամքով, բայց ոչ նրա առջև դրված սահմանադրական պահանջներով և պարտադրանքներով: Բոլորովին էլ պատահական չէր, որ Սահմանադրության ընդունումից ընդամենը մի քանի տարի անց, արդեն 1998 թ., երկրի առջև իր ամբողջ սրությամբ ծառայեցավ Սահմանադրության փոփոխության խնդիրը<sup>2</sup>:

Այդուհանդերձ, չի կարելի նաև թերագնահատել 1995 թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դերը այն պատմաքաղաքական համատեքստում, որում այն ընդունվեց: Սահմանադրաիրավական մեծ ժառանգություն չունեցող և անկախ պետականության կայացման առաջին քայլերն անող Հայաստանում 1995 թ. Սահմանադրությունը էական դեր ունեցավ ժողովրդավարության հաստատման, իրավական պետության արմատավորման, ճգնաժամային իրավիճակներում սահմանադրական ճանապարհով լուծումներ գտնելու, պետական իշխանության ինստիտուտների աստիճանական կայացման, մարդու

<sup>2</sup> Տե՛ս Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. Համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005, էջ 23-25:

իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրագրման գործում<sup>3</sup>:

2005 թ. սահմանադրական բարեփոխումները պայմանավորված էին ինչպես երկրի ներքին զարգացման հրամայականներով, այնպես էլ 2001 թ. Եվրոպայի խորհրդին անդամակցելու արդյունքում ստանձնած պարտավորություններով: Այդ բարեփոխումները, կարևոր քայլ լինելով հիմնական իրավունքների երաշխավորման և պառլամենտարիզմի զարգացման ճանապարհին, այդուհանդերձ, ամբողջականորեն չկարողացան լուծել «մարդակենտրոն» սահմանադրության ստեղծման և պատասխանատու իշխանական համակարգի հիմնախնդիրները: Կրճատելով Հանրապետության նախագահի լիազորությունները և ավելի շատ իշխանություն վերապահելով Ազգային ժողովին՝ Սահմանադրությունը, այնուամենայնիվ, պահպանեց «կիսանախագահական» կառավարման համակարգը, որը քաղաքական պրակտիկայում հանգում է «գերնախագահական» համակարգի, եթե Հանրապետության նախագահը և խորհրդարանական մեծամասնությունը ներկայացնում են նույն քաղաքական ուժը: Լիարժեք չէին նաև անմիջականորեն գործող սահմանադրական իրավունքների երաշխավորման, մարդու իրավունքների սահմանափակումներին և իշխանության հայեցողության սահմանների հստակեցմանը վերաբերող սահմանադրաիրավական լուծումները, որոնք հետ էին ընկնում Եվրոպական արդի սահմանադրական զարգացումների միտումներից<sup>4</sup>:

Մինչդեռ իրավական պետությունում իշխանությունը սահմանափակված է մարդու անմիջականորեն գործող հիմնական իրավունքներով, իսկ պետական իշխանական համակարգի գործունեության հիմքում ընկած է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Կենսունակ և ուժեղ հասարակությունում գերակայում են քաղաքական ազատություններն ու բազմակարծությունը, իսկ ժողովրդավարական քաղաքական համակարգը ապահովում է այնպիսի մեխանիզմներ, որոնք հանրության ձայնը վճռորոշ են դարձնում հանրային իշխանությունների գործունեության համար:

Հետադարձ հայացք գցելով անկախ Հայաստանի անցած քառորդարյա ճանապարհին՝ կարելի է արձանագրել, որ 2015 թ. սահմանադրական բարեփոխումներն անհրաժեշտ էին երկրի կայուն զարգացումը երաշխավորելու և իրավական, քաղաքական, տնտեսական առաջընթաց ապահովելու համար: Սահմանադրական բարեփոխումներով հետապնդվող նպատակները հիմնականում հանգում են հետևյալին.

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը: Տեքստը մատչելի է Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում Եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի կողմից հրատարակված «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» գրքույկում, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջ 18-21:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 21-27:

- «մարդակենտրոն» սահմանադրական համակարգի ստեղծում, մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանությունն էապես նոր մակարդակ,
- պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, իշխանության պատասխանատվության մեծացում և իշխանության սահմանափակում իրավունքով,
- առավել վստահելի ընտրական համակարգի ներդրում,
- երկրում քաղաքական իշխանության գերկենտրոնացվածության հաղթահարում և ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորում,
- Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության և քաղաքական փոքրամասնության միջև քաղաքակիրթ փոխհարաբերությունների հաստատում՝ ի շահ պետության կայուն զարգացման,
- երկրում վստահություն վայելող արդարադատության կայացում և դատարանների անկախության, անաչառության ամրապնդում,
- անմիջական ժողովրդավարության սկզբունքի առավել արդյունավետ իրացման սահմանադրական երաշխիքների ամրապնդում:

Նշված նպատակները հնարավոր չէր արդյունավետ իրագործել առանց սահմանադրական բարեփոխումների: Ընդ որում, երկրում առկա հիմնախնդիրներից շատերը պայմանավորված են սահմանադրական կիսալուծումներով, ներքին հակասություններով, որոնք, վերարտադրվելով օրենսդրության մեջ ու իրավակիրառական պրակտիկայում, պատճառ են դարձել սահմանադրական օրինականության պակասի ու հանրային լուրջ դժգոհությունների:

## 2. Սահմանադրական փոփոխությունների գործընթացը

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների գործընթացի մեկնարկը տրվել է Հանրապետության նախագահի 2013 թ. սեպտեմբերի 4-ի հրամանագրով՝ Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի ստեղծմամբ<sup>5</sup>:

2014 թ. ապրիլին սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը Հանրապետության նախագահին է ներկայացրել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը<sup>6</sup>: «Հայեցակարգի վերաբերյալ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետև՝ Վենետիկի հանձ-

<sup>5</sup> Տես Հայաստանի Հանրապետության նախագահի 2013 թ. սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» ՆՀ-207-Ն հրամանագիր, «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (այսուհետ՝ ՀՀՊՏ), 2013.09.11/49(989), հոդ. 829: Տեքստը մատչելի է նաև Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» գրքույկում, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջ 8-9:

<sup>6</sup> Տես նույն տեղը, էջ 17-66:

նաժողով) 2014 թ. հոկտեմբերի 13-ի կարծիքում նշում է, որ «Սահմանադրական բարեփոխումների նախագծում առաջ քաշված իրավական դիրքորոշումները համահունչ են Վենետիկի հանձնաժողովի ավանդական մոտեցումներին և հաշվի են առնում այն տեսակետները, որոնք արտահայտվել էին Վենետիկի հանձնաժողովի զեկուցողների կողմից»<sup>7</sup>:

2015 թ. մարտի 14-ին՝ գրեթե մեկ տարվա հանրային քննարկումներից հետո, Հանրապետության նախագահը հավանություն է տվել հայեցակարգին, և սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը սկսել է Սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակումը:

2015 թ. հուլիսի 15-ին հրապարակվել են Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխները, որոնց վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը հուլիսի 30-ին հրապարակել է իր նախնական կարծիքը<sup>8</sup>:

2015 թ. օգոստոսի 4-ին հրապարակվել են Սահմանադրության փոփոխությունների նախագծի՝ հանրային քննարկումների արդյունքներով փոփոխված արդեն 1-15-րդ գլուխները, որոնց վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովը 2015 թ. սեպտեմբերի 11-ին ներկայացրել է իր 2-րդ նախնական եզրակացությունը: Դրանում, մասնավորապես, նշված է. «Հայաստանի սահմանադրական հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքը չափազանց բարձր որակի է և արժանի է աջակցության ու դրվատանքի: Վենետիկի հանձնաժողովի հետ անկեղծ երկխոսության և արգասաբեր փոխանակումների մթնոլորտը շարունակական է եղել և հնարավորություն է ընձեռել Սահմանադրական հանձնաժողովին պատրաստելու մի տեքստ, որն այժմ համապատասխանում է միջազգային չափանիշներին: ... Վենետիկի հանձնաժողովը մեկ անգամ ևս ընդգծում է Հայաստանի քաղաքական բոլոր ուժերի և քաղաքացիական հասարակության հետ բաց և շարունակական երկխոսության կարևորությունը, որպեսզի այս սահմանադրական փոփոխություններն ընդունվեն խորհրդարանի կողմից, իսկ հետագայում՝ հանրաքվեով, ինչը հետագա կարևոր քայլ կհանդիսանա դեպի ժողովրդավարություն Հայաստանի անցման համար»<sup>9</sup>:

<sup>7</sup> Տե՛ս Venice Commission, Opinion on the Draft Concept Paper on the Constitutional Reforms of the Republic of Armenia, CDL-AD(2014)027, կետ 84: Հայերեն թարգմանությունը տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» գրքույկում, էջ 67-91:

<sup>8</sup> Տե՛ս Venice Commission, Preliminary Opinion on the Draft Amendments to Chapters 1 to 7 and 10 of the Constitution of the Republic of Armenia, CDL-PI(2015)015; Venice Commission, First Opinion on the Draft Amendments to the Constitution (chapters 1 to 7 and 10) of the Republic of Armenia, 29 October 2015, CDL-AD(2015)037 (այսուհետև այստեղից հղումը կտրվի համառոտ՝ նշելով CDL-AD(2015)037):

<sup>9</sup> Տե՛ս Venice Commission, Second Preliminary Opinion on the Draft Amendments in particular to Chapters 8, 9, 11 to 16 of the Constitution of the Republic of Armenia, 11 September 2015, CDL-PI(2015)019, կետ 85 և 88: Տե՛ս նաև Venice Commission, Second Opinion on the Draft Amendments to the Constitution (in particular to chapters 8, 9, 11 to 16) of the Republic of Armenia, 28 October 2015, CDL-AD(2015)038 (այսուհետև այստեղից հղումը կտրվի համառոտ՝ նշելով CDL-AD(2015)038):

2015 թ. օգոստոսի 20-ին սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը, հանրային քննարկումների արդյունքում և Վենետիկի հանձնաժողովի առաջարկների հիման վրա, հաստատել և հրապարակել է Սահմանադրության փոփոխությունների վերանայված տարբերակը և դրա հիմնավորումները: 2015 թ. օգոստոսի 21-ին Հանրապետության նախագահը հավանություն է տվել Սահմանադրության փոփոխություններին և այն ներկայացրել է Ազգային ժողով<sup>10</sup>:

Ազգային ժողովը սահմանադրական փոփոխությունների նախագիծը քննարկել է 2015 թ. սեպտեմբերի 15-18-ի նիստերում, որից հետո 2015 թ. հոկտեմբերի 5-ին Ազգային ժողովը համաձայնություն է տվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու՝ Հայաստանի Հանրապետության նախագահի նախաձեռնությամբ<sup>11</sup>:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2015 թ. հոկտեմբերի 8-ի հրամանագրով Սահմանադրության փոփոխությունների նախագիծը դրվել է հանրաքվեի, և հանրաքվեի օր է նշանակվել 2015 թ. դեկտեմբերի 6-ը<sup>12</sup>:

Հանրաքվեի արդյունքներով Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունվել է: Ըստ պաշտոնական տվյալների<sup>13</sup> ընտրական իրավունք ունեցող 2.566.998 քաղաքացիներից հանրաքվեին մասնակցել է 1.302.613 քաղաքացի, որոնցից 825.521-ը կողմ է քվեարկել 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության ընդունմանը, իսկ 421.568-ը՝ դեմ: Անվավեր է ճանաչվել 53.435 քվեաթերթիկ<sup>14</sup>:

Հարկ է նկատել, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակման ընթացքում, Վենետիկի հանձնաժողովի աշխատանքային խմբից բացի, ինտենսիվ աշխատանքներ են ընթացել սահմանադրական իրավունքի բնագավառում գերմանացի մի քանի նշանավոր փորձագետների հետ<sup>15</sup>:

<sup>10</sup> ՏՆՆ Ն-849-21.08.2015-ՊԻ, հասանելի է <http://parliament.am> կայքից:

<sup>11</sup> ՏՆՆ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» 2015 թ. հոկտեմբերի 5-ի № 173 որոշում:

<sup>12</sup> ՏՆՆ Հայաստանի Հանրապետության նախագահի 2015 թ. հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների հանրաքվե նշանակելու մասին» ՆՀ-754-Ն հրամանագիր: Սահմանադրության նախագիծը հրապարակվել է ՀՀՊՏ, 13.10.2015/հատուկ թողարկում, հոդ. 9101, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (հասցե <http://www.azdarar.am>)՝ 15 հոկտեմբերի 2015 թ., «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի թիվ 185 (6231)-ում՝ 16 հոկտեմբերի 2015 թ.:

<sup>13</sup> ՏՆՆ Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 2015 թ. դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքներն ամփոփելու վերաբերյալ» № 99-Ա որոշում:

<sup>14</sup> ՏՆՆ ՀՀՊՏ, 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:

<sup>15</sup> Սահմանադրական փոփոխությունների մշակման տարբեր փուլերում Սահմանադրական հանձնաժողովը ստացել է բազմաթիվ ականավոր գերմանացի փորձագետների, մասնավորապես՝ պրոֆեսորներ Օտտո Լուխտերհանդթի, Միխայել Զաքսի, Քրիստոֆ Դեգենհարթի, Ռյուդիգեր Ռուբելի, Հենինգ Ռադթկեի փորձագիտական աջակցությունը:

## II. 2015 թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Սահմանադրության կառուցվածքը

Սահմանադրությունը պետության իրավակարգի հիմքն է: Սահմանադրության առարկան պետության կառուցվածքի և պետության իշխանության ներքո գտնվող անձանց հետ պետության իրավական հարաբերությունների հիմնական կանոններն են: Սահմանադրությունը կարգավորում է այդ հարաբերությունների միայն հիմնարար, հիմնական կանոնները, ուստի այն, երբեմն, կոչվում է նաև Հիմնական օրենք: Իր կարգավորման առարկային համապատասխան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կառուցվածքում կարելի է առանձնացնել երկու հիմնական մաս.

- Մարդ-պետություն հարաբերությունները (Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխներ),
- Պետական մարմիններ, նրանց ստեղծումը, գործառույթները, լիազորությունները, փոխհարաբերությունները (Սահմանադրության 4–14-րդ գլուխներ):

Նախքան 2-րդ գլխում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին անդրադառնալը, Սահմանադրությունը 1-ին գլխում ամրագրում է այն հիմնադրույթները, որոնք ընկած են հայոց անկախ պետականության հիմքում («Սահմանադրական կարգի հիմունքները»): Այդ գլուխը կանխորոշում է այն ուղեգիծը, որով առաջնորդվում են մի կողմից Սահմանադրության 2-րդ և 3-րդ, իսկ մյուս կողմից՝ 4-14-րդ գլուխները: Սահմանադրության 1-ին գլխին նախորդում է պրեամբուլան, որը կարևոր նշանակություն ունի Սահմանադրության մյուս դրույթների մեկնաբանման և կիրառման համար: Սահմանադրության 15-րդ գլուխը նվիրված է Սահմանադրության ընդունմանը, փոփոխությանը և հանրաքվեին, իսկ 16-րդ գլուխը պարունակում է եզրափակիչ և անցումային դրույթներ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կառուցվածքը 2015 թ. փոփոխությունների արդյունքում արմատական փոփոխությունների չի ենթարկվել: Հիմնական իրավունքները օրենսդրական երաշխիքներից և պետության նպատակներից հստակ սահմանազատելու համար հիմնական իրավունքներին նվիրված 2-րդ գլխից հետո ավելացվել է նոր՝ 3-րդ գլուխը:

Կառավարման խորհրդարանական համակարգին անցնելով պայմանավորված՝ պետական մարմինների վերաբերյալ դրույթների շարադրանքը սկսվում է Ազգային ժողովին նվիրված գլխով: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ այդ տեղը զբաղեցնում էր Հանրապետության նախագահը (գլուխ 3): Դատական իշխանության վերաբերյալ գլխից հանվել են դատախազությանը վերաբերող դրույթները, որոնք առանձնացվել են 8-րդ գլխում՝ քննչական մար-

մինների հետ միասին: Նոր են նաև 10-14-րդ գլուխները, որոնք համապատասխանաբար նվիրված են Մարդու իրավունքների պաշտպանին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, Հաշվեքննիչ պալատին և Կենտրոնական բանկին: Բացի Կենտրոնական ընտրական հանձնաժողովից, որի վերաբերյալ դրույթներն առաջին անգամ են ամրագրվում Սահմանադրության մեջ, նշված մյուս մարմինների վերաբերյալ առանձին դրույթներ իրենց տեղն էին գտել նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում, սակայն Ազգային ժողովին նվիրված 4-րդ գլխում: Այդ մարմինների առանձնացումը հատուկ գլուխներում ընդգծում է դրանց ինքնուրույն կարգավիճակը:

## **2. Սահմանադրության նախաբանը**

Քանի որ 2015 թ. սահմանադրական փոփոխությունները ամբողջ Սահմանադրությունը փոխելու նպատակ չեն հետապնդել, Սահմանադրության նոր խմբագրությունը անփոփոխ կերպով պահպանել է դեռևս 1995 թ. ընդունված Սահմանադրության նախաբանը, որը ժամանակին քաղաքական տարբեր ուժերի միջև ձեռք բերված եզակի փոխհամաձայնության արդյունք էր<sup>16</sup>:

## **3. Սահմանադրական կարգի հիմունքները**

### **3.1. Սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը և դերը**

Յուրաքանչյուր պետության սահմանադրություն, անկախ «սահմանադրական կարգ» հասկացության օգտագործումից, սահմանում է որոշակի հիմնարար սկզբունքներ, որոնք բնորոշում են տվյալ պետության էությունը և իշխանական համակարգը: Այդ սկզբունքների ամբողջությունից է բխում տվյալ պետության ինքնությունը: Սահմանադրական կարգի հիմունքներն առաջին հերթին ամրագրում են, թե ում է պատկանում իշխանությունը (ինքնիշխանության կրողը), ինչպես է իրականացվում այդ իշխանությունը, և ինչ մարմիններ են կոչված իրականացնելու այն:

2015 թ. խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին գլուխը ամրագրում է հայոց պետականությունը բնորոշող հիմնարար սկզբունքները, որոնց մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն Սահմանադրության առաջին երեք անփոփոխ հոդվածներում ամրագրված հանրապետության, ինքնիշխանության, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության սկզբունքները (հոդված 1), ժողովրդի ինքնիշխանությունը

<sup>16</sup> Տես Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, նշվ. աշխ., էջ 14:



(հողված 2), մարդու ճանաչումը որպես բարձրագույն արժեք (հողված 3): Սահմանադրության 1-3-րդ հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքները և Սահմանադրության արժեքանական կողմնորոշիչներն իրենց հետևողական իրացումն են գտել ողջ տեքստում:

Սահմանադրության 4-11-րդ հոդվածներում ամրագրված դրույթները կոնկրետացնում են Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության, ժողովրդավարության և սոցիալական պետության հիմնարար սկզբունքները: Իրավական պետության սկզբունքի առանձին կարևոր բաղադրատարրեր արտացոլված են 4-6-րդ հոդվածներում (իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, իրավական նորմերի աստիճանակարգությունը, օրինականության սկզբունքը), իսկ 7-րդ և 8-րդ հոդվածները վերաբերում են ժողովրդավարության սկզբունքի այնպիսի կարևոր տարրերին, ինչպիսիք են ընտրական իրավունքի սկզբունքները, գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը: Ժողովրդավարության սկզբունքին ուղղակիորեն առնչվում է նաև Սահմանադրության 9-րդ հոդվածը, որը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական տարր: Սոցիալական պետության կարևորագույն բաղադրիչին է նվիրված Սահմանադրության 11-րդ հոդվածը, որն առաջին անգամ ամրագրում է սոցիալական շուկայական տնտեսությունը՝ որպես երկրի տնտեսական կարգի հիմք:

Սահմանադրական կարգի գլխի մյուս հոդվածները (12-22) ամրագրում են պետության և ժողովրդի կյանքի համար հիմնարար նշանակություն ունեցող այլ սկզբունքներ: Պետք է ընդգծել, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը զգալիորեն ընդլայնել է սահմանադրական կարգի հիմունքներով ամրագրված սկզբունքների շրջանակը՝ 2005 թ. Սահմանադրությամբ որպես մարդու իրավունքներ կամ պետության խնդիրներ ամրագրված շատ դրույթներ դարձնելով սահմանադրական կարգի հիմունք<sup>17</sup>:

### **3.2. Սահմանադրության 1-ին գլխի փոփոխությունների համառոտ վերլուծությունը**

#### **Հոդվածներ 1 և 2**

Ինչպես Սահմանադրության նախաբանը, անփոփոխ են մնացել նաև Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածները, որոնք 1995 թ. Սահմանադրության սկզբնական խմբագրության 114-րդ հոդվածի ուժով ենթակա չեն փոփոխության: Այս հոդվածներով ամրագրվում են հայոց պետականության էությունը և կառուցվածքը սահմանող հիմնարար սկզբունքները՝ հանրապետությունը, ինքնիշխանությունը, ժողովրդավարությունը, սոցիալական պետությունը, իրավական պետությունը (հողված 1), ինչպես նաև ժողովրդավարության սկզբունքի կարևոր

<sup>17</sup> Այս մասին տես նաև 3.2-րդ մասում:

րագույն բաղադրատարրերը՝ ժողովրդի ինքնիշխանությունը և ժողովրդաիշխանության իրականացման ձևերը (հոդված 2):

### **Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, իրացնելով «մարդակենտրոն» սահմանադրության գաղափարը, անփոփոխելի հոդվածների շարքին է ավելացրել ևս մեկը՝ 3-րդ հոդվածը, որը սահմանադրական կարգավորումների առանցք է դիտարկում մարդուն՝ որպես բարձրագույն արժեք, և նրա անօտարելի արժանապատվությունը: Սահմանադրության 3-րդ հոդվածում իր արտահայտությունն է գտել այն կարևոր գաղափարը, որ պետության գոյությունն ինքնանպատակ չէ, պետությունը հաստատվում է հանուն մարդու, նրան ծառայելու համար, և ոչ թե հակառակը: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն ամբողջությամբ կառուցված է 3-րդ հոդվածում տեղ գտած այս հայեցակարգի վրա:

3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ մարդու արժանապատվությունն անօտարելի է: Դրանով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ելնում է այն կանխադրույթից, որ արժանապատվությունը մարդուն ներհատուկ է հենց նրա գոյության փաստով: Մարդը հիմնական իրավունքների կրող է իր արժանապատվության ուժով: Արժանապատվությունը մարդու իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Փոփոխված Սահմանադրությունում այս դրույթն արտացոլվել է սահմանադրական կարգի հիմունքների գլխում<sup>18</sup>, որպեսզի հստակեցվի մարդու արժանապատվության և հիմնական իրավունքների միջև անխզելի կապը. առանց մարդու արժանապատվության չկան հիմնական իրավունքներ, առանց հիմնական իրավունքների չկա մարդու արժանապատվություն<sup>19</sup>: Քանի որ մարդու արժանապատվությունը բոլոր հիմնական իրավունքների և ազատությունների աղբյուրն է, դրանց անքակտելի հիմքը, ապա «հիմնական իրավունքները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն՝ ելնելով արժանապատվության սկզբունքից և այն իրականացնելու նպատակով»<sup>20</sup>:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է պետության պարտականությունները հիմնական իրավունքների նկատմամբ՝ նախատեսելով այդ պարտականությունների երկու դրսևորում: Ըստ այդ նորմի՝ հանրային իշխանությունը պարտավոր է մի կողմից՝ «հարգել», իսկ մյուս կողմից՝ «պաշտպանել» հիմնական իրավունքները և ազատությունները: Դրանով Սահմանադրությունն ամրագրում է հիմնական իրավունքներից բխող՝ պետության նեգատիվ և պոզիտիվ պարտականությունները:

<sup>18</sup> 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն այս դրույթն ամրագրել էր հիմնական իրավունքներին նվիրված գլխի սկզբում՝ 14-րդ հոդվածում:

<sup>19</sup> Sten Ch. Enders, in: Stern/Becker (Hrsg.), Grundrechte-Kommentar, Köln 2010, էջ 90:

<sup>20</sup> Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, նշվ. աշխ., էջ 35:

Հիմնական իրավունքը «հարգելը» նշանակում է, որ հանրային իշխանությունը պետք է ձեռնպահ մնա հիմնական իրավունքներով պաշտպանված իրավական բարիքներին անհամաչափ կերպով միջամտելուց: Հիմնական իրավունքներն իրենց գերակշիռ մասով պետությունից պաշտպանվելու (նեգատոր) իրավունքներ են: Հիմնական իրավունքի կրողը հիմնական իրավունքի հիման վրա հանրային իշխանությունից կարող է պահանջել ձեռնպահ մնալ պաշտպանվող իրավական բարիքի խաթարումներից:

3-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պետության պարտականությունների մյուս տեսակը՝ հիմնական իրավունքների «պաշտպանությունը», ընդհակառակը, պետությունից պահանջում է պոզիտիվ գործողություններ, որոնց նպատակը հիմնական իրավունքներով պաշտպանված իրավական բարիքների ակտիվ պաշտպանությունն է: Պետությունն այստեղ հանդես է գալիս որպես հիմնական իրավունքները երաշխավորող, այլ ոչ թե հիմնական իրավունքներով պաշտպանված իրավական բարիքներին միջամտող: Պետության պոզիտիվ պարտականությունների մեջ կարևոր տեղ են գրավում հանրային հաստատությունների կողմից ծառայությունների տրամադրումը (օրինակ՝ կրթություն, տեղեկություններ, հանրագրեր), իրավական պաշտպանության ապահովումը (օրինակ՝ դատարաններ, պատշաճ վարչարարություն), մարդու պաշտպանությունը տարբեր տեսակի վտանգներից:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության համեմատ՝ փոփոխված Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասն ընդլայնել է նաև հիմնական իրավունքների հասցեատիրոջ շրջանակը, նախատեսելով, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելն ու պաշտպանելը ողջ հանրային իշխանության պարտականությունն է: «Հանրային իշխանություն» եզրույթի օգտագործման նպատակն այստեղ այն է, որ պետությունն իր բոլոր դրսևորման ձևերով կաշկանդված լինի հիմնական իրավունքներով: Երբ պետությունը միջամտում է մարդու հիմնական իրավունքներին, ապա կարևոր չէ, թե դա ում կողմից է կատարվում՝ անմիջականորեն պետական մարմինների և պաշտոնատար անձանց, թե՛ պետության պատվիրակմամբ՝ մասնավոր սուբյեկտների կողմից:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը, հիմնական իրավունքների հասցեատեր սահմանելով «հանրային իշխանությանը», սկզբունքորեն բացառում է հիմնական իրավունքների ուղղակի կիրառությունը մասնավոր անձանց միջև իրավահարաբերություններում: Եթե հիմնական իրավունքները ուղղակիորեն կիրառելի լինեն քաղաքացի-քաղաքացի հարաբերություններում, այսինքն՝ մի քաղաքացին վկայակոչի իր հիմնական իրավունքը մեկ այլ քաղաքացու հետ իրավահարաբերություններում, ապա նույնը կարող է անել նաև այդ քաղաքացին՝ իր հերթին վկայակոչելով իր հիմնական իրավունքները: Մասնավոր անձանց միջև հիմնական իրավունքների ուղղակի կիրառության արդյունքում անձի հիմնական իրավունքները, որոնք իրականում ուղղված

են պետության դեմ, կվերաձվեն իր համաքաղաքացիների հանդեպ յուրաքանչ-յուր անձի պարտականությունների: Դրանով ամբողջությամբ կհիմաստագրվի հիմնական իրավունքների բուն էությունը. ազատության ընդլայնման փոխարեն հիմնական իրավունքները կդառնան ազատությունը սահմանափակող գործիք:

Պետության կաշկանդվածությունը հիմնական իրավունքներով, սակայն, կասկածի տակ չի դնում այն հանգամանքը, որ հիմնական իրավունքները ներգործում են նաև մասնավոր իրավունքի բնագավառում: «Դասական» հիմնական իրավունքների պարագայում պետությունը ոչ միայն պարտավոր է ձեռնպահ մնալ այդ իրավունքներին միջամտելուց, այլև պարտավոր է օրենսդրական կարգավորումների միջոցով պաշտպանել այդ հիմնական իրավունքները երրորդ անձանց միջամտությունից: Մասնավոր իրավունքի բնագավառում դա նշանակում է, որ օրենսդիրը պետք է կոլիզիայի դեպքում համաչափության սկզբունքի հիման վրա հավասարակշռի մասնավոր իրավահարաբերությունների տարբեր մասնակիցների հիմնական իրավունքները, եթե չկա առարկայական որևէ պատճառ՝ նախապատվությունը տալու կողմերից որևէ մեկին:

3-րդ հոդվածի 2-րդ մասից հանվել է պետության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում «միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան» չափանիշը, քանի որ հիմնական իրավունքների մասշտաբը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն է: Դա, իհարկե, չի նշանակում, որ մարդու իրավունքների միջազգայնացման դարաշրջանում սահմանադիրը ասքաթող է անում միջազգային իրավունքի պահանջները: Մարդու իրավունքների մեկնաբանման հարցում փոփոխված Սահմանադրությունը ուղենիշ է դրել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (հոդված 81)<sup>21</sup>:

#### **Հոդված 4. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը**

Սահմանադրության 4-րդ հոդվածը նույնությամբ վերարտադրում է իշխանությունների բաժանման սկզբունքը, որն ամրագրված է 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասում: Այդ հոդվածի 2-րդ մասը տեղ է գտել 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում, քանի որ այն բովանդակային առումով վերաբերում է օրինականության սկզբունքին:

#### **Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը**

Սահմանադրության 5-րդ հոդվածը հիմնականում կրկնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի դրույթները՝ որոշակի բացառու-

<sup>21</sup> Այս մասին տես նաև 81-րդ հոդվածի պարզաբանումներում:

թյուններով: Ինչպես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ, այնպես էլ բարեփոխված Սահմանադրությամբ ճանաչվում է իրավական ակտերի աստիճանակարգության մեջ Սահմանադրության գերակա դիրքը: Սակայն հանվել է այն դրույթը, որը սահմանադրական բոլոր նորմերին տալիս էր անմիջական գործողության ուժ: Սահմանադրության նորմերի անմիջական գործողությունը յուրաքանչյուրի համար Սահմանադրությունից հանվել է առաջին հերթին երրորդ անձանց վրա ներգործության ոչ հստակ դեպքերից խուսափելու նպատակով: Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները՝ առաջին հերթին որպես պաշտպանիչ իրավունքներ, ուղղված են պետությանը. ամբողջ հանրային իշխանությունը կաշկանդված է հիմնական իրավունքներով և ազատություններով, ինչպես նաև Սահմանադրության այլ դրույթներով: Սահմանադրության նորմերը, հատկապես հիմնական իրավունքները, մասնավոր անձանց միջև անմիջականորեն են գործում միայն այն դեպքում, երբ Սահմանադրությունը դա ուղղակիորեն նախատեսել է, օրինակ՝ ինչպես փոփոխված Սահմանադրության 57-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում՝ մայրության պատճառով աշխատանքից ազատելու արգելքի պարագայում (այս դրույթն առկա էր նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում): Բացի այդ, անմիջական գործողություն չունեն հատկապես Սահմանադրության 3-րդ գլխի դրույթները, որոնք սահմանում են տարբեր ոլորտներում օրենսդրական երաշխիքներ և պետության քաղաքականության հիմնական նպատակներ:

Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը վերարտադրում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ նախադասության բովանդակությունը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Այս նորմը չի կարելի հասկանալ որպես վավերացված պայմանագրերի ընդհանուր գերակայություն դրանց հակասող օրենքների նկատմամբ: Եթե օրենքի որևէ դրույթ հակասում է վավերացված միջազգային պայմանագրին, ապա օրենքի համապատասխան դրույթը կոնկրետ դեպքում չի գործում, սակայն այն չի կորցնում իր իրավաբանական ուժը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի մյուս դրույթները չեն վերարտադրվել, քանի որ դրանք անմիջականորեն բխում են Սահմանադրության այլ նորմերից:

### **Հոդված 6. Օրինականության սկզբունքը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածը ի մի է բերում օրինականության սկզբունքին վերաբերող սահմանադրական տարբեր նորմերում նախկինում տեղ գտած դրույթները: Սահմանադրությունը, հստակեցնելով իրավական ակտերի աստիճանակարգումը, ներմուծում է ենթաօրենսդրական

ակտ հասկացությունը: Այն ներառում է բոլոր նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա ու ի կատարում դրանց: Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասությունը վերապահում է միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին, որոնք են Կառավարությունը (հոդված 153, մաս 3), կառավարության անդամները (հոդված 152, մաս 4), ինքնավար մարմինները (հոդված 122, մաս 3), համայնքի ավագանին (հոդված 182, մաս 3), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (հոդված 194, մաս 2), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (հոդված 196, մաս 5), Կենտրոնական բանկը (հոդված 200, մաս 5) և Բարձրագույն դատական խորհուրդը (հոդված 175, մաս 3):

Ընդ որում՝ վերոհիշյալ մարմինները կարող են ենթաօրենսդրական ակտեր ընդունել միայն օրենքով հստակ նախատեսված դեպքերում, իսկ լիազորող նորմը պետք է համապատասխանի որոշակիության սկզբունքին, այսինքն՝ պետք է լինի բավականաչափ հստակ՝ օրենսդրի կամքի բովանդակությունն ու սահմանները հասկանալու համար:

Պահպանելով օրենքների պաշտոնական հրապարակման պահանջը՝ Սահմանադրության տեքստից հանվել է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» վերաբերյալ հստակ նշումը՝ ընդառաջ գնալով տեխնիկական զարգացումներին և հնարավորություն նախատեսելով էլեկտրոնային հրապարակման համար, ինչն ավելի արագ, ավելի հասանելի, քիչ ծախսատար հրապարակման և թափանցիկության ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում:

### **Հոդված 7. Ընտրական իրավունքի սկզբունքները**

Ընտրական իրավունքի սկզբունքները արտացոլում են փոփոխված Սահմանադրությամբ ամրագրված կառավարման համակարգի պահանջները, որտեղ ուղղակի ընտրությունները պարտադիր կերպով նախատեսված են միայն Ազգային ժողովի և համայնքների ավագանիների համար:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի վերաբերյալ կարգավորումները համալրվել են նաև «ազատ» ընտրության սկզբունքով, որը բացակայում էր 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում: Այս սկզբունքն առկա է ՄԻԵԿ 1-ին արձանագրության 3-րդ հոդվածում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածում և բազմաթիվ եվրոպական երկրների սահմանադրություններում: Ընտրությունների ազատությունը պահանջում է, որպեսզի ընտրողի ընտրական կամքի վրա չիրականացվի որևէ հանրային կամ մասնավոր ճնշում:

## **Հողված 8. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 8-րդ հոդվածը վերարտադրում է 2005 թ. Սահմանադրության 7-րդ հոդվածի դրույթները՝ որոշակի հավելյալ երաշխիքներով: Մասնավորապես, 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է կուսակցության ոչ միայն կազմավորման, այլև գործունեության ազատությունը: 4-րդ մասում կարևորվել է այն հանգամանքը, որ կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին, որոնք, ըստ էության, բխում են Սահմանադրության 1-ին հոդվածից:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 8-րդ հոդվածը չի նախատեսում կուսակցությունների ֆինանսական գործունեության հրապարակայնությունը ապահովելու վերաբերյալ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 7-րդ հոդվածի 3-րդ մասին համարժեք պահանջ: Սակայն, որպես երաշխիք, Սահմանադրության 46-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է կուսակցությունների կողմից իրենց ֆինանսական միջոցների թափանցիկությունը երաշխավորելուն ուղղված տարեկան հաշվետվություններ հրապարակելու պահանջ: Մյուս մանրամասների կարգավորումը թողնվել է «Կուսակցությունների մասին» օրենքին, քանի որ կուսակցությունների ֆինանսական գործունեության հրապարակայնության ամբողջական ապահովումը ո՛չ ցանկալի է և ո՛չ էլ՝ իրատեսական:

## **Հողված 9. Տեղական ինքնակառավարման երաշխավորումը**

Ինչպես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 11.2-րդ հոդվածը, այնպես էլ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 9-րդ հոդվածը երաշխավորում են տեղական ինքնակառավարումը: Սակայն, ի հավելումն դրա, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն ընդգծում է, որ այն ժողովրդավարության էական հիմքերից մեկն է՝ դրանով իսկ ընդգծելով սահմանադրական այս սկզբունքի նշանակությունը:

## **Հողված 10. Սեփականության երաշխավորումը**

Սահմանադրության 10-րդ հոդվածն ընդլայնում է սեփականության իրավունքի երաշխավորմանը վերաբերող 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 8-րդ հոդվածի կարգավորումները՝ ամրագրելով սեփականության բոլոր ձևերի ազատության և հավասար պաշտպանության սկզբունքը: Հատուկ կարգավորված է ընդերքի և ջրային ռեսուրսների նկատմամբ պետության բացառիկ սեփականության իրավունքը՝ հաշվի առնելով բնական ռեսուրսների բարձր հանրային արժեքն ու կարևորությունը:

## **Հողված 11. Տնտեսական կարգը**

Սոցիալական պետության կարևորագույն բաղադրիչին է նվիրված 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 11-րդ հոդվածը, որը, հենվելով 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության 8-րդ հոդվածի վրա, առաջին անգամ

ամրագրում է սոցիալական շուկայական տնտեսությունը՝ որպես երկրի տնտեսական կարգի հիմք: Առաջին անգամ Արևմտյան Գերմանիայում ներդրված այս հայեցակարգը նախատեսում է սոցիալական և տնտեսական այնպիսի մի համակարգ, որը միավորում է մի կողմից՝ ազատ շուկայական տնտեսությունը՝ տնտեսական գործունեության, մասնավոր սեփականության ազատության, ազատ առևտրի և գնագոյացման իր տարրերով, իսկ մյուս կողմից՝ սոցիալական քաղաքականությունը: Սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքը միտված է շուկայում ազատ մրցակցության ապահովման հետ մեկտեղ այնպիսի միջոցառումներին ու տնտեսական քաղաքականությանը, որոնք կապահովեն ամբողջ բնակչության բարեկեցությունն ու կարիքների բավարարումը: «Շուկայական» բառն այստեղ ընդգծում է պետության անհարկի միջամտությունից զերծ տնտեսության առկայությունը, իսկ «սոցիալական» բառով շեշտադրվում է բնակչության լայն խավերի շահերի և կարիքների հաշվառմամբ գործող տնտեսությունը: Ընդ որում՝ «սոցիալական» բառը պետք է տարբերակել «սոցիալիստական» բառից՝ չնույնացնելու համար այն համակարգերը, որոնցում պետությունը իրեն իրավունք է վերապահում լայնորեն միջամտելու տնտեսությանը և ուղղորդելու այն: Սոցիալական շուկայական տնտեսության ուղենիշը ընդհանուր տնտեսական բարեկեցության, տնտեսական աճի և սոցիալական արդարության միջև կապն է:

Այսպիսով, սահմանադրական բարեփոխումները կարևորում են այն հանգամանքը, որ ժամանակակից սոցիալական պետության բնորոշ հատկանիշը սոցիալական շուկայական տնտեսությունն է ու դրա բնականոն գործունեությունը: Եվ քանի որ ազատ շուկայական տնտեսությամբ պետությունում անհատի ազատ զարգացումն անխուսափելիորեն կապված է հնարավոր անհավասարությունների առաջացման հետ, ապա սոցիալական պետությունը կոչված է տարբեր միջոցառումներով մեղմելու այդ անհավասարությունները՝ իրականացնելով նպատակային քաղաքականություն՝ սոցիալական շերտավորման անհամաչափ խորացում թույլ չտալու համար:

## **Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 12-րդ հոդվածը, հիմնվելով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 10-րդ և 33.2-րդ հոդվածների վրա, հենց սահմանադրական կարգի հիմունքներով ամրագրում է, որ շրջակա միջավայրի պահպանությունը ոչ միայն պետության, այլև յուրաքանչյուր անձի պարտականությունն է: Ընդ որում՝ առաջին անգամ այն կապվում է կայուն զարգացման սկզբունքի հետ: Համանման դրույթ պարունակում էր նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 48-րդ հոդվածի 10-րդ կետը, որը պետության հիմնական խնդիրների մեջ ամրագրում էր «ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության»



իրականացումը: Սակայն այս նորմը լիարժեքորեն չէր արտահայտում կայուն զարգացման սկզբունքի իմաստն ու բովանդակությունը: Կայուն է այնպիսի զարգացումը, որը հնարավոր է դարձնում ներկայի կարիքների բավարարումը՝ առանց վնասելու ապագա սերունդների նման հնարավորությանը: Այսինքն՝ այն մի գործընթաց է, որը ներառում է սոցիալ-տնտեսական զարգացումը՝ միաժամանակ պահպանելով բնական համակարգերի կարողությունը՝ վերարտադրելու և ապահովելու բնական ռեսուրսներ, էկոհամակարգեր, որոնք անհրաժեշտ են ապագա սերունդներին:

Թեև առանձին երկրներում կայուն զարգացման սկզբունքն ամրագրված է նաև որպես ինքնուրույն սահմանադրական սկզբունք՝ իր տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչներով, սակայն առանձին երկրներում էլ այն սահմանադրական մակարդակում հենց փոխկապվում է շրջակա միջավայրի պահպանության հետ: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության սիստեմատիկան այնպիսին է, որ կայուն զարգացման սկզբունքի այն բաղադրատարրերը, որոնք իրենց արտացոլումն արդեն իսկ գտել են Սահմանադրության փոփոխությունների այլ դրույթներում, չեն կրկնվել: Ուստի, կարևորելով այս սկզբունքի առանձնահատուկ նշանակությունը շրջակա միջավայրի պահպանման համատեքստում, սահմանադիրը այն ձևակերպել է հենց այս հոդվածում: Սահմանադրական այս կարգավորումը համահունչ է նաև Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի 37-րդ հոդվածի կարգավորումներին<sup>22</sup>:

### **Հոդված 13. Արտաքին քաղաքականությունը**

Սահմանադրության 13-րդ հոդվածը գրեթե նույնությամբ վերարտադրում է 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության 9-րդ հոդվածի կարգավորումները, այն տարբերությամբ, որ հանվել է արտաքին քաղաքականությունը «միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին» համապատասխան իրականացնելու վերաբերյալ հղումը: Դա թույլ է տալիս խուսափել միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի տարբերակման բարդություններից: Ընդհանուր հղումը միջազգային իրավունքին ավելի համընդգրկուն է:

### **Հոդված 14. Զինված ուժերը և պաշտպանությունը**

Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրական փոքր փոփոխություններով վերարտադրում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 8.2-րդ հոդվածը:

14-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանադրական կարգի հիմունքների մակարդակ է բարձրացրել յուրաքանչյուր քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու պարտականությունը, որը 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ գետեղված

<sup>22</sup> StEU Charter of Fundamental Rights of the European Union, OJ C 326, 26.10.2012:

էր հիմնական իրավունքներին վերաբերող գլխում՝ 46-րդ հոդվածում:

### **Հոդված 15. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը**

Գիտության և մշակույթի խթանումը՝ որպես պետության խնդիր, ամրագրված էր 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 48-րդ հոդվածի 9-րդ կետում: 2015 թ. սահմանադրական փոփոխությունները, այս դրույթները տեղափոխելով սահմանադրական կարգի հիմունքներ, նոր որակ են հաղորդում այս ոլորտին պետական աջակցությանը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս ոլորտում պետական աջակցությունը գալիս է լրացնելու ոլորտի հիմնական սուբյեկտիվ իրավունքները, ինչպիսիք են՝ կրթության իրավունքը (հոդված 38), ստեղծագործության ազատությունը (հոդված 43):

2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը հատուկ կարևորություն է տալիս հայոց լեզվի՝ որպես պետական լեզվի պահպանմանը և զարգացմանը:

Բացի պետական լեզվին վերաբերող առանձին՝ 20-րդ հոդվածից, փոփոխված Սահմանադրությունը ևս մեկ առանձին՝ 15-րդ հոդվածով անդրադառնում է հայոց լեզվի և մշակութային ժառանգության պահպանմանը՝ հենց սահմանադրական կարգի հիմունքներով հռչակելով դրանք պետության հոգածության և պաշտպանության ներքո գտնվող:

### **Հոդված 16. Ընտանիքի պաշտպանությունը**

2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 16-րդ հոդվածը համահունչ է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 35-րդ հոդվածի 1-ին մասին, այն հավելմամբ, որ ընտանիքը ոչ միայն դիտարկվում է որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, այլև բնակչության պահպանման և վերարտադրման հիմք: Սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրվել է նաև մայրության և մանկության հատուկ պաշտպանությունը պետության կողմից, ինչը 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ սահմանված էր ընդամենը որպես պետության խնդիր (հոդված 48, կետ 1):

### **Հոդված 17. Պետությունը և կրոնական կազմակերպությունները**

### **Հոդված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին**

Փոփոխված Սահմանադրության 17-րդ և 18-րդ հոդվածները տարանջատում են պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերությունների վերաբերյալ ընդհանուր կարգավորումները (հոդված 17) Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու վերաբերյալ նորմերից (հոդված 18)՝ միաժամանակ երաշխավորելով կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների՝ պետությունից անջատ լինելու սկզբունքը:

### **Հողված 19. Հայկական սփյուռքի հետ կապերը**

2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը առանձին՝ 19-րդ հոդվածով անդրադառնում է հայկական սփյուռքի հետ կապերին՝ որպես պետության խնդիր առանձնահատուկ շեշտադրելով սփյուռքում հայապահպան քաղաքականության իրականացումը և հայրենադարձության խթանումը:

### **Հողված 20. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն**

### **Հողված 21. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերը**

### **Հողված 22. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը**

2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը 20-22-րդ հոդվածներով որևէ փոփոխություն չի առաջարկում Հայաստանի Հանրապետության պետական լեզվի, խորհրդանիշերի և մայրաքաղաքի վերաբերյալ կարգավորումներում, որոնք 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ կարգավորված էին երկու հոդվածներում (հոդվածներ 12 և 13):

## **4. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները**

Ցանկացած ժողովրդավարական և իրավական պետության սահմանադրության առաջնային խնդիրներից է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումը և դրանց պաշտպանության երաշխավորումը, ինչպես նաև այդ իրավունքների սահմանափակման հնարավոր հիմքերի հստակ կարգավորումը: Երկրի Հիմնական օրենքում իրենց ամրագրումն են գտնում պետության և հասարակության մեջ անհատի գոյության և կենսագործունեության համար առանցքային, հիմնարար իրավունքները, որոնք պատմականորեն զարգացել են մարդ-պետություն հարաբերություններում: Այն, թե ինչ բնույթ ունեն մարդու հիմնական իրավունքների սահմանադրական կարգավորումները և որքանով են դրանք համահունչ համընդհանուր ճանաչում ստացած միջազգային փաստաթղթերի ոգուն, թույլ է տալիս նաև դատողություններ անել պետության առաջադիմական, իրավական և ժողովրդավարական լինելու հանգամանքի մասին:

### **4.1 Իրավիճակը 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո**

Դեռևս 2005 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում Սահմանադրության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող 2-րդ գլխում կատարվեցին զգալի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ: Սակայն սահմանադրական այս փոփոխությունները թերի լուծումներ տվեցին մի շարք առանցքային հարցերի, որոնց

հետևանքով մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխիքները և դրանց գործնական կենսագործման մեխանիզմները մնացին անկատար: Խոսքը, մասնավորապես, հետևյալ խնդիրների մասին է.

- 2005 թ. սահմանադրական բարեփոխումները սկզբունքային լուծումներ չտվեցին իրավունքների անմիջական գործողության երաշխավորման հիմնախնդրին, քանի որ հստակ չտարանջատվեցին ու չամրագրվեցին անմիջականորեն գործող իրավունքները և դրանց պաշտպանության առանձնահատկությունները:
- Թեև Սահմանադրության 2-րդ գլուխը էականորեն լրացվեց, այդուհանդերձ, այն որոշակի բացեր էր պարունակում կարևոր հիմնական իրավունքների և ազատությունների ամրագրման տեսանկյունից:
- 2005 թ. սահմանադրական փոփոխությունները խնդրահարույց էին նաև հիմնական իրավունքների սահմանափակումները սահմանելու և դրանք միջազգային իրավական չափորոշիչներին համապատասխանեցնելու հարցում: Սահմանադրության մի շարք հոդվածներ պարունակում էին հիմնական իրավունքների ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ սահմանափակումներ, ինչի հետևանքով այդ իրավունքների սահմանափակման ծավալի և բովանդակության շուրջ առաջ էին գալիս տարակարծիք մեկնաբանություններ:
- Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր անձի վրա դրված պարտականությունը՝ հարգելու այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը, թույլ էր տալիս Սահմանադրության ուժով հիմնական իրավունքների գործողությունը տարածել մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա: Նման մոտեցումը, սակայն, հակասում է հիմնական իրավունքների մասին ավանդական պատկերացումներին: Բացի այդ, Սահմանադրության 2-րդ գլխի առանձին դրույթներից պարզ չէր, թե ում են դրանք ուղղված՝ միայն պետությանը, թե՛ նաև ուղղակիորեն պարտադիր են այլ անձանց համար<sup>23</sup>:

#### **4.2. 2015 թ. սահմանադրական բարեփոխումների ընդհանուր բնութագիրը**

2015 թ. սահմանադրական բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի ամրապնդումն է ինչպես բովանդակային, այնպես էլ ընթացակարգային առումներով: Նպատակ ունենալով վերացնել 2005 թ. սահմանադրական փոփոխությունների բացերը և հետևելով միջազգային առաջադիմական փորձին ու սահմանադրական իրավունքի զարգացումների արդի միտումներին՝ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը.

<sup>23</sup> Օրինակ՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասություն, 32-րդ հոդվածի 2-րդ մաս:

- հստակեցրեց հիմնական իրավունքների բնույթը՝ որպես սուբյեկտիվ իրավունքներ (տե՛ս 4.2.1.),
- սահմանազատեց անմիջականորեն գործող հիմնական իրավունքները օրենսդրական երաշխիքներից ու պետության նպատակներից (տե՛ս 4.2.2.),
- ամրագրեց մի շարք նոր հիմնական իրավունքներ (տե՛ս 4.2.3.),
- հստակեցրեց հիմնական իրավունքների սահմանափակումների հիմքերը և դրանց ներկայացվող պահանջները (տե՛ս 4.2.4.),
- հիմնական իրավունքների գլխին հաղորդեց տրամաբանական կուռ կառուցվածք (տե՛ս 4.2.5.):

#### **4.2.1. Հիմնական իրավունքները՝ որպես օբյեկտիվ իրավունք և սուբյեկտիվ իրավունքներ**

Սահմանադրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ ոչ թե պետությունն է հիմնական իրավունքների միջոցով մարդուն տալիս կամ շնորհում որոշակի ազատություններ և իրավունքներ, այլ որ այդ հիմնական իրավունքների բովանդակությունը՝ մարդու բնական ազատությունը, նախորդում է սահմանադրությանը, ոչ թե ստեղծվում սահմանադրությամբ: Մարդն ունի գործելու հնարավորություններ, որոնք ներհատուկ են միայն իրեն՝ որպես մարդ արարածի: Այդ առումով դրանք անկախ են պետությունից, մինչպետական են: Մարդու գործելու կարողությունների հանրագումարը, ըստ Գ. Յելլինեկի, կարելի է անվանել մարդու բնական ազատություն<sup>24</sup>: Մարդու այդ բնական ազատությունը արտացոլվում, սեզմենտավորվում է հիմնական իրավունքներում և ձևակերպվում որպես սուբյեկտիվ իրավունք: Մարդու բնական ազատության ճանաչումը հիմնական իրավունքների տրամաբանական նախապայմանն ու էությունն է<sup>25</sup>: Ինչպես դեռևս 1928 թ. նկատել է Կ. Շմիթը, ազատության հիմնական գաղափարը այն է, որ «անհատի ազատության ոլորտը դիտվում է որպես մի բան, որը գոյություն ունի մինչև պետությունը, այսինքն՝ անհատի ազատությունը սկզբունքորեն անսահման է, մինչդեռ այդ ոլորտին միջամտելու պետության իրավասությունը սկզբունքորեն սահմանափակված է»<sup>26</sup>: Ըստ Յ. Իպսենի՝ նման մոտեցումը որևէ առնչություն չունի «բնական իրավունքի» իրավահասկացության հետ, որի կանխադրությամբ մինչպետական իրավունքների գոյությունն է<sup>27</sup>: Ելնելով մարդու բնական ազատության գաղափարից՝ հիմնական իրավունքները կարելի է բնորոշել որպես «սահմանադրական իրավունքի միջոցով անհատի պոզիտիվացված իրավունքներ, որոնք ապահովում են նրա ազատությունը և հավասարությունը պետության հանդեպ»<sup>28</sup>:

<sup>24</sup> Տե՛ս G. Jellinek, System der subjektiven öffentlichen Rechte, 2. Aufl. 1906, էջ 45:

<sup>25</sup> Տե՛ս J. Ipsen, Staatsrecht II. Grundrechte, 19. Aufl., München 2016, էջ 24-25:

<sup>26</sup> Տե՛ս C. Schmitt, Verfassungslehre, 10. Aufl. 2010, էջ 126:

<sup>27</sup> Տե՛ս J. Ipsen, նշվ. աշխ., էջ 25:

<sup>28</sup> Տե՛ս H.-J. Papier, Ch. Krönke, Grundkurs Öffentliches Recht 2 Grundrechte, 2. Aufl., Heidelberg 2015, էջ 3:

Որպես սահմանադրության բաղկացուցիչ մաս՝ հիմնական իրավունքները օբյեկտիվ իրավունք են: Քանի որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ (հոդված 5, մաս 1), իսկ փոփոխված Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասն ուղղակիորեն ամրագրում է հանրային իշխանության սահմանափակվածությունը հիմնական իրավունքներով, հանրային իշխանությունները, ներառյալ Ազգային ժողովը, իրավունք չունեն խախտելու հիմնական իրավունքները և ազատությունները: Խախտելու դեպքում նորմերի վերահսկողության վերացական վարույթում Սահմանադրության 168-րդ հոդվածով սահմանված իրավասու մարմինների դիմումի հիման վրա, իսկ դատարանի ներկայացմամբ՝ նորմերի վերահսկողության կոնկրետ վարույթում սահմանադրական դատարանը կարող է ստուգել, թե արդյո՞ք օրենսդիրը պահպանել է հիմնական իրավունքների միջոցով իր առջև զծված սահմանները:

Սակայն, որպես միայն օբյեկտիվ իրավունք, հիմնական իրավունքների արդյունավետությունը շատ սահմանափակ կլիներ, քանի որ անհատի ազատության պաշտպանությունը կախված կլիներ բացառապես հանրային իշխանության մարմինների հայեցողությունից: Առանձին անհատը չէր կարող սուբյեկտիվ իրավագործության բացակայության պատճառով վկայակոչել դրանք, և անհատական իրավունքների խախտումները հնարավոր չէր լինի պաշտպանել դատական կարգով: Այդ պատճառով հիմնական իրավունքները ոչ միայն օբյեկտիվ, այլև առաջին հերթին սուբյեկտիվ իրավունքներ են, այսինքն՝ իրավունքի սուբյեկտին իրավագործում են մեկ այլ սուբյեկտից պահանջելու որոշակի գործողություն կամ անգործություն: Հիմնական իրավունքների դրույթները անհատին ընձեռում են սուբյեկտիվ-հանրային իրավունքներ, այսինքն՝ հանրային իշխանությունից պահանջելու որոշակի վարքագիծ (գործողություն կամ անգործություն): Սուբյեկտիվ-հանրային իրավունքները սահմանափակում են հանրային իշխանությանը, քանի որ անհատը պետությանը պահանջներ ներկայացնելու իրավունք է ստանում: Օբյեկտիվ իրավունքի դեպքում իրավական նորմն ունի երկու բաղադրատարր՝ նորմի հասցեատեր (հանրային իշխանություն) և նորմի բովանդակություն, այսինքն՝ այն, ինչը պարտադրում է նորմը հանրային իշխանության կրողին: Սուբյեկտիվ-հանրային իրավունքի պարագայում այս երկու բաղադրիչներին ավելանում է նաև երրորդը՝ իրավունքի կրողը: Ուստի հիմնական իրավունքի կառուցվածքն ունի երեք բաղադրատարր՝ հիմնական իրավունքի կրող, հիմնական իրավունքի հասցեատեր և հիմնական իրավունքի բովանդակություն: Ըստ Յ. Իպսենի՝ հիմնական իրավունքների եռատարր կառուցվածքը նույնական է հիմնական իրավունքների բնույթին՝ որպես սուբյեկտիվ-հանրային իրավունքներ, ինչը բխում է հենց Սահմանադրությունից<sup>29</sup>:

<sup>29</sup> Տես J. Ipsen, նշվ. աշխ., էջ 17-18:

#### **4.2.2. Անմիջականորեն գործող իրավունքների սահմանազատումը օրենսդրական երաշխիքներից ու պետության նպատակներից**

Ինչպես արդեն նշվեց վերը, մարդու հիմնական իրավունքների սահմանադրական կարգավորման առաջնային խնդիրներից մեկը անմիջականորեն գործող հիմնական իրավունքների պատշաճ սահմանադրական ամրագրումը և դրանց պաշտպանության ապահովումն է:

Մարդու սահմանադրական իրավունքների մեջ ամենակարևոր, առանցքային խումբը այն հիմնական իրավունքներն են, որոնք հայտնի են «դասական իրավունքներ» անվանմամբ: Դրանք այն իրավունքներն են, որոնք ամրագրում են մարդու ազատությունը և հավասարությունը (օրինակ՝ մարդու արժանապատվությունը, կյանքը, ֆիզիկական անձեռնմխելիությունը, նրա մասնավոր ոլորտի անձեռնմխելիությունը, գործելու ազատությունը, սեփականությունը, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, խոսքի ազատությունը, օրենքի առջև հավասարությունը և այլն): Դրանք մարդուն ուղղակիորեն իրավունք են վերապահում հանրային իշխանությունից պահանջելու որոշակի վարքագիծ. նախ և առաջ՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքներին միջամտելուց, ինչպես նաև, որպես պետությանն ուղղված հավելյալ պահանջ, կատարելու պոզիտիվ գործողություններ իր իրավունքն իրականացնելու համար:

«Դասական» հիմնական իրավունքները պետության հետ մարդու և քաղաքացու հարաբերություններում անմիջականորեն գործող իրավունքներ են, այլ կերպ ասած՝ դրանք կենսագործելի իրավունքներ են հանրային իշխանության նկատմամբ: Այսինքն՝ դրանք առաջացնում են հանրային սուբյեկտիվ իրավունքներ:

«Դասական» հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրման արդյունքում այդ իրավունքները ստանում են ուղղակի գործողություն, իսկ խախտվելու դեպքում դառնում են անմիջականորեն դատական պաշտպանության ենթակա, այդ թվում նաև՝ Սահմանադրական դատարանի կողմից:

Ամենակարևորն այստեղ այն է, որ «դասական» հիմնական իրավունքները պետության համար պարտադիր են, և դրանց իրագործման ծավալը չի կարող տարբեր լինել կամ կախված լինել պետության հայեցողությունից:

«Դասական» հիմնական իրավունքներից պետք է տարբերել սոցիալական քաղաքականության ոլորտում պետության նպատակները և պետության խնդիրները: Դրանք իրավաբանական առումով տարաբնույթ դրույթներ են, ունեն գործողության տարբեր ձևեր և առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ:

Սոցիալական իրավունքների զգալի մասը, որպես կանոն, անմիջականորեն գործող իրավունքներ չեն, այլ սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքներ և պետության նպատակներ են, որոնք մարդու և քաղաքացու համար սուբյեկտիվ իրավունքներ չեն առաջացնում, և պարտավորեցնում են միայն օրենսդիրն ու գործադիրին: Այդ իրավունքները կարող են իրագործվել և ենթակա լինել դատական պաշտպանության միայն այն բանից հետո, երբ դրանց

բովանդակությունն ու ծավալը հստակեցվեն օրենքով: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սոցիալական իրավունքների, սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքների և պետության նպատակների մեծ մասի իրականացման ծավալները կախված են պետության տնտեսական հնարավորություններից: Օրինակ՝ պետության տնտեսական հնարավորություններով պայմանավորված, անվճար բժշկական օգնության ծավալները կարող են զանազան երկրներում տարբեր լինել: Այսինքն՝ պետությունը ոչ թե սահմանադրությամբ, այլ իր օրենսդրությամբ է որոշում դրանց ծավալը:

Վերոհիշյալով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ կան այնպիսի սոցիալական իրավունքներ, որոնք սահմանադրական իրավունքի դոկտրինում պատմականորեն զարգացել են որպես «դասական» հիմնական իրավունքներ, օրինակ՝ կրթության իրավունքը, աշխատանքի ընտրության ազատությունը, գործադուլի իրավունքը և այլն:

Հիմնական իրավունքների անմիջական գործողության առումով 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությունը լուրջ խնդիրներ էր պարունակում: Սահմանադրության 2-րդ գլուխը վերնագրված էր «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները», ինչը առերևույթ տպավորություն էր ստեղծում, թե դրանում ամրագրված բոլոր իրավունքները անմիջականորեն գործող «դասական» հիմնական իրավունքներ են: Մինչդեռ այդ գլխում «դասական» հիմնական իրավունքները որևէ կերպ չէին սահմանազատվել սոցիալական իրավունքներից, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում պետության նպատակներից ու խնդիրներից, ինչպես նաև տարբեր տեսակի արգելքներից: Սահմանադրության 2-րդ գլխի բազմաթիվ հոդվածներում ամրագրվել էին սոցիալական իրավունքներ, իսկ շատ դեպքերում էլ պետության սոցիալական քաղաքականության նպատակները ձևակերպվել էին որպես սոցիալական հիմնական իրավունքներ (օրինակ՝ հանգստի իրավունք, առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք և այլն): Քաղաքացիական և քաղաքական հիմնական իրավունքների և սոցիալ-տնտեսական իրավունքների միջև տարանջատում չդնելը բնորոշ է գրեթե բոլոր հետխորհրդային երկրների սահմանադրություններին<sup>30</sup>: Խնդիրն այն է, որ խորհրդային ռեժիմից անմիջապես հետո պետությունները չէին կարող կտրուկ հրաժարվել խորհրդային սոցիալիստական պետության ավանդույթներից և սոցիալական իրավունքների ուղղակի սահմանադրական ամրագրումից, քանի որ դա պարունակում էր հասարակության կողմից չընկալվելու ռիսկեր: Հետևաբար, սոցիալական իրավունքների ճանաչման և պաշտպանության պատրանքը, առնվազն քաղաքական առումով, առավել գերադասելի էր: Մինչդեռ անգամ տնտեսապես զարգացած այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Ֆրան-

<sup>30</sup> SŃu W. Sadurski, *Postcommunist Charters of Rights in Europe and the U.S. Bill of Rights / Law and Contemporary Problems*, Vol. 65 (Spring 2002), էջ 236:



սիան, Գերմանիան և այլն, սոցիալական իրավունքները սահմանադրությամբ ամրագրված չեն որպես անմիջականորեն գործող իրավունքներ. դրանք նախատեսված են որպես օրենսդրական երաշխիքներ և պետության սոցիալական նպատակներ, որոնք պետություններն ապահովում են միայն իրենց հնարավորությունների շրջանակում:

2005 թ. փոփոխություններով Սահմանադրության 2-րդ գլխի նման շարադրանքը զգալիորեն դժվարացնում էր մարդու իրավունքներին վերաբերող դրույթների կիրառումը, քանի որ պարզ չէր, թե դրանցից որոնք են սուբյեկտիվ իրավունքներ, որոնք՝ ոչ: Արդյունքում, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը, որն ամրագրում էր ժամանակակից սահմանադրություններին բնորոշ կարևորագույն այն դրույթը, համաձայն որի՝ «պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», գործնականում իր իրական իմաստն ու կիրառությունը չէր կարող ստանալ:

Երբ սոցիալական իրավունքներին սահմանադրությամբ տրամադրվում է ամրագրման և պաշտպանության միևնույն ռեժիմը, ինչ մարդու «դասական» հիմնական իրավունքներին (ինչպես 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությամբ), ապա առաջ են գալիս մի շարք խնդիրներ<sup>31</sup>:

Առաջին՝ առաջանում է սխալ և անիրագործելի ակնկալիք, որ սոցիալական իրավունքները պետք է նույն կերպ անմիջականորեն գործեն, ինչպես «դասական» հիմնական իրավունքները, և պետությունն էլ պետք է հավասար ձևով ապահովի դրանց իրականացումը: Եվ ընդհակառակը, քանի որ իրականում սոցիալական իրավունքները ունեն ավելի ցածր աստիճանի պարտադիրություն պետության համար, գործնականում այդ մոտեցումը մեխանիկորեն տարածվում է նաև «դասական» հիմնական իրավունքների վրա՝ դրանով ստեղծելով տպավորություն, թե «դասական» իրավունքները ևս խիստ պարտադիր բնույթ չունեն պետության համար: Օրինակ՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը կամ բնակարանի իրավունքը 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությամբ տեղ էին գտել հիմնական իրավունքների շարքում: Դա նշանակում էր, որ անձը կարող էր դիմել դատարան և պետությունից պահանջել անվճար բժշկական սպասարկում բոլոր տեսակի հիվանդությունների պարագայում, ինչը գործնականում անիրագործելի է: Քանի որ պետությունը չի կարող իրագործել այս իրավունքի պաշտպանությունը, ապա ստացվում էր, որ կան հիմնական իրավունքներ, որոնք կարող են ամեն դեպքում խախտվել: Սա էլ հանգեցնում է այն անցանկալի հետևանքին, որ բոլոր հիմնական իրավունքների պաշտպանության մակարդակը պետության կողմից ինքնաբերաբար թուլանում է, իսկ մարդն էլ դրանք ընդհանրացնում է իր բոլոր իրավունքների մասով և գալիս այն եզրահանգման, որ մարդու իրավունքների սահմանադրական ամրագրումը պատրանք է, և գործնականում այդ իրավունքները պաշտպանված չեն:

<sup>31</sup> Մանրամասների համար տես W. Sadurski, նշվ. աշխ., էջ 228-230:

Երկրորդ՝ սոցիալական իրավունքների իրավական ռեժիմի հավասարեցումը «դասական» հիմնական իրավունքներին խախտում է իշխանությունների բաժանման սկզբունքը, քանի որ, եթե սոցիալական իրավունքները հիմնական իրավունքներ են, ապա դրանց խախտման պարագայում անձը պետք է իրավունք ունենա դիմելու Սահմանադրական դատարան՝ իրավունքի պաշտպանության պահանջով: Արդյունքում, Սահմանադրական դատարանը ստիպված պետք է լինի ներքաշվել սոցիալական քաղաքականության հարցերի քննարկման մեջ և որոշում կայացնել այնպիսի հարցերի վերաբերյալ, որտեղ նա չունի ոչ որակավորում, ոչ հնստիտուցիոնալ լիազորություն և ոչ էլ քաղաքական բավարար լեգիտիմություն: Այսպես, օրինակ, որպեսզի Սահմանադրական դատարանը քննի անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սոցիալական իրավունքի երաշխավորմանը վերաբերող սահմանադրական բողոքը և որոշի, թե արդյոք պետությունը կարող էր կամ չէր կարող ապահովել անվճար բժշկական օգնություն կամ ծառայություն, նա պետք է ներթափանցի Կառավարության իրավասությանը վերապահված ոլորտներ և գնահատի այնտեղ իրականացվող պետական քաղաքականության նպատակահարմարությունը, ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետությունը և այլն: Մինչդեռ դա Սահմանադրական դատարանի իրավասությունից դուրս գտնվող հարց է:

Երրորդ՝ սոցիալական բարեկեցության իրավունքների ամրագրումը սահմանադրական մակարդակով մարդկանց մեջ կարող է առաջացնել բարեկեցությունից կախվածություն, սոցիալական բարեկեցության ապահովման ակնկալիք պետությունից՝ նվազեցնելով բարեկեցությունը ապահովելու հարցում սեփական ուժերի վրա հենվելու անձի ձգտումը:

Մարդու և քաղաքացու իրավունքների ամրագրման և երաշխավորման առումով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը սկզբունքային նոր մոտեցումներ է որդեգրել: Կարևորագույն լուծումներից մեկը, մի կողմից՝ «դասական» հիմնական իրավունքների (գլուխ 2-րդ), իսկ մյուս կողմից՝ սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքների և պետության նպատակների (գլուխ 3-րդ) սահմանազատումն է: Դա հնարավորություն է տալիս առանձնացնելու բոլոր այն հիմնական իրավունքները, որոնց վրա անմիջականորեն հենվելով՝ անձը կկարողանա պաշտպանել իր սահմանադրական իրավունքները, ներառյալ՝ նորմատիվ սահմանադրական գանգատի միջոցով<sup>32</sup>: Միևնույն ժամանակ, սոցիալական ոլորտին վերաբերող այն իրավունքները, որոնք հիմնական իրավունքներ են (օրինակ՝ աշխատանքի ընտրության ազատության իրավունքը կամ գործադուլի իրավունքը՝ Սահմանադրության 57-րդ և 58-րդ հոդվածներ), և որոնք հնարավոր է պաշտպանել նաև սահմանադրական արդարադատության ճանապարհով, ամրագրված են 2-րդ գլխում՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ:

<sup>32</sup> Այս մոտեցումը ողջունել է նաև Վենետիկի հանձնաժողովը, տե՛ս CDL-AD(2015)037, կետ 15:

### 4.2.3. Նոր հիմնական իրավունքների ամրագրումը

Փոփոխված Սահմանադրության մեջ ամրագրված մարդու հիմնական իրավունքներն արտացոլում են, մասնավորապես, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի<sup>33</sup> և դրա հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի<sup>34</sup> ձևավորած պրակտիկայի, Մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի դրույթները<sup>35</sup>, ինչպես նաև բազմաթիվ առաջադիմական կարգավորումներ, որոնք իրենց տեղն են գտել տարբեր երկրների սահմանադրություններում:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, մասնավորապես, առաջին անգամ ամրագրում է այնպիսի հիմնական իրավունքներ, ինչպիսիք են.

- մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը (հոդված 25),
- մարմնական պատիժների արգելքը (հոդված 26),
- կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդված 30),
- պատվի և բարի համբավի անձեռնմխելիությունը (հոդված 31),
- անձնական տվյալների պաշտպանությունը (հոդված 34),
- երեխայի իրավունքները (հոդված 37),
- այլընտրանքային ծառայության իրավունքը (հոդված 41, մաս 3),
- պատշաճ վարչարարության իրավունքը (հոդված 50),
- տեղեկություններ ստանալու իրավունքը (հոդված 51),
- քաղաքական ապաստանի իրավունքը (հոդված 54),
- արտաքսման արգելքը (հոդված 55, մաս 1),
- պետության կողմից պատճառված վնասի հատուցման պարտականությունը (հոդված 62),
- ներման խնդրանքի իրավունքը (հոդված 70),
- մեղքի սկզբունքը և պատժի նշանակման ժամանակ համաչափության սկզբունքը (հոդված 71):

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ոչ միայն սահմանում է նոր հիմնական իրավունքներ, այլև միջազգային մոտեցումներին համահունչ զար-

<sup>33</sup> Ընդունվել է 1950 թ. նոյեմբերի 4-ին (այսուհետ՝ ՄԻԵԿ): Տե՛ս «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», N 5 (13), 20.12.2004 թ.:

<sup>34</sup> Այսուհետ՝ ՄԻԵԴ:

<sup>35</sup> Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի 2200 ա (xxi) բանաձևով, ուժի մեջ է մտել 1976 թ. մարտի 23-ին: Տեսուսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի 2200 ա (xxi) բանաձևով, ուժի մեջ է մտել 1976 թ. հունվարի 3-ին: Տե՛ս «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», N 4 (12), 20.12.2004 թ.:

զացնում է 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ արդեն իսկ ամրագրում ստացած իրավունքների բովանդակությունը<sup>36</sup>:

#### **4.2.4. Հիմնական իրավունքների սահմանափակումները և դրանց ներկայացվող պահանջները**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում արմատական վերանայման է ենթարկվել հիմնական իրավունքների սահմանափակումների կարգավորումը: Դա վերաբերում է ինչպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմնական ձևի՝ օրենքի վերապահման ամրագրմանը, այնպես էլ սահմանափակումների հիմքերին: Հատուկ կարևորություն ունի նաև սահմանափակումներին ներկայացվող պահանջների հստակեցումը: Սահմանափակումն օրենքին վերապահելն օրենսդրի իրավասությանն է թողնում հանրության կամ այլ անձանց շահերի հետ բախումը կանխելու և տարբեր շահերն ու իրավունքները միմյանց հետ համաձայնեցնելու խնդրի լուծումը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հիմնականում որդեգրել էր օրենքի որակյալ վերապահման տեխնիկան՝ հենց Սահմանադրությամբ սահմանելով համապատասխան հիմնական իրավունքի սահմանափակման որոշակի հիմքեր: Հիմնական խնդիրն այստեղ այն է, թե ինչպես պետք է ամրագրվեն այդ սահմանափակումների հիմքերը: Դրանք կարող են լինել ընդհանուր՝ սահմանափակման ենթակա բոլոր իրավունքների համար (ինչպես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում), կամ հատուկ՝ յուրաքանչյուր հիմնական իրավունքի համար: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հրաժարվել է հիմնական իրավունքների ընդհանուր սահմանափակումներից՝ նախատեսելով յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման հիմքերն առանձին: Այս մոտեցումը թույլ է տալիս հաշվի առնել յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման առանձնահատկությունները, ինչն ակնհայտորեն ավելի նախընտրելի է հիմնական իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Փոփոխված Սահմանադրությունը, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության և ՄԻԵԿ համեմատ, ընդլայնել է այն հիմնական իրավունքների և ազատությունների թիվը, որոնք ենթակա չեն սահմանափակումների արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ (հոդված 76):

Հիմնական իրավունքների սահմանափակումների հիմնախնդիրը սերտորեն կապված է նաև այդ սահմանափակումներին ներկայացվող պահանջների հետ: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ուղղակի պահանջ էր ներկայացնում այն օրենքներին, որոնք սահմանափակում են հիմնական իրավունքները: Փոփոխված Սահմանադրությունը օրենսդրի հայեցողությունը սահմանափակող

<sup>36</sup> Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում ևս ընդգծել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ մարդու իրավունքներին վերաբերող գլխի առաջադիմական բնույթը և դրա համապատասխանությունը միջազգային փաստաթղթերի պահանջներին, տե՛ս CDL-AD(2015)037, կետ 14-22:

հավելյալ սահմանադրաիրավական պահանջներ է սահմանել: Նկատի ունենալով այն լեգիտիմ շահերի բազմազանությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել հիմնական իրավունքների սահմանափակումների համար, այդ պահանջների ցանկը չի կարող սպառիչ լինել, սակայն Սահմանադրությունն ամրագրել է այն պահանջները, որոնք համընդհանուր ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում, ինչպես նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասում: Խոսքը համաչափության, որոշակիության և իրավունքի էության անխախտելիության սկզբունքների (Սահմանադրության հոդվածներ 78-80) հստակ ամրագրման մասին է:

Լրացուցիչ կարևոր երաշխիք է 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պահանջը, որը նախատեսում է, որ հիմնական իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Նույնաբովանդակ դրույթ ամրագրված էր նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասում:

Միաժամանակ, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 75-րդ հոդվածը հատուկ պահանջներ է սահմանում հիմնական իրավունքները կարգավորող օրենքների նկատմամբ, որոնց նպատակը հիմնական իրավունքների արդյունավետ գործողության և կենսագործելիության ընթացակարգային նախադրյալներ ստեղծելն է:

#### **4.2.5. Սահմանադրության 2-րդ գլխի սիստեմատիկան**

Հիմնական իրավունքների շարադրանքի հերթականությունը տարբեր երկրների սահմանադրություններում մեծապես տարբերվում է միմյանցից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմնական իրավունքների միջոցով պաշտպանվող իրավական բարիքները բազմաթիվ են և բազմազան, և չկա դրանց միասնական, տիպային գիտական դասակարգում:

Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրությունում հիմնական իրավունքների սիստեմատիկան հետևյալն է.

- Մարդու արժանապատվությունը, կյանքը, անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (հոդվածներ 23-27),
- Հավասարությունը (հոդվածներ 28-30),
- Մարդու մասնավոր ոլորտի պաշտպանությունը (հոդվածներ 31-34),
- Մարդու նեղ սոցիալական ոլորտը՝ անուանությունը, ընտանիքը, ծնողները, երեխաները, նրանց կրթությունը (հոդվածներ 35-38),
- Մարդու ազատությունը (հոդվածներ 39-60),
- Արդարադատական իրավունքները և երաշխիքները (հոդվածներ 61-73),
- Հիմնական իրավունքների ծավալը, սահմանափակումները և դրանց ներկայացվող պահանջները (հոդվածներ 74-81):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության սիստեմատիկայի հիմքում հիմնական իրավունքների բաժանումն է ազատության և հավասարության իրավունքների: Ազատությունն ու հավասարությունը սերտորեն փոխկապված են: Մարդու իրավունքները արտածվում են մարդու էությունից, այսինքն՝ դրանք ներհատուկ են մարդուն՝ որպես այդպիսին, հետևաբար այդ իրավունքները վերաբերում են բոլոր մարդկանց: Ազատությունը՝ որպես մարդու իրավունք, անհրաժեշտաբար բոլոր մարդկանց համար հավասար ազատություն է:

Սահմանադրության 23-27-րդ հոդվածներով պաշտպանված իրավական բարիքները մարդու գոյության և ազատ գործելու հնարավորության նախադրյալներն են: Մարդու ազատության նախադրյալների շարադրանքից հետո Սահմանադրությունը 28-30-րդ հոդվածներում ամրագրում է ընդհանուր և հատուկ իրավահավասարության իրավունքները:

Մարդու ազատ գործելու հնարավորությունների բնական շարունակությունը մարդու մասնավոր ոլորտն է, որը ներառում է մարդու մասնավոր և ընտանեկան կյանքը, պատիվն ու բարի համբավը, բնակարանի, հաղորդակցության և անձնական տվյալների անձեռնմխելիությունը (հոդվածներ 31-34): Մարդու մասնավոր ոլորտի հետ սերտորեն առնչվում է մարդու նեղ սոցիալական ոլորտը՝ ամուսնությունը, ընտանիքը, ծնողները, երեխաները, ինչպես նաև նրանց կրթությունը (հոդվածներ 35-38):

Հիմնական իրավունքների ցանկից ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների մեծամասնությունը պաշտպանում է մարդու ազատ գործելու հնարավորությունները: Մարդու ազատությունների շարադրանքը սկսվում է 39-րդ հոդվածում ամրագրված ազատ գործելու ընդհանուր իրավունքից, որին հաջորդում են մարդու ազատ գործելու առանձին իրավունքները (հոդվածներ 40-60):

Սահմանադրության 61-73-րդ հոդվածները նվիրված են արդարադատական իրավունքներին և երաշխիքներին: Դրանք բավականին բազմաբնույթ են, սակայն հիմնականում կարգավորում են ընթացակարգային խնդիրներ: Այդ դրույթների համար ընդհանուրն այն է, որ դրանք ուղղված են արդյունավետ իրավական պաշտպանության իրականացմանը, ինչը իրավական պետության սկզբունքի կարևորագույն բաղադրատարրերից մեկն է:

Սահմանադրության 74-81-րդ հոդվածները թեև չեն սահմանում առանձին հիմնական իրավունքներ, այդուհանդերձ հիմնարար նշանակություն ունեն հիմնական իրավունքների ծավալի, սահմանափակումների և վերջիններիս ներկայացվող պահանջների տեսանկյունից: Քանի որ անձի կողմից իր հիմնական իրավունքների իրականացումը շատ դեպքերում բախման մեջ է մտնում այլոց և հանրության շահերի հետ, ապա, բացի հիմնական իրավունքների սահմանափակումների համար հիմքեր սահմանելուց, հսկայական նշանակություն ունեն այն պահանջները, որոնք ներկայացվում են հանրային իշխանություններին՝ հիմնական իրավունքները սահմանելիս և կիրառելիս: Այդ պահանջների մեջ,

անկասկած, գլխավորը համաշափության սկզբունքն է, որն առաջին անգամ ուղղակիորեն սահմանվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 78-րդ հոդվածում:

### **4.3. Սահմանադրության 2-րդ գլխի փոփոխությունների համառոտ վերլուծությունը**

#### **Հոդված 23. Մարդու արժանապատվությունը**

Ինչպես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, այնպես էլ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 2-րդ գլուխը տրամաբանորեն սկսվում են մարդու արժանապատվության իրավունքի ամրագրմամբ, քանի որ այն մարդու իրավունքների և ազատությունների հիմքում ընկած, հիմնարար նշանակություն ունեցող անքակտելի իրավունք է: Մարդու իրավունքների և ազատությունների այլ հնարավոր սահմանափակումները չպետք է խաթարեն մարդու արժանապատվությունը: Մարդու որևէ իրավունք չի կարող օգտագործվել այնպես, որ ոտնահարի այլոց արժանապատվությունը<sup>37</sup>:

Մարդու «արժանապատվությունը» Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ճանաչում է նաև սահմանադրական կարգի հիմունք<sup>38</sup>: Միաժամանակ այն ճանաչվում է որպես մարդու սուբյեկտիվ իրավունք՝ 23-րդ հոդվածի ուժով:

23-րդ հոդվածը համահունչ է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 1-ին հոդվածի, Գերմանիայի Հիմնական օրենքի 1-ին հոդվածի դրույթներին: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 14-րդ հոդվածում ամրագրված մյուս դրույթները արտացոլված են Սահմանադրության 3-րդ հոդվածում, այդ իսկ պատճառով 23-րդ հոդվածում այլևս չեն կրկնվել:

#### **Հոդված 24. Կյանքի իրավունքը**

Արժանապատվության իրավունքը ամրագրող հոդվածին հետևում է մարդու իրավունքների համակարգում իր կարևորությամբ նույնքան սկզբունքային՝ կյանքի իրավունքի գրեթե անփոփոխ կարգավորումը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 15-րդ հոդվածի համեմատ՝ փոփոխված Սահմանադրության միակ նորույթը 24-րդ հոդվածի 2-րդ մասն է, որը սահմանում է, որ ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այստեղ խոսքը կյանքից կամայականորեն զրկելու արգելքի մասին է: Դա պայմանավորված է նրանով, որ ըստ միջազգային տարբեր դաշնագրերի և դատական պրակտիկայում կյանքի իրավունքը բացարձակ չէ և

<sup>37</sup> Տե՛ս Commentary of the Charter of Fundamental Rights of the European Union, EU Network of Independent Experts on Fundamental Rights, June 2006, էջ 28-29:

<sup>38</sup> Այս մասին տե՛ս նաև 3-րդ հոդվածի պարզաբանումներում:

որոշակի դեպքերում կարող է ենթակա լինել սահմանափակումների<sup>39</sup>: Օրինակ, ՄԻԵԿ 2-րդ հոդվածի 2-րդ մասը, որպես մարդուն կյանքից զրկելու օրինական հիմքեր է սահմանում ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելը, օրինական ձերբակալում իրականացնելը, օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելը, ինչպես նաև խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելը: Սակայն այս իրավիճակներում կյանքի իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին<sup>40</sup>:

### **Հոդված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը**

Փոփոխված Սահմանադրությամբ ամրագրված կյանքի իրավունքի բովանդակությունն ամբողջականացվում է դրան հաջորդող 25-րդ հոդվածով՝ մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի ամրագրմամբ: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ այս իրավունքը նախատեսված էր: Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը ավանդաբար մեկնաբանվել է խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի կամ պատժի համատեքստում, սակայն վերջին տարիներին այն զարգանում է որպես ինքնուրույն իրավունք, որի բովանդակությունը շատ ավելի լայն է: Այս իրավունքը իր ամրագրումն է ստացել բժշկության և կենսաբանության ոլորտի արդի միջազգային փաստաթղթերում<sup>41</sup>, ինչպես նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 3-րդ հոդվածում: Մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը յուրաքանչյուր մարդու երաշխավորում է, որ նրա ֆիզիկական, մարմնական ամբողջականությունը չի խախտվի, նա չի ենթարկվի ֆիզիկական և հոգեկան կտտանքների: Բացի դրանից, այն նաև ներառում է մարդու մարմնի և հոգեկան աշխարհի նկատմամբ առավել նվազ լրջության միջամտությունները. օրինակ՝ հոգեմետ դեղերով պարտադիր բուժումները, հարկադիր հոգեբուժական միջամտությունները, մարմնական ստուգումները, մտքի լվացումը և այլ հարկադիր բժշկական միջամտությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ հանրային ավելի բարձր շահերի պաշտպանությանը: Այս իրավունքի գործնական նշանակությունը առավելապես դրսևորվում է բժշկության, կենսաբանության և տեխնոլոգիայի ոլորտի արդի զարգացումների համատեքստում՝ անհամաչափ միջամտությունից և վտանգներից անձին պաշտպանություն տրամադրելու առումով:

Փոփոխված Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասը թվարկում է

<sup>39</sup> Այս մասին նշել է նաև Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում, տե՛ս CDL-AD(2015)037, կետ 17:

<sup>40</sup> Տե՛ս 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 78-րդ հոդված:

<sup>41</sup> Տե՛ս Convention for Protection of Human Rights and Dignity with regards to Application of Biology and Medicine 1997 and Additional Protocol on Prohibition of Cloning of Human Beings, ETS No. 164; Universal Declaration on the Human Genome and Human Rights, adopted by the General Conference of UNESCO on 11 November 1997:



բժշկության և կենսաբանության ոլորտում այն գործողությունները, որոնք հենց Սահմանադրության մակարդակով արգելվում են, քանի որ պարունակում են մարդու ֆիզիկական անձեռնմխելիությանը միջամտելու մեծ վտանգներ: Այսպես, արգելված են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը: Եվգենիկական փորձերի արգելքը ուղղված է պետությունների կողմից համապատասխան սելեկցիոն ծրագրերի ներդրման ու իրականացման կանխարգելմանը՝ հարկադիր ստերիլացման, հարկադիր հղիության, էթնիկական ամուսնությունների, էթնիկ գտման և այլն եղանակներով:

Մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու արգելքը իր հերթին ուղղված է կանխարգելելու մարդու օրգանների և հյուսվածքների թաֆիկինգը և առևտրային նպատակներով դրանց օգտագործումը: Դա չի արգելում, սակայն, օրգանների փոխպատվաստման շրջանակներում որոշակի հատուցումների տրամադրումը՝ պայմանավորված բժշկական ծառայությունների դիմաց վճարներով կամ դոնորին պատճառված վնասի համար տրվող հատուցմամբ<sup>42</sup>:

25-րդ հոդվածի 4-րդ մասում իր ամրագրումն է ստացել 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության՝ խոշտանգումների արգելքին նվիրված 17-րդ հոդվածի 2-րդ մասի այն կարգավորումը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի: Ընդ որում, ի տարբերություն 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության 17-րդ հոդվածի, 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 25-րդ հոդվածում նախատեսված է, որ համաձայնությունը պետք է արտահայտված լինի ազատ և հստակ, իսկ որպես անձի տեղեկացված ու գիտակցված որոշումն ապահովելու երաշխիք նախատեսված է, որ մարդը պետք է նախօրոք տեղեկացվի նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

### **Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը**

Այս հոդվածը վերարտադրում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 17-րդ հոդվածի դրույթները, այն կարևոր տարբերությամբ, որ 26-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է նաև մարմնական պատիժների արգելքը: Մարմնական պատիժների արգելքը, կախված դրանց սաստկությունից, ըստ ՄԻԵԴ դատական պրակտիկայի, անհրաժեշտաբար չի դասվում «նվաստացնող վերաբերմունքին կամ պատժին», և այդ պատճառով 26-րդ հոդվածի 2-րդ մասը կարևոր նշանակություն ունի հատկապես երեխաների նկատմամբ մարմնական պատիժները արգելելու տեսանկյունից<sup>43</sup>:

<sup>42</sup> Տե՛ս Protocol 2 to the Convention on Human Rights and Biomedicine concerning Transplantation of Organs and Tissues of Human Origin (ETS No. 186), 21-րդ և 22-րդ հոդվածներ:

<sup>43</sup> Տե՛ս մասնավորապես Campbell and Cosans v UK (1982), Y v UK (1992), Costello-Roberts v UK (1993) գործերը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առանց մարդու համաձայնության նրան գիտական, բժշկական և այլ փորձերի ենթարկելու արգելքը, տեղ է գտել փոփոխված Սահմանադրության 25-րդ հոդվածում:

### **Հոդված 27. Անձնական ազատությունը**

Այս հոդվածը զարգացնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 16-րդ հոդվածի կարգավորումները: 27-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները համապատասխանեցվել են ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներին, որով ՄԻԵԴ-ը բավական հարուստ պրակտիկա ունի: Համահունչ կարգավորումները նպաստում են համապատասխան նորմերի մեկնաբանությանն ու գործնական կիրառությանը՝ ՄԻԵԴ պրակտիկայի լույսի ներքո: Այս հոդվածի առանձին կարգավորումներ ավելի հեռուն են գնում, քան ՄԻԵԿ համապատասխան հոդվածի դրույթները՝ իմպլեմենտացնելով նաև ՄԻԵԿ դատական պրակտիկան:

Հոդվածի ողջ տեքստում օգտագործվում է «ազատությունից զրկել», «ազատությունից զրկելու պահ» եզրույթները, նախկինում կիրառվող «ձերբակալում», «ձերբակալման պահ» եզրույթների փոխարեն: Սա ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ տառացի մեկնաբանելիս կարող է ստեղծվել տպավորություն, թե հոդվածով նախատեսված որոշակի երաշխիքները տարածվում են միայն ձերբակալված անձի վրա: Մինչդեռ ՄԻԵԴ դատական պրակտիկան այս հարցում հստակ է, և Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված բոլոր երաշխիքները տարածվում են անձնական ազատությունից փաստացի զրկված բոլոր անձանց վրա՝ ազատությունից փաստացի զրկման պահից սկսած:

27-րդ հոդվածի 3-րդ մասում, որը նախատեսում է ազատությունից զրկված անձի կարևորագույն իրավունքներից մեկը՝ իր ընտրած անձին անհապաղ տեղեկացնելու իրավունքը, նախատեսվել է այս իրավունքի հետաձգման հնարավորություն, օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և ժամկետներով, եթե դա անհրաժեշտ է հանցագործության կանխման կամ բացահայտման նպատակով: Նման նորմի գոյությունը տրամաբանական է, քանի որ անհապաղ տեղեկացման իրավունքի իրացման միջոցով կասկածյալը կարող է, օրինակ, իր հանցակիցներին տեղեկատվություն հաղորդել և հրահանգներ տալ, թաքցնել կարևոր ապացույցներ և այլ կերպ խոչընդոտել հանցագործության կանխումը կամ բացահայտումը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասը դատական կարգով կալանավորման համար սահմանում էր 72 ժամվա առավելագույն ժամկետ, մինչդեռ փոփոխված Սահմանադրությունը, պահպանելով այս առավելագույն ժամկետի պահանջը, ավելի ճկուն է գտնվել և նախատեսել է «ողջամիտ ժամկետում» դատարան ներկայացվելու պահանջ, ինչը վարույթ իրակա-

նացնող մարմնին պարտավորեցնում է առաջնորդվել անձի համար հնարավոր առավել բարենպաստ ժամկետներով:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասը, ինչպես 2005 թ. խմբագրությանը Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասը, նախատեսում է մեկ այլ կարևոր երաշխիք, այն է՝ ազատությունից զրկելու իրավաչափության դատական կարգով ստուգման իրավունքը: Ի լրումն նախկին կարգավորումների՝ սահմանված է, որ դատարանը պետք է որոշում կայացնի «սեղմ ժամկետում», ինչը անազատության մեջ գտնվելու ժամկետների սահմանափակման լրացուցիչ երաշխիք է:

2005 թ. խմբագրությանը Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած՝ ապօրինի ազատազրկման կամ խուզարկության դեպքում պատճառված վնասի հատուցման իրավունքը ամրագրված է փոփոխված Սահմանադրության 62-րդ հոդվածում, որը նախատեսում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցման ընդհանուր իրավունքը:

2015 թ. խմբագրությանը Սահմանադրության 27-րդ հոդվածից բացակայում են ապօրինի խուզարկությունը արգելող և դատական կարգով դրա իրավաչափությունը ստուգելու հնարավորություն տվող դրույթները, որոնք նախատեսված էին 2005 թ. խմբագրությանը Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերով: Սիստեմատիկայի տեսանկյունից նման դրույթների ներառումը անձի ազատության հիմնական իրավունքի շրջանակներում անհրաժեշտ չէ, քանի որ այն շոշափում է մարդու ֆիզիկական անձեռնմխելիությունը, որը նախատեսված է փոփոխված Սահմանադրության 25-րդ հոդվածով:

### **Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը**

Սա առանցքային ընդհանուր իրավունք-սկզբունք է, որը համահունչ է 2005 թ. խմբագրությանը Սահմանադրության 14.1-ին հոդվածի 1-ին մասի ձևակերպմանը: Փոփոխված Սահմանադրության կարգավորումը տարբերվում է միայն նրանով, որ 2005 թ. խմբագրությանը Սահմանադրության 14.1-ին հոդվածի 2-րդ մասը, որը սահմանում է խտրականության արգելքը, առանձնացվել է 29-րդ հոդվածում: 28-րդ հոդվածն ամրագրում է հավասարության ընդհանուր սկզբունքը, իսկ հաջորդ 29-րդ և 30-րդ հոդվածներում խոսքը հավասարության հատուկ իրավունքների մասին է: Հավասարության ընդհանուր դրույթը սուբսիդիար է հավասարության հատուկ իրավունքների նկատմամբ: Ինչպես հավասարության բոլոր իրավունքները, հավասարության ընդհանուր իրավունքը ևս իր կառուցվածքով տարբերվում է ազատության իրավունքներից: Ի տարբերություն ազատության իրավունքների՝ հավասարության ընդհանուր իրավունքը սահմանափակված չէ որևէ կոնկրետ ոլորտով և գործում է ամենուրեք: Բացի այդ, հավասարության ընդհանուր իրավունքը անպայման պահանջում է համեմատություն այլ անձանց հետ:

### **Հողված 29. Խտրականության արգելքը**

Խտրականության արգելքը լրացնում է ընդհանուր հավասարության իրավունքը: Ընդհանուր հավասարության և խտրականության կարգավորումը առանձին սկզբունքների տեսքով համահունչ է նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 20-րդ և 21-րդ հոդվածներին, ՄԻԵԿ 12-րդ արձանագրության 1-ին հոդվածին: Նման մոտեցումն ընդգծում է խտրականության արգելքի առանձնահատուկ դերն ու նշանակությունը:

Փոփոխված Սահմանադրությունը, միջազգային փաստաթղթերում ճանաչված մոտեցումներին համապատասխան, թվարկում է խտրականության այն տեսակները, որոնք արգելված են սահմանադրական մակարդակում: Խտրականության այլ հնարավոր դեպքերը պետք է մեկնաբանվեն և գնահատական ստանան դատական պրակտիկայում՝ ընդհանուր հավասարության 28-րդ հոդվածի շրջանակներում: Բովանդակային առումով խտրականության տեսակներին վերաբերող դրույթները փոփոխություն չեն կրել՝ համեմատած 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հետ:

### **Հողված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը**

Ամրագրելով ընդհանուր հավասարության սկզբունքը, ինչպես նաև խտրականության արգելքը՝ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիային համահունչ, առաջին անգամ առանձին հոդվածով հատուկ ամրագրում է հավասարության մասնավոր տեսակ, այն է՝ տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը: Այս հոդվածը սահմանում է իրավահավասարության սուբյեկտիվ իրավունք: Միևնույն ժամանակ, նպատակ ունենալով ինտեգրել կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը պետական քաղաքականության և գործողությունների բոլոր ոլորտներում և խթանել կանանց ու տղամարդկանց փաստացի իրավահավասարությունն ապահովելուն ուղղված միջոցառումները՝ Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ կետն այն ամրագրում է որպես պետության նպատակ:

### **Հողված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը**

Փոփոխված Սահմանադրությունն ընդլայնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 23-րդ հոդվածով պաշտպանվող արժեքների շրջանակը՝ մասնավոր և ընտանեկան կյանքից բացի դրանց մեջ ներառելով նաև անձի պատիվն ու բարի համբավը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը պատվի և բարի համբավի պաշտպանությանը անդրադառնում էր միայն 43-րդ հոդվածի 1-ի մասում նախատեսված մարդու իրավունքների սահմանափակման հիմքերի մեջ: ՄԻԵԿ 8-րդ հոդվածը ևս, նախատեսելով մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքը, պատվի ու բարի համբավի հարցը չի կարգավորում: Փոփոխված Սահմանադրության մոտեցումը նման է Եվրոպական մի շարք սահ-

մանադրությունների կարգավորումներին<sup>44</sup>: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-4-րդ մասերում ամրագրված դրույթները կարգավորվել են փոփոխված Սահմանադրության 33-րդ և 34-րդ հոդվածներում առանձին իրավունքների տեսքով:

### **Հոդված 32. Բնակարանի անձեռնմխելիությունը**

Փոփոխված Սահմանադրությունը, 2005 թ. Սահմանադրության 24-րդ հոդվածին համապատասխան, անդրադառնում է բնակարանի անձեռնմխելիության իրավունքին: Ինչպես ՄԻԵԿ 8-րդ հոդվածը, այնպես էլ Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 7-րդ հոդվածը բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարգավորում են մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության հոդվածի շրջանակներում:

Բացի այդ, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 24-րդ հոդվածի 2-րդ մասը միայն բնակարանի խուզարկության դեպքում էր նախատեսում դատարանի որոշման պահանջ: Փոփոխված Սահմանադրության 32-րդ հոդվածի 3-րդ մասը պահպանում է բնակարանի խուզարկությունը միայն դատարանի որոշմամբ կատարելու պահանջը և, ի լրումն դրա, բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման համար թույլատրում է նաև այլ դեպքերում օրենքով նախատեսել դատարանի որոշման պահանջ:

### **Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը**

Փոփոխված Սահմանադրությունը, նպատակ ունենալով ընդգծել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիության իրավունքի կարևորությունը, այն կարգավորել է առանձին հոդվածով: Այս իրավունքը լայն իմաստով մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի մասն է կազմում: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարգավորում էր 23-րդ հոդվածի 5-րդ մասով:

33-րդ հոդվածի 2-րդ մասը, ՄԻԵԿ 8-րդ հոդվածին համահունչ, սահմանում է հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը սահմանափակելու հիմքերը:

Ինչպես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասը, այնպես էլ փոփոխված Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մասը հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման հնարավորությունը նախատեսել է միայն դատարանի որոշմամբ, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ խոսքը միայն հաղորդակցության գաղտնիության, այլ ոչ թե ազատության սահմանափակման մասին է:

<sup>44</sup> Տե՛ս Էստոնիայի Սահմանադրության 17-րդ հոդված, Հունաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մաս, Հունգարիայի Սահմանադրության 6-րդ հոդված, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մաս:

Միննույն ժամանակ, 33-րդ հոդվածի 3-րդ մասով գաղտնիության դատական կարգով սահմանափակման պահանջից բացառություն է նախատեսված առանձին կատեգորիայի անձանց հաղորդակցության իրավունքի համար, եթե դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվող անձանց առանձնահատուկ կարգավիճակով: Այդ անձանց շրջանակը պետք է սահմանվի օրենքով: Սահմանադրական այս նորմը պետք է հետագայում հստակեցվի օրենսդրական կարգավորումներում և դատական պրակտիկայում, որպեսզի չվերաձվի չարաշահումների, բավարարի հիմնական իրավունքների սահմանափակումներին ներկայացվող պահանջները (Սահմանադրության հոդվածներ 78-81):

### **Հոդված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը**

Տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաները ընձեռում են անձի վերաբերյալ տվյալներ հավաքելու և առանց պետական սահմանների դրանք օգտագործելու լայն հնարավորություններ: Իր առավելություններով հանդերձ՝ տեղեկատվության այդ հսկայական ծավալները, դրա զանգվածային և արագ հասանելիությունը մեծ ռիսկեր են պարունակում անձի մեկ այլ կարևոր իրավունքի՝ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության պաշտպանություն համար: Ուստի պետության առջև խնդիր է ծառանում ապահովել մի կողմից՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու ու տարածելու ազատությունը, իսկ մյուս կողմից՝ անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Այդ իսկ պատճառով ժամանակակից թափանցիկ աշխարհում անձնական տվյալների պաշտպանության իրավունքը աստիճանաբար սահմանադրականորեն կարգավորվում ու պաշտպանվում է որպես ինքնուրույն իրավունք՝ առանձնանալով մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքից: Այս մոտեցումը տեղ է գտել եվրոպական տարբեր երկրների սահմանադրություններում և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 8-րդ հոդվածում: Ժամանակակից միջազգային կարգավորումներին համապատասխան<sup>45</sup> 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը առաջին անգամ սահմանադրական մակարդակով լիարժեքորեն ամրագրում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքը՝ անդրադառնալով անձնական տվյալների հավաքման, մշակման և դրանց ծանոթանալու հարցերին: ՄԻԵԿ-ը այն կարգավորում է 8-րդ հոդվածի լույսի ներքո:

Անձնական տվյալը բնորոշվում է որպես որոշակի ֆիզիկական անձի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն<sup>46</sup>: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ այս հարցերը կարգավորված էին 23-րդ հոդվածի 2-4-րդ մասե-

<sup>45</sup> Տե՛ս Directive 95/46/EC of the European Parliament and of the Council of 24 October 1995 on the protection of individuals with regard to the processing of personal data and on the free movement of such data, OJ L 281 of 23.11.1995; Convention for the Protection of Individuals with regard to Automatic Processing of Personal Data (1981), ETS No.108:

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղը, հոդված 2:

րում՝ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության համատեքստում, և ոչ թե առանձին իրավունքի տեսքով:

34-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է այս ոլորտում միջազգային փաստաթղթերում ամրագրված անձնական տվյալների մշակման կարևորագույն սկզբունքները՝ բարեխղճությունը, օրենքով սահմանված նպատակը, անձի համաձայնությունը:

### **Հոդված 35. Ամուսնանալու ազատությունը**

Ամուսնանալու ազատությունը 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված չէր որպես ինքնուրույն իրավունք, այլ կարգավորվում էր 35-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ընտրանքին և մայրությանը վերաբերող այլ հարցերի շրջանակում: Ամուսնանալու ազատության ինքնուրույն ամրագրումը համահունչ է ՄԻԵԿ 12-րդ հոդվածին, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 9-րդ հոդվածին, Եվրոպական շատ երկրների սահմանադրական կարգավորումներին:

35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը գրեթե տառացիորեն կրկնում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 35-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված կարգավորումները ամուսնության էության, ամուսինների իրավահավասարության վերաբերյալ, սակայն հստակեցված է, որ ամուսնության տարիքը և կարգը սահմանվում են օրենքով: Փոփոխված Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է ամուսնանալու ազատության սահմանափակման հիմքերը՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը արգելում է գրանցված մեկ այլ ամուսնության մեջ գտնվող անձանց, մերձավոր ազգականների, որդեգրողների և որդեգրվածների միջև, անգործունակի հետ ամուսնությունը:

### **Հոդված 36. Ծնողների իրավունքները և պարտականությունները**

36-րդ հոդվածը վերարտադրում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության նույն 36-րդ հոդվածը: Միակ տարբերությունն այն է, որ հստակեցվել է ծնողական իրավունքներից զրկելու հիմքը, այն է՝ եթե դա անհրաժեշտ է «երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով», ինչը ամրապնդում է ծնողների իրավունքները՝ սահմանելով ծնողական իրավունքներից զրկելու չափանիշը:

### **Հոդված 37. Երեխայի իրավունքները**

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ամրագրում էր ծնողների իրավունքներն ու պարտականությունները, սակայն չէր անդրադառնում երեխայի իրավունքներին: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը այս առումով կատարում է երեխայի իրավունքների սահմանադրական ամրագրման միջազգային ժամանակակից միտումներին, Երեխայի իրավունքների կոնվեն-

ցիային<sup>47</sup> համահունչ կարևոր առաջընթաց քայլ: Պետք է նշել, որ երեխայի իրավունքների սահմանադրական ամրագրումը նոր միտում է, որը կառուցվում է այն մոտեցման վրա, որ երեխան դիտվում է ոչ միայն պաշտպանության օբյեկտ, այլ իրավունքների կրող և իրեն վերաբերող հարցերում որոշումներ կայացնելուն մասնակից: Այս տեսանկյունից կարևոր է Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասում երեխայի՝ իրեն վերաբերող հարցերում կարծիք արտահայտելու իրավունքի սահմանումը: Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածում տեղ գտած «երեխայի լավագույն շահի» սկզբունքը: Այն երեխայի իրավունքների հետ կապված հարցերում ելակետային սկզբունքն է, սակայն սահմանադրական մակարդակով կարգավորված է միայն մի քանի երկրներում<sup>48</sup>: Այս սկզբունքը արտացոլված է նաև 37-րդ հոդվածի 3-րդ մասում որպես չափանիշ ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու երեխայի իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելու համար:

37-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների նկատմամբ պետության հոգաժողության և պաշտպանության պարտականությունը:

### **Հոդված 38. Կրթության իրավունքը**

Կրթության իրավունքի վերաբերյալ սահմանադրական դրույթները պահպանում են 2005 թ. Սահմանադրության 39-րդ հոդվածի կարգավորումները՝ լրացնելով դրանք նաև ՄԻԵԿ 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 14-րդ հոդվածի դրույթներով<sup>49</sup>: Ինչպես և նախկինում, Սահմանադրությունը երաշխավորում է անվճար միջնակարգ կրթությունը, մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունքը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության համեմատ՝ փոփոխված Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքում ընդգծվել է նաև ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

<sup>47</sup> Ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության կողմից 20.11.1989թ.: Տե՛ս «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր», N 4 (12), 20.12.2004 թ.:

<sup>48</sup> Տե՛ս Իդլանդիայի Սահմանադրության 42Ա հոդված, Սերբիայի Սահմանադրության 65-րդ հոդված: Report on the Protection of Children's Rights, Adopted by the Venice Commission at its 98th Plenary Session (Venice, 21-22 March 2014), էջ 22:

<sup>49</sup> Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում ողջունել է կրթության իրավունքի կարգավորումը՝ այն որակելով որպես ավելի առաջադիմական, քան եվրոպական համապատասխան կոնվենցիաների կարգավորումները, տե՛ս CDL-AD(2015)037, կետ 49, CDL-AD(2015)038, կետ 20:



2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասությունը, որը սահմանում է պետության աջակցությունը ուսումնական հաստատություններին, փոփոխված Սահմանադրության մեջ տեղ է գտել պետության խնդիրներն ամրագրող 86-րդ հոդվածի, մասնավորապես 13-րդ և 14-րդ մասերում, քանի որ այն հիմնական իրավունք չէ:

### **Հոդված 39. Մարդու ազատ գործելու իրավունքը**

Մարդու ազատ գործելու իրավունքը փոփոխված Սահմանադրության մեջ առաջին անգամ է ամրագրվում որպես ինքնուրույն իրավունք՝ արժևորելով այդ իրավունքի սկզբունքային նշանակությունը<sup>50</sup>: Նախկինում այն կարգավորված էր 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում, ընդ որում՝ հոդվածի համակարգային տրամաբանությունից դուրս: Մարդկային ազատության կանտյան այս սկզբունքը տարբեր երկրների սահմանադրություններում տեղ է գտել նաև որպես անհատականության ազատ զարգացման իրավունք<sup>51</sup>: Այս իրավունքի առանձնահատուկ կարևորությունն այն է, որ ներառում է մարդու բոլոր այն գործողությունների սահմանադրական պաշտպանությունը, որոնք ամրագրված չեն ազատության առանձին հատուկ իրավունքներում:

### **Հոդված 40. Ազատ տեղաշարժելու իրավունքը**

40-րդ հոդվածի կարգավորումները վերարտադրում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 25-րդ հոդվածի դրույթները, որոնք համահունչ են ՄԻԵԿ 4-րդ արձանագրության 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթներին:

40-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, ըստ էության, ամրագրում են երկրից դուրս գալու և երկիր վերադառնալու անձի իրավունքը: Փոփոխված Սահմանադրությունը 40-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրում է ազատ տեղաշարժելու իրավունքի սահմանափակման հիմքերը՝ համահունչ ՄԻԵԿ կարգավորումներին, ինչպես նաև հստակ սահմանում է, որ քաղաքացու և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր մարդու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

### **Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը**

41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կրկնում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 26-րդ հոդվածի բովանդակությունը՝ արտացոլելով ՄԻԵԿ 9-րդ հոդվածի և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 10-րդ հոդվածում ամրագրված մոտեցումներն ու այս իրավունքի թույլատրելի

<sup>50</sup> Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում ողջունել է այս սկզբունքի հստակ ամրագրումը, տես CDL-AD(2015)038, կետ 21:

<sup>51</sup> Տես, օրինակ, Գերմանիայի Հիմնական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս, Հունաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մաս, Էստոնիայի Սահմանադրության 19-րդ հոդված:

սահմանափակումները: Սակայն, ընդառաջ գնալով Խարտիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներին և ՄԻԵԴ դատական պրակտիկային, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դեմ գործով<sup>52</sup>, փոփոխված Սահմանադրությունը, ի լրումն 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 26-րդ հոդվածի դրույթների, 41-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրել է կարևոր նորույթ. յուրաքանչյուր քաղաքացի, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք ունի:

41-րդ հոդվածի 4-րդ մասը ամրագրում է կրոնական կազմակերպությունների իրավահավասարության և ինքնավարության սկզբունքը՝ ամբողջականացնելով 41-րդ հոդվածի բովանդակությունը և երաշխավորելով այս իրավունքի իրացումը:

Համեմատած 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 26-րդ հոդվածի 2-րդ մասի հետ՝ փոփոխված Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասը մտքի, խղճի և կրոնի արտահայտման ազատությունը սահմանափակելու հնարավոր հիմքերի մեջ սահմանել է նաև պետական անվտանգությունը: ՄԻԵԴ-ը ևս, չնայած ՄԻԵԿ 9-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումներին, իր պրակտիկայում չի բացառում պետական անվտանգությունը՝ որպես մտքի, խղճի և կրոնի արտահայտման ազատությունը սահմանափակելու թույլատրելի և իրավաչափ հիմք<sup>53</sup>:

#### **Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը**

Փոփոխված Սահմանադրության 42-րդ հոդվածը վերարտադրել է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթները՝ որոշակի հստակեցումներով, որոնք ավելի լիարժեք և ընդգծված են դարձնում այս իրավունքի բովանդակությունը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 27-րդ հոդվածը արտահայտման ազատությունը ամրագրելու հարցում օգտագործում էր երկու եզրույթ՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունք և խոսքի ազատության իրավունք: Տպավորություն էր ստեղծվում, որ դրանում կարգավորված են երկու տարբեր իրավունքներ՝ կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության: Մինչդեռ միջազգային փաստաթղթերում և դատական պրակտիկայում այն մեկ ամբողջական իրավունք է<sup>54</sup>, որը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց հանրային իշխանության միջամտության և անկախ պետական սահմաններից: Այսինքն՝ տարբերությունը միայն եզրութաբանական է, և իրավունքի բովանդակության ծավալը դրանից ոչ միայն չի փոխվել, այլև ավելի հստակեցվել է: Ցանկացած խոսքի ազատության հիմքում

<sup>52</sup> Տե՛ս Eur. Ct. H.R. S Bayatyan v. Armenia, 7 July 2011, CM/ ResDH(2014)225:

<sup>53</sup> Տե՛ս Ch. Grabenwarter, European Convention on Human Rights, C.H. Beck, 2014, էջ 245:

<sup>54</sup> Տե՛ս ՄԻԵԿ 10-րդ հոդված, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 11-րդ հոդված:

ընկած է հենց կարծիքի արտահայտման ազատությունը: Հարկ է նկատել, որ ՄԻԵԿ թարգմանություններում օգտագործվում է միայն կարծիքի արտահայտման (ռուսերեն, գերմաներեն, բուլղարերեն, լեհերեն, ուկրաիներեն և այլն) կամ պարզապես «արտահայտման ազատություն» (անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն) եզրույթները, բայց ոչ «խոսքի ազատություն» եզրույթը:

Կարծիքի արտահայտման ազատության բաղկացուցիչ մասը կազմող տեղեկատվության ազատության իրավունքը չարդարացված սահմանափակումներից և այդ ազատության հանդեպ պետության ու հանրային իշխանության միջամտություններից պաշտպանելու ու սահմանափակելու գործառույթ ունի: Այդ առումով, այս իրավունքը պետք է տարբերել փոփոխված Սահմանադրության 51-րդ հոդվածում ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքից: Վերջինս անձի համար պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից տեղեկատվություն պահանջելու և ստանալու սահմանադրական երաշխիք է:

42-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ էության, ամրագրում է մեկ այլ ինքնուրույն իրավունք՝ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը, որի կարգավորումներն ընդհանուր առմամբ պահպանում են նախկին 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը՝ առավել հստակ կարգավորումներով:

42-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հիմքերը, որոնք, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 43-րդ հոդվածի սահմանափակումների համեմատ, ավելի նեղ են:

### **Հոդված 43. Ստեղծագործության ազատությունը**

Փոփոխված Սահմանադրության 43-րդ հոդվածը կրկնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 40-րդ հոդվածի կարգավորումները, այն տարբերությամբ, որ հանվել է «գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու» իրավունքին վերաբերող դրույթը: Նշված դրույթը անմիջականորեն գործող իրավունք չէ, և դրա բովանդակությունն արտացոլող կարգավորումները տեղ են գտել 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 86-րդ հոդվածի 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերում:

Ստեղծագործության ազատությունը մեծապես բխում է կարծիքի ազատության իրավունքից, այդ իսկ պատճառով ՄԻԵԿ-ը այն չի ամրագրում առանձին հոդվածով և իր նախադեպային իրավունքում այս իրավունքին անդրադառնում է կարծիքի ազատության սահմանափակումների համատեքստում: Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայում այն նախատեսված է առանձին 13-րդ հոդվածով:

### **Հոդված 44. Հավաքների ազատությունը**

Հավաքների ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից է, և փոփոխված Սահմանադրությունը այն կարգավորում է առանձ-

նակի մանրամասնությամբ՝ համեմատած 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 29-րդ հոդվածի հետ: 44-րդ հոդվածի 1-ին մասը հստակեցնում է, որ հավաքների ազատությունը ինչպես հավաքին ազատորեն մասնակցելու, այնպես էլ այն կազմակերպելու իրավունք է: Նախկինում այն ձևակերպված էր որպես հավաքներ անցկացնելու իրավունք:

44-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է բացօթյա տարածքներում հավաքներ անցկացնելու կարգը: Այս դեպքում հավաքների անցկացումը կարող է պահանջել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից որոշակի նախապատրաստական աշխատանքների իրականացում, այդ թվում՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Ուստի 2-րդ մասը սահմանում է, որ առանձին դեպքերում օրենքը կարող է նախատեսել բացօթյա տարածքներում հավաքների անցկացման համար նախնական իրազեկման պահանջ, որը պետք է տրվի ողջամիտ ժամկետում: Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ իրազեկման պահանջը չի վերաբերում բոլոր տեսակի բացօթյա հավաքներին, այլ միայն որոշակի վայրերում կամ որոշակի դեպքերում անցկացվողներին, որոնք պետք է նախատեսվեն օրենքով և համապատասխանեն համաչափության պահանջին: «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի<sup>55</sup> 10-րդ հոդվածը նախատեսում է, որ իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու, ինչպես նաև այլ անձանց սահմանադրական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է:

«Ողջամիտ ժամկետի» պահանջը արգելում է օրենսդրին սահմանել իրազեկման այնպիսի ժամկետ, որը ժամանակային առումով էապես նախորդում է հավաքի անցկացմանը՝ դրանով իսկ հավաքի կազմակերպիչների վրա դնելով անհարկի ծանրաբեռնող պարտականություններ:

44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրազեկում չի պահանջվում ինքնաբուխ հավաքների համար: Նման դրույթի ամրագրումը Սահմանադրության մեջ եզակի է համաշխարհային պրակտիկայում:

44-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է որոշակի պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կամ պետական ծառայողների համար հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ՝ ելնելով իրենց պաշտոնեական դիրքից կամ ծառայության բնույթից: Նման սահմանափակումները համահունչ են միջազգային չափորոշիչներին<sup>56</sup>, բխում են նշված անձանց ներկայացվող ապաքաղաքականացվածության պահանջից և նախատեսված էին նաև նախկին Սահմանադրության 29-րդ հոդվածի 2-րդ մասում:

Որպեսզի Սահմանադրությունն անհարկի չձանրաբեռնվի ընթացակարգային մանրամասնություններով, որոնք սահմանադրական կարգավորման առարկա չեն, Սահմանադրության 44-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ հավաք-

<sup>55</sup> Ընդունվել է 14.04.2011, ՀՕ-72-Ն, ՀՀՊՏ 2011.04.22/23(826), հոդ. 452:

<sup>56</sup> Տե՛ս ՄԻԵԿ 11-րդ հոդվածի 2-րդ մաս:

ների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

44-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է հավաքների ազատության իրավունքին ներհատուկ և միջազգայնորեն ընդունելի սահմանափակումները, որոնք նախկինում ընկնում էին 43-րդ հոդվածի սահմանափակումների տակ և ավելի լայն էին:

#### **Հոդված 45. Միավորումների ազատությունը**

Փոփոխված Սահմանադրությունն առանձին հոդվածով կարգավորել է միավորումների ազատության իրավունքը: Նախկինում այն կարգավորված էր 28-րդ հոդվածում՝ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքի հետ համատեղ: Նման առանձնացումը նպատակ ունի ընդգծելու այս իրավունքի ինքնուրույն բովանդակությունը: Միավորումների ազատությունը նախատեսված է նաև ՄԻԵԿ 11-րդ և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 12-րդ հոդվածներով, սակայն նշված երկու փաստաթղթերում էլ այս իրավունքը կարգավորվում է միավորումների և հավաքների ազատությանը վերաբերող միասնական հոդվածում:

Սահմանադրական կարգավորումներն ընդհանուր առմամբ համահունչ են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերին՝ որոշակի խմբագրական հստակեցումներով: Ընդգծվում է այս իրավունքի իրականացման ազատությունը:

Վերացվել է նախկինում 28-րդ հոդվածի 3-րդ մասում առկա այն ձևակերպումը, որը թույլ էր տալիս օրենքով սահմանափակել առանձին պետական պաշտոններ զբաղեցնող անձանց և պետական ծառայողների իրավունքը ստեղծելու արհեստակցական միություններ կամ անդամակցելու դրանց: Դա, ըստ էության, նշված անձանց կողմից իրենց իրավունքների պաշտպանության մեխանիզմների անհարկի և անհամաչափ սահմանափակում էր:

#### **Հոդված 46. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը**

Ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 28-րդ հոդվածի՝ փոփոխված Սահմանադրությունը առանձին հոդվածով է կարգավորել կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը՝ այն տարանջատելով միավորումների ազատությունից: Նման մոտեցումն ընդգծում է պառլամենտական կառավարման համակարգում կուսակցությունների առանձնահատուկ դերը: Ինչպես արդեն նշվել է, կուսակցությունների կազմավորման և գործունեության սկզբունքներին փոփոխված Սահմանադրությունը անդրադառնում է նաև սահմանադրական կարգի հիմունքներում տեղ գտած 8-րդ հոդվածում:

46-րդ հոդվածն ընդհանուր առմամբ համահունչ է նախկին 28-րդ հոդվածի կարգավորումներին, սակայն ավելի համակարգված և մանրամասն կարգավոր-

րումներ է տալիս այս իրավունքին, քան 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, որտեղ կարգավորումները ցրված էին տարբեր հոդվածներում՝ 7-րդ, 28-րդ, 98-րդ և 100-րդ:

46-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է դատավորների, դատախազների և քննիչների համար կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու ուղղակի արգելք, ինչը պայմանավորված է նշված պաշտոնատար անձանց ներկայացվող ապաքաղաքականացվածության պահանջով: Նույն մասը ավելի ազատական մոտեցում է դրսևորում որոշակի կատեգորիայի պետական ծառայողների համար, որոնց պարագայում նախատեսվում է կուսակցություններ ստեղծելու կամ դրանց անդամագրվելու իրավունքի միայն սահմանափակման հնարավորություն, բայց ոչ ուղղակի արգելք: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը այս առումով պարունակում էր հակասական կարգավորումներ. մի կողմից՝ 28-րդ հոդվածը դատավորների և սահմանադրական դատարանի անդամների համար նախատեսում էր սահմանափակումների հնարավորություն օրենքով, մյուս կողմից՝ հետագայում 98-րդ հոդվածի 2-րդ մասով ուղղակիորեն սահմանում էր նաև արգելք:

46-րդ հոդվածի 3-րդ մասը կոնկրետացնում է կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկության պահանջները և հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը<sup>57</sup>:

46-րդ հոդվածի 4-րդ մասը տարբերակում է կուսակցության գործունեության կասեցման և արգելման հիմքերը: Կուսակցության գործունեության արգելման հիմքերը երկուսն են՝ սահմանադրական կարգի բռնի տապալում քարոզելը կամ սահմանադրական կարգը տապալելու նպատակով բռնություն կիրառելը: Երկու հիմքերն էլ առնչվում են պետության գոյության հիմնարար դրույթներին, ուստի և նման կուսակցությունները հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 100-րդ հոդվածի 9-րդ կետը թեև այս հարցով որոշում կայացնելու իրավասությունը վերապահում էր Սահմանադրական դատարանին, բայց հիմքերի կարգավորումը թողնում էր օրենքին: Կուսակցության գործունեության արգելման հիմքերի հստակ սահմանադրական ամրագրումը ամրապնդում է կուսակցությունների դերը ժողովրդավարական համակարգում և սահմանափակում հայեցողական որոշումների հնարավորությունը:

#### **Հոդված 47. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը**

47-րդ հոդվածը քաղաքացիության իրավունքի կարգավորման հարցում որդեգրել է գրեթե նույն կարգավորումները, ինչ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 11.3-րդ և 30.1-ին հոդվածները: Առկա են միայն մի քանի նոր դրույթներ:

<sup>57</sup> Այս մասին տես նաև 8-րդ հոդվածի պարզաբանումներում:

47-րդ հոդվածի 3-րդ մասը ազգությամբ հայերի համար Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից սահմանում է քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

47-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է քաղաքացիության իրավունքին ներհատուկ սահմանափակման հիմքերը, որոնք նախկինում կարգավորվում էին 43-րդ հոդվածի համատեքստում և ավելի լայն էին:

47-րդ հոդվածի 8-րդ մասը, ամբողջականացնելով քաղաքացիության ինստիտուտի էությունը, ամրագրում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս քաղաքացու և պետության միջև կապը՝ նախատեսելով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, միջազգային իրավունքի հիման վրա, գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

Նախկին 30.1-ին հոդվածում նախատեսված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հանձնման արգելքի սկզբունքը տեղ է գտել փոփոխված Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ մասում:

47-րդ հոդվածից բացակայում են երկքաղաքացիների իրավունքներին և պարտականություններին վերաբերող դրույթները: Սա չի նշանակում, որ Սահմանադրությունը հրաժարվել է երկքաղաքացիությունից: Խնդիրն այն է, որ նախկին 30.1-ին հոդվածի 4-րդ մասը նախատեսում էր, որ երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով: 30.1-ին հոդվածի 4-րդ մասից հրաժարումը նշանակում է, որ երկքաղաքացիների և միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև իրավունքների և պարտականությունների տարբերություն չկա, բացառությամբ այն դեպքերի, երբ Սահմանադրությունը հենց ինքն է նախատեսում հատուկ վերապահում: Խոսքը առանձին պաշտոններ զբաղեցնելու համար որոշակի սահմանափակումների մասին է: Երկքաղաքացիները չեն կարող լինել Հանրապետության նախագահ, պատգամավոր, վարչապետ, կառավարության անդամ, դատավոր, Բարձրագույն դատական խորհրդի անդամ, դատախազ, Մարդու իրավունքների պաշտպան, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Հաշվեքննիչ պալատի և Կենտրոնական բանկի անդամ: Վենետիկի հանձնաժողովը քննադատաբար է արտահայտվել պատգամավոր ընտրվելու համար նախատեսված նման կարգավորման վերաբերյալ՝ նշելով, որ նման սահմանափակումը չի բխում միջազգային չափորոշիչներից<sup>58</sup>: Սակայն սահմանադրի նման մոտեցումը թերևս արդարացված է, քանի որ այս հարցը մեծապես առնչվում է պետության անվտանգությանը և նրա առանձնահատուկ պայմաններին: Հետևաբար կարգավորման ձևաչափի ընտրության հարցում պետությունը պետք է ունենա լայն հայեցողություն:

<sup>58</sup> Տես Վենետիկի հանձնաժողովի կարծիք, CDL-AD(2015)037, կետ 54, CDL-AD(2015)038, կետ 22-23:

## **Հողված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը**

48-րդ հողվածի 1-ին և 3-րդ մասերը համահունչ են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 30-րդ հողվածի 1-ին և 2-րդ մասերին՝ սահմանելով ընտրելու իրավունքի ծագմանը ներկայացվող պահանջները Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

48-րդ հողվածի 2-րդ մասն ընդհանուր առմամբ պահպանում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 64-րդ հողվածի դրույթները, սակայն Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու համար նախատեսում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու և չորս տարվա նստակեցության ցենզ՝ նախկին հինգ տարվա փոխարեն: 64-րդ հողվածի բովանդակությունը 48-րդ հողվածում կարգավորելը նպատակ ունի մեկ հողվածում համախմբել ակտիվ և պասիվ ընտրական իրավունքին վերաբերող բոլոր սահմանադրական դրույթները:

48-րդ հողվածի 4-րդ մասը, վերաբերելով ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումներին, նախկին 30-րդ հողվածի համեմատ, առաջադիմական կարգավորումներ է բովանդակում, որոնք բխում են ընտրական իրավունքի բնագավառում միջազգային լավագույն փորձից և մոտեցումներից<sup>59</sup>: Մասնավորապես, անմիջական ժողովրդավարության իրականացման և դատապարտյալների իրավունքների պաշտպանության առումով, միջազգային փաստաթղթերին և ՄԻԵԴ դատական պրակտիկային համահունչ, կարևոր քայլ է դատապարտյալներին ընտրական իրավունքներ վերապահելը: Ընտրելու իրավունքը սահմանափակել թույլատրվել է միայն դիտավորությամբ կատարված ծանր հանցագործությունների համար դատապարտված և պատիժը կրող անձանց առնչությամբ: Դատապարտված լինելով և ազատությունից զրկվելով՝ անձը արդեն իսկ ստանում է իր կատարած արարքի համար լրջագույն պատիժը՝ զրկվելով անձնական ազատության իր հիմնարար իրավունքից: Սակայն դա պատճառահետևանքային կապի մեջ չի գտնվում անձի այլ հիմնարար իրավունքների սահմանափակման հետ: Ուստի դատապարտված անձանց ընտրական իրավունքների ընդհանուր, առանց տարբերակման սահմանափակումը ՄԻԵԴ պրակտիկայում դիտարկվում է անձի ընտրական իրավունքի խախտում: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ «ծանր հանցագործություն» սահմանադրական եզրույթը չի նույնանում քրեական իրավունքում «ծանր հանցագործություն» հասկացության հետ, և օրենքն ինքը պետք է սահմանի հանցագործությունների այն տեսակները, որոնք ունեն այնպիսի բարձր հանրային վտանգավորություն, որ պետք է հանգեցնեն ընտրելու իրավունքի սահմանափակման:

<sup>59</sup> Տե՛ս մասնավորապես Recommendation CM/Rec(2011)14 of the Committee of Ministers to member states on the participation of persons with disabilities in political and public life, 16.11.2011; Venice Commission, Code of Good Practice in Electoral Matters, CDL-AD(2010)036:



### **Հողված 49. Հանրային ծառայության անցնելու իրավունքը**

Այս հոդվածը կրկնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 30.2-րդ հոդվածի շարադրանքը:

### **Հոդված 50. Պատշաճ վարչարարության իրավունքը**

2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 50-րդ հոդվածն ամրագրում է պատշաճ վարչարարության իրավունքը, որին 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում անդրադարձ է կատարված մասնակի: Մասնավորապես, 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 50-րդ հոդվածն ընդլայնում և հստակեցնում է սահմանադրական կարգավորումները՝ ամրագրելով, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Վարչական մարմինը, այս հոդվածի իմաստով, ներառում է գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև գործադիր իշխանության գործառույթ իրականացնող ցանկացած այլ պետական մարմնի:

50-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է վարչական վարույթի ընթացքում իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու անձի իրավունքը: Ի լրումն դրա՝ 50-րդ հոդվածի 3-րդ մասը միաժամանակ սահմանադրական կարգավորման մակարդակ է բարձրացնում մարդու՝ լսված լինելու հիմնարար իրավունքը՝ սահմանելով, որ պատշաճ վարչարարության իրավունքը պարտադրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց՝ մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, լսել նրան և հիմնավորել ընդունված ակտը:

Հարկ է նկատել, որ վարչական մարմինների և վարչարարությանը վերաբերող հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում կարգավորված են նաև օրենսդրության մակարդակով<sup>60</sup>: Սակայն սահմանադրական մակարդակով վարչարարության սկզբունքների ամրագրումն էլ ավելի է ընդգծում անձի իրավունքները հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց հետ հարաբերություններում:

Պատշաճ վարչարարության իրավունքը և դրան հաջորդող սահմանադրական երկու հոդվածները՝ տեղեկություններ ստանալու իրավունքը (հոդված 51) և մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը (հոդված 52), մի-

<sup>60</sup> Տե՛ս մասնավորապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թ. փետրվարի 18-ի օրենքը, ՀՕ-41-Ն, ՀՀՊՏ 2004.03.31/18(317), հոդ. 413:

ջազգային պրակտիկայում համարվում են «լավ կառավարման» հայեցակարգի պարտադիր տարրեր, և դրանց ներմուծումը փոփոխված Սահմանադրության մեջ ողջունվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից<sup>61</sup>: Պատշաճ վարչարարության իրավունքի սահմանադրական կարգավորումները համահունչ են նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 41-րդ հոդվածին:

### **Հոդված 51. Տեղեկություններ ստանալու իրավունքը**

Կարևոր նշանակություն ունի 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 51-րդ հոդվածում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու, այդ թվում՝ փաստաթղթերին ծանոթանալու իրավունքի առանձին սահմանադրական ամրագրումը:

Այս իրավունքը ժողովրդավարության, բաց կառավարման, հանրային իշխանության թափանցիկության և հաշվետվողականության առանցքային տարրերից է և առանձնահատուկ տեղ ունի եվրոպական երկրների սահմանադրական մակարդակում: Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիան ևս ամրագրում է այս իրավունքը 42-րդ հոդվածում:

Տեղեկություններ ստանալու իրավունքի իրականացումը, սակայն, պետք է համադրվի անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների հետ (հոդվածներ 31 և 34) այնպես, որ առաջին իրավունքի իրականացումը չհանգեցնի մյուս երկու իրավունքների խախտումների:

Պետք է նաև տարբերել տեղեկություններ ստանալու իրավունքը փոփոխված Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տեղեկատվության ազատության իրավունքից<sup>62</sup>:

### **Հոդված 52. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը**

Սահմանադրական այս նորմը առանձին հոդվածով է ամրագրում և կարգավորում Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու անձի իրավունքը, ինչը նախկինում ամրագրված էր 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 18-րդ հոդվածում՝ իրավունքների պաշտպանության այլ մեխանիզմների հետ միասին: Այս իրավունքի առանձնացումը ինքնուրույն հոդվածում ընդգծում է դրա դերն ու նշանակությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերում:

Սահմանադրական կարգավորումները հստակեցրել են այն սուբյեկտների շրջանակը, որոնց կողմից անձի իրավունքների խախտման հիմքով տվյալ անձը իրավունք ունի դիմելու Մարդու իրավունքների պաշտպանին: Որպես այդպիսիք նախատեսված են ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մար-

<sup>61</sup> Տես Վենետիկի հանձնաժողովի կարծիք, CDL-AD(2015)037, կետ 56:

<sup>62</sup> Այս մասին տես նաև հոդված 42-ի պարզաբանումները:

միններն ու դրանք պաշտոնատար անձինք, այլև պետության կողմից պատվիրակված գործառույթ իրականացնող կազմակերպությունները:

### **Հոդված 53. Հանրագիր ներկայացնելու իրավունքը**

Այս հոդվածը կրկնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 27.1-րդ հոդվածը՝ որոշակի հստակեցումներով: Սահմանադրական կարգավորումները համապատասխանում են Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 44-րդ հոդվածի կարգավորումներին:

### **Հոդված 54. Քաղաքական ապաստանի իրավունքը**

2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 54-րդ հոդվածն առանձին ամրագրել է քաղաքական ապաստանի իրավունքը, ինչը 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում նախատեսված չէր: Միակ դրույթը այս առումով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 55-րդ հոդվածի 15-րդ կետն էր, որը Հանրապետության նախագահին իրավասություն էր վերապահում լուծելու քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը: Մինչդեռ այս իրավունքը, որպես հիմնական իրավունք, ամրագրված է բազմաթիվ եվրոպական սահմանադրություններում, ինչպես նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 18-րդ հոդվածում:

### **Հոդված 55. Արտաքսման կամ հանձնման արգելքը**

Արտաքսման կամ հանձնման արգելքը 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ ևս առաջին անգամ ամրագրվող իրավունք է: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը միայն մասնակի էր անդրադառնում հանձնման արգելքին՝ քաղաքացիությանը վերաբերող 30.1-ին հոդվածում նախատեսելով, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը 55-րդ հոդվածում ամրագրել է նաև ցանկացած անձի արտաքսման կամ օտարերկրյա պետությանը հանձնման արգելք այն դեպքում, եթե արտաքսման կամ հանձնման դեպքում առկա է լուրջ սպառնալիք, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգումների կամ այլ անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Նման մոտեցումները համահունչ են Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ հոդվածի կարգավորումներին:

### **Հոդված 56. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը**

Այս հոդվածի կարգավորումները կրկնում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 41-րդ հոդվածի դրույթները: 56-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ օրենսդիրը օրենքով սահմանի այս իրավունքների իրականացման մեխանիզմը:

## **Հողված 57. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները**

57-րդ հոդվածը պահպանում է աշխատանքային իրավունքների մասով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության մի շարք դրույթներ, ինչպես նաև լրացնում է դրանք: Այսպես, 57-րդ հոդվածի 1-ին մասը, որն ամրագրում է յուրաքանչյուր անձի՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, կրկնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մասը:

57-րդ հոդվածի 2-րդ մասը ամրապնդում է աշխատողի իրավական պաշտպանությունը աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում՝ սահմանելով, որ յուրաքանչյուր աշխատող ունի նման իրավիճակներից պաշտպանության իրավունք: Նորմը պարտավորեցնում է օրենսդրին զարգացնելու այս իրավունքի իրականացման մեխանիզմները և հիմքերը: Այս կարգավորումները համահունչ են նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 30-րդ հոդվածի մոտեցումներին:

57-րդ հոդվածի 3-րդ մասը աշխատանքային իրավունքների հոդվածում է ամրագրել նախկին 35-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը այն մասին, որ մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է, և որ յուրաքանչյուր աշխատող կին ունի հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունք: Նորմի տեղափոխությունը պայմանավորված է նրանով, որ սիստեմատիկայի տեսանկյունից այդ դրույթները վերաբերում են աշխատանքային իրավունքներին, և առավել նպատակահարմար է դրանք կարգավորել այս հոդվածի ներքո: Միաժամանակ, զարգացնելով նախկին 35-րդ հոդվածի կարգավորումները, փոփոխված Սահմանադրության 57-րդ հոդվածի 3-րդ մասը լրացուցիչ երաշխիքներ է ամրագրում: Երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում արձակուրդի իրավունք նախատեսվել է յուրաքանչյուր ծնողի համար: Նախկինում այս իրավունքը վերապահված էր միայն կանանց:

57-րդ հոդվածի 4-րդ մասը մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելու արգելքի մասով պահպանում է նախկին 32-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումները:

57-րդ հոդվածի 5-րդ մասը, ՄԻԵԿ 4-րդ հոդվածի կարգավորումներին համապատասխան, ամրագրում է պարտադիր և հարկադիր աշխատանքի արգելքը և աշխատանքի այն տեսակները, որոնք այդպիսին չեն համարվում: Նախկին կարգավորումները սահմանափակվում էին միայն հարկադիր աշխատանքի արգելքով, իսկ այդ եզրույթի բովանդակության բացահայտումը գործնականում կարող էր տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 32-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը ամրագրում է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայման-

ների իրավունք: Թեպետ Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 31-րդ հոդվածն այն նախատեսում է որպես հիմնական իրավունք, սակայն այս իրավունքի իրականացման հարցում բավական մեծ է օրենսդրական հստակեցման և դատարանի գնահատողական հայեցողության տիրույթը, առանց որի իրավունքի իրականացման ու պաշտպանության սահմանները խիստ հեղիեղուկ են դառնում: Հստակության բացակայությունը կասկածի տակ է դնում այս իրավունքի անմիջական գործողության հնարավորությունը, ուստի 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը այն զետեղել է 3-րդ գլխի 82-րդ և 84-րդ հոդվածներում՝ պահպանելով 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների ուղղակի պարտադիրության գիծը<sup>63</sup>:

### **Հոդված 58. Գործադուլի իրավունքը**

Գործադուլի իրավունքը առանձնացվել է որպես ինքնուրույն սահմանադրական իրավունք: Նախկինում այն ամրագրված էր աշխատանքային իրավունքներին վերաբերող 32-րդ հոդվածի 3-րդ մասում: 58-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է այս իրավունքի թույլատրելի սահմանափակման հիմքերը, որոնք ավելի նեղ են, քան 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները: Նոր կարգավորումներով գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

### **Հոդված 59. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը**

59-րդ հոդվածի կարգավորումները բխում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 33.1-ին հոդվածի կարգավորումներից՝ մանրամասնելով դրանք: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 33.1-ին հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք ունի «օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու» իրավունք: Այսինքն՝ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակությունը կախվածության մեջ էր դնում օրենքով այս գործունեությանը տրվող սահմանումից՝ իջեցվելով սահմանադրական կարգավորման մակարդակից: Դրանով իսկ այն դադարում էր անմիջականորեն գործող լինելուց:

2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 59-րդ հոդվածը ունի ավելի լայն բովանդակություն: Նախ և առաջ՝ այս իրավունքն ի սկզբանե ամրագրված է առանց վերապահումների, այսինքն՝ Սահմանադրությամբ այն ունի ինքնավար բովանդակություն և կախված չէ օրենքով տրվող սահմանումներից: Փոփոխված Սահմանադրությամբ սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական՝ ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք, իսկ օրենքով պետք է սահմանվեն այս իրավունքի իրականացման միայն պայ-

<sup>63</sup> Այս մասին տե՛ս նաև 4.2.2 մասում:

մաններն ու կարգը: Երկրորդ՝ 59-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքի բովանդակությունն ավելի ընդգրկուն է, քանի որ ամրագրված է ոչ միայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, այլև ավելի համապարփակ՝ տնտեսական գործունեության ազատությունը: Այն մեկնաբանվում է որպես շուկայում ապրանքներ և ծառայություններ առաջարկելուն ուղղված գործունեություն<sup>64</sup>: Տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության բաղկացուցիչ մասերից են պայմանագրային ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը<sup>65</sup>: Տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության իրավունքը սերտորեն առնչվում է սահմանադրական այլ նորմերին, մասնավորապես՝ շուկայական տնտեսության, մասնավոր սեփականության, ազատ տնտեսական մրցակցության հիմքերն ամրագրող սահմանադրական կարգի հիմունքներին (Սահմանադրության հոդված 11), և պետք է մեկնաբանվի դրանց համատեքստում:

Քանի որ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասը չի նախատեսում տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի ուղղակի սահմանափակումների հիմքեր, ապա այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն սահմանադրական այլ նորմերի հետ կոլիզիայի պարագայում (օրինակ՝ Սահմանադրության 11-րդ հոդվածով նախատեսված տնտեսական կարգի հիմունքները, մարդու այլ հիմնական իրավունքները):

Սահմանադրության 59-րդ և նախկին 33.1-ին հոդվածների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս մեկ այլ տարբերություն ևս: Սահմանադրության 59-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանադրական մակարդակ են բարձրացվել և արգելվել հակամրցակցային համաձայնությունները, որոնք շուկայում մրցակցության խաթարման առանձին, շատ հաճախ թաքնված ու դրանով իսկ՝ վտանգավոր ձև են:

### **Հոդված 60. Սեփականության իրավունքը**

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը սեփականության իրավունքի պաշտպանությանը անդրադառնում էր երկու հոդվածներում: Սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում էր սեփականության իրավունքը, իսկ առավել մանրամասն կարգավորումները տեղ էին գտել Սահմանադրության 31-րդ հոդվածում: Նույն մոտեցումն է արտահայտված նաև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներում:

Սահմանադրությունը զարգացրել է սեփականության իրավունքի բովանդակությունը՝ այն առավել համահունչ դարձնելով Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 17-րդ հոդվածի և ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի դրույթներին:

<sup>64</sup> Տե՛ս Pavlov [2000] ECR I-6451, կետ 75:

<sup>65</sup> Տե՛ս Commentary of the Charter of Fundamental Rights of the European Union, էջ 161:

Սեփականատիրոջ իրավազորություններն ամրագրող 60-րդ հոդվածի 1-ին մասը, նախկին 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի համեմատ, հստակեցնում է, որ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավազորությունները առկա են միայն «օրինական հիմքով» ձեռք բերված սեփականության պարագայում:

60-րդ հոդվածը առանձին 2-րդ մասով երաշխավորում է ժառանգելու իրավունքը, որը նախկինում կարգավորվում էր կտակելու իրավունքի ներքո՝ 31-րդ հոդվածի 1-ին մասում: Մինչդեռ կտակելու իրավունքը դեռևս չի նշանակում ժառանգելու իրավունքի լիարժեք երաշխավորում:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը սահմանում էր, որ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Բովանդակային առումով այս կարգավորումները չափազանց հեռուն էին գնում, քանի որ «հանրության օրինական շահեր» հասկացությունը խիստ անորոշ է: Այդ իսկ պատճառով էլ 1-ին մասի 2-րդ նախադասության վերապահումը հակասում էր իրավունքի սահմանափակումներին վերաբերող որոշակիության պահանջին, ինչը իրավական պետության սկզբունքներից մեկն է<sup>66</sup>: Փոփոխված Սահմանադրությունը նշված կարգավորումները փոխարինել է օրենքի վերապահմամբ՝ 60-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսելով, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Նման իրավիճակներ կարող են առաջանալ, օրինակ, երբ պետությունը համապատասխան տարածքում կառուցապատման սահմանափակումներ է սահմանում, մերժում է տրանսպորտային միջոցի գրանցումը, արգելանք է կիրառում՝ հարկերի, տուգանքների վճարումը երաշխավորելու համար և այլն<sup>67</sup>: Սեփականության իրավունքի նման սահմանափակումները, որպես կանոն, ժամանակավոր բնույթ ունեն և սեփականատիրոջը չեն զրկում իրից օգտվելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ, նման սահմանափակումները պետք է հետապնդեն օրինական նպատակ և ունենան օրենքով նախատեսված հիմք:

Սեփականության օգտագործման սահմանափակումից պետք է տարբերել սեփականությունից զրկումը: Այն այնպիսի իրավիճակ է, երբ սեփականատերը փաստացի կամ իրավաբանորեն լրիվ զրկվում է իր տիրուղոսից, կորցնում է իրի

<sup>66</sup> Տե՛ս Օստո Լուխտերհանդթ, Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրության վերաբերյալ քննադատական փորձագիտական նկատառումներ, 2013 թ. հոկտեմբեր, էջ 12 (իրապարակված չէ):

<sup>67</sup> Սրանք ՄԻԵԴ դատական պրակտիկայում հայտնի են որպես «control of use of property»: Տե՛ս, օրինակ, Commentary of the Charter of Fundamental Rights of the European Union, EU Network of Independent Experts on Fundamental Rights, June 2006, էջ 167, A. Van Rijn // Theory and Practice of the European Convention of Human Rights, P. Van Dijk, F. Van Hoof, A. Van Rijn, L. Zwaak (eds.), 4th ed., 2006, էջ 887-890:

հետ կապը, օրինակ, ինչպես ազգայնացման պարագայում: Սեփականությունից զրկելու ինստիտուտի սահմանադրական կարգավորումը առանցքային նշանակության հարց է:

Այս առումով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը և, համապատասխանաբար, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը տարբերակում են սեփականությունից զրկելը և սեփականությունը օտարելը հանրային կարիքների համար: Սակայն սահմանադրական այս երկու նորմերի միջև հարաբերակցությունը պարզ չէ: Ընդ որում՝ խնդիրն ավելի է բարդանում այն պատճառով, որ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասը և փոփոխված Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասը սեփականությունից զրկելը թույլատրում են միայն դատական կարգով: Մինչդեռ դատական կարգի կիրառումը առանց բացառության բոլոր դեպքերում կարող է գործնականում լուրջ խնդիրների հանգեցնել: Հնարավոր են տարբեր դեպքեր, երբ իրավապահպան մարմինները ստիպված լինեն հանրության համար վտանգավոր իրավիճակներից խուսափելու համար արագ միջոցներ ձեռնարկել: Չի կարելի սպասել դատարանի կողմից որոշման կայացմանը այնպիսի սեփականազրկումների դեպքում, երբ, օրինակ, դա վերաբերում է զենքին, թունավորված սննդամթերքին կամ հանրության համար վտանգավոր կենդանիներին<sup>68</sup>, որոնք պետք է արագ վնասազերծվեն կամ ոչնչացվեն:

Միևնույն ժամանակ, սեփականազրկում չպետք է համարվեն հարկադիր կատարման այն միջոցառումները, որոնք պետությունը ձեռնարկում է մասնավոր պարտատերերի օգտին (օրինակ՝ անվիճելի պարտավորություններով): Մինչդեռ, ըստ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի և 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի, դրանք կարող են որակվել որպես սեփականազրկում:

Հարկ է նկատել, որ ո՛չ Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 17-րդ հոդվածը և ո՛չ էլ ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը չեն նախատեսում սեփականությունից զրկելու համար դատական կարգի պահանջ: Եվրոպական սահմանադրությունները մեծ մասամբ չեն պարունակում սեփականությունից զրկելուն վերաբերող կարգավորումներ: Սակայն դրանք կարգավորում են օտարումը, որը հնարավոր է հանրության բարօրության<sup>69</sup>, հասարակության կարիքների<sup>70</sup> կամ հանրային շահերից<sup>71</sup> ելնելով: Այդ կարգավոր-

<sup>68</sup> Տե՛ս Օտտո Լուխտերհանդթ, նշված հրապարակումը, էջ 12:

<sup>69</sup> Տե՛ս Գերմանիայի Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մաս, Վրաստանի Սահմանադրության 21-րդ հոդվածի 3-րդ մաս, Էստոնիայի Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>70</sup> Տե՛ս Լատվիայի Սահմանադրության 105-րդ հոդվածի 4-րդ նախադասություն, Լիտվայի Սահմանադրության 23-րդ հոդվածի 3-րդ մաս:

<sup>71</sup> Տե՛ս Հունգարիայի Սահմանադրության 13-րդ հոդվածի 2-րդ մաս, Լեհաստանի Սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մաս:



րումների համար ընդհանուր հանգամանք է այն, որ օտարումները կարող են կատարվել միայն փոխհատուցմամբ:

Հանրային շահերից ելնելով սեփականությունից զրկելու տարատեսակը նախատեսված էր 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասում, իսկ ներկայումս՝ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասում: Դա այն իրավիճակն է, երբ սեփականությունն օտարվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով: Այս պարագայում Սահմանադրությունը սահմանում է, որ անհրաժեշտ է նախնական և համարժեք հատուցում՝ երաշխավորելով սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը: Բովանդակային առումով նախկին և ներկա կարգավորումները այս մասով չեն փոփոխվել:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ և 7-րդ մասերը կրկնում են նախկին 31-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի ձևակերպումները՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների և մտավոր սեփականության պաշտպանության մասին:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասը ամրագրում է օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու պարտականությունը: Այն նախկինում ամրագրված էր 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 45-րդ հոդվածում, սակայն սիստեմատիկայի տեսանկյունից առավել ճիշտ է այն զետեղել սեփականության իրավունքին վերաբերող հոդվածում, որպեսզի ընկալելի լինի, որ նշված պարտավորությունը սեփականության իրավունքի խախտում չէ: Նույն մոտեցումն ունի նաև ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածը:

### **Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը**

Փոփոխված Սահմանադրությունը առանձին՝ 61-րդ հոդվածով ամրագրում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու իրավունքը, որը նախկինում տեղ էր գտել 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերում: Այս իրավունքին համապատասխանում է գործուն արդարադատություն ունենալու և երաշխավորելու պետության պարտականությունը:

18-րդ հոդվածի կարգավորումների համեմատ՝ 61-րդ հոդվածից բացակայում է միայն «պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի» սահմանումը, որն, ըստ էության, ընկնում է փոփոխված Սահմանադրության 50-րդ հոդվածով նախատեսված պատշաճ վարչարարության իրավունքի տակ:

61-րդ հոդվածի կարգավորումները հաջորդիվ զարգանում ու ամբողջականանում են արդար դատաքննության իրավունքը և իրավաբանական օգնության իրավունքը ամրագրող 63-րդ և 64-րդ հոդվածներով: Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիան այս իրավունքներին անդրադառնում է 47-րդ հոդվածում:

### **Հոդված 62. Վնասի հատուցման իրավունքը**

Առանձնահատուկ պետք է ընդգծել վնասի հատուցման իրավունքին վերաբերող՝ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 62-րդ հոդվածը, որն առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի հատուցման յուրաքանչյուր անձի իրավունքը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում էր միայն ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման իրավունքը:

Փոփոխված Սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները արտացոլում են ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 5-րդ մասի և 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի մոտեցումները: Սակայն 62-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները ավելի լայն են, քան կոնվենցիոն կարգավորումները, քանի որ ներառում են ոչ միայն հանցագործության համար ոչ իրավաչափ դատապարտման, այլև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց այլ՝ ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք:

Օրենսդիրը Սահմանադրության ուժով պարտավորվում է օրենքով սահմանել վնասի հատուցման պայմանները և կարգը:

### **Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը**

Փոփոխված Սահմանադրության 63-րդ հոդվածը, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 47-րդ հոդվածի 2-րդ մասին և ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ ամրագրում է անձի արդար դատաքննության իրավունքը:

Այս իրավունքը նախատեսված էր նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով, սակայն 63-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը ավելի լայն է և հստակ: Նախկինում արդար դատաքննության իրավունքը կապվում էր խախտված իրավունքների վերականգնման կամ քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու նպատակի հետ: Փոփոխված Սահմանադրությունը նախատեսում է ցանկացած գործով յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը, որի բովանդակության ծավալներն ավելի լայն են:

63-րդ հոդվածի 2-րդ մասը հստակեցնում է, որ դատական քննության հրապարակայնությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ 2-րդ մասում սահմանված որոշակի ավելի կարևոր իրավական բարիքների պաշտպանության համար: Սահմանադրությունը հստակեցրել է, որ հրապարակայնության սահմանափակման նպատակահարմարությունը պետք է գնահատի դատարանը՝ իր որոշմամբ: Ի տարբերություն 19-րդ հոդվածի՝ հրապարակայնության սահմանափակման հիմքերի մեջ ավելացվել են նաև անչափահասների շահերը:

63-րդ հոդվածի 3-րդ մասը ամրագրել է հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործման արգելքը: Այն, ըստ էության, հիմնվում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի վրա, սակայն ճշգրտում է այդ նորմի բովանդակությունը և դրանով նախատեսվող պաշտպանությունը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասով արգելվում էր օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: Սահմանադրության նշված նորմը խիստ կտրուկ պահանջ էր սահմանում, որը կարող է վերաբերել թեկուզ ամենաչնչին ընթացակարգային դրույթի խախտմանը՝ չթողնելով որևէ տարբերակման հնարավորություն՝ կախված, օրինակ, ապացույցի հավաքման ժամանակ թույլ տրված սխալի տեսակից և ծանրությունից: Նման ընդհանուր և համապարփակ արգելք ՄԻԵԿ-ը ևս չի նախատեսում: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասից պարզ չէր նաև, թե ում շահերի պաշտպանությանն էր ուղղված այս դրույթը: Նյութական արդարության տեսանկյունից վիճելի է, թե ինչու, օրինակ, ապացույց հավաքելիս միայն վկայի պաշտպանությանը ծառայող դատավարական դրույթի խախտումը պետք է հանգեցնի ապացույցի օգտագործման արգելքի՝ հօգուտ մեղադրյալի կամ ամբաստանյալի: Արդյո՞ք նման կարգավորումները չեն կարող ի չարս գործադրվել դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ, օրինակ՝ այս մեխանիզմի օգնությամբ գործի քննության համար առանցքային նշանակություն ունեցող ապացույցը դիտավորյալ հանելով ապացույցների կազմից: Այսպիսով, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության կարգավորումները սահմանափակ հնարավորություն էին տալիս հետագայում քրեադատավարական օրենսդրությամբ և դատական պրակտիկայի միջոցով զարգացնելու ապացույցների օգտագործման արգելքին վերաբերող իրավաբանական դոկտրինը:

Այս առումով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ արգելվում է օգտագործել հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցը: Այն, որ ապացույցների անթույլատրելիությունը կապվում է միայն հիմնական իրավունքների խախտման կամ արդար դատաքննության իրավունքի խաթարման հետ, հնարավորություն է տալիս ինչպես օրենքի մակարդակով, այնպես էլ դատական պրակտիկայում գտնելու քրեական արդա-

րադատության բոլոր պահանջները բավարարող լուծումներ: Նշված կարգավորումները Սահմանադրության համապատասխան նորմերը լիովին համահունչ են դարձնում ՄԻԵԿ 6-րդ հոդվածին և դատական պրակտիկային՝ նպաստելով նաև քրեական վարույթի տարբեր մասնակիցների շահերի հավասարակշռված պաշտպանությանը<sup>72</sup>:

#### **Հոդված 64. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը**

Փոփոխված Սահմանադրությունը առանձին հոդվածով ամրագրում է իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքը՝ այն սահմանելով որպես անմիջականորեն գործող իրավունք: 64-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասին:

Իրավաբանական օգնության իրավունքի համատեքստում ուշադրության արժանի է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասի նորմը, որը ուղղակիորեն նախատեսում է ձերբակալման, խափանման միջոց ընտրելու կամ մեղադրանք առաջադրելու պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը: Նման նորմ փոփոխված Սահմանադրությունը ամրագրում է միայն մեղադրյալի համար (67-րդ հոդվածի 2-րդ կետ), բայց իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքը անմիջականորեն գործող իրավունք է, ինչը նշանակում է, որ անձը այս իրավունքից կարող է օգտվել ցանկացած պահի:

Իրավաբանական օգնության իրավունքի և պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի համատեքստում ուշադրության է արժանի փաստաբանության ինստիտուտին վերաբերող նորմերն առաջին անգամ սահմանադրորեն ամրագրելը: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 64-րդ հոդվածը երաշխավորում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանող օրենքը պետք է հաշվի առնի փաստաբանության անկախությունը, իրավահավասարությունը և ապահովի ինքնակառավարման պատշաճ կառուցակարգեր:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 20-րդ հոդվածը կարգավորում էր նաև տարաբնույթ այլ հարցեր, որոնց 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը անդրադարձել է այլ հոդվածներում՝ հաճախ առանձին քրեադատավարական իրավունքների տեսքով (հոդվածներ 67, 69, 70)<sup>73</sup>:

<sup>72</sup> Տե՛ս Գերմանիայի Ռաշնային դատարանի դատավոր Հենինգ Ռ-ադթբեի 2015 թ. օգոստոսի 27-ի կարծիքը (հրապարակված չէ):

<sup>73</sup> Տե՛ս նաև համապատասխան հոդվածների պարզաբանումներում:

### **Հողված 65. Գուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը**

Այս հոդվածը հիմնվում է 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասի վրա, այն տարբերությամբ, որ 65-րդ հոդվածը սահմանափակում է ցուցմունք չտալու իրավունքը միայն այն դեպքերով, «եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ»: Առաջին հայացքից 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 65-րդ հոդվածի կարգավորումները կարող են հետընթաց դիտվել, եթե այս իրավունքին մոտենանք միակողմանիորեն՝ միայն ցուցմունք տվողի շահերի տեսանկյունից: Սակայն չպետք է մոռանալ քրեական վարույթում բազմաթիվ այլ մասնակիցների շահերի մասին՝ տուժող, այլ ամբաստանյալներ և այլն, ինչպես նաև հանրորեն վտանգավոր արարքների բացահայտման հանրային պահանջի մասին: Այս պարագայում հարց է առաջանում, թե արդյո՞ք ցուցմունք չտալու բացարձակ իրավունքը չի խախտում մեկ այլ անձի իրավունքներն ու օրինական շահերը: Արդյո՞ք անձը, որը տիրապետում է հանցագործության բացահայտման համար կարևոր տեղեկատվության, և որը որևէ կերպ չի անդրադառնում իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վրա, իրավունք ունի պարզապես քմահաճորեն լռելու և չօժանդակելու հանցագործությունների բացահայտմանը կամ այլոց իրավունքների պաշտպանությանը: Մինչդեռ հնարավոր է, որ այդ տեղեկատվությունը կարևոր ապացուցողական նշանակություն ունենա մեկ այլ անձին մեղազրկող արարքը բացառելու կամ վերաորակելու համար: Իրականում 65-րդ հոդվածի նման կարգավորումը ոչ թե հետընթաց է, այլ քրեական վարույթում այլոց իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանությանն ուղղված կարգավորում:

### **Հոդված 66. Անմեղության կանխավարկածը**

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 21-րդ հոդվածը նախատեսում էր անմեղության կանխավարկածի սկզբունքը, որի առանցքային բովանդակությունն այն է, որ հանցագործության մեջ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այնուհետև թվարկվում էին անմեղության կանխավարկածի բովանդակությունը կազմող որոշակի տարրեր, այն է՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, և չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Սակայն նշված տարրերը սպառիչ չեն և ամբողջությամբ չեն արտացոլում անմեղության կանխավարկածի բովանդակությունը, որը շատ ավելի լայն է: Անմեղության կանխավարկածի տարրերի ոչ սպառիչ թվարկումը Սահմանադրությամբ կարող է ստեղծել տպավորություն, որ սկզբունքի բովանդակությունը սահմանափակվում է միայն հենց թվարկվածով: Այդ իսկ պատճառով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 66-րդ հոդվածը, ամրագրելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, հրաժարվել է դրա մյուս տարրերի ոչ սպառիչ թվարկումից: Առաջին

հայացքից սա կարող է թվալ հետընթաց, սակայն փոփոխված Սահմանադրությունն ամրագրել է անմեղության կանխավարկածի առանցքային բովանդակությունը՝ դրա մանրամասնումը թողնելով Սահմանադրության մյուս հոդվածներին և քրեադատավարական օրենսդրությանը: Մասնավորապես, անմեղության կանխավարկածի սկզբունքից են բխում նաև քրեական վարույթում անձի նվազագույն իրավունքները՝ պաշտպան ունենալու, իրեն հասկանալի լեզվով մեղադրանքի էությանը ծանոթանալու և այլն, որոնք հանգամանորեն ամրագրված են Սահմանադրության առանձին՝ 67-րդ հոդվածում:

Անմեղության կանխավարկածի հարցում 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության կարգավորումներին համահունչ մոտեցում ունեն նաև ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ մասն ու Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 48-րդ հոդվածը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի մյուս դրույթները ամրագրվել են Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասում, 68-րդ, 72-րդ և 73-րդ հոդվածներում<sup>74</sup>:

### **Հոդված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը**

67-րդ հոդվածը նորույթ է փոփոխված Սահմանադրությունում: Այն մեկ հոդվածի ներքո համակարգում է քրեական վարույթի շրջանակներում անձի նվազագույն իրավունքները և պաշտպանության երաշխիքները: 67-րդ հոդվածի կարգավորումները կրկնում են ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի մոտեցումները:

Ամրագրված են նոր երաշխիքներ, որոնք 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ արտացոլված չէին, մինչդեռ ժամանակակից միջազգային փաստաթղթերում տեղ գտած և ճանաչված անվիճելի սկզբունքներ են: Առաջին անգամ ամրագրվում է, որ անձն իրավունք ունի քրեական գործով իր պաշտպանությունը կազմակերպելու ոչ միայն անձամբ, այլև իր ընտրած փաստաբանի միջոցով: Այսինքն՝ անձին իրավունք է վերապահված մատնանշելու իր նախընտրած փաստաբանին: Սահմանված է փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքը: Սահմանադրական մակարդակ է բարձրացվել անձի առերեսման իրավունքը՝ իր դեմ ցուցմունք տվող անձանց հետ, ինչպես նաև թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունքը, եթե անձը չի տիրապետում հայերենին:

### **Հոդված 68. Կրկին դատվելու արգելքը**

Սահմանադրական այս նորմը արտացոլում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթը և զարգացնում այն ՄԻԵԿ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածին համահունչ:

ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով հնարավորություն է տրվում

<sup>74</sup> Տես նաև համապատասխան հոդվածների պարզաբանումներում:

ուժի մեջ մտած դատավճռով ավարտված քրեական վարույթը վերսկսել ինչպես propter nova (այսինքն՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների կամ ապացույցների առկայության դեպքում), այնպես էլ propter falsa (այսինքն՝ առաջին վարույթի ժամանակ ծանրակշիռ թերությունների առկայության դեպքում) ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձի օգտին և ի վնաս արդարացվածի<sup>75</sup>: Մանրամասները պետք է սահմանվեն օրենքով:

### **Հոդված 69. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը**

69-րդ հոդվածը արտացոլում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները՝ վերադաս դատական ատյանի կողմից դատավճռի վերանայման իրավունքի մասով: Սահմանադրական նորմը հստակեցնում է, որ բողոքարկման հիմքերը պետք է սահմանվեն օրենքով: Նման մոտեցումը համահունչ է նաև ՄԻԵԿ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածին:

### **Հոդված 70. Ներման խնդրանքի իրավունքը**

Այս նորմը կրկնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 20-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված կարգավորումները՝ առանձին իրավունքի տեսքով ընդգծելով ներման խնդրանքի իրավունքը:

### **Հոդված 71. Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կարևորագույն քայլ է կատարում քրեաիրավական երաշխիքների սահմանադրական կարգավորման հարցում՝ առաջին անգամ ամրագրելով մեղքի սկզբունքը: Այս սկզբունքն ունի սահմանադրաիրավական ու քրեաիրավական բաղադրիչներ: 71-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է: Այս իմաստով մեղքի սկզբունքն ապահովում է, որ քրեական պատժի ենթարկվի միմիայն այն ֆիզիկական անձը, ում կարելի է մեղադրել այն բանի համար, որ իր մեղավոր հակաիրավական վարքագծով է կատարել հանցանքը:

Նույն հոդվածի 2-րդ մասը ապահովում է, որ մեղավորությամբ գործած հանցագործի նկատմամբ նշանակվի միմիայն այնպիսի քրեական պատիժ, որը համապատասխանում է այդ հանցանքով նրա կողմից դրսևորված մեղքի աստիճանին: Հանցանք կատարած անձի նկատմամբ սահմանված պատիժը պետք է արդար հարաբերակցության մեջ լինի ինչպես կատարված արարքի ծանրության, այնպես էլ հանցանք կատարած անձի մեղավորության աստիճանի հետ: Պատժի կանխարգելիչ նպատակները (ինչպես, օրինակ՝ վերասոցիալիզացումը կամ հետագա հանցագործություններից հետ պահելը) կոնկրետ պատիժ սահմանելիս (տեսակն ու չափը) կարող են հաշվի առնվել միմիայն այն ծավալով,

<sup>75</sup> Տե՛ս Գերմանիայի Դաշնային դատարանի դատավոր Հենինգ Ռադթեի վերոնշյալ կարծիքը: Տե՛ս նաև Theory and Practice of the European Convention of Human Rights, էջ 982-983:

որը թույլատրում է հանցանք կատարած անձի առանձին արարքին վերաբերող մեղքի չափը<sup>76</sup>:

Արարքի և պատժի համաչափության սկզբունքը ամրագրված է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 49-րդ հոդվածի 3-րդ մասում:

### **Հոդված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը**

Սահմանադրական այս նորմը ինքնուրույն հոդվածով կարգավորում է արարքի հանցավորության որոշման և պատժի նշանակման հետ կապված հարցերը՝ կրկնելով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-5-րդ մասերի դրույթները: Սահմանադրական կարգավորումները համապատասխանում են ՄԻԵԿ 7-րդ հոդվածին և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 49-րդ հոդվածին:

### **Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը**

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համեմատ՝ փոփոխված Սահմանադրությունը որևէ բովանդակային փոփոխություն չի կատարել: «Անձի պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող ակտերը» բառերը փոփոխված Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասում չեն վերարտադրվել, քանի որ դրանք վերաբերում են անձի իրավական վիճակի բարելավմանը:

### **Հոդված 74. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ**

74-րդ հոդվածը կրկնում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 42.1-ին հոդվածի դրույթները, որոնք իրավաբանական անձանց համար ճանաչում են այն նույն հիմնական իրավունքները և ազատությունները, որոնք սահմանված են մարդու համար, եթե դրանք իրենց էությանմբ կիրառելի են իրավաբանական անձանց նկատմամբ:

### **Հոդված 75. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը**

Բազմաթիվ հիմնական իրավունքների արդյունավետ իրականացումը կախված է կազմակերպական կառուցակարգերից և ընթացակարգերից: Խոսքն այստեղ ոչ թե պետության պոզիտիվ գործողություններ պահանջող այն հիմնական իրավունքների մասին է, որոնք ունեն հատուկ ընդգծված ընթացակարգային բնույթ (դատական պաշտպանություն, վարչական վարույթ) և արդեն իսկ ամրագրված են Սահմանադրության 2-րդ գլխում, այլ այն բանի, որ պետությունը

<sup>76</sup> Տե՛ս Գերմանիայի Դաշնային դատարանի դատավոր Հենինգ Ռադթեի վերոնշյալ կարծիքը:



պարտավոր է անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանել նյութական հիմնական իրավունքների իրականացման համար: Օրինակ՝ հավաքների ազատությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել, թե որ մարմինն է իրավասու իրականացնելու իրազեկման ընթացակարգը, սահմանել իրազեկման քննարկման և որոշումների կայացման կարգը, լսման ընթացակարգը և այլն:

**Հոդված 76. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 75-րդ հոդվածը, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 44-րդ հոդվածի, ինչպես նաև ՄԻԵԿ 15-րդ հոդվածի համեմատ, ընդլայնել է այն հիմնական իրավունքների և ազատությունների թիվը, որոնք ընդհանրապես ենթակա չեն սահմանափակման արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ: Սահմանափակման ենթակա չեն մարդու արժանապատվությունը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, օրենքի առաջ ընդհանուր հավասարությունը, ամուսնանալու ազատությունը, ծնողների իրավունքները և պարտականությունները, երեխայի իրավունքները, կրթության իրավունքը, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, քաղաքացիության իրավունքը, արտաքսման կամ հանձնման արգելքը, ազգային և էթնիկ ինքնուրույնությունը պահպանելու իրավունքը:

**Հոդված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը**

77-րդ հոդվածը պահպանում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 47-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն այն մասին, որ հիմնական իրավունքները չեն կարող չարաշահվել՝ ծառայեցվելով սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակների:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ «յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը», տեղ չի գտել փոփոխված Սահմանադրությունում, քանի որ այդ դրույթի միջոցով հնարավոր էր հիմնական իրավունքների գործողությունը տարածել նաև մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա: Ինչպես արդեն նշվել է<sup>77</sup>, նման մոտեցումը հակասում է հիմնական իրավունքների դերի և հասցեատիրոջ մասին դոկտրինին:

<sup>77</sup> Այս մասին տե՛ս նաև 3-րդ հոդվածի պարզաբանումները, ինչպես նաև 4.1-ին մասը:

## **Հողված 78. Համաչափության սկզբունքը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն առաջին անգամ ուղղակիորեն ամրագրում է հիմնական իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունեցող համաչափության սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի.

- Սահմանադրությամբ սահմանված *նպատակին* հասնելու համար կարող են օգտագործվել միայն այնպիսի միջոցներ, որոնք *պիտանի* և *անհրաժեշտ* են այդ նպատակին հասնելուն, և որ
- ընտրված միջոցը և հետապնդվող նպատակը պետք է միմյանց հետ գտնվեն *համարժեք* հարաբերակցության մեջ:

Օրենք ընդունելիս օրենսդիրը կարող է հետապնդել միայն Սահմանադրությամբ սահմանված նպատակ: Սահմանափակումների դեպքում դրանք բացառապես համապատասխան հիմնական իրավունքներում սահմանված հիմքերն են (օրինակ՝ հողված 31, մաս 2, հողված 40, մաս 4 և այլն):

Հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը *պիտանի* է այն դեպքում, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն: Հիմնական իրավունքին միջամտել *անհրաժեշտ* է միայն այն դեպքում, երբ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է *համարժեք* կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին:

## **Հողված 79. Որոշակիության սկզբունքը**

Օրենքների որոշակիության սկզբունքը նույնպես առաջին անգամ է ուղղակիորեն սահմանվում Սահմանադրության մեջ: Այն բխում է իրավական պետության սկզբունքից և պահանջում է այնպիսի օրենք, որի փաստակազմը և իրավական հետևանքը բովանդակային տեսանկյունից այնքան որոշակի լինեն, որ հնարավորություն տան հիմնական իրավունքի կրողին և հասցեատիրոջը դրսևորելու համապատասխան վարքագիծ: Միայն բավարար չափով որոշակի կարգավորումները կարող են հիմք դառնալ նաև դատական վերահսկողության համար: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ իրավական նորմերը, որպես ընդհանուր վերացական կարգավորումներ, միշտ որոշակի մեկնաբանության կարիք ունեն, և գրեթե անհնար է իրավական միարժեք նորմերով հստակ կարգավորել կյանքի բոլոր բազմաբնույթ հարաբերությունները: Այդ պատճառով սկզբունքորեն թույլատրելի են անորոշ իրավական հասկացությունները, հայեցողություն ընձեռող իրավական նորմերը, քանի դեռ դրանք կարող են մեկնաբանվել և կիրառվել Սահմանադրությանը համահունչ:

## **Հողված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն առաջին անգամ ամրագրում է մարդու իրավունքների սահմանափակումներին ներկայացվող մեկ այլ կարևոր պահանջի՝ իրավունքի էության անխախտելիության սկզբունքը: Բոլոր հիմնական իրավունքների էությունն այն է, որ դրանք կարող են հակադրվել պետության այն գործողություններին, որոնք միջամտում են անհատի իրավական ոլորտին: Կախված հիմնական իրավունքով պաշտպանվող բարիքից և դրանց սահմանափակումների թույլատրելիությունից՝ հիմնական իրավունքի պաշտպանությունը նույն չափանիշներով երաշխավորված չէ. անխախտելի է միայն մարդու արժանապատվությունը: Մարդը սկզբունքորեն պետք է հնարավորություն ունենա յուրաքանչյուր հիմնական իրավունք հակադրելու պետության միջամտությանը: Եթե պետության միջամտությունից պաշտպանվելու համար նախատեսված հիմնական իրավունքները օրենքով այնքան բովանդակագրվեն, որ առանձին հիմնական իրավունքը գործնականում դառնա դատարկ իրավունք, ապա նրա էությունը կխախտվի որպես սուբյեկտիվ հանրային իրավունք:

Այս սկզբունքի տարբերությունը համաչափության սկզբունքից այն է, որ վերջինս վերաբերում է միայն առանձին օրենսդրական միջոցառմանը, քանի որ պիտանիությունը, անհրաժեշտությունը և համարժեքությունը կարող են ստուգվել միայն կոնկրետ օրենսդրական նպատակի դեպքում: Սակայն եթե տարբեր օրենսդրական միջամտություններ են կատարվում իրավական բարիքի նկատմամբ, ապա հնարավոր է, որ առանձին վերցրած միջոցառումը անհամաչափ չէ, սակայն դրանց հանրագումարը կարող է անօգտագործելի դարձնել հիմնական իրավունքը՝ որպես մարդուն պաշտպանող իրավունք: Իրավունքի էության անխախտելիության սկզբունքը միջոց է այն բանի դեմ, որ մեծաթիվ, թեև առանձին-առանձին վերցրած դեպքերում, համաչափ օրենսդրական միջամտությունների հետևանքով հիմնական իրավունքը չկորցնի իր փաստացի ուժը և չդառնա դատարկ իրավունք<sup>78</sup>:

## **Հողված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան**

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ հողվածի 2-րդ մասը սահմանում էր, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետք է իրականացվի միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: 3-րդ հողվածի 2-րդ մասի դրույթը ոչ միայն ոչինչ չէր ավելացնում հիմնական իրավունքների պաշտպանության հարցում, այլև միևնույն ժամանակ հարցականի տակ էր դնում Սահմանադրության գերակայությունը միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների նկատմամբ մարդու իրավունքների բնագավառում: Մինչդեռ, եթե խոսքը

<sup>78</sup> Տես J. Ipsen, նշվ. աշխ., էջ 55-57:

միջազգային իրավունքի այն նորմերի և սկզբունքների մասին է, որոնք վավերացված են Հայաստանի Հանրապետության կողմից, ապա դրանք կիրառման գերակայություն ունեն Հայաստանի օրենքների, բայց ոչ Սահմանադրության նկատմամբ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը մարդու իրավունքների պաշտպանության հարցում 81-րդ հոդվածով ուղենիշ է դրել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Ընդ որում՝ մարդու իրավունքներին վերաբերող սահմանադրական նորմերը մեկնաբանելիս Սահմանադրության համապատասխան նորմի պահանջն է՝ հաշվի առնել, օրինակ, ՄԻԵԴ դատական պրակտիկան, այդ թվում՝ այլ պետությունների գործերով<sup>79</sup>:

Իսկ 81-րդ հոդվածի 2-րդ մասը, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի նման, սահմանում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Ընդ որում՝ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել (հոդված 116, մաս 3):

## **5. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները**

Ինչպես արդեն նշվել է 4.2.2. մասում, մարդու իրավունքների սահմանադրական կարգավորման սիստեմատիկայի, տրամաբանության և կենսագործելիության առումով առանցքային փոփոխություններից էր 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության «դասական» և սոցիալական հիմնական իրավունքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների տարանջատումը: Այս տրամաբանության շրջանակներում փոփոխված Սահմանադրության 3-րդ գլխում տեղ են գտել անձի համար սուբյեկտիվ իրավունքներ չառաջացնող, սոցիալական, տնտեսական, մշակութային ոլորտներին առնչվող և պետության քաղաքականության ուղղությունները որվագծող մի շարք կարևոր դրույթներ:

Սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր այն դրույթները, որոնք պարտավորեցնում են միայն օրենսդրին և գործադիրին, ձևակերպված են Սահմանադրության 3-րդ գլխում՝ որպես օրենսդրական երաշխիքներ: Սահմանադրության 82-86-րդ հոդվածներում ամրագրված են աշխատանքային պայմանների<sup>80</sup>, սոցիալական ապահովության<sup>81</sup>, արժանապատիվ գոյության և նվազագույն աշ-

<sup>79</sup> Այս մասին տես նաև 3-րդ հոդվածի պարզաբանումներում:

<sup>80</sup> Տես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 32-րդ հոդված:

<sup>81</sup> Տես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 37-րդ հոդված:

խատավարձի<sup>82</sup>, առողջության պահպանության իրավունքները<sup>83</sup>, որոնց բովանդակությունը և ծավալը օրենսդիրը Սահմանադրության ուժով պարտավոր է սահմանել օրենքների միջոցով:

Այն հանգամանքը, որ 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված սոցիալական իրավունքները չեն կարող ուղղակիորեն հարկադրվել դատարանի կողմից (այն իմաստով, որ անհատը չի կարող պահանջել իր սոցիալական իրավունքները դատարանի միջոցով՝ հենվելով բացառապես Սահմանադրության տեքստի վրա), չի խոչընդոտում, որպեսզի այդ իրավունքները հիմք դառնան օրենքի վիճարկման համար Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողության շրջանակներում: Այսինքն՝ սոցիալական իրավունքներին վերաբերող բոլոր սահմանադրական դրույթները կարող են որպես չափորոշիչ օգտագործվել օրենքների սահմանադրականությունը գնահատելու համար, երբ պետական մարմինների դիմումներով՝ անկախ կոնկրետ առիթից և իրավունքի խախտման հանգամանքից, վիճարկվում է նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը:

2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 86-րդ հոդվածում տեղ են գտել պետության քաղաքականության հիմնական նպատակները<sup>84</sup>. օրինակ՝ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, բնակարանային շինարարության խթանումը, կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը, ծնելիության և բազմազավակության խթանումը և այլն: Դրանք անհատի անմիջական իրավական պահանջներ չեն, այլ պարունակում են միայն նպատակներ, որոնք պետությունը պետք է իրագործի «հնարավորության շրջանակներում»: Սակայն դա չի նշանակում, որ պետությունը կարող է դրանք անտեսել: Սահմանադրության 87-րդ հոդվածի ուժով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել այդ նպատակները, և, որպես դրանց իրագործման կարևոր երաշխիք՝ Կառավարությունն այդ մասին Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված ամենամյա զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Ազգային ժողով:

<sup>82</sup> Տե՛ս 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 32-րդ հոդված:

<sup>83</sup> Տե՛ս 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 38-րդ հոդված:

<sup>84</sup> Տե՛ս 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 48-րդ հոդված:

## 6. Անցումը կառավարման խորհրդարանական համակարգին

### 6.1. Կառավարման կիսանախագահական համակարգից հրաժարվելու պատճառները

Կիսանախագահական կառավարման ձևում Հանրապետության նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից և կիսում է գործադիր իշխանությունը կառավարության հետ, իսկ վերջինս պատասխանատու է խորհրդարանի առջև: Կառավարությունը կարող է պատասխանատու լինել նաև Հանրապետության նախագահի առջև (ինչպես ի սկզբանե նախատեսված էր 1995 թ. Սահմանադրությամբ): այդ պարագայում խոսքը վերաբերում է կիսանախագահական կառավարման ձևի «նախագահական-խորհրդարանական» մոդելին: Եթե Կառավարությունը պատասխանատու է միայն խորհրդարանի առջև, ապա նման մոդելը սովորաբար կոչվում է «խորհրդարանական-նախագահական» (ինչպես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում)<sup>85</sup>:

Կիսանախագահական կառավարման համակարգում ժողովուրդը կատարում է երկու քաղաքական ընտրություն. ուղղակիորեն ընտրվում է ինչպես խորհրդարանը, այնպես էլ Հանրապետության նախագահը: Ըստ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության՝ Հանրապետության նախագահն օժտված էր գործադիր իշխանության իրական լծակներով, հատկապես երկրի անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության բնագավառներում, սակայն նա, ի տարբերություն մաքուր նախագահական համակարգի, ամբողջ գործադիր իշխանության կրողը չէր և այն իրավաբանորեն կիսում էր Կառավարության հետ: Իր հերթին, Կառավարության կազմավորման գործում վճռորոշ դերակատարությունը պատկանում էր Ազգային ժողովին, որը կարող էր նաև պաշտոնանկ անել Կառավարությանը: Միևնույն ժամանակ Հանրապետության նախագահը նույնպես կարևոր դեր ուներ Կառավարության կազմավորման խնդրում. նա նշանակում էր վարչապետին, և, վերջինիս առաջարկությամբ՝ Կառավարության մյուս անդամներին: Նման համակարգն ինքնին կոնֆլիկտաժին է, քանի որ սկզբունքային լուծում չի տալիս այն հարցին, թե ժողովրդի կատարած որ ընտրությունն է վճռորոշ երկրի քաղաքական ուղեգիծը որոշելու համար՝ Հանրապետության նախագահի, թե՛ Ազգային ժողովի: Ճիշտ է, այս խնդիրն իր ողջ սրությամբ Հայաստանի քաղաքական կյանքում չի առաջացել, քանի որ Հանրապետության նախագահը, որպես կանոն, հնարավորություն է ունեցել հենվելու Ազգային ժողովում իրեն սատարող մեծամասնության վրա: Նման պայմաններում Կառավարության ձևավորումը գործնական խնդիրներ, բնականաբար, չի առաջացրել: Սակայն իրավիճակը կտրուկ կերպով կարող էր փոփոխվել, եթե

<sup>85</sup> Տե՛ս Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան, նշվ. աշխ., էջ 71-72: Գ. Հարությունյան, Վ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 30-31:

Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի ընտրությունները տարբեր արդյունքների հանգեցնեին: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանված համակարգում, կախված խորհրդարանական մեծամասնություն ունենալու կամ չունենալու որոշիչ հանգամանքից, Հանրապետության նախագահը կարող էր իրավական ճանապարհով հայտնվել երկու ծայրահեղ վիճակներում, որոնցից յուրաքանչյուրը վտանգավոր է երկրի կայուն զարգացումը երաշխավորելու համար: Լիովին այլ իրավիճակ կլիներ նաև այն դեպքում, եթե Ազգային ժողովում չլինեի որևէ հստակ մեծամասնություն այս կամ այն Կառավարության կամ Հանրապետության նախագահի օգտին: Ինչպես ցույց է տալիս կիսանախագահական կառավարման ձև ունեցող երկրների փորձը<sup>86</sup>, այդ համակարգը պրակտիկայում գործում է երեք հիմնական եղանակներով.

- նախագահը խորհրդարանական մեծամասնության ղեկավարն է,
- նախագահը և խորհրդարանական մեծամասնությունը միմյանց հակադիր են,
- պառլամենտում չկա կայուն մեծամասնություն:

Կիսանախագահական կառավարման ձևի այս երեք տարբեր եղանակներից յուրաքանչյուրն ունի իրեն ներհատուկ խնդիրները: Երբ Հանրապետության նախագահը խորհրդարանական մեծամասնության ղեկավարն է, ապա տեղի է ունենում իշխանության գերկենտրոնացում, չեն երաշխավորվում իշխանությունների իրական բաժանումն ու հավասարակշռումը, լիազորությունների ու պատասխանատվության համարժեք հաշվեկշիռը, հավասարապես ուժեղ իշխանության թևերի առկայությունը: Անկախ 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից, Հայաստանում շարունակում էր գործել «կիսանախագահական» գերիզոր ինստիտուտ, քաղաքական մենիշխանության համակարգ, Հանրապետության նախագահի ինստիտուտի էական ներազդեցության տիրույթում հայտնված օրենսդիր, գործադիր և դատական իշխանություն, ինչպես նաև անկախ մարմիններ հանդիսացող ինստիտուտներ: Նման իրավիճակում հասարակությունն իր սպասելիքները կապում է ոչ թե երկրի սոցիալական ու տնտեսական խնդիրների համար Սահմանադրությամբ պատասխանատու Կառավարության, այլ Հանրապետության նախագահի հետ: Առաջանում է ակնհայտ անհամամասնություն սահմանադրական տարբեր մարմինների լիազորությունների իրական ծավալի և նրանց քաղաքական պատասխանատվության միջև: Համակարգը գերանձնավորվում է, իսկ ժողովրդավարական պետությունում ամբողջ պետության ճակատագիրը չի կարող կախված լինել մեկ անձից և բացառապես նրա անձնական հատկանիշներից: Ընդ որում, ունենալով հսկայական իշխանություն, Հանրապետության նախագահն իր լիազորությունների իրականացման ժամկետում քաղաքական պատասխանատվություն չի կրում և չի կարող քաղաքական պատճառներով պաշտոնանկ արվել Ազգային ժողովի կողմից: Հայտնի է, որ սուբյեկտիվ գործոնի դերը ծայրա-

<sup>86</sup> Այդ մասին տես մանրամասն Վ. Պողոսյան, Կառավարման ձևի էվոլյուցիան Հայաստանում. արդյունքներ և հեռանկարներ / Հայկական քաղաքագիտական հանդես, 2(2), 2014, էջ 71-91:

հեղորեն մեծանում է համարժեք հակակշիռներ չունենալու և համակարգային անկատարության պայմաններում: Իսկ վերջիններս հիմնականում սահմանադրական թերի ու ոչ արդյունավետ լուծումների հետևանք են: Նման վիճակի հետագա հանդուրժումը երկրի ազգային անվտանգության համար սպառնալիք ու ժողովրդավարական զարգացումների արգելք էր դառնում:

Կիսանախագահական կառավարման համակարգի պայմաններում երկիրը կարող է հայտնվել մեկ այլ, պայթյունավտանգ իրավիճակում, եթե Հանրապետության նախագահը՝ իր սահմանադրական լիազորություններով հանդերձ, Ազգային ժողովում չունենա մեծամասնություն: Դրան մեծապես կարող են նպաստել երկրի հեղիեղուկ քաղաքական համակարգը, աշխարհաքաղաքական իրավիճակը և, դրանով պայմանավորված՝ արտաքին տարաբնույթ ազդեցությունները, ներքին անհանդուրժողականությունը, արժեհամակարգային շփոթը, քրեաօլիգարխիկ շերտերի շահերը և այլն: Ինչ տեղի կունենա, երբ, օրինակ, նորընտիր նախագահը ստիպված լինի գործ ունենալ հին խորհրդարանի հետ, որի մեծ մասը նրա քաղաքական հակառակորդն է: Ինչպես է ձևավորվելու Կառավարությունը, ինչպես են Հանրապետության նախագահը և Կառավարությունը համատեղ մշակելու և իրականացնելու երկրի արտաքին քաղաքականությունը, դե ֆակտո պատերազմական վիճակում գտնվող երկրում ինչպես է իրականացվելու բանակի օպերատիվ կառավարումը: Այս հարցերից որևէ մեկին 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը բավարար պատասխան չէր տալիս: Գործադիր իշխանության երկվությունը, եթե Հանրապետության նախագահը և Կառավարությունը միևնույն քաղաքական ճամբարին չեն պատկանում, հղի է քաղաքական առճակատումների վտանգով: Դա հնարավոր է ցանկացած ժողովրդավարական երկրում, սակայն այն առավել վտանգավոր է կիսապատերազմական վիճակում գտնվող Հայաստանի համար, առավել ևս, որ մեր երկրի ո՛չ իրավական, ո՛չ քաղաքական մշակույթը ակնհայտորեն պատրաստ չեն նման փորձությունների:

Կառավարման կիսանախագահական համակարգը որևէ սկզբունքային առավելություն չունի խորհրդարանական համակարգի նկատմամբ նաև այն դեպքում, երբ խորհրդարանում չկա կայուն մեծամասնություն: Նման իրավիճակում էլ ավելի ցցուն կերպով կարող է դրսևորվել կիսանախագահական համակարգին ներհատուկ գործադիր իշխանության երկբևեռությունը, հատկապես այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են արտաքին քաղաքականությունը, պաշտպանությունը և ազգային անվտանգությունը: Հանրապետության նախագահը նման պայմաններում կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական դերակատարում: Վերջինիս մասին է վկայում, մասնավորապես, Վայմարյան Հանրապետության դառը փորձը<sup>87</sup>:

<sup>87</sup> Տե՛ս K. D. Bracher, Die Auflösung der Weimarer Republik. Eine Studie zum Problem des Machtverfalls in der Demokratie, Ring-Verlag, Stuttgart 1955: C. Skach, Borrowing Constitutional Designs: Constitutional Law in Weimar Germany and the French Fifth Republic, Princeton University Press 2005, էջ 49-70:



Կիսանախագահական համակարգի բացասական գծերից մեկն էլ այն է, որ, ի տարբերություն խորհրդարանական կառավարման ձևի, նախագահական ընտրության ժամանակ պարտված թեկնածուն, նույնիսկ եթե ձայների տարբերությունը հաղթողի և պարտվողի միջև չնչին է, ոչինչ չի ստանում, նրա օգտին քվեարկած ընտրողների ձայները պարզապես կորչում են: Մեր մենթալիտետի և քաղաքական մշակույթի պայմաններում դա հանգեցնում է հասարակական մեծ լարվածության՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

1995 թ. Սահմանադրության ընդունման ժամանակ «ուժեղ նախագահի» անհրաժեշտությունը, մասնավորապես, հիմնավորվում էր արցախյան հիմնախնդրով, տնտեսական խորը ճգնաժամով, կուսակցական համակարգի չկայացածությամբ: Կառավարման կիսանախագահական ձևի ընդունման հիմնական նպատակը Հանրապետության նախագահի ուժեղ իշխանության ապահովումն էր: «Ուժեղ նախագահը» նշանակում էր առաջին հերթին Հանրապետության նախագահի կողմից խորհրդարանը արձակելու հայեցողական իրավունք, վարչապետին նշանակելու և ազատելու իրավունք: 1998 թ. Հանրապետության նախագահի հարկադրված հրաժարականը ակնառու կերպով ցույց տվեց, որ միայն լայն սահմանադրական լիազորությունները բավարար չեն պրակտիկայում դրանք իրագործելու համար:

2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո, երբ կիսանախագահական համակարգի շրջանակներում անցում կատարվեց գերնախագահական մոդելից դեպի ավելի հավասարակշռված՝ պառլամենտական-նախագահական մոդելի, այլևս չկար որևէ հիմնավոր ինստիտուցիոնալ պատճառ՝ պահպանելու կառավարման կիսանախագահական ձևը: Սահմանադրաիրավական տեսանկյունից այլևս չկար «ուժեղ նախագահ», քանի որ, ի տարբերություն 1995 թ. Սահմանադրության սկզբնական տեքստի, Հանրապետության նախագահը չէր կարող կառավարել խորհրդարանի մեծամասնության կամքին հակառակ: Առավելագույնը, ինչը կարող էր անել Հանրապետության նախագահը, Կառավարության աշխատանքները խոչընդոտելն էր: Հանրապետության նախագահն «ուժեղ» էր պրակտիկայում ոչ թե առաջին հերթին իր սահմանադրական լիազորությունների շնորհիվ, այլ այն պատճառով, որ խորհրդարանում կար իրեն սատարող մեծամասնություն, և նա այդ մեծամասնության առաջնորդն էր: Ասվածից ուղղակիորեն հետևում է, որ առանց խորհրդարանական մեծամասնության չկա «ուժեղ նախագահ»: Քանի որ ինստիտուցիոնալ առումով կառավարման կիսանախագահական ձևի արդյունավետ գործելու նախապայմանը խորհրդարանական մեծամասնության առկայությունն է, ինչը նաև անհրաժեշտ է խորհրդարանական կառավարման ձևի արդյունավետության համար, ապա խորհրդարանական կառավարման ձև որդեգրելով՝ կարելի է խուսափել կիսանախագահական կառավարման ձևի երկու արմատական թերություններից՝ հակադիր մեծամասնությունների վտանգից և քաղաքական պատասխանա-

տվություն չկրող Հանրապետության նախագահի ձեռքում իշխանության գերկենտրոնացումից:

Սահմանադրական հանձնաժողովը կիսանախագահական համակարգին ներհատուկ և Հայաստանի քաղաքական և իրավական մշակույթի պայմաններում առավել սրություն ունեցող խնդիրների համարժեք լուծումներ առաջարկեց գտնել կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու միջոցով<sup>88</sup>: Խորհրդարանական համակարգում Կառավարությունը բացառիկ պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև, ինչը նպաստում է ինչպես կոլեգիալ կառավարմանը, այնպես էլ քաղաքական կուսակցությունների դերի զգալի բարձրացմանը: Քաղաքական կայուն ինստիտուցիոնալ համակարգի առանցքը քաղաքական կուսակցություններն են, այլ ոչ թե առանձին անհատները: Խորհրդարանական համակարգի պայմաններում վերանում է քաղաքական առճակատումների վտանգը կառավարության և նախագահի միջև, քանի որ վերջինս ստանձնում է վերկուսակցական անաչառ արբիտրի դեր՝ հետևելով քաղաքական դաշտի դերակատարների կողմից Սահմանադրության պահպանմանը: Խորհրդարանական համակարգում երկրի գլխավոր քաղաքական հարթակը խորհրդարանն է, որտեղ հրապարակայնորեն բխվում են քաղաքական մեծամասնության և քաղաքական ընդդիմության դիրքորոշումները, և որտեղ քաղաքական մեծամասնությունը պարտավոր է հանրությանը ներկայացնել իր կայացրած որոշումների հիմնավորվածությունը: Խորհրդարանական համակարգի արդյունավետ գործունեության կարևոր նախապայման է խորհրդարանական ընդդիմության իրավունքների ընդլայնումը, մասնավորապես, նրան խորհրդարանական վերահսկողության արդյունավետ մեխանիզմների տրամադրումը:

<sup>88</sup> Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում Սահմանադրական հանձնաժողովն ընդգծել էր, որ խորհրդարանական կառավարման ձևին անցնելու պարագայում հնարավոր է ունենալ հետևյալ առավելությունները.

«ա) հնարավոր է հասնել միասնական գործադիր իշխանության, առանց դուալիստական գործադիր իշխանության վտանգի, հատկապես այնպիսի երկրի համար կենսական կարևորություն ունեցող ոլորտներում, ինչպիսիք են արտաքին քաղաքականությունը, ազգային անվտանգությունը և պաշտպանությունը.

բ) չի կարող լինել խորհրդարանի և նախագահի միջև առճակատում, ինչը հնարավոր է կիսանախագահական կառավարման ձևում.

գ) «պատահական» անձանց իշխանության գալու վտանգը խիստ կնվազի.

դ) չի լինի իշխանության գերկենտրոնացում գործադիր իշխանության ղեկավարի ձեռքում, որը միաժամանակ չի ունենա քաղաքական պատասխանատվություն խորհրդարանի առջև.

ե) քաղաքական պատասխանատվությունը կնպաստի կոլեգիալ կառավարմանը.

զ) կբարձրանա խորհրդարանի քաղաքական դերը.

է) խորհրդարանի քաղաքական դերի բարձրացումը կնպաստի կուսակցությունների կողմից իրենց բուն գործառույթների իրականացմանը»: Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, էջ 51-52:

## **6.2. 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված խորհրդարանական կառավարման համակարգի հիմնական գծերը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 4-6-րդ գլուխները նախատեսում են ժամանակակից խորհրդարանական համակարգ, որը հստակորեն իրականացնում է Ազգային ժողովի և Կառավարության միջև իշխանությունների գործառույթային բաժանում: Փոփոխված Սահմանադրությունն ամրագրում է Ազգային ժողովի առանցքային դերակատարությունը (տե՛ս 6.3.) հասարակության քաղաքական կամքի ձևավորման հարցում՝ միաժամանակ անհրաժեշտ ինքնուրույնություն ընձեռելով Կառավարությանը երկրի ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման հարցերում (տե՛ս 6.4.): Սահմանադրությունը նախատեսում է օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև համագործակցության կառուցակարգեր, որոնք նպատակ են հետապնդում խուսափել ինստիտուցիոնալ հակամարտություններից: Սահմանադրությունը համարժեք լուծումներ է տալիս Կառավարության կայունության<sup>89</sup>, խորհրդարանի վերահսկողական լիազորությունների<sup>90</sup>, խորհրդարանական փոքրամասնությունների<sup>91</sup>, ինչպես նաև Հանրապետության նախագահի լիազորությունների և ընտրության կարգի հիմնախնդիրներին (տե՛ս 6.5.):

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանված խորհրդարանական կառավարման համակարգն առավել համահունչ է ժողովրդավարության և իրավական պետության պահանջներին:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ գործադիր իշխանության համար պատասխանատու էին և՛ Կառավարությունը, և՛ Հանրապետության նախագահը, մինչդեռ փոփոխված Սահմանադրությամբ գործադիր իշխանության համար պատասխանատու է բացառապես Կառավարությունը՝ խորհրդարանի վերահսկողության ներքո:

Հանրապետության նախագահը գործադիր իշխանության իրականացման հետ որևէ անմիջական կապ չունի և իրականացնում է խորհրդարանական համակարգին բնորոշ գործառույթներ, որոնք հիմնականում արարողակարգային և խորհրդանշական բնույթի են: Բացի դրանից, նա հետևում է Սահմանադրության դրույթների պահպանմանը և դրանով նպաստում հասարակական կյանքում սահմանադրական արժեքների իրացմանը և արմատավորմանը:

Վարչապետն ունի բավականին ուժեղ դիրք, բայց նա, ի տարբերություն կիսանախագահական համակարգի Հանրապետության նախագահի, մշտապես գտնվում է խորհրդարանական վերահսկողության ներքո<sup>92</sup>: Փոփոխված Սահմանադրությամբ վարչապետը կարող է փոփոխվել քաղաքական դրդապատ-

<sup>89</sup> Այս մասին տե՛ս 6.3.7., 6.4.3. և 6.4.4. մասերում:

<sup>90</sup> Այս մասին տե՛ս 6.3.4. մասում:

<sup>91</sup> Այս մասին տե՛ս 6.3.5. մասում:

<sup>92</sup> Այս մասին տե՛ս նաև 6.4.7 մասում:

ճառներով, իսկ կիսանախագահական համակարգում Հանրապետության նախագահը՝ ոչ:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանված կառավարման համակարգի պայմաններում կլինի միասնական գործադիր իշխանություն՝ առանց դուալիստական գործադիր իշխանության վտանգի, հատկապես երկրի համար կենսական կարևորություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արտաքին քաղաքականությունը, ազգային անվտանգությունը և պաշտպանությունը:

Խորհրդարանական համակարգում իշխանության գերանձնավորումը խիստ կնվազի, քանի որ վարչապետ կարող է դառնալ միայն ամենաուժեղ և հանրորեն ընդունելի քաղաքական ուժի (ուժերի) ներկայացուցիչը, որը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև և կարող է պաշտոնանկ արվել նրա կողմից: Խորհրդարանական կառավարման համակարգը կնպաստի խորհրդարանի քաղաքական դերի ուժեղացմանը՝ որպես օրենսդիր և վերահսկողություն իրականացնող մարմին, որտեղ էականորեն ուժեղացվում է ընդդիմության դերը:

### **6.3. Ազգային ժողովի առանցքային դերը խորհրդարանական կառավարման համակարգում**

Հայաստանի Հանրապետությունում պառլամենտարիզմի զարգացումը սահմանադրական բարեփոխումների առանցքային խնդիրներից է, ժողովրդավարական և իրավական պետության կայացման հիմնական ուղին: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության կարևորագույն բացերից մեկն այն էր, որ խորհրդարանական փոքրամասնության դերակատարությունը հասցված էր նվազագույնի: Նման վիճակ էր առկա նաև Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների իրացման հարցում:

Պառլամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ երկխոսության մշակույթ է, որի արմատավորման իրավական նախադրյալներն առաջին հերթին սահմանադրական ամրագրում պետք է ստանան: Փոխարենը մեզանում արմատավորվել է քաղաքական առճակատման համակարգը, ինչը բացասաբար է անդրադառնում օրենսդիր մարմնի դերակատարության վրա և երկրի կայուն զարգացման լուրջ արգելք է:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, մասնավորապես.

- բարեփոխում է Ազգային ժողովի դերը օրենսդրական գործընթացում (հոդված 109) (տե՛ս 6.3.3.),
- զարգացնում է Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների շրջանակը (հոդվածներ 106, 108, 111-114) (տե՛ս 6.3.4.),
- ընդլայնում է խորհրդարանական փոքրամասնության իրավունքների սահմանադրական երաշխիքները (հոդվածներ 103, 104, 106, 108, 112-114) (տե՛ս 6.3.5.),

- մեծացնում է Ազգային ժողովի դերը պետական իշխանության ու կառավարման մարմինների ձևավորման գործում (հոդվածներ 149, 115, 122, 125, 166, 174, 177, 192, 195, 197, 199, 201) (տե՛ս 6.3.6.),
- վերափոխում է Ազգային ժողովի պատգամավորների ընտրության գործող կարգը՝ անցում կատարելով համամասնական ընտրական համակարգի (հոդված 89) (տե՛ս 6.3.7.):

Մինչև այս խնդիրների քննարկմանն անցնելը, սակայն, հարկ է անդրադառնալ Ազգային ժողովի կարգավիճակին և նրա հիմնական գործառույթներին (տե՛ս 6.3.1.), քանի որ դրանք առանցքային նշանակություն ունեն խորհրդարանական համակարգում Ազգային ժողովի իրական դիրքի բնութագրման համար:

Ազգային ժողովի կարգավիճակի հետ սերտորեն կապված է պատգամավորի սահմանադրաիրավական դիրքը, որը որոշակի փոփոխությունների է ենթարկվել 2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում (տե՛ս 6.3.2.):

### **6.3.1. Ազգային ժողովի կարգավիճակը և հիմնական գործառույթները**

Ի տարբերություն բազմաթիվ երկրների սահմանադրությունների, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը Ազգային ժողովին նվիրված գլխի սկզբում՝ 88-րդ հոդվածում, ամրագրում է խորհրդարանի հիմնական գործառույթները: Դրանով հենց Սահմանադրության տեքստում ուղղակիորեն ուրվագծվում է խորհրդարանի տեղն ու դերը սահմանադրական մարմինների համակարգում: Հակառակ դեպքում այն պետք է բխեցվեր Սահմանադրության առանձին հոդվածներից:

Ազգային ժողովի իրավական դիրքի առաջնային բնութագրիչն<sup>93</sup> արտացոլված է Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: Այս դրույթին համահունչ է նաև Սահմանադրության 94-րդ հոդվածում ամրագրված այն նորմը, որ «պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին»:

Բոլոր պետական մարմինների մեջ խորհրդարանն ամենից սերտ է կապված ժողովրդավարության սկզբունքի հետ: Խորհրդարանական համակարգին անցնելուց և Հանրապետության նախագահի ուղղակի ընտրությունը վերացնելուց հետո (հոդված 7) խորհրդարանը ժողովրդի կողմից ընտրվող միակ պետական մարմինն է, որը համամասնական ընտրակարգի շնորհիվ ընդգրկում է բոլոր էական քաղաքական հոսանքների ներկայացուցիչներին:

Ներկայացուցչության ուժով լիազորված անձի գործողությունների արդյունքում ներկայացվողի համար առաջանում են պարտադիր հետևանքներ, ներկայացվողի առջև պատասխանատվություն և հաճախ, բայց ոչ միշտ, ներկայաց-

<sup>93</sup> Տե՛ս H. Meyer, § 4 Die Stellung der Parlamente in der Verfassungsordnung des Grundgesetzes // H.-P. Schneider, W. Zeh (Hrsg.), Parlamentsrecht und Parlamentspraxis in der Bundesrepublik Deutschland, Berlin, New York 1989, էջ 120:

վողի ցուցումներից կախվածություն: Ի տարբերություն քաղաքացիաիրավական իմաստով ներկայացուցչության, պառլամենտական ներկայացուցչությունը բնութագրվում է ընտրողների ցուցումներից պատգամավորների անկախությամբ՝ դրանով իսկ պառլամենտին վերապահելով գործելու լայն ազատություն: Ուստի ժողովրդի կամքը և պառլամենտի կամքը կարող են նաև միմյանցից տարբերվել: Պատգամավորի ազատ մանդատի սկզբունքն արտացոլված է Սահմանադրության 94-րդ հոդվածում, ըստ որի պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով<sup>94</sup>:

Միայն ներկայացուցչական գործառույթն է, որ արդարացնում է պառլամենտի մեծաթիվ կազմը: Միայն այդ գործառույթն է, որ անհրաժեշտ է դարձնում պառլամենտի նիստերի հրապարակայնությունը, որից շեղվելու համար անհրաժեշտ է խորհրդարանի անդամների բացարձակ մեծամասնության համաձայնությունը (հոդված 101, մաս 1 և 2): Սահմանադրության 101-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը իրավացի կերպով արգելում է քվեարկության անցկացումը փակ նիստում: Խորհրդարանի ներկայացուցչական գործառույթի պատճառով է անհրաժեշտ, որ վարչապետի ընտրությունը տեղի ունենա բաց, հրապարակային եղանակով<sup>95</sup>:

Ներկայացուցչական գործառույթն է, որ արդարացնում է պառլամենտի ազդեցությունը կառավարության վրա: Պետության ղեկավարումը կառավարության և պառլամենտի համատեղ գործն է<sup>96</sup>: Ներկայացուցչական գործառույթն է թույլ տալիս պառլամենտին քննարկել ցանկացած հարց, որը մտնում է կառավարության իրավասության մեջ, չնայած որ դրանց վերաբերյալ վերջնական որոշումներ կայացնելու իրավունքը մնում է կառավարությանը<sup>97</sup>:

Խորհրդարանի ներկայացուցչական գործառույթը կարևոր գործոն է նաև խորհրդարանական վերահսկողության համար<sup>98</sup>: Քանի որ պատգամավորները ներկայացնում են ժողովրդին, նրանք պետք է նաև հնարավորություն ունենան հաշվետվություն պահանջել այն մարմիններից, որոնց նրանք կառավարման մանդատ են տվել:

### **6.3.2. Պատգամավորի սահմանադրաիրավական դիրքը**

Պատգամավորի իրավական կարգավիճակը բնութագրելիս կարելի է տարբերակել պատգամավորների այն իրավունքները, որոնք նրան պատկանում են որպես խորհրդարանի անդամի և նրանք, որոնք կապված են նրա անձնական իրավունքների հետ:

<sup>94</sup> Այս մասին տե՛ս նաև 6.3.2. մասում:

<sup>95</sup> Այս մասին տե՛ս նաև 6.4.3. մասում:

<sup>96</sup> Այս մասին տե՛ս նաև 6.4.1. մասում:

<sup>97</sup> Տե՛ս H. Meyer, նույն տեղում, էջ 123-124:

<sup>98</sup> Ըստ Հանս Մայերի «վերահսկողական գործառույթը պառլամենտի ներկայացուցչական գործառույթի երեխան է»: Տե՛ս H. Meyer, նույն տեղում, էջ 147:

Պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմքը 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 94-րդ հոդվածն է, որն ամրագրում է նրա ներկայացուցչական, ազատ մանդատը: Ինչպես արդեն նշվեց վերևում, 94-րդ հոդվածն ուղղակիորեն ամրագրում է, որ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին: Դա նշանակում է, որ պատգամավորը չի կարող դիտվել միայն որպես իր ընտրազանգվածի կամ իր կուսակցության ներկայացուցիչ: Պատգամավորական գործունեություն իրականացնելու համար պատգամավորները Սահմանադրության նույն՝ 94-րդ հոդվածի համաձայն կաշկանդված չեն հրամայական մանդատով և առաջնորդվում են իրենց խղճով ու համոզմունքներով: Ազատ մանդատը բացառում է պատգամավորին ուղղված՝ իրավաբանորեն պարտադիր ցանկացած ցուցում, ում կողմից էլ, որ այն լինի: Այդուհանդերձ, պատգամավորի և ընտրողների միջև գոյություն ունի իրավական կապ, որի ուժով պատգամավորը պարտավոր է պահպանել շփումները ժողովրդի հետ, առնվազն իրազեկ լինել ընտրողների պատկերացումներին, շահերին և ցանկություններին, արտահայտել դրանք և հիմնավորել իր գործողությունները:

Մինևույն ժամանակ պետք է նկատել, որ պատգամավորի ներկայացուցչական մանդատը որոշակի հակադրության մեջ է Սահմանադրության 8-րդ հոդվածի 3-րդ մասի և 105-րդ հոդվածի հետ, որոնք համապատասխանաբար ամրագրում են կուսակցությունների և խմբակցությունների կարևոր դերակատարումը մի կողմից ժողովրդի, իսկ մյուս կողմից՝ Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորման գործում: Բնական է, որ և՛ կուսակցությունները, և՛ խմբակցությունները այդ առաքելությունն իրականացնում են առաջին հերթին խորհրդարանում՝ իրենց պատգամավորների միջոցով, որոնցից ակնկալում են համատեղ քաղաքական նպատակների իրականացում: Ըստ այդմ՝ պատգամավորները ենթարկվում են որոշակի կուսակցական և խմբակցական կարգապահության, սակայն ներկայացուցչական մանդատը նրանց հնարավորություն է տալիս իրենց մանդատն իրականացնելիս վայելելու անհրաժեշտ ինքնուրույնություն:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում պատգամավորի կարգավիճակին վերաբերող ամենաէական փոփոխությունը վերաբերում է պատգամավորների լիազորությունների դադարման և դադարեցման միջև տարբերակմանը: Եթե 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 67-րդ հոդվածը նախատեսում էր միայն պատգամավորի լիազորությունների դադարման ինստիտուտը, ապա բարեփոխված Սահմանադրության 98-րդ հոդվածը միմյանցից առանձնացնում է պատգամավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերը: Սահմանադրության 98-րդ հոդվածը՝ որպես պատգամավորի լիազորությունների դադարեցման հիմքեր, նշում է միայն յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայությունը, ինչպես նաև Սահմանադրության 95-րդ հոդվածով սահմանված պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների խախտումը: Հետևա-

բար, Սահմանադրության ուժով անթույլատրելի է դառնում պատգամավորի լիազորությունների դադարեցման որևէ այլ հիմք, այդ թվում՝ պատգամավորի կողմից խմբակցությունից դուրս գալու պարագայում: Սահմանադրական դատարանի 2009 թ. հունիսի 30-ի ՍԴՈ-810 որոշումը<sup>99</sup> 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության գործողության պայմաններում խմբակցությունից դուրս գալը դիտում էր որպես պատգամավորի լիազորությունների դադարեցման հիմք, ինչն այլևս կիրառելի չէ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 98-րդ հոդվածի 2-րդ մասի գործողության պարագայում: Այս մեկնաբանման օգտին է վկայում նաև այն փաստը, որ Սահմանադրության փոփոխությունների սկզբնական նախագծերում առկա այն դրույթը, ըստ որի խմբակցությունից կամ խմբակցության կազմի մեջ մտնող կուսակցությունից ինքնակամ դուրս գալու դեպքում պատգամավորը կորցնում է իր մանդատը, տեղ չգտավ բարեփոխված Սահմանադրության մեջ:

Ներմուծելով պատգամավորի լիազորությունների դադարեցման ինստիտուտը, Սահմանադրությունն այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը վերապահել է Սահմանադրական դատարանին (հոդված 168, կետ 6): Պատգամավորի լիազորությունների դադարեցման հարցով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտները երկուսն են՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը (հոդված 169, մաս 1, կետ 2) և Ազգային ժողովի խորհուրդը (հոդված 169, մաս 5): Եթե պատգամավորների մեկ հինգերորդի պարագայում Սահմանադրական դատարան դիմելը պատգամավորների իրավունքն է, ապա Ազգային ժողովի խորհուրդը պարտավոր է դիմել Սահմանադրական դատարան, եթե հայտնաբերում է Սահմանադրության 98-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստ:

Պատգամավորի լիազորությունների դադարման հիմքերը նախատեսված են Սահմանադրության 98-րդ հոդվածի 1-ին մասում: Դրանք հիմնականում համապատասխանում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 67-րդ հոդվածով սահմանված հիմքերին:

Անցում կատարելով խորհրդարանական համակարգին՝ Սահմանադրությունը պահպանել է պատգամավորական մանդատի անհամատեղելիությունը ցանկացած այլ պետական, այդ թվում՝ կառավարության անդամի պաշտոնի հետ: Նման մոտեցումն արդարացված է, քանի որ այն ավելի համահունչ է իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքին և թույլ է տալիս ավելի արդյունավետ իրականացնել կառավարության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը:

Պատգամավորի անկախության ապահովման և նրա ազատ մանդատի անխափան իրականացման համար փոփոխված Սահմանադրության 96-րդ և 97-րդ հոդվածները նախատեսում են պատգամավորի անձնական ոլորտի անմիջական պաշտպանությանն ուղղված երաշխիքներ: Դրանք հիմնականում

<sup>99</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2009.07.08/34(700), հոդ. 792:



համընկնում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության համապատասխանաբար 66-րդ և 65-րդ հոդվածների կարգավորումներին:

Պատգամավորի անձեռնմխելիությունը միջազգային պրակտիկայում ունի երկու բաղադրիչ՝ ինդեմնիտետ և իմունիտետ: Պատգամավորի ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի կարծիքի ազատ արտահայտումը պատգամավորական գործունեության շրջանակներում՝ իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո: Պատգամավորական իմունիտետն ապահովում է պատգամավորի իրավական պաշտպանությունը քրեական հետապնդումից՝ ցանկացած արարքի համար, եթե առկա չէ պառլամենտի համաձայնությունը<sup>100</sup>:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների ժամկետում և դրանից հետո չէր կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել «պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում»: Ի տարբերություն 66-րդ հոդվածի 2-րդ մասի, փոփոխված Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասը պատգամավորի անձեռնմխելիության սահմանները ուրվագծելիս չի օգտագործում «պատգամավորի կարգավիճակից բխող գործողություններ» եզրույթը: Փոխարենը հետապնդման և պատասխանատվության ենթարկվելուց պաշտպանությունը նախատեսվում է «պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար»: Նման կարգավորումն ավելի հստակ է արտահայտում պատգամավորի անձեռնմխելիության սահմանները, քան նախորդ անորոշ ձևակերպումը: Մինևույն ժամանակ, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածը ավելի է ընդլայնում պատգամավորի անձեռնմխելիության սահմանները՝ չնախատեսելով անձեռնմխելիության իրավունքից ուղղակի բացառություն վիրավորանքի կամ զրպարտության համար: Սակայն կարծիք արտահայտելու համար պատգամավորի անձեռնմխելիությունը պետք է համաչափ լինի պառլամենտի ժողովրդավարական գործառույթների պաշտպանության անհրաժեշտությանը և չպետք է տարածվի պատգամավորի մասնավոր վարքագծի ու արտահայտությունների վրա, որոնք ուղղակիորեն կապված չեն պառլամենտական մանդատի իրականացման հետ: Այս առումով Վենետիկի հանձնաժողովը, վկայակոչելով ՄԻԵԴ դիրքորոշումը<sup>101</sup>, ընդգծում է, որ վիրավորական արտահայտությունների համար պառլամենտը պետք է առնվազն ներքին կառուցակարգեր և կարգապահական պատասխանատվություն նախատեսի, ինչը բխում է հանրային և մասնավոր շահերի պաշտպանության անհրաժեշտությունից<sup>102</sup>:

<sup>100</sup> Տե՛ս Venice Commission, Report on the Scope and Lifting of Parliamentary Immunities, CDL-AD(2014)011, կետ 9-11:

<sup>101</sup> Տե՛ս մասնավորապես ECtHR Cordova v. Italy 40877/98, 30-ը հունվարի 2003թ.:

<sup>102</sup> Տե՛ս Venice Commission, CDL-AD(2014)011, կետ 90-93:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 65-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում էր, որ պատգամավորի կարգավիճակը և գործունեության այլ երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը պատգամավորի կարգավիճակին վերաբերող հարցերը կարգավորում է անմիջականորեն սահմանադրական մակարդակում: Միևնույն ժամանակ, Սահմանադրությունն անդրադառնում է պատգամավորի գործունեության նյութական և սոցիալական երաշխիքներին՝ նախատեսելով, որ պատգամավորի վարձատրության և գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով (հոդված 97):

### **6.3.3. Օրենսդրական գործընթացի բարեփոխումները**

1995 թ. Սահմանադրությունը, հետևելով Ֆրանսիայի Սահմանադրության օրինակին, լուրջ սահմանափակումներ էր նախատեսել խորհրդարանի համար իր առանցքային գործառույթը՝ օրենսդրական իշխանությունը իրականացնելիս: Այդ սահմանափակումները հիմնականում պահպանվեցին նաև 2005 թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ: Միակ կարևոր փոփոխությունը 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության 78-րդ հոդվածից հրաժարվելն էր, որը Կառավարությանն իրավունք էր վերապահում Ազգային ժողովի լիազորմամբ ընդունելու օրենքի ուժ ունեցող որոշումներ՝ Կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով: Այդ նորմը երբևէ չգործադրվեց և 2005 թ. ամբողջությամբ հանվեց Սահմանադրության տեքստից: 2015 թ. սահմանադրական բարեփոխումները զգալիորեն մեծացրին Ազգային ժողովի դերակատարումը օրենսդրական վարույթում՝ միաժամանակ պահպանելով Կառավարության զգալի ազդեցության հնարավորությունը օրենսդրական գործընթացի վրա:

Ըստ 1995 թ. Սահմանադրության 75-րդ հոդվածի՝ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում էր պատգամավորներին և Կառավարությանը: Փոփոխված Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասը օրենսդրական նախաձեռնության նոր սուբյեկտ է սահմանում խմբակցություններին: Նման կարգավորումը հետևողականորեն բխում է Սահմանադրության 105-րդ հոդվածի 1-ին մասից, որը խմբակցություններին է վերապահում Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորման առաքելությունը: Համամասնական ընտրական համակարգին և խորհրդարանական կառավարման համակարգին անցումը էականորեն մեծացնում են խմբակցությունների դերը, որոնք, ըստ Սահմանադրության 105-րդ հոդվածի 2-րդ մասի, միավորում են միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորներին: Միևնույն ժամանակ, Սահմանադրությունը պահպանում է նաև առանձին պատգամավորի կողմից օրինագծեր ներկայացնելու իրավունքը, ինչը, ինչպես կարելի է ենթադրել, առավելապես կօգտագործվի այն պատ-

գամավորների կողմից, որոնք այս կամ այն պատճառով չեն գտնվում որևէ խմբակցության կազմում:

Ինչպես ցույց է տալիս պառլամենտարիզմի փորձը, օրենսդրական նախաձեռնությունների հիմնական մասը ներկայացվում է Կառավարության կողմից: Կառավարության օրենսդրական նախաձեռնությունների պարագայում Սահմանադրության 1995 թ. և 2005 թ. խմբագրությունները Կառավարությանը իրավունք էին տալիս սահմանելու իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և պահանջելու, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Կառավարության օրինագծերի դեպքում, ընդօրինակելով Ֆրանսիայի Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ մասը, որը դիտվում էր որպես «գոլիստական հանրապետության պառլամենտարիզմի խորհրդանիշ»<sup>103</sup>, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը կառավարության համար նման լիազորություն չէր սահմանում պատգամավորների կողմից ներկայացված օրինագծերի պարագայում: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կարևորագույն քայլ է կատարում օրենսդրական վարույթում Ազգային ժողովի դերակատարումը բարձրացնելու ուղղությամբ, 109-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանելով, որ Կառավարությունը իր համար ընդունելի ուղղումներով օրինագիծը քվեարկության դնելու պահանջի իրավունք ունի միայն այն օրինագծերի դեպքում, որտեղ օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է իրեն: Խոսքը Սահմանադրությամբ սպառնիչ կերպով սահմանված հետևյալ օրինագծերի մասին է՝ պետական բյուջե (հոդված 110), համաներում (հոդված 117), վարչատարածքային բաժանում (հոդված 121), նախարարությունների ցանկ և Կառավարության գործունեության կարգ (հոդված 147), միջհամայնքային միավորումների ստեղծում (հոդված 189, մաս 1): Նման կարգավորումը թույլ է տալիս խորհրդարանին առանց կառավարության անհարկի միջամտության իրականացնել իր բուն գործառույթը: Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովները իրավունք են ստանում ամբողջությամբ տնօրինելու ներկայացված օրինագծերը՝ դրանք ենթարկելով հանձնաժողովի մեծամասնության կողմից ընդունված ցանկացած փոփոխության: Պառլամենտարիզմի տառին և ոգուն համապատասխան՝ Ազգային ժողովը որոշում է իրեն ներկայացված օրինագծերի ճակատագիրը, դրանց մեջ կատարելով այն փոփոխությունները, որոնք ինքն է հարկ համարում:

Սահմանադրության 109-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է տալիս օրենսդրական նախաձեռնության հեղինակին ցանկացած ժամանակ հետ կանչելու իր ներկայացրած օրենքի նախագիծը: Դրանով, պատկերավոր ասած, պահպանվում է օրենսդրական նախաձեռնության սուբյեկտի «հեղինակային իրավունքը», ինչը, սակայն, չի բացառում, որ օրենսդրական նախաձեռնության մեկ այլ սուբյեկտ ներկայացնի նմանատիպ օրինագիծ կամ օրինագծի համար

<sup>103</sup> Վկայակոչումը ըստ A. Kimmel, Die Nationalversammlung in der V. französischen Republik, Köln 1983, էջ 15:

պատասխանատու գլխադասային հանձնաժողովի կողմից փոփոխված օրինագիծը դիտվի որպես նոր օրենսդրական նախաձեռնություն, եթե այն ներկայացվի թեկուզ մեկ պատգամավորի կողմից:

Փոփոխված Սահմանադրության 109-րդ հոդվածի 3-րդ մասը պահպանում է ֆինանսական հետևանքներ առաջացնող օրինագծերի պարագայում կառավարության լիազորությունը՝ պահանջելու այդ օրինագծերի ընդունման համար ավելի մեծ քվորում, այն է՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը (սովորական օրենքները, Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին): Մինչև ժամանակ, 109-րդ հոդվածի 3-րդ մասը նման պահանջի իրավունքը տարածում է միայն այնպիսի օրինագծերի վրա, որոնք «էականորեն» են նվազեցնում պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնում պետության ծախսերը: Առանձին դեպքերում, բնականաբար, կարող է վեճ ծագել, թե ինչը դիտել որպես եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի էական ավելացում: Նման դեպքերում վեճը կարող է լուծվել Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի վարույթում:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 109-րդ հոդվածի 4-րդ մասը պահպանում է կառավարության լիազորությունը՝ ներկայացնելու անհետաձգելի համարվող օրենքի նախագծեր (1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության 75 հոդված, մաս 3, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 74.1. հոդված, 2-րդ մաս, ա ենթակետ), սակայն սահմանում է նման օրինագծերի ընդունման կամ մերժման ավելի կարճ՝ երկամսյա ժամկետ: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը թեև սահմանում էր որոշում ընդունելու ավելի երկար՝ եռամսյա ժամկետ, սակայն այդ ժամկետը չպահպանելու դեպքում նախատեսում էր Ազգային ժողովի արձակման հնարավորություն:

#### **6.3.4. Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների զարգացումը**

Որպես ժողովրդի կողմից անմիջականորեն ընտրված միակ մարմին՝ Ազգային ժողովի իրավասության մեջ է մտնում գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելը: Այժմ այդ գործառույթն ուղղակիորեն ամրագրված է փոփոխված Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասում: Խորհրդարանի վերահսկողական լիազորությունների շարքում կարևորագույնը կառավարության նկատմամբ վերահսկողության միջոցներն են: Խորհրդարանական վերահսկողության նպատակը կառավարության գործունեության թափանցիկության և պատասխանատվության բարձրացումն է:

Խորհրդարանական վերահսկողության միջոցների մեջ կարևորագույն տեղ

է զբաղեցնում վարչապետին անվստահություն հայտնելու իրավունքը, որը խորհրդարանի ամենաազդեցիկ զենքն է կառավարության հետ հարաբերություններում<sup>104</sup>: Սակայն այդ հնարավորությունից խորհրդարանը, որպես կանոն, օգտվում է բավականին հազվադեպ և այն դեպքերում, երբ այլևս հնարավոր չէ շարունակել վստահության վրա հիմնված հարաբերությունները կառավարության հետ:

Ցանկացած վերահսկողության հիմքը համապատասխան տեղեկություններին տիրապետելն է, ուստի խորհրդարանական վերահսկողության համար առանցքային նշանակություն ունի կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկություններ ստանալը: Խորհրդարանը դա կարող է իրականացնել ինչպես իր ուժերով՝ հատկապես քննիչ հանձնաժողովների միջոցով<sup>105</sup>, այնպես էլ կառավարությունից համապատասխան տեղեկություններ պահանջելով: Վերջինս հիմնականում իրականացվում է կառավարությանը հարցեր և հարցապնդումներ ուղղելու եղանակով: Հարցերի և հարցապնդումների ինստիտուտը (ինտերպելյացիայի իրավունքը) բխում է պատգամավորի կարգավիճակից և ժողովրդավարության սկզբունքից: Այն պետք է հնարավորություն տա պատգամավորին ստանալու իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկությունները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը 1995 թ. խմբագրությամբ նախատեսում էր միայն պատգամավորների կողմից կառավարությանը հարցեր տալու իրավունքը (հոդված 80): 2005 թ. սահմանադրական փոփոխությունները կարևոր քայլ կատարեցին Ազգային ժողովի կողմից իր վերահսկողական գործառույթն ավելի արդյունավետ իրականացնելու առումով՝ ներմուծելով հարցապնդումների իրավունքը (հոդված 80): Հարցերի և հարցապնդումների միջև հիմնական տարբերությունն այն է, որ հարցապնդումների պարագայում Ազգային ժողովը, կախված կառավարության պատասխանից, կարող է քննարկումներ անցկացնել և ընդունել որոշումներ: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 113-րդ հոդվածի 1-ին մասը հարցապնդումներ ներկայացնելու իրավունքը վերապահում է միայն խմբակցություններին, քանի որ, համամասնական ընտրական համակարգին անցնելով պայմանավորված, այլևս չի նախատեսում պատգամավորական խմբերի առկայությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ նախադասությունը հստակեցնում է, որ հարցապնդման քննարկման արդյունքով Ազգային ժողովն իրավունք ունի դիմելու իր վերահսկողական գործառույթի զինանոցի ամենասուր զենքին՝ վարչապետին անվստահություն հայտնելուն: Այդուհանդերձ, սա նոր դրույթ չէ, քանի որ և՛ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 84-րդ հոդվածի 1-ին մասը, և՛ փոփոխված Սահմանադրության 115-րդ հոդվածը վարչապետին (կառավարությանը) անվստահություն հայտնելու Ազգային ժողովի իրավունքը չեն կապում որևէ բովանդակային նախադրյալի հետ: Այս առումով ավելի կարևոր է փոփոխված Սահմանադրության 113-րդ հոդ-

<sup>104</sup> Այս մասին տես նաև 6.4.4. մասում:

<sup>105</sup> Այս մասին տես նաև 6.3.5. մասում:

վածի 2-րդ մասի վերջին նախադասության այն դրույթը, ըստ որի՝ «հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը»: Սահմանադրությունն այստեղ ընտրել է միջին ճանապարհ. ի տարբերություն մի շարք եվրոպական խորհրդարանական երկրների, որոնք պառլամենտին իրավունք են տալիս պաշտոնանկ անել առանձին նախարարների, Հայաստանի Ազգային ժողովն իրավասու է միայն համապատասխան առաջարկով հանդես գալ, որպեսզի հարցականի տակ չդնի կառավարության կոլեգիալ պատասխանատվությունը: Նման առաջարկ ներկայացվելու դեպքում վարչապետը հայտնվում է քաղաքական բարդ ընտրության առջև, և եթե նա համաձայն չէ Ազգային ժողովի մեծամասնության դիրքորոշմանը, նա, ըստ էության, ստիպված կլինի կամ հրաժարական ներկայացնել, կամ դնել կառավարության վստահության հարցը (հոդված 157): Վերջինը, սակայն, հնարավոր է միայն կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը չընդունվելու դեպքում: Ազգային ժողովի առաջարկը անպատասխան թողնելը կարող է քաղաքական առումով խարխալել կառավարությանը ցուցաբերվող աջակցությունը խորհրդարանի մեծամասնության կողմից:

Փոփոխված Սահմանադրությունն առաջին անգամ ներմուծում է հրատապ թեմայով քննարկումների ինստիտուտը (հոդված 114), որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում կազմակերպելու հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ: Այս իրավունքը Սահմանադրությունը ձևակերպել է որպես փոքրամասնության իրավունք, քանի որ հրատապ թեմայով քննարկման պահանջ կարող է ներկայացվել պատգամավորների ընդհանուր թվի մեկ քառորդի կողմից:

Փոփոխված Սահմանադրությունը պահպանել է Կառավարության կողմից պետական բյուջեի կատարման մասին Ազգային ժողովին տարեկան հաշվետվություն ներկայացնելու պահանջը (հոդված 111, մաս 2): Սակայն 2005 թ. Սահմանադրությունը բյուջետային վերահսկողության այս գործառույթը սահմանափակում էր միայն բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը քննարկելով և արդյունքում հաստատելով (հոդված 77): Փոփոխված Սահմանադրությունն ուժեղացնում է Ազգային ժողովի վերահսկողական գործառույթը՝ նախատեսելով, որ բյուջեին կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Ազգային ժողովը ունի ոչ միայն հաստատելու, այլև ցանկացած այլ որոշում ընդունելու իրավունք:

Մեկ այլ կարևոր նորույթ է Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված այն դրույթը, ըստ որի յուրաքանչյուր տարվա համար Կառավարությունը պարտավոր է իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց ներկայացնել Ազգային ժողով: Սա Ազգային ժողովի կողմից կառավարության ծրագիրը հաստատելու լիազորության տրամաբանական շարունակությունն է, որը Ազգային ժողովին հնարավորություն է տալիս վերահսկելու Կառավարության ծրագրի կատարման արդյունքները և դրա վերաբերյալ արտահայտել իր

դիրքորոշումը: Այս համատեքստում կարևոր է նկատի ունենալ, որ ծրագիրը պարտադիր պետք է ներառի նաև Սահմանադրության 86-րդ հոդվածով նախատեսված տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործման ընթացքի մասին տեղեկատվություն (հոդված 87), ինչն ուղղված է այս ոլորտում պետության քաղաքականության իրականացման գործունե երաշխիքների ապահովմանը: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը խորհրդարանական վերահսկողության իրավունք է վերապահում նաև մշտական հանձնաժողովներին, ինչն ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասում: Վերահսկողության կոնկրետ ձևերը պետք է սահմանվեն Ազգային ժողովի կանոնակարգով:

### **6.3.5. Խորհրդարանական փոքրամասնության իրավունքների ընդլայնումը**

Քանի որ խորհրդարանական համակարգում հիմնական քաղաքական բաժանարար գիծը ոչ թե Կառավարության և խորհրդարանի, այլ քաղաքական մեծամասնության և խորհրդարանական փոքրամասնության միջև է, ապա Սահմանադրությունը խորհրդարանական փոքրամասնությանը վերապահել է իր դերին համարժեք իրավունքներ: Դրանք իրենց արտացոլումն են գտել օրենսդրական գործընթացում, պետական մարմինների ձևավորման հարցում, Ազգային ժողովի մարմիններում ներկայացվածության մեջ, արտահերթ նիստեր և նստաշրջաններ հրավիրելու իրավունքում, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողության կարևորագույն գործիք հանդիսացող քննիչ հանձնաժողովների ձևավորման և գործունեության հարցում:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասը ներմուծել է սահմանադրական օրենքների ինստիտուտը և սահմանել դրանց սպառնիչ ցանկը: Այդ օրենքները, ի տարբերություն սովորական օրենքների, պետք է ընդունվեն որակյալ մեծամասնությամբ՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Խոսքն այն օրենքների մասին է, որոնք անմիջականորեն ազդում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, ինչպես նաև պետական իշխանության կազմակերպման վրա, որտեղ ավելի մեծ կայունություն և համաձայնություն է պահանջվում, քան սովորական օրենքների դեպքում՝ Ազգային ժողովի կանոնակարգ, Ընտրական օրենսգիրք, Դատական օրենսգիրք, Սահմանադրական դատարանի մասին օրենք, Հանրաքվեի մասին օրենք, Կուսակցությունների մասին օրենք և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենք (հոդված 103, մաս 2):

Սահմանադրությունը կարևոր դերակատարում է ընձեռում խորհրդարանական փոքրամասնությանը Գլխավոր դատախազի (հոդված 177), Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (հոդված 195), Հաշվեքննիչ պալատի (գործող Վերահսկիչ պալատի) նախագահների և մյուս անդամների ընտրությունների

(հողված 199), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների (հողված 197) և Կենտրոնական բանկի նախագահի (հողված 201) ընտրության ժամանակ, ինչպես նաև դատական իշխանության մարմինների ձևավորման գործում՝ նախատեսելով համապատասխան պաշտոնատար անձանց ընտրություն պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ով: Նշենք, որ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում նման մեծամասնություն նախատեսված էր միայն Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության համար:

Սահմանադրությունը նախատեսում է նաև Ազգային ժողովի մարմիններում ընդդիմության ներկայացուցչություն, մասնավորապես՝ Ազգային ժողովի երեք փոխնախագահներից մեկի պաշտոնի վերապահում քաղաքական փոքրամասնությանը (հողված 104, մաս 1):

Խորհրդարանական փոքրամասնությունների մյուս իրավունքները կարող են ամրագրվել Ազգային ժողովի կանոնակարգում, որը նույնպես պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների երեք հինգերորդով:

Սահմանադրությունը պահպանում է Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի իրավունքը՝ դիմելու Սահմանադրական դատարան՝ օրենքների և այլ իրավական ակտերի սահմանադրականության հարցերով:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 70-րդ հոդվածը արտահերթ նիստ կամ նստաշրջան հրավիրելու իրավունքը վերապահում էր պատգամավորների ընդհանուր թվի մեկ երրորդին: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասը, ընդլայնելով խորհրդարանական փոքրամասնության հնարավորությունները, այս իրավունքը վերապահել է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդին:

Քաղաքական փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի քննիչ հանձնաժողովներ ստեղծելու և դրանք նախագահելու իրավունքը (հողված 108):

Պառլամենտական կառավարման համակարգում քննիչ հանձնաժողովները պառլամենտի վերահսկողական գործառույթների մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում՝ միաժամանակ հանդիսանալով պառլամենտական փոքրամասնության կարևորագույն իրավունք: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը քննիչ հանձնաժողովի՝ որպես գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության գործիքի մասին հատուկ դրույթներ չէր պարունակում: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 73-րդ հոդվածը միայն նախատեսում էր, որ անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովում կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ՝ որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար: Դրա համար պահանջվում էր Ազգային ժողովի մեծամասնության կողմից ընդունվող որոշում:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն առաջին անգամ ինքնուրույն տեսքով ներմուծել է քննիչ հանձնաժողովների ինստիտուտը՝ 108-րդ հոդվածում



մանրամասն ամրագրելով քննիչ հանձնաժողովների ստեղծման և գործունեության հիմնարար դրույթները:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասից հստակ երևում է, որ քննիչ հանձնաժողովը գործառությանին առումով նախատեսված է որպես Ազգային ժողովի փոքրամասնության գործիք՝ ընդդեմ պառլամենտական մեծամասնության և կառավարության: Այդ իսկ պատճառով էլ փոքրամասնության պաշտպանության պահանջները առանձնահատուկ հաշվի են առնված հանձնաժողով ստեղծելու, դրա կազմի, ապացույցներ պահանջելու հարցերում:

Այս տեսանկյունից կարևորագույն կարգավորում է նախ և առաջ այն, որ քննիչ հանձնաժողովը ստեղծվում է իրավունքի ուժով՝ պատգամավորների ընդհանուր թվի մեկ քառորդի պահանջով: Դա նշանակում է, որ, ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության կարգավորումների, այժմ քննիչ հանձնաժողովի ստեղծումը պայմանավորված չէ Ազգային ժողովի որոշմամբ: Պառլամենտական մեծամասնությունը ոչ միայն չի կարող արգելք հանդիսանալ հանձնաժողովի ստեղծմանը, այլև փոխել քննիչ հանձնաժողովի մանդատի շրջանակը: Քննիչ հանձնաժողովի ստեղծմանը հակակշռելու միակ մեխանիզմը Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հնարավորությունն է՝ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերով դիմելու Սահմանադրական դատարան:

Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասում հստակ ձևակերպված են քննիչ հանձնաժողովի սահմանադրաիրավական խնդիրն ու նպատակը, որոնք են՝ Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելը և դրանք Ազգային ժողով ներկայացնելը: Քննիչ հանձնաժողով ստեղծելիս խիստ կարևոր է, որ վերջինիս քննության առարկան բավարար հստակությամբ սահմանվի: Պառլամենտական քննիչ հանձնաժողովի մանդատի սահմանման համար 108-րդ հոդվածի 1-ին մասից ուղղակիորեն բխում են մի շարք նախապայմաններ, որոնք միևնույն ժամանակ Ազգային ժողովին ներկայացվող սահմանափակումներ են: Առաջին՝ քննիչ հանձնաժողովի իրավասության առարկա կարող է լինել միայն «փաստեր» պարզելը: Երկրորդ՝ այդ փաստերը պարզելը պետք է նշանակալի հանրային հետաքրքրություն ներկայացնի իրենից, հակառակ դեպքում քննիչ հանձնաժողովի իրավասության տիրույթը կարող է դառնալ անսահման: Իհարկե, քննիչ հանձնաժողովի քննության առարկան չպետք է սահմանափակել միայն պետական իշխանության ոլորտով, և չպետք է բացառել նաև մասնավոր ոլորտը, եթե առկա է կապ, օրինակ, պետական մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների, մասնավոր կազմակերպություններին տրված արտոնությունների կամ այլ հատուկ պարտականությունների հետ: Երրորդ, բացի հանրային հետաքրքրության չափանիշից, սահմանադրական նորմը պարունակում է մեկ այլ սահմանափակում ևս՝ քննության առարկան պետք է մտնի Ազգային ժողովի

իրավասության մեջ: Ազգային ժողովի իրավասության շրջանակները ուրվագծված են 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 88-րդ հոդվածում: Քննիչ հանձնաժողովների գործունեության հիմնական ոլորտը, այդուհանդերձ, գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունն է: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել, որ Ազգային ժողովի կողմից իր վերահսկողական լիազորություններն իրականացնելը չխախտի իշխանությունների բաժանման սկզբունքի պահանջները և չներթափանցի գործադիր իշխանության՝ սեփական պատասխանատվության կենտրոնական ոլորտ, կառավարության կամքի ձևավորման դաշտ՝ խոչընդոտելով կառավարությանը իր սահմանադրական գործառույթներն իրականացնելու հարցում<sup>106</sup>:

108-րդ հոդվածի 1-ին մասից բխող սահմանափակումներից բացի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից կարելի է արտածել նաև մեկ այլ նախապայման, որը զգալի նշանակություն ունի քննիչ հանձնաժողովների մանդատի որոշակիացման հարցում: Քննության առարկա կարող են լինել միմիայն այնպիսի փաստեր ու գործընթացներ, որոնք միանշանակ ավարտված են, այսինքն՝ դրանցով դատարանում կամ այլ պետական մարմնում քննության ընթացքի մեջ գտնվող գործ չկա<sup>107</sup>:

Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը: Քննիչ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ (հոդված 108, մաս 2): Սահմանադրական նման կարգավորումը պայմանավորված է այն սկզբունքով, որ հանձնաժողովները, որպես կանոն, պետք է արտացոլեն պառլամենտում կուսակցական ներկայացվածության հայելային պատկերը: Սակայն փոքրամասնության շահերի պաշտպանության համար սահմանադրական նորմը հանձնաժողովի կազմում ևս նախատեսում է երաշխիք. հանձնաժողովը պետք է նախագահի պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը:

Քննիչ հանձնաժողովին վերաբերող սահմանադրական կարգավորումները անդրադառնում են նաև հանձնաժողովի գործունեության արդյունավետության և գործիքակազմի երաշխիքներին: 108-րդ հոդվածի 3-րդ մասը հենց սահմանադրական մակարդակով սահմանում է հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց պարտականությունը: Ապացույցներ պահանջելու գործընթացը պետք է կատարվի քննիչ

<sup>106</sup> Տե՛ս Սաքունիայի սահմանադրական դատարանի դատավոր, Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Քրիստոֆ Դեգենհարթի՝ 2016 թ. օգոստոսի կարծիքը՝ «Պառլամենտական քննիչ հանձնաժողովներն ըստ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի, Պառլամենտական քննիչ հանձնաժողովների մասին օրենքի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության» (հրապարակված է):

<sup>107</sup> Տե՛ս Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Օտտո Լուիսթերհանդթի 2016 թ. օգոստոսի կարծիքը՝ Հայաստանի Հանրապետությունում պառլամենտական քննիչ հանձնաժողովի իրավական ինստիտուտի ներմուծման հայեցակարգի վերաբերյալ (հրապարակված է):

հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով: Այս կարգավորումը ոչ միայն հաշվի է առնում փոքրամասնության շահերը, այլև կանխում է անհարկի ապացույցներ պահանջելու չարաշահումները:

### **6.3.6. Ազգային ժողովի դերակատարումը պետական մարմինների ձևավորման հարցում**

Հայաստանի փոփոխված Սահմանադրությունը թեև 88-րդ հոդվածում Ազգային ժողովի գործառույթների մեջ ուղղակիորեն չի հիշատակում պետական մարմինների ձևավորումը խորհրդարանի կողմից, սակայն հետևողականորեն իրացնում է լեգիտիմացիա ստեղծող այդ գործառույթը Սահմանադրության այն դրույթներում, որոնք վերաբերում են այլ պետական մարմինների ձևավորմանը:

Ժողովուրդը, որպես պետական իշխանության միակ աղբյուր և կրող, իր քաղաքական կամքը, առաջին հերթին, արտահայտում է Ազգային ժողովի ընտրության միջոցով, ինչի շնորհիվ խորհրդարանը ձեռք է բերում անմիջական ժողովրդավարական լեգիտիմացիա և այդ առումով՝ գերակայություն մնացած բոլոր պետական մարմինների նկատմամբ: Դա, իհարկե, չի նշանակում, որ մյուս պետական մարմինները չունեն ժողովրդավարական լեգիտիմացիա, այլ միայն այն, որ այդ մարմիններին լեգիտիմացիա հաղորդելու համար անհրաժեշտ է Ազգային ժողովի մասնակցությունը: Ազգային ժողովը ժողովրդի կողմից իրեն տրված լեգիտիմացիան փոխանցում է պետական մարմիններին և պաշտոնատար անձանց, ինչի արդյունքում առաջանում է լեգիտիմացիայի մի շղթա, որը Ազգային ժողովից տարածվում է մինչև հանրային ցանկացած ծառայողի:

Ազգային ժողովը վճռորոշ դեր ունի կառավարության ղեկավարի ընտրության հարցում: Եթե Ազգային ժողովի ընտրության արդյունքում ուղղակիորեն չի ձևավորվում խորհրդարանական մեծամասնություն, ապա մնացած բոլոր դեպքերում վարչապետի ընտրության մենաշնորհը պատկանում է խորհրդարանին (հոդվածներ 149 և 115): Ազգային ժողովն ընտրում է նաև Հանրապետության նախագահին (հոդված 125):

Ազգային ժողովը կարևորագույն դերակատարում ունի նաև դատական իշխանության ձևավորման հարցում: Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի բոլոր դատավորներն ընտրվում են խորհրդարանի կողմից: Խորհրդարանի լիազորությունների մեջ է մտնում Վճռաբեկ դատարանի բոլոր դատավորներին ընտրելու և նշանակելու համար Հանրապետության նախագահին թեկնածություններ առաջարկելու իրավունքը (հոդված 16, մաս 3), ինչը գործնականում նշանակում է այդ դատավորների ընտրություն խորհրդարանի կողմից, քանի որ Հանրապետության նախագահի նշանակման իրավունքը հիմնականում արարողակարգային է և խիստ սահմանափակ<sup>108</sup>: Վճռաբեկ դատարանի նախագահն ուղղակիորեն ընտրվում է

<sup>108</sup> Այս մասին տես նաև 7.1 մասում:

Ազգային ժողովի կողմից (հոդված 166, մաս 5): Ազգային ժողովն ուղղակիորեն չի մասնակցում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նշանակմանը, սակայն դեմոկրատական լեգիտիմացիայի շղթան այստեղ չի խզվում, քանի որ այդ դատավորներին առաջարկելու իրավունք ունեցող մարմինը՝ Բարձրագույն դատական խորհուրդը, կիսով չափ ձևավորվում է Ազգային ժողովի կողմից (հոդված 174, մաս 3)<sup>109</sup>:

Սահմանադրության 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խորհրդարանի բացառիկ իրավասության մեջ է մտնում Գլխավոր դատախազի ընտրությունը, որի թեկնածությունն առաջարկվում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի կողմից<sup>110</sup>:

Ազգային ժողովն ընտրում է Սահմանադրության 10-14-րդ գլուխներում հիշատակված բոլոր մարմինների անդամներին<sup>111</sup>.

- Մարդու իրավունքների պաշտպան (հոդված 192),
- Կենտրոնական ընտրական հանձնաժողով (հոդված 195),
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (հոդված 197),
- Հաշվեքննիչ պալատ (հոդված 199),
- Կենտրոնական բանկի նախագահ և խորհուրդ (հոդված 201):

Բացի այս մարմիններից, որոնք ունեն առանձնահատուկ կարգավիճակ, Սահմանադրության 122-րդ հոդվածը նախատեսում է նաև օրենքի միջոցով ինքնավար մարմիններ ստեղծելու հնարավորություն՝ հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով: Այդ մարմինների ընտրության իրավասությունը նույնպես պատկանում է խորհրդարանին:

### **6.3.7. Կայուն մեծամասնության հիմնախնդիրը**

Կառավարման այն համակարգերը, ինչպիսիք են կիսանախագահական և խորհրդարանական ձևերը, որտեղ կառավարության ճակատագիրը կախված է խորհրդարանից, կարող են արդյունավետ գործել, եթե կառավարությունը հենվում է համեմատաբար կայուն քաղաքական ուժերի աջակցության վրա: Այսպես, օրինակ, կիսանախագահական կառավարման համակարգում Հանրապետության նախագահը, մեծամասնություն չունենալով խորհրդարանում, չի կարող արդյունավետ կառավարում իրականացնել: Եթե խորհրդարանում կայուն մեծամասնություն չկա, կառավարությունները հաճախ կարող են փոխվել: Արդյունքում, ըստ էության, ի չիք կդառնան թե՛ Հանրապետության նախագահի նախընտրական հանձնառությունները, քանի որ նա իր ծրագիրը իրականաց-

<sup>109</sup> Այս մասին տե՛ս նաև 7.2 մասում:

<sup>110</sup> Այս մասին տե՛ս նաև 8-րդ մասում:

<sup>111</sup> Այս մասին տե՛ս նաև 10-14-րդ մասերում:

նելու համար չունի մեխանիզմներ, թե՛ խորհրդարանական կուսակցությունների նախընտրական խոստումները, որովհետև նրանք էլ ի վիճակի չեն միասնական կամք դրսևորել կառավարության ձևավորման և կառավարության ծրագրի իրականացման հարցում:

Նույն խնդիրը կա նաև խորհրդարանական համակարգում: Քանի որ այստեղ կառավարությունը չի կիսում գործադիր իշխանությունը Հանրապետության նախագահի հետ, ապա կառավարության կայունության խնդիրն էլ ավելի հրատապ է դառնում: Մեկ այլ կարևոր գործոն է այն, որ Հայաստանում կուսակցական համակարգը երբեք ինքնուրույն իր վրա չի կրել քաղաքական կառավարման բեռը, քանի որ միշտ Հանրապետության նախագահն է գերակա դիրք ունեցել քաղաքական համակարգում: Կուսակցությունների հետին պլանում գտնվելը Հանրապետության նախագահի գերակա դիրքի հետևանքն է: Եթե ընտրություններում ոչ մի կուսակցություն չի ստանում բացարձակ մեծամասնություն, ապա կուլիցիոն կառավարություն ձևավորելու համար անհրաժեշտ է լինում կազմել հետընտրական դաշինքներ, բայց այդ դաշինքները կազմվում են, ըստ էության, ընտրողների «թիկունքում», այլ ոչ թե ընտրողի կամքով: Սա նորմալ գործելակերպ է բազմաթիվ խորհրդարանական երկրներում, բայց, հաշվի առնելով Հայաստանի կուսակցական համակարգի առանձնահատկությունները, որտեղ կուսակցություններն առավելապես անձնակենտրոն են, և խորհրդարանական խմբակցություններում թույլ է կուսակցական կարգապահությունը, կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրն էլ ավելի հրատապ է դառնում:

Կայուն մեծամասնության ձևավորումն առաջին հերթին կախված է ընտրական համակարգից: Այն շատ ավելի հեշտ է ապահովել մեծամասնական ընտրական համակարգի դեպքում, բայց մեծամասնական համակարգը, հիմնականում լուծելով այդ խնդիրը, դա իրականացնում է պարտվող կուսակցությունների հաշվին: Մինչև 2016 թվականի մայիսի 25-ի Ընտրական օրենսգրքի<sup>112</sup> ընդունումը Հայաստանում գործող մեծամասնական ընտրակարգը հարաբերական մեծամասնություն ունեցող թեկնածուին տալիս էր պատգամավորական մանդատ, մինչդեռ մնացած թեկնածուներին տրված ձայները պարզապես կորչում էին, թեև դրանք գումարային առումով կարող էին ավելի մեծ լինել, քան մանդատ ստացած պատգամավորի ձայները: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ առաջարկված համամասնական ընտրակարգը խուսափում է այդ թերությունից՝ միաժամանակ երաշխավորելով կայուն մեծամասնության ձևավորումը:

Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված Ազգային ժողովի ընտրակարգը լայն առումով հետապնդում է երկու նպատակ՝ ձևավորել ժողովրդի ներկայացուցչական մարմինն առանց զգալի անհամամասնությունների (ինչը մեծամասնական համակարգի ակնառու թերությունը և համամասնական համակարգի ակնառու առավելությունն է) և, միաժամանակ, ապահովել կառավարման ունակ խորհրդարանական մեծամասնություն (ինչը մեծամաս-

<sup>112</sup> Տես ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), հոդ. 456:

նական համակարգի առավելությունն է և համամասնական համակարգի թերությունը): Եթե ընտրողը կարողանում է որոշել, թե որ քաղաքական ուժերը պետք է ձևավորեն Կառավարությունը, ապա դրանով նա հնարավորություն է ստանում ուղղակիորեն ազդելու երկրի քաղաքական ուղեգծի ձևավորման վրա: Եթե ընտրողը նման հնարավորություն չունի, այսինքն՝ նա պարզապես ընտրում է իր ներկայացուցիչներին խորհրդարանում ըստ կուսակցություններին տրված ձայների համամասնության, ապա Կառավարության կազմավորման իրավունքը պատկանում է բացառապես պատգամավորներին, որոնք ազատ են կառավարական կոալիցիաների ընտրության և փոփոխության հարցում: Կառավարական կոալիցիաներ կազմելու նման ազատությունը, ինչպես ցույց է տալիս բազմաթիվ խորհրդարանական երկրների փորձը, հաճախ հանգեցնում է կառավարության անկայունության: Կայուն խորհրդարանական մեծամասնություն ունենալու նպատակով Սահմանադրությունը նախատեսում է խորհրդարանի ընտրությունները երկու փուլով անցկացնելու հնարավորություն, եթե առաջին փուլի արդյունքներով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում: Նման համակարգի սկզբունքային առավելությունն այն է, որ ընտրողը հնարավորություն է ստանում, բացի խորհրդարանի ձևավորումից, ուղղակիորեն որոշելու, թե որ քաղաքական ուժն է ստանձնելու կառավարման ղեկը: Կառավարությունը փաստացի որոշվում է ընտրողի կողմից, այլ ոչ թե նրա թիկունքում՝ խորհրդարանում ներկայացված կուսակցությունների կողմից: Այսպիսով, նման ընտրակարգը փաստացի հնարավորություն է տալիս մեկտեղելու նաև խորհրդարանական և նախագահական համակարգերի առավելությունները:

Երկրորդ փուլի համար Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասությունը նախատեսում է նոր դաշինքների ձևավորման հնարավորությունը: Եթե նոր դաշինքներ ստեղծել չթույլատրվի, ապա չի բացառվում, որ հաղթանակ կտանի այն քաղաքական ուժը, որն առաջին փուլում ստացել է համեմատաբար քիչ ձայներ, և արդյունքում կառավարման ղեկը կստանձնի մի կուսակցություն կամ դաշինք, որը չի արտացոլում ընտրողների ամբողջական կամքը:

Երկրորդ փուլում դաշինքներ թույլատրելու տարբերակի սկզբունքային առավելությունն այն է, որ դրանով խթանվում են պատգամավորական մանդատներ ստացած կուսակցությունները կամ դաշինքները՝ միավորելու իրենց ուժերը, եթե նրանց ընդհանրություններն ավելի շատ են, քան տարբերությունները:

Ազգային ժողովի ընտրության երկփուլ համակարգը զգալիորեն հեշտացնում է խորհրդարանում Կառավարություն ձևավորելու գործընթացը, ինչպես նաև ավելի մեծ երաշխիքներ են ստեղծվում Կառավարության կայունության համար, քանի որ Կառավարությունը փաստացի ստանում է ուղղակի ժողովրդավարական լեգիտիմություն: Կառավարության փաստացի ուղղակի լեգիտիմությունը կարող է զգալիորեն մեղմել նաև կոալիցիոն կառավարություններին բնորոշ անհամերաշխությունը:

Սահմանադրությամբ սահմանված ընտրական համակարգը նպաստում է երկբևեռ կուսակցական համակարգի ձևավորմանը, քանի որ խթանում է, որ կուսակցությունները հաջողության հասնելու համար միավորվեն կամ դաշինքներ կազմեն միմյանց քաղաքական և գաղափարախոսական առումով մոտ ուժերի հետ: Դա վերաբերում է ինչպես ընտրության առաջին, այնպես էլ երկրորդ փուլին: Երկբևեռ կուսակցական համակարգը բնորոշվում է նրանով, որ քաղաքական դաշտում առկա են երկու հիմնական բևեռներ՝ կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքի տեսքով, որոնք մրցակցում են միմյանց հետ կառավարման ղեկը ստանձնելու համար: Եթե նման երկբևեռ կուսակցական համակարգ ձևավորվի, ապա հաջորդ ընտրության ժամանակ ընտրողը հնարավորություն կստանա գնահատելու այդ Կառավարության աշխատանքի արդյունքները, համապատասխան հետևություններ անելու և իր քվեն տալու կամ նույն մեծամասնությանը, կամ էլ ընդդիմադիր քաղաքական ուժին: Դրանով կապահովվի ժողովրդավարական կառավարման ամենաէական կանոններից մեկը. ժողովուրդն ինքը կրնտրի և կփոփոխի իր Կառավարությունը:

### **6.3.8. Ազգային ժողովի արձակումը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում Ազգային ժողովի արձակման ինստիտուտի կանոնակարգման հարցում հիմք է ընդունված պառլամենտական համակարգին բնորոշ այն սկզբունքը, ըստ որի Ազգային ժողովը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ գործունակ է, այսինքն՝ ի վիճակի է կատարել իր հիմնական գործառույթները՝ ներառյալ Կառավարություն ձևավորելը և նրան սատարելը: Ազգային ժողովի արձակմանը վերաբերող կանոնակարգումները Կառավարության կայունության ապահովման կարևոր երաշխիքներ են, քանի որ բացառում են երկարատև կառավարական ճգնաժամերի հնարավորությունը:

Փոփոխված Սահմանադրությունը նախատեսում է Ազգային ժողովի արձակման հնարավորություն միայն այն պարագայում, երբ խորհրդարանն ի վիճակի չէ ընտրել վարչապետ (հոդված 149, մաս 3) կամ էլ վարչապետին ընտրելուց հետո հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին (հոդված 151, մաս 4)<sup>113</sup>:

Իրավունքի ուժով պառլամենտի արձակումը նորույթ է ոչ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում, այլև ընդհանրապես միջազգային սահմանադրական պրակտիկայում, քանի որ պառլամենտի արձակումը պետության գլխին վերապահված լիազորություն է, որն այս հարցում, որպես կանոն, ունի լայն հայեցողություն: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրությամբ Ազգային ժողովի արձակման հիմքերը սահմանված են այնպիսի հստակությամբ, որը իմաստազուրկ է դարձնում այդ լիազորությունը որևէ մարմնի տրամադրելը, և Ազգային ժողովն արձակվում է ինքնաբերաբար՝ իրավունքի ուժով:

<sup>113</sup> Այս մասին տես նաև 6.4.3 մասում:

## 6.4. Կառավարությունը

### 6.4.1. Կառավարության տեղը գործադիր իշխանության համակարգում

Իշխանությունների դասական բաժանման համակարգում Կառավարությունն այն մարմինն է, որին առաջին հերթին վերապահված է գործադիր իշխանության իրականացումը: Գործառնությամբ իմաստով գործադիր իշխանության իրականացմանը մասնակցում են նաև Հանրապետության նախագահը, Սահմանադրությամբ նախատեսված այլ մարմիններ (օրինակ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ինքնավար մարմինները և այլն), սակայն դրանք կազմակերպչական առումով պետական կառավարման համակարգի մարմիններ չեն (2015 թ. Սահմանադրության հոդված 146, մաս 3 և հոդված 159) և ենթակա չեն Կառավարությանը: Կառավարության իրավական կարգավիճակը սահմանում է Սահմանադրության 146-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է:

Իշխանությունների բաժանման համակարգում (հոդված 4) գործադիր իշխանությունը ավանդաբար դիտվում է որպես «երկրորդ» իշխանություն օրենսդիր իշխանությունից հետո՝ նախորդելով դատական իշխանությանը: Ի տարբերություն այդ երկու իշխանությունների՝ գործադիր իշխանության ոլորտը բնութագրվում է ինչպես գործունեության ոլորտների բազմազանությամբ, այնպես էլ բազմապիսի իրավակազմակերպչական ձևերով: Այդ է պատճառը, որ մինչ այժմ սահմանադրական իրավունքի գիտության մեջ չի հաջողվել տալ «գործադիր իշխանություն» հասկացության միանշանակ և համընդգրկուն սահմանումը: Դրա փոխարեն հաճախ իրավագիտությունը դիմում է գործադիր իշխանության նեգատիվ սահմանմանը, ըստ որի՝ գործադիր իշխանությունն ընդգրկում է պետական այն ամբողջ իշխանությունը, որը ո՛չ օրենսդրական գործառնությ է և ո՛չ էլ՝ արդարադատություն:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը 146-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում առանձնացնում է գործադիր իշխանության երկու գործառնությ՝ քաղաքականության սահմանում և պետական կառավարում: Գործադիր իշխանության ներսում քաղաքականության սահմանումը գերակա է պետական կառավարման նկատմամբ, քանի որ պետական կառավարման գործառնություն իրականացնող կառավարչությունը (ադմինիստրացիան, պետական կառավարման մարմինների համակարգը) կոչված է կենսագործելու այն հիմնարար որոշումները, որոնք ընդունվում են ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում<sup>114</sup>:

Ըստ այդմ՝ Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասը պետության ներքին և արտաքին քաղաքականությունը մշակելու և իրականացնելու առաքելու-

<sup>114</sup> Այս մասին տես Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, ընդհանուր խմբագրությամբ՝ Վ. Պողոսյանի և Ռ. Ռուբելի, Երևան, 2011, էջ 22-24:



թյունը վերապահում է Կառավարությանը, մինչդեռ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանված կիսանախագահական կառավարման ձևին համահունչ՝ քաղաքականության մշակումը և իրագործումը որոշակի համամասնություններով ու դերակատարումներով բաշխված էր Կառավարության և Հանրապետության նախագահի միջև: Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասի նոր սահմանումը լիովին համահունչ է պառլամենտական համակարգի տրամաբանությանը, որտեղ Հանրապետության նախագահի լիազորությունները գործադիր իշխանության բնագավառում հիմնականում արարողակարգային են:

Պետության ներքին և արտաքին քաղաքականության սահմանումը պետության ղեկավարման կարևորագույն բաղկացուցիչ մասն է, որը ներառում է քաղաքական ղեկավար որոշումների նախապատրաստումը, որոշումը և իրագործումը: Սակայն հարկ է ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ Սահմանադրությունն այս խնդիրը չի վերապահել բացառապես Կառավարությանը: Կառավարության ծրագիրը, որի հիման վրա Կառավարությունը մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, Սահմանադրության 151-րդ հոդվածի համաձայն՝ պետք է արժանանա Ազգային ժողովի հավանությանը, որպեսզի Կառավարությունը ձեռնամուխ լինի իր լիազորությունների կատարմանը: Միևնույն ժամանակ, Սահմանադրությունը Կառավարության գործունեությունը մեծապես պայմանավորում է օրենքի վերապահումով, այսինքն՝ առանձին ոլորտներում Կառավարության գործունեությունը հնարավոր է միայն համապատասխան օրենսդրական կարգավորումների առկայության պարագայում:

Սահմանադրության 146-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը»: Այդ մարմինների ուղղակի ղեկավարումը, որպես կանոն, իրականացվում է նախարարների կողմից (հոդված 152, մաս 3), եթե դրանք ենթակա են նախարարություններին (հոդված 159):

Սահմանադրության 159-րդ հոդվածը սպառիչ սահմանում է պետական կառավարման մարմինների համակարգը՝ դրա մեջ ներառելով նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմինները: Ըստ նույն հոդվածի՝ այդ մարմինների կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով:

#### **6.4.2. Կառավարության կազմը և կառուցվածքը**

Կառավարությունը, ըստ Սահմանադրության 147-րդ հոդվածի 1-ին մասի, կոլեգիալ մարմին է և կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից: Սահմանադրության 152-րդ հոդվածի 2-րդ մասով փոխվարչապետները կարող են իրականացնել Կառավարության գործունեության առանձին

ուղորտների համակարգում՝ վարչապետի հանձնարարությամբ: Ուստի համակարգային մեկնաբանության առումով անթույլատրելի է, որ փոխվարչապետի պաշտոնը զբաղեցնի որևէ նախարար: 147-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության համաձայն՝ փոխվարչապետների թիվը չի կարող գերազանցել երեքը, իսկ նախարարներինը՝ տասնուհին: Հետևաբար, Կառավարությունը չի կարող բաղկացած լինել ավելի քան տասնինը անդամից:

Ի տարբերություն բազմաթիվ երկրների սահմանադրությունների, որոնցում Կառավարության կառուցվածքի հարցը վարչապետի կամ Կառավարության իրավասության խնդիր է, Հայաստանի Սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը պետք է սահմանվեն օրենքով: Նման կարգավորման շնորհիվ կտրուկ սահմանափակվում են վարչապետի քաղաքական հայեցողության սահմանները, հատկապես այն դեպքերում, երբ կոալիցիոն Կառավարություն ստեղծելու նպատակով անհրաժեշտ է բավարարել կոալիցիոն գործընկերների ձգտումը՝ ստանալու առավել շատ նախարարական պաշտոններ: Վարչապետի հայեցողության նման սահմանափակումը, այդուհանդերձ, ընդունելի է, քանի որ հակառակ պարագայում նախարարությունների թվի աճը կարող է պայմանավորված լինել ոչ թե առարկայական նկատառումներով, այլ բացառապես քաղաքական կոնյունկտուրայով:

### 6.4.3. Կառավարության կազմավորումը

Կառավարության կազմավորումը ժողովրդավարական լեգիտիմացիայի շրջայի կարևորագույն օղակն է<sup>115</sup>: Կառավարության կազմավորման սկզբնակետը վարչապետի նշանակումն է, որը ձևականորեն Հանրապետության նախագահի լիազորությունն է (հոդված 149, մաս 1 և մաս 5), սակայն կանխորոշվում է խորհրդարանի ընտրությամբ (հոդված 89, մաս 3) և խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությամբ (հոդված 149, մասեր 2-4): Սահմանադրությունը խորհրդարանի ընտրությունից հետո երաշխավորում է կայուն մեծամասնության ձևավորումը, որից հետո այդ մեծամասնության ներկայացրած թեկնածուն Հանրապետության նախագահի կողմից անհապաղ նշանակվում է վարչապետ (հոդված 149, մաս 1)<sup>116</sup>:

Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-4-րդ մասերը կանոնակարգում են վարչապետի ընտրության և նշանակման հարցերը այն դեպքերում, երբ վարչապետի պաշտոնը թափուր է մնացել: Խոսքն այստեղ Սահմանադրության 158-րդ հոդվածում սահմանված բոլոր դեպքերի մասին է, բացառությամբ նորընտիր Ազգային ժողովի առջև Կառավարության հրաժարականի:

Հանրապետության նախագահը պարտավոր է անհապաղ ընդունել Կառա-

<sup>115</sup> Այդ մասին տես նաև 6.3.6. մասում:

<sup>116</sup> Այդ մասին տես նաև 6.3.7. մասում:

վարության հրաժարականը 158-րդ հոդվածում սահմանված բոլոր դեպքերում (հոդված 130):

Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ (հոդված 149, մաս 2): Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի, եթե Ազգային ժողովը վարչապետ չի ընտրում, ապա քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները: Եթե այս անգամ էլ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

Խորհրդարանական կառավարման ձևի սկզբունքներին համահունչ՝ Սահմանադրության 149-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ վարչապետի ընտրությունն անցկացվում է անվանական քվեարկությամբ, որպեսզի պատգամավորներն իրենց ընտրողներից ստացած առաջադրանքը իրականացնեն հրապարակայնորեն, հանրության համար տեսանելի եղանակով<sup>117</sup>:

Հանրապետության նախագահի կողմից վարչապետի նշանակումից հետո, Սահմանադրության 150-րդ հոդվածի համաձայն, վարչապետը պարտավոր է ձեռնամուխ լինել Կառավարության կազմավորմանը: Նախարարների նշանակումը և ազատումը իրականացվում է Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ (հոդվածներ 131 և 150): Այդ առաջարկի համար Սահմանադրությունը նախատեսում է հնգօրյա ժամկետ:

Նախարարների նշանակման հարցում Հանրապետության նախագահը քաղաքական որևէ հայեցողություն չունի. նա պարտավոր է եռօրյա ժամկետում կամ նշանակել փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմել Սահմանադրական դատարան, եթե կարծում է, որ տվյալ նախարարի նշանակումը հակասում է Սահմանադրության պահանջներին: Նկատի ունենալով Հանրապետության նախագահի առավելապես արարողակարգային դերակատարումը այս հարցում՝ Կառավարության անդամների պաշտոնավարման ճակատագիրը փաստացի վարչապետի ձեռքում է, ով, սակայն, բնականաբար, պետք է հաշվի առնի ուժերի հարաբերակցությունն իր խմբակցության և կոալիցիայի ներսում: Ինչպես արդեն նշվել է, առանձին նախարարների պաշտոնավարման համար կարևոր նշանակություն ունի նաև Ազգային ժողովի դիրքորոշումը: Սահմանադրական դատարանը Հանրապետության նախագահի դիմումը քննում և որոշում է կայացնում հնգօրյա ժամկետում: Եթե Հանրապետության նախագահը չի նշա-

<sup>117</sup> Վարչապետի գաղտնի քվեարկություն նախատեսված է Գերմանիայում, ինչը մեծ քննադատությունների տեղիք է տվել: Տե՛ս, մասնավորապես, W. Steffani, *Parlamentarische und präsidentielle Demokratie. Strukturelle Aspekte westlicher Demokratien*, Opladen 1979, էջ 89:

նակում փոխվարչապետներին և նախարարներին, ինչպես նաև չի դիմում Սահմանադրական դատարան, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը վարչապետի և նախարարների համար նախատեսում էր միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիության առկայության պահանջ (հոդված 85, մաս 4): 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ընդլայնում է նախարարներին ներկայացվող պահանջները՝ Կառավարության անդամների վրա տարածելով այն նույն պահանջները, որոնք սահմանված են պատգամավորի համար 48-րդ հոդվածով (հոդված 148, մաս 1): Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ նրանց վրա տարածվում են նաև պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Բացի այդ, նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

#### **6.4.4. Կառավարության լիազորությունների դադարումը**

Կառավարության պաշտոնավարման բնականոն ժամկետը համընկնում է խորհրդարանի լիազորությունների ժամկետի հետ: Սահմանադրության 158-րդ հոդվածը սահմանում է, որ Կառավարությունը Հանրապետության նախագահին է ներկայացնում իր հրաժարականը Ազգային ժողովի առաջին նստաշրջանի օրը: Նման կարգավորումը կապված է այն բանի հետ, որ խորհրդարանական համակարգի տրամաբանությանը համապատասխան, յուրաքանչյուր նորընտիր Ազգային ժողով պետք է ունենա իր վստահությունը վայելող Կառավարություն:

Սահմանադրության նույն 158-րդ հոդվածում սահմանված է Կառավարության կողմից հրաժարական ներկայացնելու ևս 4 այլ դեպք.

- Կառավարությանը վստահություն չհայտնելը (հոդված 157),
- Կառավարության ծրագրին հավանություն չտալը (հոդված 151),
- վարչապետի կողմից հրաժարական ներկայացնելը և
- վարչապետի պաշտոնը թափուր մնալը:

Սահմանադրության 157-րդ և 151-րդ հոդվածներում նախատեսված դեպքերից բացի, երբ խորհրդարանը հավանություն չի տալիս Կառավարության ներկայացրած օրինագծին կամ Կառավարության ծրագրին, Սահմանադրության 115-րդ հոդվածը սահմանում է խորհրդարանի մեծամասնության կամքով Կառավարության պաշտոնավարման դադարեցման մեկ այլ կարևոր դեպք՝ վարչապետին անվստահություն հայտնելը այսպես կոչված կոնստրուկտիվ անվստահության քվեի միջոցով:

#### **ա) Կոնստրուկտիվ անվստահության քվե**

Խորհրդարանական կառավարման ձևը բնութագրվում է այն բանով, որ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև իր վարած քաղաքականության համար, այսինքն՝ կառավարության ստեղ-

ծումն ու գոյատևումը կախված են խորհրդարանի վստահությունից: Փոփոխված Սահմանադրությունը, սահմանելով անցումը խորհրդարանական կառավարման համակարգին, միաժամանակ հաշվի է առել այդ համակարգի որդեգրման դեպքում առաջացող հնարավոր մտահոգությունները, մասնավորապես՝ Կառավարության կայունության ապահովման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ Կառավարության կայունության հիմնախնդիրը հատկապես արդիական է համեմատաբար երիտասարդ ժողովրդավարությամբ այն երկրներում, որոնք դեռևս չունեն կայուն կուսակցական համակարգ: Զարգացած պետություններն ունեն երկարատև խորհրդարանական ավանդույթներ և կայացած կուսակցական համակարգ, ինչի շնորհիվ նույնիսկ Կառավարության հաճախակի փոփոխությունները, որպես կանոն, չեն առաջացնում այնպիսի վտանգավոր հետևանքներ, ինչպիսիք կարող են առաջանալ Հայաստանի համար: Այդ պատճառով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը որդեգրել է խորհրդարանական կառավարման համակարգում Կառավարության կայունությունն ապահովելու մի շարք կարգավորումներ՝ հաշվի առնելով ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման փորձը, կայունությանը նպաստող այն միջոցները, որոնք իրենց արդարացրել են միջազգային պրակտիկայում: Այդպիսի փորձված միջոցներից է կոնստրուկտիվ անվստահության քվեի ինստիտուտը:

Կառավարության կայունությունն առավելագույն չափով ապահովելու նպատակով Սահմանադրության 115-րդ հոդվածը նախատեսում է քաղաքական պատճառներով Կառավարության պաշտոնանկություն միայն կոնստրուկտիվ անվստահության քվեի միջոցով. գործող վարչապետին անվստահություն հայտնելը և նոր վարչապետի ընտրությունը տեղի են ունենում միաժամանակ՝ Ազգային ժողովի մեկ որոշմամբ: Սահմանադրության 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ երրորդը կարող է ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ, և այդ նույն որոշման մեջ պարտադիր պետք է նշվի, թե որ վարչապետի թեկնածուն պետք է փոխարինի գործող վարչապետին: Այդ որոշումն ընդունվում է անվանական քվեարկությամբ: Այս մեխանիզմի տրամաբանությունն այն է, որ միայն դեստրուկտիվ, այսինքն՝ ոչ կառուցողական մեծամասնությունը, որը չունի վարչապետի սեփական թեկնածու, հնարավորություն չունենա անվստահություն հայտնելու վարչապետին: Եթե խորհրդարանի անդամները միավորվել են միայն Կառավարության ղեկավարի դեմ, բայց չունեն մեկ այլ վարչապետի թեկնածու, ապա նրանք չեն կարող տապալել գործող Կառավարությունը: Կառավարության փոփոխությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կա պատգամավորների բացարձակ մեծամասնության վստահությունը վայելող վարչապետի թեկնածու:

## **բ) Կառավարության վստահության հարցը**

Սահմանադրության 157-րդ հոդվածը Կառավարությանը վերապահում է օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Ազգային ժողովում իր վստահության հարցը դնելու իրավունք: Եթե Կառավարությունը չի ստանում վստահության քվե, ապա խորհրդարանը կան կարճ ժամկետում ընտրում է նոր վարչապետ, կան այդ ժամկետը լրանալուց հետո իրավունքի ուժով արձակվում է: Նման կարգավորման միջոցով Կառավարությունը հնարավորություն է ունենում հստակ ստանալու այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք ինքը դեռ վայելում է խորհրդարանական մեծամասնության վստահությունը և կարո՞ղ է հենվել նրա վրա իր գործունեության ծրագիրն իրականացնելիս: Խորհրդարանը նման պարագայում կանգնում է երկընտրանքի առջև. կան խորհրդարանական մեծամասնությունը պարզորոշ արտահայտում է իր աջակցությունը գործող Կառավարությանը, կան, եթե վստահության քվեն մերժվում է, խորհրդարանը պետք է ընտրի նոր վարչապետ և ձևավորի նոր Կառավարություն: Եթե խորհրդարանն ի վիճակի չէ ո՛ր վստահություն հայտնել գործող Կառավարությանը և ո՛չ էլ ընտրել նոր վարչապետ, ապա առկա է խորհրդարանական ճգնաժամ, որի միակ հանգուցալուծումն իրավունքի ուժով Ազգային ժողովի արձակումն ու նոր ընտրությունների անցկացումն է:

### **6.4.5. Իրավասությունների բաշխումը Կառավարության մեջ**

Որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, Կառավարությունն իրականացնում է բազմաբնույթ խնդիրներ և լիազորություններ պետական կյանքի բոլոր բնագավառներում: Սահմանադրությունն անդրադառնում է Կառավարության լիազորությունների միայն մի մասին, մինչդեռ դրանց մեծ մասը սահմանվում է օրենքներով: Ի տարբերություն Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի, որոնց լիազորությունները սահմանվում են միայն Սահմանադրությամբ<sup>118</sup>, Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Բացի այդ, նույն մասի 2-րդ նախադասությունը Կառավարության իրավասությունն է սահմանում բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների:

Վարչապետը, փոխվարչապետները և նախարարները՝ որպես Կառավարության անդամներ, մասնակցում են Կառավարության՝ որպես կոլեգիալ մարմնի լիազորությունների իրականացմանը, սակայն նրանք ունեն նաև իրենց սեփական խնդիրներն ու լիազորությունները: Կառավարության ներսում աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է, որ միմյանցից սահ-

<sup>118</sup> Տե՛ս Սահմանադրության՝ համապատասխանաբար 88-րդ հոդվածի 4-րդ մասը և 123-րդ հոդվածի 4-րդ մասը:

մանազատվեն Կառավարության առանձին անդամների և Կառավարության՝ որպես կոլեգիալ մարմնի իրավասությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը կարգավորում են իրավասությունների բաշխումը վարչապետի և Կառավարության մյուս անդամների միջև՝ տարբերակելով վարչապետի և նախարարների իրավասությունները: Դրանցում արտահայտված են «վարչապետական»<sup>119</sup> և «նախարարական» (կամ «ոլորտային») սկզբունքները:

Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը («վարչապետական» սկզբունք): Ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ նախարարները ինքնուրույն ղեկավարում են նախարարությանը վերապահված գործունեության ոլորտները («նախարարական» սկզբունք): Բացի այդ, Սահմանադրության բազմաթիվ հոդվածներում, առաջին հերթին՝ 146-րդ և 153-րդ հոդվածներում, իր արտահայտությունն է գտնում «կաբինետի սկզբունքը»<sup>120</sup>:

### **ա) Վարչապետի լիազորությունները**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը վարչապետին վերապահում է ընդգծված ղեկավար դիրք Կառավարությունում: Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչապետ է նշանակվում խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված խորհրդարանական մեծամասնության թեկնածուն, ինչը վարչապետին տալիս է լեգիտիմացիայի բավականին բարձր աստիճան:

Ինչպես արդեն նշվեց, Կառավարության ծրագրի շրջանակներում վարչապետը՝

- որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները,
- ղեկավարում է Կառավարության գործունեությունը և
- համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը (հոդված 152, մաս 1, նախադասություն 1):

Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների որոշումը վարչապետի ամենակարևոր լիազորությունն է. դրանում իր ամենավառ արտահայտությունն է գտնում վարչապետի ուժեղ դիրքի կամ «վարչապետական սկզբունքը» (վարչապետի ուժեղ դիրքի սկզբունքը): Այն նաև Կառավարության կայունության գործունե երաշխիք է:

Եվրոպայի մաքուր պառլամենտական երկրներից միայն մի քանիսն են ամ-

<sup>119</sup> Գերմանիայում, որտեղ սահմանադրական դոկտրինը հատուկ առանձնացնում է այս սկզբունքը, այն անվանվում է Kanzlerprinzip («կանցլերական սկզբունք»):

<sup>120</sup> Այս մասին տես ստորև:

րագրել վարչապետի կողմից կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները որոշելու լիազորությունը: Բացի Գերմանիայից, այդպիսի լիազորություն ունեն միայն Ալբանիայի (հոդված 102) և Հունգարիայի (հոդված 18) վարչապետները: Եվրոպական մաքուր պառլամենտական մյուս երկրներում, որպես կանոն, կառավարության ընդհանուր քաղաքականությունը որոշելու լիազորությունը պատկանում է կառավարությանը՝ որպես կոլեգիալ մարմնի: Դրանցում վարչապետը սովորաբար ղեկավարում է կառավարության գործունեությունը, ապահովում կառավարության գործունեության միասնականությունը և համակարգում նախարարների աշխատանքը (Իտալիա, Իսպանիա, Հունաստան և այլն): Սակայն հարկ է նկատի ունենալ, որ հիմնական ուղղությունների որոշման լիազորության վերապահումը վարչապետին կամ կառավարությանը դեռևս չի կանխորոշում վարչապետի իրական «ուժը» և դերերի բաշխումը կառավարության ներսում: Սահմանադրաիրավական գործոնների մեջ շատ ավելի կարևոր են այնպիսի լիազորությունները, ինչպիսիք են նախարարների նշանակումը և ազատումը, պառլամենտի լուծարումը, կոնստրուկտիվ անվստահության քվեն, կառավարության լիազորությունները պառլամենտի նկատմամբ, ընտրական համակարգը: Կարևորագույն նշանակություն ունի վարչապետի դիրքը իր կուսակցության ներսում և կառավարության բնույթը (միակուսակցական, թե կոալիցիոն): Ուստի բոլորովին էլ պատահական չէ, որ ինչպես արևմտաեվրոպական, այնպես էլ արևելաեվրոպական բազմաթիվ երկրներում վարչապետի փաստացի դերը շատ ավելի ուժեղ է, քան դա ամրագրված է սահմանադրությամբ:

«Հիմնական ուղղություններ» հասկացությունը անորոշ սահմանադրաիրավական հասկացություն է, որի ծավալը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել: Ամեն դեպքում, այն ներառում է ընդհանուր և հիմնարար նշանակություն ունեցող քաղաքական որոշումների կայացման իրավասությունը: Սակայն, բացառության կարգով, այն կարող է ներառել նաև առանձին հարցեր, եթե դրանց որոշումը միաժամանակ սկզբունքային նշանակություն ունի: Հիմնական ուղղությունների հասցեատերերը բացառապես Կառավարության անդամներն են, և դրանք որևէ կերպ չեն կաշկանդում Ազգային ժողովին, որը հավանություն է տալիս Կառավարության ծրագրին (հոդված 151, մաս 2), և որի շրջանակներում է միայն, որ վարչապետը որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները:

Բացի սկզբունքային նշանակության հարցերից, որոնք անհրաժեշտաբար ներառված են հիմնական ուղղություններում, Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունն ուղղակիորեն սահմանում է վարչապետի՝ առանձին կոնկրետ հարցերով Կառավարության անդամներին հանձնարարականներ տալու իրավունքը: Վարչապետն այստեղ ունի լայն հայեցողություն, սակայն այս դրույթը նրան իրավունք չի տալիս ներթափանցելու որևէ նախարարության գործունեության ոլորտ և ուղղակիորեն որոշումներ կայացնելու իրավա-



սու նախարարի փոխարեն: Ինչպես հիմնական ուղղությունների պարագայում, այստեղ ևս կոնկրետ հանձնարարականների հասցեատերերը բացառապես նախարարներն են:

Վարչապետն ուժեղ ազդեցություն ունի Կառավարության քաղաքականության վրա նաև Կառավարության անդամների նշանակման և ազատման հարցերի միջոցով: Վարչապետն է առաջարկում փոխվարչապետների և նախարարների թեկնածությունները (հոդված 150) և որոշում Կառավարության առանձին անդամների հետագա պաշտոնավարման հարցը (հոդված 131, հոդված 113, մաս 2):

Որպես կոլեգիալ մարմնի ղեկավար՝ վարչապետը ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում Կառավարության անդամների աշխատանքը (հոդված 152, մաս 1): Նա հրավիրում և վարում է Կառավարության նիստերը, ստորագրում Կառավարության որոշումները (հոդված 153):

Սահմանադրությունը վարչապետին կարևոր լիազորություններ է վերապահում նաև քաղաքականության առանձին ոլորտներում: Պատերազմի ժամանակ վարչապետը զինված ուժերի գերագույն հրամանատարն է (հոդված 155, մաս 4): Նա գլխավորում է Անվտանգության խորհուրդը (հոդված 152, մաս 1, նախադասություն 3), որը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները (հոդված 155, մաս 2, նախադասություն 1): Վարչապետը կարող է անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման որոշում կայացնել պաշտպանության նախարարի առաջարկությամբ՝ այդ մասին տեղեկացնելով Կառավարության անդամներին (հոդված 155, մաս 1, նախադասություն 3): Նրա առաջարկությամբ է Հանրապետության նախագահը պաշտոնի նշանակում և ազատում պաշտպանության ոլորտի մի շարք բարձրագույն պաշտոնատար անձանց, ինչպես, օրինակ՝ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին (հոդված 155, մաս 3), զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը: Հանրապետության նախագահին բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելու առաջարկության իրավունքը նույնպես պատկանում է վարչապետին (հոդված 133): Իր առաջարկությունների միջոցով վարչապետը վճռորոշ ազդեցություն ունի նաև արտաքին քաղաքականության ոլորտում կադրային նշանակումների վրա: Նրա առաջարկությամբ է Հանրապետության նախագահը նշանակում և հետ կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին (հոդված 132, մաս 1, կետ 2) և շնորհում բարձրագույն դիվանագիտական աստիճաններ (հոդված 132, մաս 3):

### **բ) Կառավարության լիազորությունները**

«Կաբինետի սկզբունքը» ներառում է բոլոր այն դեպքերը, երբ որոշում կայացնելու իրավասությունը պատկանում է Կառավարությանը՝ որպես կոլեգիալ մարմնի: Կառավարության՝ Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների զգալի մասը իրականացվում է կոլեգիալ կարգով: Բացի այդ, ինչպես ար-

դեն նշվել է, Կառավարության լիազորությունները կարող են սահմանվել նաև օրենքներով (հոդված 146, մաս 4, նախադասություն 1): Հետևաբար, Սահմանադրությունը ամրագրել է Կառավարության միայն այն լիազորությունները, որոնք առանցքային են Կառավարության գործառույթների իրականացման համար:

Կառավարության՝ Սահմանադրությամբ սահմանված հիմնական լիազորությունները պայմանականորեն կարող են բաժանվել հետևյալ խմբերի.

- մասնակցություն օրենսդրական գործընթացին (հոդված 109, մասեր 1, 3-5, հոդված 110, հոդված 117, հոդված 121, հոդված 147, հոդված 157, 189), ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունում (հոդված 153, մաս 3),
- բյուջե (հոդված 110), տնտեսական և ֆինանսական քաղաքականություն (հոդված 154),
- արտաքին քաղաքականություն (հոդված 116, մաս 2, հոդված 132, մասեր 1 և 2),
- պաշտպանություն (հոդված 155, մաս 1, նախադասություն 1), պատերազմի հայտարարում (հոդված 118), ռազմական (հոդված 119) և արտակարգ դրություն (հոդված 120),
- մասնակցություն Սահմանադրական դատարանի կազմավորմանը (հոդված 166, մաս 1) և սահմանադրական դատարանին դիմելը (հոդված 169, մաս 1, կետ 5):

Որպես կոլեգիալ մարմին՝ Կառավարությունն ընդունում է որոշումներ: Որոշման կայացման ժամանակ նախարարներն իրավաբանորեն կաշկանդված չեն վարչապետի ցուցումներով և հանձնարարականներով: Կառավարության որոշման ընդունումից հետո կարևոր է դրա հարաբերակցությունը Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները որոշելու վարչապետի իրավասության հետ: Սահմանադրությամբ սահմանված կոնկրետ լիազորությունն իրականացնելիս Կառավարության ընդունած որոշումը հատուկ նորմ է վարչապետի՝ հիմնական ուղղությունները որոշելու ընդհանուր նորմի համեմատությամբ, ուստի Կառավարության որոշումը պետք է գերակա լինի: Հակառակ պարագայում, եթե գերակա լինի վարչապետի որոշումը, ապա կխախտվի նաև Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի Կառավարությունն է մշակում և իրականացնում պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Ի հարկե, քաղաքական առումով վարչապետը, կախված խորհրդարանում և Կառավարությունում ուժերի հարաբերակցությունից, կարող է ազդել Կառավարության կողմից որոշումներ ընդունելու գործընթացի վրա՝ հատկապես Կառավարության կազմում փոփոխություններ կատարելու լծակի միջոցով:

#### **գ) Նախարարների լիազորությունները**

Ինչպես արդեն նշվեց վերևում, «նախարարական» սկզբունքին համապատասխան, յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է իր նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը: Այս սկզբունքը ներառում է ինչպես տվյալ ոլորտի քաղաքական ուղղության սահմանումը և առանձին հարցերի լուծումը, այնպես էլ նախարարության կազմակերպումը և կադրային քաղաքականությունը: Յուրաքանչյուր նախարար իր այդ լիազորությունները պետք է իրականացնի վարչապետի կողմից որոշված՝ Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում: Բացի այդ, նախարարը կաշկանդված է առանձին հարցերով վարչապետի կողմից իրեն տրված հանձնարարականներով:

Սահմանադրությունը նախարարների լիազորությունների խնդրին գրեթե չի անդրադառնում: Սահմանադրությունը չի հիշատակում նաև որևէ նախարարի, բացառությամբ պաշտպանության նախարարի: Բոլոր նախարարներին է վերաբերում Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մասի այն դրույթը, ըստ որի՝ Կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Զինված ուժերին նվիրված 155-րդ հոդվածում Սահմանադրությունը սահմանում է պաշտպանության նախարարի մի քանի կարևոր լիազորություններ: Ըստ այդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասության՝ վարչապետն անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման մասին որոշում կարող է կայացնել պաշտպանության նախարարի առաջարկությամբ: Խաղաղ ժամանակ զինված ուժերի ղեկավարումը Սահմանադրությունը վերապահում է պաշտպանության նախարարին, որն այն պարտավոր է իրականացնել Անվտանգության խորհրդի կողմից սահմանված պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում (հոդված 155, մաս 2): Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասության համաձայն՝ ոչ պատերազմական ժամանակ Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը՝ գլխավոր շտաբի պետը, ենթակա է պաշտպանության նախարարին:

#### **դ) Փոխվարչապետների դերը**

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը սահմանում է Կառավարության ներսում փոխվարչապետների իրավասությունը: Ըստ Սահմանադրության 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության՝ փոխվարչապետները վարչապետի հանձնարարությամբ իրականացնում են Կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը, իսկ նրանցից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ:

Ինչպես «հիմնական ուղղությունների» որոշումը, «համակարգումը» ևս անորոշ իրավական հասկացություն է և կարող է տարբեր կերպ մեկնաբանվել և կոնկրետացվել Սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադա-

սությամբ նախատեսված օրենքում: Համակարգումը տվյալ պարագայում ընդհանուր առմամբ նշանակում է փոխվարչապետների կողմից ձեռնարկվող այնպիսի գործողություններ, որոնց նպատակը Կառավարության գործունեության առանձին ոլորտներում գործող նախարարությունների գործողությունների համաձայնեցումը և ներդաշնակեցումն է: Այդ մարմինների գործողությունները միմյանց հետ համաձայնեցնելու անհրաժեշտությունից ելնելով՝ փոխվարչապետները իրավասու են ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, անցկացնել հանդիպումներ իրավասու մարմինների հետ, հրավիրել խորհրդակցություններ և այլն: Քանի որ փոխվարչապետների և նախարարների միջև չկան ենթադասության հարաբերություններ, համակարգումը ինքնին չի ներառում փոխվարչապետի կողմից ակնկալվող վարքագծի պարտադրում, այլ կարող է միայն սահմանել, թե ինչ միջոցներով ու եղանակներով է հնարավոր պետական տարբեր մարմինների գործողությունների փոխադարձ համաձայնեցումը: Համակարգումն առաջին հերթին ենթադրում է որոշակի երկխոսություն, այլ ոչ թե ուղղակի ղեկավարում, ինչը կհակասեր Սահմանադրության 152-րդ հոդվածի 3-րդ մասին:

#### **6.4.6. Զինված ուժերի ղեկավարումը խորհրդարանական համակարգի պայմաններում**

Ըստ փոփոխված Սահմանադրության՝ զինված ուժերը գտնվում են Կառավարության ենթակայության ներքո, և Կառավարությունն է իրավասու որոշում կայացնել զինված ուժերի կիրառման վերաբերյալ (հոդված 155, մաս 1, նախադասություններ 1 և 2): Զինված ուժերի ղեկավարումն իրականացնում է պաշտպանության նախարարը՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակում, իսկ այդ հիմնական ուղղությունները մշակվում են Անվտանգության խորհրդի կողմից (հոդված 155, մաս 2), որը գլխավորում է վարչապետը (հոդված 152, մաս 1, նախադասություն 3): Մինչդեռ զինված ուժերի անմիջական, ամենօրյա կառավարումը մշտապես իրականացնում է զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, ով զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձն է: Նա նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ: Ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին (հոդված 155, մաս 3): Իրավիճակն այլ է պատերազմի ժամանակ, երբ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է (հոդված 155, մաս 4), իսկ գլխավոր շտաբի պետը ենթակա է նրան: Ընդ որում՝ անհետաձգելի անհրաժեշտության դեպքում պաշտպանության նախարարի առաջարկությամբ վարչապետը կարող է զինված ուժերի կիրառման մասին որոշում կայացնել՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Կառավարության անդամներին (հոդված 155, մաս 1, նախադասություն 3):

Երբեմն փաստարկ է բերվում, թե իբր խորհրդարանական կառավարման համակարգում զինված ուժերի օպերատիվ կառավարումը կարող է նվազ արդյունավետ լինել, քան այլ կառավարման համակարգերում: Իրականում կառավարման համակարգն ինքնին որևէ անմիջական կապ չունի զինված ուժերի օպերատիվ կառավարման արդյունավետության հետ, այն պայմանավորված է կոնկրետ կառավարման համակարգում ներդրված մեխանիզմներով:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ ինչպես նախագահական, այնպես էլ խորհրդարանական կառավարման համակարգեր ունեցող երկրները կարող են պատերազմի ժամանակ ձախողվել կամ հաջողել: Ամեն ինչ կախված է այն բանից, թե տվյալ կառավարման համակարգում ինչպիսի լուծումներ են գտնվել, որպեսզի զինված ուժերի ղեկավարումն ու օպերատիվ կառավարումը լինեն այնպիսին, որ հնարավորություն տան անհրաժեշտության դեպքում արագ ու արդյունավետ որոշումներ կայացնելու: Օրինակ՝ Իսրայելը, որն իր հիմնադրման պահից պատերազմական իրավիճակում է գտնվում, խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում կարողացել է հասնել ռազմական հաջողությունների:

Կառավարման խորհրդարանական համակարգում զինված ուժերի ենթակայությունը Կառավարությանն ավելի հեշտ է ապահովել, քան 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության պայմաններում: Եթե կիսանախագահական կառավարման համակարգում Հանրապետության նախագահը և Կառավարությունը պատկանեն տարբեր քաղաքական ճամբարների («համակեցություն»), ապա օպերատիվ պաշտպանության արդյունավետ կազմակերպումը կբարդանա: Մինչդեռ ըստ փոփոխված Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության՝ զինված ուժերը գտնվելու են Կառավարության ենթակայության ներքո, որը զինված ուժերի արդյունավետ ղեկավարման համար տիրապետում է անհրաժեշտ ֆինանսական և այլ ռեսուրսների:

#### **6.4.7. Վարչապետի ուժեղ դիրքին համարժեք պատասխանատվությունը**

Ինչպես նշվել է վերևում, ըստ փոփոխված Սահմանադրության, վարչապետն առանձնահատուկ դիրք ունի Կառավարության մեջ, և կարող է տպավորություն ստեղծվել, որ վերջինիս կարգավիճակը փաստացի հավասարեցված է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանված՝ Հանրապետության նախագահի կարգավիճակին: Մինչդեռ այս երկու մարմինների միջև կա խիստ էական տարբերություն:

Ունենալով հսկայական իշխանություն՝ Հանրապետության նախագահը 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ իր լիազորությունների իրականացման ժամկետում որևէ քաղաքական պատասխանատվություն չէր կրում և չէր կարող քաղաքական պատճառներով պաշտոնանկ արվել Ազգային ժողովի կողմից: Փոփոխված Սահմանադրության համաձայն՝ վարչապետն ունի բավականին ու-

ժեղ դիրք, և իր լիազորությունների ծավալով առաջին հայացքից շատ մոտ է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված Հանրապետության նախագահին: Սակայն կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն կիսանախագահական համակարգում Հանրապետության նախագահի, խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում վարչապետը մշտապես գտնվում է խորհրդարանական վերահսկողության ներքո:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության համաձայն՝ վարչապետը կարող է փոխվել քաղաքական դրդապատճառներով, իսկ կիսանախագահական համակարգում Հանրապետության նախագահի փոփոխության նման մեխանիզմը անհնար է: Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրության 115-րդ հոդվածը նախատեսում է վարչապետի կոնստրուկտիվ անվստահության քվեի ինստիտուտը, ըստ որի՝ Ազգային ժողովը կարող է փոխարինել գործող Վարչապետին՝ միաժամանակ նոր Վարչապետ ընտրելու պայմանով:

Փոփոխված Սահմանադրությունը պարունակում է բազմաթիվ այլ դրույթներ, որոնք ապահովում են վարչապետի և Կառավարության քաղաքական պատասխանատվությունը և նրանց լիազորությունների հակակշռումը: Այսպես, խորհրդարանի առջև վարչապետի և Կառավարության քաղաքական հաշվետվողականության և պատասխանատվության արտահայտություն է այն դրույթը, ըստ որի՝ Ազգային ժողովը կարող է հավանություն չտալ Կառավարության ծրագրին: Նման դեպքում խորհրդարանն ընտրում է նոր վարչապետ (հոդված 151, մաս 3): Ազգային ժողովը կարող է վստահություն չհայտնել Կառավարությանը իր ներկայացրած օրենքի նախագծի կապակցությամբ (հոդված 157, մաս 1) և ընտրել նոր վարչապետ (հոդված 149, մաս 2՝ 158-րդ հոդվածի հետ համակցությամբ):

Պատասխանատվության և հակակշռման ինստիտուտի դրսևորում է նաև Կառավարության անդամներին, այդ թվում՝ վարչապետին, պատգամավորների կողմից գրավոր և բանավոր հարցեր ուղղելու հնարավորությունը (հոդված 112), գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունքը (հոդված 113):

Վերջապես, կիսանախագահական համակարգում Հանրապետության նախագահն ուներ մի շարք լիազորություններ, որոնք փոփոխված Սահմանադրությամբ չեն վերապահվել վարչապետին: Մասնավորապես, ըստ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության, Հանրապետության նախագահը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, կնքում միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնում միջազգային պայմանագրեր, հաստատում, կասեցնում կամ չեղյալ հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը, Ազգային ժողովին առաջարկում գլխավոր դատախազի, Կենտրոնական բանկի նախագահի և Հաշվեքննիչ պալատի նախագահի թեկնածությունները, նշանակում որոշ պաշտոնատար անձանց: Նշված լիազորությունների մի մասում փոփոխված Սահմանադրությամբ որոշակի դերակատարություն է ստացել Կառավա-

րությունը, իսկ մի մասն էլ վերապահված է բացառապես Ազգային ժողովի իրավասությանը:

Այսպիսով, խորհրդարանական կառավարման ձևով պայմանավորված՝ վարչապետի դերի և կարգավիճակի որոշակի ուժեղացումը չի կարող որևէ կերպ նույնականացվել նախագահական կամ կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում պետության գլխի ազդեցիկ դերի և կարգավիճակի հետ:

## **6.5. Հանրապետության նախագահի նոր դերը և լիազորությունները**

Հանրապետության նախագահի ինստիտուտը 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ ենթարկվել է էական փոփոխությունների, ինչն առաջին հերթին պայմանավորված է կիսանախագահական կառավարման ձևից դեպի խորհրդարանական կառավարման ձև անցում կատարելու հանգամանքով: Ըստ փոփոխված Սահմանադրության՝ Հանրապետության նախագահն ընտրվելու է ոչ թե համապետական ուղղակի ընտրություններով, այլ Ազգային ժողովի կողմից՝ յոթ տարի ժամկետով, ընդ որում՝ նույն անձը Հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Հանրապետության նախագահի ընտրության առաջարկված կարգը պայմանավորված է սահմանադրական մարմինների համակարգում Հանրապետության նախագահին վերապահված դիրքով և նրա հիմնական գործառույթով՝ հետևելու Սահմանադրության պահպանմանը: Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթն արդյունավետ իրականացնելու համար Հանրապետության նախագահը պետք է լինի վերկուսակցական, չեզոք և անկողմնակալ:

Սահմանադրության պահպանմանը հետևելիս Հանրապետության նախագահի պարտականությունն է ժամանակին ուշադրություն հրավիրել սահմանադրականության խնդիրների վրա: Այս առումով ամենակարևոր լիազորությունը Ազգային ժողովի ընդունած օրենքի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան դիմելն է (հոդված 129): Ազգային ժողովի կողմից օրենքի ընդունման դեպքում Հանրապետության նախագահն ունի երկու հնարավորություն՝

- քսանմեկօրյա ժամկետում ստորագրել և հրապարակել օրենքը, կամ՝
- նույն ժամկետում դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով:

Եթե Սահմանադրական դատարանը համապատասխան օրենքը Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչում, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում վերոնշյալ պահանջները, այսինքն՝ քսանմեկօրյա ժամկետում ո՛չ ստորագրում է օրենքը, ո՛չ դիմում է Սահմանադրական դատարան՝ դրսևորելով անգործություն, ինչպես նաև օրենքը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու դեպքում հնգօրյա ժամ-

կետում չի ստորագրում և հրապարակում օրենքը, Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:

Սահմանադրության պահպանման հիմնական գործառույթի իրականացման շրջանակներում Հանրապետության նախագահը, Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, կարող է Սահմանադրական դատարան դիմել նաև հետևյալ դեպքերում.

- գործող օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցով,
- սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի հարցով,
- Կառավարության անդամներին նշանակելու հարցով,
- երբ Հանրապետության նախագահը որևէ լիազորություն իրականացնում է այլ մարմնի առաջարկությամբ կամ միջնորդությամբ և Հանրապետության նախագահին առարկում է դրա դեմ, ապա նա կարող է համապատասխան ակտը չստորագրել և դիմել Սահմանադրական դատարան (օրինակ՝ դատավորների թեկնածությունների ցուցակը իր հաստատմանը ներկայացնելիս):

Կառավարության հրաժարականն ընդունելու և վարչապետի առաջարկությամբ Կառավարության կազմում փոփոխություններ կատարելու՝ Հանրապետության նախագահի լիազորությունները պահպանվել են նաև 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում (հոդվածներ 130 և 131): Հանրապետության նախագահը նշանակում է վարչապետին, սակայն այս նշանակումը ավելի շատ ձևական բնույթ է կրում, քանի որ Հանրապետության նախագահը վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին<sup>121</sup>:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ Հանրապետության նախագահը մի շարք լիազորություններ իրականացնում էր ինքնուրույն, առանց որևէ այլ մարմնի միջամտության: Մինչդեռ փոփոխված Սահմանադրությամբ նախատեսվում է, որ Հանրապետության նախագահին այդ լիազորություններն իրականացնելու է Կառավարության կամ վարչապետի առաջարկությամբ, իսկ որոշ դեպքերում այդ լիազորությունները կարող են իրականացվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Մասնավորապես, Հանրապետության նախագահը.

- Կառավարության առաջարկությամբ կնքում է միջազգային պայմանագրեր (հոդված 132, մաս 1, կետ 1),
- վարչապետի առաջարկությամբ նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին (հոդված 132, մաս 1, կետ 2),

<sup>121</sup> Այս մասին տե՛ս 6.4.3. մասում:



- Կառավարության առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը (հոդված 132, մաս 2),
- վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետին, շնորհում է բարձրագույն դիվանագիտական և զինվորական կոչումներ (հոդված 133),
- օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը (հոդված 134), դատապարտյալներին ներում շնորհելու հարցը (հոդված 135), շնորհում է բարձրագույն դասային աստիճաններ (հոդված 137), պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում է պատվավոր կոչումներ (հոդված 136):

Վերոնշյալ դեպքերում Հանրապետության նախագահը կարող է համապատասխան առաջարկություն կամ միջնորդություն ներկայացրած մարմնին ներկայացնել իր առարկությունները, իսկ եթե դրանք չեն ընդունվում՝ կամ ստորագրում է համապատասխան ակտը, կամ դիմում է Սահմանադրական դատարան: Հակառակ դեպքում նշված ակտն իրավունքի ուժով մտնում է ուժի մեջ (հոդված 139, մասեր 2 և 3):

Հանրապետության նախագահը որոշակի լիազորություններ ունի պաշտոնատար անձանց նշանակման գործընթացում, թեև դրանք կրում են ավելի շատ ձևական բնույթ: Մասնավորապես, Հանրապետության նախագահին Ազգային ժողովի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի դատավորներին (հոդված 166, մաս 3), Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին (հոդված 166, մաս 4), առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին և դատավորներին (հոդված 166, մաս 6):

Այն դեպքում, երբ Ազգային ժողովը եռամսյա ժամկետում չի ընտրում որոշակի պաշտոնատար անձանց, Հանրապետության նախագահը օրենքով սահմանված հիմքերով և կարգով ինքն է նշանակում ժամանակավոր պաշտոնակատար մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան պաշտոնատար անձի ընտրությունը: Դա վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող հինգ անդամներին, գլխավոր դատախազին, Մարդու իրավունքների պաշտպանին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և անդամներին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին, Հաշվեքննիչ պալատի նախագահին և անդամներին, Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին (հոդված 138):

## 7. Դատական իշխանությունը

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 7-րդ գլուխը նշանակալի փոփոխությունների է ենթարկվել, ինչը նպատակ ունի.

- ամրապնդել դատական իշխանության և դատավորի արտաքին և ներքին անկախության երաշխիքները (տե՛ս 7.1),
- բարձրացնել դատական իշխանության ինքնակառավարման արդյունավետությունը (տե՛ս 7.2),
- հստակեցնել Սահմանադրական դատարանի կարգավիճակի և գործառույթների հետ կապված խնդիրները (տե՛ս 7.3):

### 7.1. Դատական իշխանության և դատավորի արտաքին և ներքին անկախության երաշխիքների ամրապնդումը

Դատական իշխանության և դատավորի անկախությունն ունի արտաքին և ներքին բաղադրիչ: Արտաքին անկախությունը դատական իշխանության ապահովագրվածությունն է արտաքին միջամտությունից, իսկ ներքինը՝ դատական համակարգի ներսում անկախությունը:

Այս առումով 2005 թ. սահմանադրական բարեփոխումները և դրանց հիման վրա ընդունված Դատական օրենսգիրքը<sup>122</sup>, միջազգային չափորոշիչներին համահունչ, նախատեսում էին զգալի առաջադիմական կարգավորումներ: Այդուհանդերձ, դատավորների արտաքին և ներքին անկախության երաշխավորումը դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ և քննադատության ենթարկվել:

Արտաքին անկախության երաշխավորման համար առաջնահերթ նշանակություն ունի դատավորների նշանակման և նրանց լիազորությունների դադարեցման ընթացակարգը: Դատավորների նշանակման ընթացակարգը մի կողմից՝ պետք է ապահովի դատավորի անկախությունը և հետագայում կաշկանդված չլինելը իրեն նշանակողից, իսկ մյուս կողմից՝ երաշխավորի դատավորի պատասխանատվությունը և հանրային հաշվետվողականությունը:

2005 թ. փոփոխություններով Սահմանադրության 55-րդ և 95-րդ հոդվածները Հանրապետության նախագահին են վերապահում բոլոր առյանների դատավորների, դատարանների նախագահների նշանակման և նրանց լիազորությունների դադարեցման վերջնական իրավասությունը: Սահմանադրությունը չի հստակեցնում նաև այդ գործընթացում Հանրապետության նախագահի լիազորությունների բնույթը: Մինչդեռ դատական իշխանության անկախության տեսանկյունից միջազգային փաստաթղթերը ընդգծում են պետության գլխի առա-

<sup>122</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք, ընդունված 2007 թվականի փետրվարի 21-ին, ՀՕ-135-Ն, ՀՀՊՏ 2007.04.18/20(544), հոդ. 489:

վելապես արարողակարգային դերակատարումը<sup>123</sup>: Այս առումով միջազգային փաստաթղթերը կոչ են անում հավասարակշռել դատավորների նշանակման գործընթացին մասնակցող սուբյեկտների շրջանակը. մի կողմից՝ այդ իրավասությունը չպետք է կենտրոնանա բացառապես դատական իշխանության ձեռքում, քանի որ կհանգեցնի ֆավորիտիզմի ու պահպանողականության վտանգների, մյուս կողմից՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների մասնակցությունը գործընթացին չպետք է տրամադրի վերջիններիս դատական իշխանության վրա ազդեցության լծակներ<sup>124</sup>:

Վերոհիշյալ սկզբունքների հաշվառմամբ՝ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունն ապահովել է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռված մասնակցությունը դատավորների նշանակման գործընթացին: Սահմանադրությունը, նախ, հստակեցնում և սահմանափակում է դատավորների նշանակման գործընթացում Հանրապետության նախագահի դերակատարումը՝ այն դարձնելով արարողակարգային: Համաձայն 166-րդ հոդվածի 6-րդ մասի՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորները նշանակվում են Հանրապետության նախագահի կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի ներկայացմամբ: Դատավորների թեկնածուների, այդ թվում՝ առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակը կազմում և հաստատում է Բարձրագույն դատական խորհուրդը (հոդված 175, կետ 1), որից էլ հետագայում առաջարկում է նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին (հոդված 175, կետ 2): Պաշտամենտական կառավարման համակարգում, Հանրապետության նախագահի կարգավիճակով և Սահմանադրության պահպանման երաշխավորի գործառույթով պայմանավորված (հոդված 123, մաս 2), փոփոխված Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասը Հանրապետության նախագահին միայն իրավունք է վերապահում Բարձրագույն դատական խորհրդի ստացված առաջարկությունը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել Բարձրագույն դատական խորհուրդ: Հանրապետության նախագահի առարկությունները, այնուամենայնիվ, Խորհրդի համար պարտադիր չեն, և եթե Բարձրագույն դատական խորհուրդը չընդունի այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահին մնում է կան ստորագրել դատավորի նշանակման

<sup>123</sup> Տե՛ս Opinion no. 10(2007) of the Consultative Council of European Judges (CCJE) to the Attention of the Committee of Ministers of the Council of Europe on the Council for the Judiciary at the Service of Society, կետ 49; Venice Commission Joint Opinion on the Law on the Judicial System and the Status of Judges of Ukraine (CDL-AD(2010)026), կետ 51; Venice Commission Opinion on Draft Constitutional Amendments Concerning the Reform of the Judicial System in “The Former Yugoslav Republic of Macedonia”, CDL-AD(2005)038, կետ 53; Judicial Appointments, Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), CDL-AD(2007)028, կետ 14:

<sup>124</sup> Տե՛ս Judicial Appointments, CDL-AD(2007)028, կետ 27-30; Opinion on the Seven Amendments to the Constitution Of “The Former Yugoslav Republic of Macedonia” Concerning, in Particular, the Judicial Council, the Competence of the Constitutional Court and Special Financial Zones, CDL-AD(2014)026, կետ 70-72:

ակտը, կամ դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության խախտման հիմքով:

Փոփոխված Սահմանադրությունը բարդեցված ընթացակարգ է նախատեսում Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի համար՝ հաշվի առնելով դատական համակարգում Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ տեղն ու դերը: Սահմանադրությունը նախատեսում է Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության մրցութային կարգ և նշանակման գործընթացում ժողովրդի ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի մասնակցություն: Բարձրագույն դատական խորհուրդը, մրցույթի արդյունքներով, Ազգային ժողովին է ներկայացնում Վճռաբեկ դատարանի դատավորի յուրաքանչյուր տեղի համար երեք թեկնածու: Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընտրված թեկնածուին պաշտոնի է նշանակում Հանրապետության նախագահը (հոդված 166, մաս 3): Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ՝ Վճռաբեկ դատարանի կազմից (հոդված 166, մաս 5): Ազգային ժողովի մասնակցությունը բարձրագույն դատական ատյանի դատավորների նշանակման գործընթացին ապահովում է դատավորների թեկնածուների շուրջ քննարկումների հրապարակայնությունն ու թափանցիկությունը, նշանակման գործընթացում հանրային վերահսկողության մեծացումը:

Փոփոխված Սահմանադրությունը նաև սահմանադրական մակարդակ է բարձրացրել և խստացրել բարձրագույն դատական ատյանի դատավորներին ներկայացվող պահանջները: Սահմանվել է, որ Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է նշանակվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը (հոդված 165, մաս 2):

Դատավորի արտաքին անկախությանն առնչվող մեկ այլ կարևոր հարց է նրա լիազորությունների դադարեցման իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ Հանրապետության նախագահին էր վերապահված ոչ միայն դատավորի լիազորությունների դադարեցման, այլև նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու հարցերում վերջնական որոշման իրավասությունը: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ այս հարցերը վերապահվել են միայն Բարձրագույն դատական խորհրդի իրավասությանը, իսկ Սահմանադրական դատարանի դատավորների դեպքում՝ Սահմանադրական դատարանին (հոդված 164, հոդված 168, կետեր 9-11, հոդված 175, կետեր 6-8)<sup>125</sup>:

Դատական իշխանության և դատավորի անկախության ապահովման տեսանկյունից առանցքային կարևորության հարց է նաև դատավորի կարգավի-

<sup>125</sup> Այս քայլը ողջունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից, տես CDL-AD(2015)038, կետ 44:

ճակի հիմքերի սահմանադրական ամրագրումը: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը առանձին՝ 164-րդ հոդվածով կարգավորում է դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար հարցերը, այդ թվում՝ դատավորի անձեռնմխելիության, այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումների, անփոփոխելիության, դատավորի սոցիալական երաշխիքների և այլն: Այս առումով հատկապես ուշադրության են արժանի դատավորի անձեռնմխելիության հարցին վերաբերող կարգավորումները:

Նախ և առաջ, դատավորի անկախության միջազգայնորեն ձևավորված սկզբունքներին և չափորոշիչներին համահունչ<sup>126</sup>, փոփոխված Սահմանադրությունը ուղղակիորեն ամրագրում է, որ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ (հոդված 164, մաս 2):

Երկրորդ, 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը դատավորին տրամադրում էր բացարձակ անձեռնմխելիություն՝ սահմանելով, որ դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ Սահմանադրական դատարանի համաձայնության: Նման մոտեցումը քննադատվում է միջազգային փաստաթղթերում, քանի որ այն համարվում է խոչընդոտ հանցավորության և հատկապես կոռուպցիայի դեմ պայքարում: Համաձայն միջազգային փաստաթղթերի պահանջների՝ դատավորները պետք է օգտվեն միայն գործառության անձեռնմխելիությունից, այսինքն՝ իրենց պաշտոնական պարտականություններն իրականացնելիս կատարված գործողությունների համար քրեական հետապնդման անձեռնմխելիությունից<sup>127</sup>: Մինչդեռ իրենց պաշտոնական պարտականություններից դուրս կատարած իրավախախտումների համար դատավորները պետք է պատասխանատվություն կրեն որպես սովորական անձինք: Գործառության անձեռնմխելիությունից բացառություն են դիտավորությամբ կատարված հանցագործությունները (օրինակ՝ կաշառք վերցնելը), որոնց պարագայում դատավորը չի կարող պաշտպանվել անձեռնմխելիությամբ: Ելնե-

<sup>126</sup> Տե՛ս Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers to Member States on Judges: Independence, Efficiency and Responsibilities, կետ 66-70:

<sup>127</sup> Տե՛ս նույն տեղում՝ Recommendation CM/Rec(2010)12, կետ 71; Venice Commission, Opinion on the Draft Laws on Courts and on Rights and Duties of Judges and on the Judicial Council of Montenegro, CDL-AD(2014)038, կետ 64; Venice Commission, Opinion on the Provisions on the Judiciary in the Draft Constitution of the Republic of Serbia, CDL-AD(2005)023-e, կետ 18; Joint Opinion by the Venice Commission and the Directorate of Human Rights of the Directorate General of Human Rights and the Rule of Law on the Law on the Judiciary and the Status of Judges and Amendments to the Law on the High Council of Justice of Ukraine, CDL-AD(2015)007-e, կետ 58 և այլն:

լով վերոնշյալ սկզբունքներից՝ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը դատավորին պաշտպանություն է տրամադրում միայն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առաջացած իրավիճակներում՝ սահմանելով այս դեպքում քրեական հետապնդման հարուցման և ազատությունից զրկման հնարավորություն միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ (հոդված 164, մաս 3):

Այժմ անդրադառնանք դատավորների ներքին անկախությանը, այսինքն՝ անկախությանը դատական համակարգի ներսում: Այս առումով գործնականում մտահոգության տեղիք տվող խնդիր է, մասնավորապես, դատարանների նախագահներին վերապահված առանձնահատուկ դերը, որի նախադրյալները ստեղծվել են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ և դրա հիման վրա՝ օրենսդրության մեջ: Դա մեծապես պայմանավորված է այն բանով, որ դատարանների նախագահների պաշտոնավարումն այդ պաշտոնում ժամկետով սահմանափակված չէ, նրանք մեծապես ներկայացված են դատական ինքնակառավարման մարմիններում (մասնավորապես՝ Դատարանների նախագահների խորհրդում) և գործնականում վերածվել են սովորական դատավորների համեմատ որոշակի ընդգծված կարգավիճակ ունեցող պաշտոնյաների:

Դատարանների նախագահների վերաբերյալ իրավական կարգավորումներ նախատեսելիս 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը որդեգրել է այն ելակետային մոտեցումը, որ դատարանների նախագահներն առաջին հերթին դատավորներ են, ինչպես մյուս բոլոր դատավորները, միայն այն տարբերությամբ, որ նրանց, ի հավելումն դատավորի բուն գործառույթների, վերապահված են կազմակերպչական գործառույթներ: Դատարանների նախագահների համար պաշտոնավարման ժամկետի սահմանափակումներ ներդնելու անհրաժեշտությունը բխում է նաև դատավորների միջև առողջ մրցակցություն ապահովելու անհրաժեշտությունից: Դատարանների նախագահների անժամկետ նշանակման պարագայում նույն դատարանում առաջխաղացման հնարավորությունն էականորեն սահմանափակվում է կամ նույնիսկ անհնարին է դառնում, քանի որ գործնականում դատարանների նախագահները պաշտոնավարում են բավականին երկար ժամանակ, որպես կանոն, մինչև որպես դատավոր իրենց առավելագույն տարիքը լրանալը, որի հետևանքով գրեթե բացառվում է այդ պաշտոնում թափուր տեղի առաջացման հնարավորությունը: Այնինչ դատավորների համար առաջխաղացման հնարավորության ապահովումը դատական համակարգի արդյունավետ գործունեության էական նախադրյալներից է: Այս ամենով պայմանավորված՝ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունն ամրագրում է դատարանների նախագահների պաշտոնավարման սահմանափակ ժամկետ՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների համար՝ 3 տարի՝ առանց ժամկետի ավարտից անմիջապես հետո վերանշանակման իրավունքի, Վճռաբեկ դատարանի նախագահի դեպքում՝ 6 տարի՝ առանց վերանշանակման իրավունքի (հոդված 166, մասեր 5 և 7):

Դատավորների ներքին անկախության ամրապնդման առումով մեկ այլ նշանակալի քայլ է դատական ինքնակառավարման բարձրագույն մարմնում դատարանների նախագահների ընդգրկման արգելքի սահմանումը (հոդված 174, մաս 2):

## **7.2. Դատական իշխանության ինքնակառավարման արդյունավետության բարձրացումը**

Դատական իշխանության անկախության և ինքնուրույնության ապահովման համատեքստում մեկ այլ կարևոր խնդիր է դատական ինքնակառավարման մարմինների գործունե համակարգի առկայությունը: Այս առումով առանձնահատուկ դերակատարում ունի 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված Արդարադատության խորհուրդը: Արդարադատության խորհրդին վերաբերող՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության նորմերը խնդրահարույց էին հետևյալ առումներով.

- Սահմանադրությամբ հստակեցված չէր Արդարադատության խորհրդի կարգավիճակը դատական ինքնակառավարման մյուս մարմինների համատեքստում:
- Արդարադատության խորհրդի կազմը չէր ապահովում դատավոր և ոչ դատավոր անդամների հավասարակշռված համամասնությունը՝ որպես հակակշիռների գործունե մեխանիզմ:
- Սահմանադրությունը չէր նախատեսում Արդարադատության խորհրդի անդամներին ներկայացվող պահանջներ, չկար խորհրդի անդամի պաշտոնում վերընտրվելու սահմանափակում:
- Բոլոր դատավորների շահերը ներկայացնող լիարժեք ինքնակառավարման մարմին լինելու տեսանկյունից խնդրահարույց էր նաև Արդարադատության խորհրդում բոլոր ատյանների դատարանների դատավորների ներկայացվածության պահանջ սահմանող նորմերի բացակայությունը:
- Թերի էին Արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունները:

Թեև վերոհիշյալ խնդիրներին փորձ է արվել լուծում տալ Դատական օրենսգրքում, սակայն սահմանադրական երաշխիքների առումով առկա է էական բաց:

2005 թ. փոփոխություններով Սահմանադրության համեմատ՝ փոփոխված Սահմանադրությունն առանձնակի մանրամասնությամբ է կարգավորում դատական ինքնակառավարման այս առանցքային մարմնի հետ կապված հարցերը՝ արտացոլելով միջազգային փաստաթղթերով առաջադրվող բոլոր հիմնարար պահանջները:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ Արդարադատության խորհրդի փոխարեն ստեղծվում է Բարձրագույն դատական խորհուրդ, որի կարգավիճակը և առաքելությունը, ի տարբերություն 2005 թ. փոփոխություններով Սահմանա-

դրության, հստակեցված է. այն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը (հոդված 173):

Արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նրա կազմից: 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության համաձայն՝ Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկված էին 9 դատավոր և 4 ոչ դատավոր՝ իրավաբան գիտնական անդամ (հոդված 94.1): Արդյունքում ոչ դատավոր անդամները, որոնք կոչված են ապահովելու հավասարակշռությունը այդ խորհրդում, իրականում ունեն ազդեցության խիստ սահմանափակ հնարավորություններ որոշումների կայացման գործընթացում: Մինչդեռ դատական ինքնակառավարման մարմնում ոչ դատավոր անդամների առկայությունը դատական համակարգի կորպորատիվիզմը և սեփական շահերով առաջնորդվելը հակակշռելու կարևոր մեխանիզմ է: Այս առումով կարևոր քայլ էր 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ դատավոր և ոչ դատավոր անդամների միջև պարիտետի հաստատումը<sup>128</sup>: Փոփոխված Սահմանադրությամբ՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից, որոնցից հինգին ընտրում է Ազգային ժողովը՝ գիտության ոլորտի և այլ հեղինակավոր իրավաբանների թվից՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, հինգին՝ դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորների թվից: Դրանով դատական իշխանության առանցքային մարմնի ձևավորման ժամանակ էապես կարևորվում է լայն քաղաքական համաձայնությունը խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի միջև, ինչը կնպաստի նաև ավելի որակյալ իրավաբանների ընտրությանը խորհրդի կազմում: Իրացված է նաև խորհրդի անդամների ընտրությանը գործադիր իշխանության մասնակցությունը բացառելու պահանջը:

Փոփոխված Սահմանադրությունը խիստ պահանջներ է սահմանում Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն այս առումով առանձնահատուկ կարգավորումներ չէր պարունակում, և հարցը թողնված էր օրենսդրի հայեցողությանը: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 174-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ դատավոր անդամներին ներկայացվում է դատավորի պաշտոնում առնվազն տասը տարվա փորձառության, իսկ ոչ դատավոր անդամներին՝ մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառության պահանջ: Համեմատության համար պետք է նշել, որ Դատական օրենսգրքով այս պահանջը

<sup>128</sup> Մոնտենեգրոյի սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ կարծիքներում Վենետիկի հանձնաժողովը հակակշիռների տեսանկյունից ողջունել է դատավոր և ոչ դատավոր անդամների միջև պարիտետը, տես Opinion on Two Sets of Draft Amendments to the Constitutional Provisions Relating to the Judiciary of Montenegro, CDL-AD(2012)024, կետ 20; Opinion on the Seven Amendments to the Constitution of “The Former Yugoslav Republic of Macedonia” Concerning, in Particular, the Judicial Council, the Competence of the Constitutional Court and Special Financial Zones, CDL-AD(2014)026, կետ 9-10: Վենետիկի հանձնաժողովը դրական է արտահայտվել այս առնչությամբ նաև Հայաստանի վերաբերյալ կարծիքում, տես Venice Commission CDL-AD(2015)037, կետ 179:



հինգ տարի է՝ դատավորների, և երեք տարի՝ իրավաբան գիտնականների համար (հոդված 98):

Կարևոր դրոյթ է այն, որ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամները պետք է համամասնորեն ներկայացնեն բոլոր ատյանների դատարանների դատավորներին: Խորհրդի անդամի համար նախատեսվել են փորձառությանը վերաբերող այլ նվազագույն պահանջներ ևս (հոդված 174, մաս 2):

Բոլոր դատավորների համար Բարձրագույն դատական խորհրդի անդամ դառնալու հավասար նախադրյալներ ապահովելու առումով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ արգելված է դատարանների նախագահների ընդգրկումը խորհրդի կազմում: Սահմանված է նաև, որ խորհրդի անդամները պաշտոնավարում են հինգ տարի՝ առանց վերընտրման իրավունքի (հոդված 174, մաս 2 և 4): Նախկինում նման սահմանափակումներ նախատեսված չէին:

Փոփոխված Սահմանադրությունը Բարձրագույն դատական խորհրդի գործունեության արդյունավետության երաշխիքների տեսանկյունից առաջ է անցել՝ նաև նախատեսելով, որ Դատական օրենսգրքով կարող է սահմանվել Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ (հոդված 174, մաս 6): Սա հատկապես կարևոր է այն պատճառով, որ Սահմանադրությունը ուղղակիորեն նախատեսում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան (հոդված 175, մաս 2): Դատավոր անդամների լիազորությունների կասեցումը կնպաստի նրանց կողմից առավել անաչառ որոշումներ կայացնելուն, ինչպես նաև հնարավորություն կտա նրանց կենտրոնանալու այս առանցքային սահմանադրական մարմնում իրենց գործառույթների իրականացման վրա:

Բարձրագույն դատական խորհրդի դատավոր և ոչ դատավոր անդամների միջև հավասարություն ապահովելու համար սահմանված է, որ Բարձրագույն դատական խորհուրդը նախագահում է խորհրդի նախագահը, որն ընտրվում է հաջորդաբար՝ խորհրդի դատավոր և իրավաբան անդամների թվից խորհրդի անդամների կողմից օրենքով սահմանված կարգով: Մինչդեռ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության համաձայն՝ Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի (հոդված 94.1):

Բարձրագույն դատական խորհրդի՝ դատական իշխանության ինքնակառավարման լիարժեք մարմնի վերածելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի նաև փոփոխված Սահմանադրությամբ խորհրդի սահմանադրական լիազորությունների ընդլայնումը՝ դրանք մոտեցնելով նման մարմնի համար միջազգային փաստաթղթերով առաջարկվող օրինակելի լիազորությունների շրջա-

նակին<sup>129</sup>: Թեև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ այս մարմնին վերապահված էին այնպիսի լիազորություններ, որոնք հիմնականում բնորոշ են դատական ինքնակառավարման բարձրագույն մարմնին (հոդված 95), սակայն դրանք նախ՝ ամբողջական չէին և, երկրորդ՝ Արդարադատության խորհրդի լիազորությունների էական մասը միայն խորհրդատվական բնույթ ուներ: Խորհրդի լիազորությունների բովանդակությունն էապես տարբերվում է 2005 թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ ամրագրված լիազորություններից: Այսպես, Բարձրագույն դատական խորհրդին է վերապահվում վճռորոշ դերակատարություն դատավորների, այդ թվում՝ դատարանների նախագահների նշանակման հարցում: Ընտրվել է դատավորների նշանակման հարցում խորհրդի ինքնուրույն լիազորությունների մասնակի զսպման, իսկ դատավորների գործուղման, փոխադրման և հատկապես կարգապահական պատասխանատվության հարցերում՝ լիարժեք ինքնուրույնության ձևաչափը: Որպես հավելյալ լիազորություն ամրագրվել է Կառավարությանը՝ խորհրդի սեփական և դատարանների բյուջեն ներկայացնելու և բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ ընդհանուր վերահսկողության լիազորությունը (հոդված 175, մաս 1, կետ 9): Մյուս կողմից՝ սահմանվել է լիազորությունների բաց ցանկ, եթե ապագայում օրենսդիրն անհրաժեշտ համարի խորհրդին՝ իր սահմանադրական կարգավիճակի շրջանակներում, վերապահել հավելյալ լիազորություններ (հոդված 175, մաս 4):

### **7.3. Սահմանադրական դատարանի կարգավիճակի և լիազորությունների հստակեցումը**

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը խիստ ընդհանուր ձևակերպմամբ էր անդրադառնում Սահմանադրական դատարանի գործառույթի ամրագրմանը՝ 93-րդ հոդվածում սահմանելով, որ Սահմանադրական դատարանն իրականացնում է սահմանադրական արդարադատություն: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հստակ ամրագրել է դատական սահմանադրական վերահսկողություն իրականացնող այս մարմնի հիմնական գործառույթը, այն է՝ Սահմանադրության գերակայության ապահովումը (հոդված 167, մաս 1):

Վերափոխվել է Սահմանադրական դատարանի ձևավորման կարգը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված՝ Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի մասնակցությամբ Սահմանադրական դատարանի կազմի ձևավորման փոխարեն (հոդված 55, կետ 10 և հոդված 83, կետ 1), փոփոխված Սահմանադրությամբ դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ, ընդ որում՝ դատավորներից երեքին՝ Հանրապետության նախագահի առաջարկությամբ, երեքին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությամբ և երեքին՝ դատավորների ընդհանուր ժողո-

<sup>129</sup> Տե՛ս CCJE Opinion no.10(2007), կետ 42:

վի առաջարկությամբ: Խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող պետությունում առաջնային մանդատով օժտված միակ ներկայացուցչական մարմնի որոշումը Սահմանադրական դատարանի դատավորների ընտրությանը հաղորդում է ժողովրդավարական բարձր լեգիտիմություն: Մինևույն ժամանակ, կարևոր նորոյթ է դատավորների ընդհանուր ժողովի մասնակցությունը այս գործընթացին, որը առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանի դատավորներին ևս հնարավորություն է տալիս դառնալ Սահմանադրական դատարանի դատավոր և իրենց պրակտիկ փորձառությամբ նպաստել դատարանի գործունեությանը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանի դատավորները պաշտոնավարում էին անժամկետ՝ մինչև 65 տարին լրանալը (հոդված 96): 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը սահմանափակում է Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետը 12 տարով (հոդված 166, մաս 1)՝ առանց վերընտրման իրավունքի: Նման ժամկետային սահմանափակումը բնորոշ է եվրոպական բազմաթիվ երկրների: Առանց վերընտրվելու հնարավորության պաշտոնավարման ժամկետի սահմանափակումը առավել նպաստում է Սահմանադրական դատարանի դատավորների անկախության ամրապնդմանը՝ մինևույն ժամանակ հնարավոր դարձնելով սերնդափոխություն և գաղափարական փոփոխություններ:

Ըստ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 166-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրական դատարանի նախագահը և փոխնախագահն ընտրվում են Սահմանադրական դատարանի դատավորների կողմից: Դա հնարավորություն է տալիս տարբեր դատավորների պաշտոնավարելու որպես դատարանի նախագահ և կանխում է դատարանի նախագահի գերակայությունն այլ դատավորների հանդեպ: Որպես դատարանի նախագահ պաշտոնավարելու հնարավորությունը հավելյալ խրախուսման հնարավորություն է ստեղծում դատավորների համար:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը կարևոր փոփոխություններ է նախատեսում նաև Սահմանադրական դատարանի լիազորությունների մեջ: Սահմանադրական դատարանին է վերապահվել սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծումը (հոդված 168, կետ 4): Խոսքը վերաբերում է Ազգային ժողովի, Կառավարության, Հանրապետության նախագահի, տեղական ինքնակառավարման մարմինների և Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերին:

Սահմանադրական դատարանն իրավասու է որոշել պատգամավորի լիազորությունների դադարեցման հարցը, երբ վերջինս խախտել է պատգամավորական մանդատի անհամատեղելիության կանոնները կամ անհարգելի կերպով բացակայել է Ազգային ժողովում քվեարկությունների առնվազն կեսից (հոդված 168, կետ 6): Սահմանադրական դատարանը լիազորություն է ստանում մինչև

Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշել դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը (հոդված 168, կետ 2):

Անհատական գանգատների առումով 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը վերացնում է այն անբնական իրավիճակը, երբ Սահմանադրական դատարանը սահմանափակված է միայն օրենքի սահմանադրականության ստուգմամբ: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով Սահմանադրական դատարանն իրավասու է ստուգել ցանկացած նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը, եթե դրանով խախտվել են մարդու հիմնական իրավունքները և ազատությունները: Բացի դրանից, սահմանադրական մակարդակ է բարձրացվել այն դրույթը, ըստ որի՝ այդ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Ըստ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա օրենքի սահմանադրականության հարցով պետք է դիմեն Սահմանադրական դատարան, եթե ողջամիտ կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և կարծում են, որ սովյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ օրենքի կիրառման միջոցով: Վերոնշյալ դրույթները հավելյալ երաշխիքներ են ստեղծում Սահմանադրական դատարանի կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից:

## **8. Դատախազությունը և քննչական մարմինները**

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը դատախազության հետ կապված հարցերը կարգավորում էր դատական իշխանությանը նվիրված 6-րդ գլխում՝ 103-րդ հոդվածով: Մինչդեռ դատախազությունը կատարում էր դատական իշխանությունից էապես տարբեր գործառույթ և կազմակերպվում ու գործում է բոլորովին այլ սկզբունքների հիման վրա: Ուստի դատական իշխանության հետ միևնույն գլխում դատախազությանը վերաբերող հարցերի կարգավորումը համակարգային առումով սխալ է և առաջացնում է շփոթ: 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը դատախազության հետ կապված հարաբերությունները կարգավորում է ինքնուրույն՝ 8-րդ գլխում, քննչական մարմիններին վերաբերող դրույթների հետ միասին:

Պետք է ընդգծել, որ սահմանադրական նորմերը դատախազությանը վերաբերող մասով էական փոփոխություններ չեն կրել: Համեմատած 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 103-րդ հոդվածում ամրագրված դատախազության լիազորությունների հետ՝ 176-րդ հոդվածում հստակեցվել է, որ դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության համար հայց

հարուցելու լիազորությունը գործում է միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջնային լիազորությունը այս հարցում պատկանում է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում է պետությանը պատճառվել գույքային վնաս: Այս առումով փոփոխված Սահմանադրությունը պարզապես սահմանադրական մակարդակ է բարձրացրել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (հոդված 27) արդեն իսկ առկա մոտեցումները<sup>130</sup>:

Փոփոխված Սահմանադրությունը սահմանադրական մակարդակով ամրագրել է նաև դատախազին ներկայացվող նվազագույն պահանջները՝ հետագա մանրամասնեցման հնարավորությունը թողնելով օրենքին: 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի ընտրության և պաշտոնանկության համար նախատեսվել է ավելի բարդ ընթացակարգ՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, ինչը մեծացնում է ընդդիմադիր խմբակցությունների դերակատարումն այս գործընթացում: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ գլխավոր դատախազի նշանակման համար պահանջվում էր ընդամենը պարզ մեծամասնություն (հոդված 103, մաս 2՝ հոդված 71-ի համադրությամբ), իսկ պաշտոնանկության համար՝ բացարձակ մեծամասնություն (հոդված 103, մաս 3):

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը 178-րդ հոդվածով առաջին անգամ անդրադառնում է նաև քննչական մարմիններին՝ սահմանելով վերջիններիս գործառույթները: Քննչական մարմինները իրականացնում են մինչդատական քրեական վարույթը: Քննչական մարմիններին վերաբերող դրույթների ներմուծումը սահմանադրական տիրույթ ընդգծում է մինչդատական վարույթում վերջիններիս ինքնուրույնությունը և գործառույթների ինքնուրույն ոլորտը:

## 9. Տեղական ինքնակառավարումը

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը տեղական ինքնակառավարմանը նվիրված 9-րդ գլխում կատարել է մի քանի էական փոփոխություններ, որոնք՝

- ուժեղացնում են տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը,
- ամրապնդում են ավագանու դերը տեղական ինքնակառավարման համակարգում՝ ուժեղացնելով վերջինիս վերահսկողական լիազորություն-

<sup>130</sup> Ընդունվել է 2007 թվականի փետրվարի 22-ին, ՀՕ-126-Ն, ՀՀՊՏ 2007.04.11/19(543), հոդ. 455:

ները և սահմանելով համայնքի ղեկավարի պատասխանատվությունն ավագանու առջև,

- սահմանում են համայնքի ղեկավարի անուղղակի ընտրության հնարավորություն,
- հստակեցնում են համայնքի խնդիրները,
- զարգացնում են միջհամայնքային միավորումների սահմանադրաիրավական կարգավիճակը:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ելակետ է ընդունել տեղական ինքնակառավարման համակարգում ավագանու դերի ամրապնդման անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը սահմանում է համայնքի ղեկավարի պատասխանատվությունն ավագանու առջև: Համայնքի ավագանու դերի բարձրացման մասին է վկայում նաև Սահմանադրության 185-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ համայնքի բյուջեն, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ընդունում է համայնքի ավագանին: Նախկինում համայնքի ավագանին ուներ միայն համայնքի բյուջեն «հաստատելու» իրավունք, ինչը նշանակում է, որ ավագանին կարող էր կամ հաստատել, կամ մերժել բյուջեի նախագիծը՝ առանց դրանում ինքնուրույնաբար փոփոխություններ կատարելու իրավունքի:

Փոփոխված Սահմանադրությունը կարևոր քայլ է կատարել համայնքի ղեկավարի ինքնուրույնության մեծացման հարցում՝ այլևս չնախատեսելով Կառավարության կողմից համայնքի ղեկավարի պաշտոնանկության ինստիտուտը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 109-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում, Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա, կարող էր պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավարի ընտրության առումով փոփոխված Սահմանադրությունը որդեգրել է ճկուն մոտեցում, նախատեսելով համայնքի ղեկավարի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ընտրության հնարավորություն (հոդված 181, մաս 1, նախադասություն 2): Նման կարգավորումը հնարավորություն կտա խոշոր համայնքներում ավագանու ընտրություններն անցկացնելու քաղաքական ավելի լայն հիմքի վրա՝ նախատեսելով համայնքի ղեկավարի ընտրություն համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու կողմից:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը, փոփոխված Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության համաձայն, դարձել է հինգ տարի (նախկին չորս տարվա փոխարեն), ինչը նրանց իրենց ծրագրերն իրականացնելու համար ավելի լայն հնարավորություններ կարող է ընձեռնել:

180-րդ հոդվածի 2-րդ մասում համայնքը սահմանելով որպես «հանրային իրավունքի իրավաբանական անձ», Սահմանադրությունն առաջին անգամ ներմուծում է միանգամայն նոր եզրույթ, որի նպատակն է հստակեցնել, որ հանրա-

յին իշխանության ոլորտում իրավաբանական անձանց կարգավիճակը որոշակիորեն տարբերվում է մասնավոր իրավունքում ընդունված իրավաբանական անձանց կարգավիճակից: Նման կարգավորումը հնարավորություն կտա հետագայում օրենքով զարգացնելու նոր իրավական ինստիտուտի էությունը և նպաստելու, որ հանրային իրավունքում «իրավաբանական անձ» եզրույթը չնույնացվի մասնավոր իրավունքում օգտագործվող նույնանուն իրավական եզրույթին, ինչն անհարկի շփոթի հիմք կարող է լինել:

Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասը հստակեցնում է համայնքի խնդիրների և լիազորությունների հարաբերակցությունը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 105-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «սեփական» և «պարտադիր» լիազորություններ սխալ եզրույթների փոխարեն փոփոխված Սահմանադրությունը սահմանում է, որ համայնքն ունի պարտադիր և կամավոր խնդիրներ, որոնք նրանք իրականացնում են սեփական լիազորությունների միջոցով: Բացի այդ, տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են նաև պետության կողմից պատվիրակված լիազորություններ:

Սահմանադրության 189-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ միջհամայնքային միավորումների ստեղծման նպատակը տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացումն է: Հաշվի առնելով համայնքային մարմինների ներուժի համակարգման գործում միջհամայնքային միավորումների էական նշանակությունը, Սահմանադրությունը նախատեսում է նաև միջհամայնքային միավորումների ստեղծում օրենքի միջոցով՝ Կառավարության առաջարկությամբ (հոդված 189, մաս 1, նախադասություն 2):

Փոփոխված Սահմանադրությունը, առաջնորդվելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով<sup>131</sup> և այդ խարտիայի 2009 թ. լրացուցիչ արձանագրությամբ, տեղական հանրաքվեներից բացի, նախատեսում է համայնքի գործերի կառավարմանը համայնքի բնակիչների անմիջական մասնակցության այլ եղանակներ, որոնք պետք է սահմանվեն օրենքով (հոդված 183, մաս 2):

## 10. Մարդու իրավունքների պաշտպանը

Մարդու իրավունքների պաշտպանի վերաբերյալ սահմանադրական հիմնադրույթները փոփոխված Սահմանադրությունում ներկայացված են առանձին՝ 10-րդ գլխով: Նախկինում համապատասխան դրույթները կարգավորված էին Ազգային ժողովին վերաբերող գլխում՝ 83.1-ին հոդվածում: Փոփոխված Սահմանադրության կարգավորումները նպատակ ունեն միջազգային իրավական չափանիշներին առավել համահունչ դարձնել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության սահմանադրական հիմքերը: Այս առումով էական սահմանադրական նորամուտություններից է այն, որ սահմանադրական նորմերը Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները տարածում են նաև մասնավոր

<sup>131</sup> Ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 15.10.1985 թ., տես ՀՀԱԳՆՊՏ, 2012.12.28/14(22):

հատվածի վրա: 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանը հետևում է ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, այլև՝ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Խոսքը վերաբերում է բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություններին, որոնց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանությունը այլևս դուրս չի մնա պաշտպանի իրավասությունից:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 83.1-ին հոդվածի, ավելի ընդգրկուն ձևակերպում է տվել Մարդու իրավունքների պաշտպանի հիմնական գործառույթներին. «... հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում խախտված իրավունքների վերականգնմանը, մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող օրենսդրության կատարելագործմանը»: Այս նոր կարգավորումները ամբողջականացնում են պաշտպանի գործառույթների՝ միջազգային չափանիշներով խրախուսվող շրջանակը, որը ներառում է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանությունը, այլև վերահսկողությունը և խթանումը<sup>132</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի պատշաճ անկախությունը երաշխավորելու նկատառումով փոփոխված Սահմանադրությունը պահպանել է այն դրույթը, համաձայն որի՝ Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ: Ընդ որում, անձեռնմխելիությունից զրկելու համար Սահմանադրությունը սահմանում է ավելի բարձր շեմ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը (հոդված 193, մաս 1):

Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով Սահմանադրության 191-րդ հոդվածի 3-րդ մասը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վրա դնում է հստակ պարտականություն՝ Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ ու պարզաբանումներ և աջակցել նրա աշխատանքներին: Սահմանադրական մակարդակում կարևոր նորամուծություն է նաև այն, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցը ներկայացնում է Ազգային ժողով, որը կարող է նաև առաջարկներ պարունակել օրենսդրական փոփոխությունների կամ այլ բնույթի միջոցառումների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքների տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ

<sup>132</sup> Այս մասին Վենետիկի հանձնաժողովը դիտարկում է արել Հայաստանի մասով իր կարծիքում, տե՛ս Venice Commission, Opinion on Amendments to the Law on the Human Rights Defender of Armenia, CDL-AD(2006)038, կետ 18, 19 և 89:



մասի դրույթը, ըստ որի՝ «պետությունն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը»:

## **11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը**

Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերաբերող կարգավորումները նպատակ ունեն սահմանել քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման և պաշտպանության առավել արդյունավետ համակարգ: Այդ նպատակով սահմանադրական մակարդակով առաջին անգամ ամրագրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ որպես քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովող և դրա նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի կարգավիճակը, սահմանվել են նրա լիազորությունները, ինչպես նաև նախատեսվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը:

Անկախ Հայաստանի պատմության ողջ ընթացքում ընտրական իրավունքի իրականացման և պաշտպանության հարցերը եղել են խնդրահարույց: Վիճահարույց է եղել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողով ձևավորելու խնդիրը: Նախընթաց տարիներին, ըստ էության, փորձարկվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորելու գրեթե բոլոր հնարավոր եղանակները: Հաշվի առնելով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 62-րդ հոդվածի դրույթը՝ համաձայն որի՝ «Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ», և այն հանգամանքը, որ Սահմանադրությունը Ազգային ժողովի՝ ընտրական հանձնաժողովների կազմավորմանը մասնակցելու որևէ լիազորություն չէր սահմանում, Ազգային ժողովը երբևէ մասնակցություն չի ունեցել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորմանը: Այդ լիազորությունը առավելապես վերապահված է եղել գործադիր իշխանությանը, ինչն ի սկզբանե բացասական նախատրամադրվածություն է ստեղծել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անկախության հարցում:

Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բնութագրում է որպես անկախ պետական մարմին: Այսինքն՝ հանձնաժողովը Կառավարության մաս չէ՝ չնայած իր լիազորությունների գործադիր բնույթին, չի գտնվում աստիճանակարգային որևէ ենթակայության տակ, ինչից հետևում է, որ որևէ այլ մարմին չի կարող Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ցուցումներ տալ այս կամ այն որոշումն ընդունելիս:

Սահմանադրության 194-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորումը, համաձայն որի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր գործունեության մասին Ազգային ժողովին հաղորդում է ներկայացնում, որևէ կերպ չի խախտում այդ մարմնի անկախությունը, այլ նպատակ է հետապնդում նրա գործունեությունը դարձնել հրապարակային և տեղեկացնել խորհրդարանին ընտ-

րական իրավունքի իրականացման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ՝ հետազայում դրանք լուծելու ակնկալիքով:

Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը, ըստ որի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և մյուս անդամներն ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, գրեթե բացառում է միայն քաղաքական մեծամասնության աջակցությունը վայելող թեկնածուների նշանակումը: Նշանակման նման կարգը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների գործունեության անկախության համար գործունե երաշխիք է:

Սահմանադրության 195-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի վրա տարածվում են պատգամավորին ներկայացվող պահանջները, ինչպես նաև Սահմանադրությամբ պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության դրույթները: Այս դրույթները ևս իրենց էությամբ անկախության երաշխիքներ են:

Անկախության կարևոր երաշխիք է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների համար սահմանված քաղաքական չեզոքության պահանջը: Սահմանադրության 195-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ ցանկացած այլ ձևով զբաղվել քաղաքական գործունեությամբ: Քաղաքական հարցերով հրապարակային ելույթներում նրանք պետք է զսպվածություն ցուցաբերեն:

Սահմանադրության 195-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունների դադարեցում այն դեպքում, երբ հանձնաժողովի անդամն անցնում է իր պաշտոնի հետ անհամատեղելի գործունեության կամ անդամակցում է որևէ կուսակցության կամ ցանկացած այլ ձևով զբաղվում քաղաքական գործունեությամբ կամ խախտում քաղաքական զսպվածության սկզբունքը: Ընդ որում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման հիմքերը սպառիչ են, և քաղաքական դրդապատճառներով դրանց դադարեցումը բացառվում է:

## 12. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Փոփոխված Սահմանադրությունում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին վերաբերող կարգավորումները նպատակ ունեն ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը: Հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակը հստակեցնելը և որպես անկախ մարմին սահմանելը կարևորագույն երաշխիք են յուրաքանչյուր անձի՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու հիմնական իրավունքի իրականացման համար (հոդված 42): Այդ նպատակով Սահմանադրությունը հստակեցնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակը, սահմանվում են հանձնաժողովի գործառույթները, լիազորությունները, կազմը և ձևավորման կարգը:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանված չէին հանձնաժողովի լիազորությունները, իսկ ձևավորման կարգը չէր երաշխավորում այդ մարմնի անկախությունը: Ամրագրված չէին հանձնաժողովի անդամների լիազորությունների դադարեցման հիմքերը: Հանձնաժողովի անդամների կեսին պատգամավորների ընդհանուր թվի ծայնների մեծամասնությամբ ընտրելը չէր երաշխավորում հանձնաժողովի անդամների աջակցություն վայելելը քաղաքական փոքրամասնության կողմից: Այդ խնդրի լուծման նպատակով փոփոխված Սահմանադրությունը, որդեգրած ընդհանուր մոտեցմանը համահունչ, նախատեսում է հանձնաժողովի անդամների ընտրություն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 3/5-ով (հոդված 197, մաս 2):

Սահմանադրության 197-րդ հոդվածի 3-րդ մասը հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների համար սահմանել է զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ լինելու և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանելու պահանջներ, ինչը նպատակ ունի ապահովել հանձնաժողովի բարձր պրոֆեսիոնալիզմը:

Սահմանադրության 197-րդ հոդվածի 4-6-րդ մասերը, 199-րդ հոդվածի 4-6-րդ մասերի նման, սահմանում են հանձնաժողովի անդամների անհամատեղելիության, քաղաքական գործունեության արգելքի և պաշտոնանկության վերաբերյալ դրույթներ:

## 13. Հաշվեքննիչ պալատը

Փոփոխված Սահմանադրության 13-րդ գլխի համաձայն՝ Վերահսկիչ պալատը վերանվանվել է Հաշվեքննիչ պալատ, ինչն ավելի հստակ է արտահայտում այդ մարմնի հիմնական գործառույթը, որը, Սահմանադրության 198-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության

օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ հաշվեքննության իրականացումն է: Դրանով սահմանադրական մակարդակում ամրագրվել են նաև վերահսկողության չափանիշները՝ օրինականությունը և արդյունավետությունը:

Սահմանադրությունը, ի տարբերություն նախորդ կարգավորումների, Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի հաստատման լիազորությունը վերապահել է հենց Հաշվեքննիչ պալատին (հոդված 198, մաս 2): Միջազգային պրակտիկայում Հաշվեքննիչ պալատի կողմից իր ծրագրի հաստատումը այդ մարմնի անկախության գլխավոր երաշխիքներից է:

Սահմանադրության 199-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի նախագահի և անդամների ընտրությունը դարձել է Ազգային ժողովի բացառիկ լիազորություն: Ինչպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դեպքում, այս պարագայում ևս հանձնաժողովի բոլոր անդամներն ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ձայների ընդհանուր թվի առնվազն 3/5-ով:

Սահմանադրության 198-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ իրավաբանական անձանց մոտ ստուգումները կարող են անցկացվել միայն օրենքով սահմանված դեպքերում: Նման ձևակերպման նպատակն այն է, որ իրավաբանական անձանց մոտ ստուգումներն իրականացվեն միայն բացառության կարգով: Հաշվեքննիչ պալատի մասին օրենքը պետք է նախատեսի այդ դեպքերը, երբ իրավաբանական անձանց մոտ թույլատրելի են ստուգումները: Դա միջազգային պրակտիկայում, որպես կանոն, վերաբերում է այն իրավաբանական անձանց, որոնցում պետությունը ունի էական մասնակցություն կամ նրանք ֆինանսական միջոցներ են ստացել պետության կողմից կամ նրանց պարտավորությունների համար պետությունը երաշխիքներ է տվել:

## 14. Կենտրոնական բանկը

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը Կենտրոնական բանկին անդրադառնում էր միայն Ազգային ժողովի կողմից Կենտրոնական բանկի նախագահի նշանակման և այդ կառույցի կարգավիճակին առնչվող առանձին բաղադրիչների կարգավորմամբ (հոդված 55, կետ 9, հոդված 83.3): Փոփոխված Սահմանադրության 14-րդ գլուխը հստակեցնում է Կենտրոնական բանկի սահմանադրաիրավական կարգավիճակը, նրա խնդիրները, ինչպես նաև ամրագրում է Կենտրոնական բանկի կազմակերպման և գործունեության երաշխիքները՝ դրանք համահունչ դարձնելով միջազգային չափանիշներին:

Սահմանադրության 200-րդ հոդվածի 1-ին մասով Կենտրոնական բանկի սահմանադրական ընդհանուր կարգավիճակը բնորոշվել է որպես Հայաստանի Հանրապետության ազգային բանկ: Այս եզրույթով ընդգծվում են Կենտրոնական բանկի կարգավիճակին բնորոշ մի շարք առանձնահատկություններ, որոնք

բխում են վերջինիս երկակի բնույթից. Կենտրոնական բանկը ոչ միայն դասական իմաստով հանրային իշխանությամբ օժտված մարմին է, այլև իրավաբանական անձի կարգավիճակով օժտված և որոշակի ֆինանսավարկային գործունեություն իրականացնող կազմակերպություն:

Սահմանադրության 200-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրվել է, որ Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են գների ու ֆինանսական կայունության ապահովումը: Այս դեպքում «ֆինանսական կայունության ապահովման» խնդիրը նորամուծություն է, որի հիմքում դրված է հատկապես 2008 թ. սկիզբ առած և հետագայում ձևավորված այն դոկտրինը, ըստ որի՝ ֆինանսական ճգնաժամերի կանխարգելման ու ֆինանսական կայունության ապահովման գործընթացում առանցքային դերակատարումը վերապահված է կենտրոնական բանկերին:

Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի ընտրության կարգը նման է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի և Հաշվեքննիչ պալատի ձևավորման կարգին, սակայն այն տարբերությամբ, որ Կենտրոնական բանկի խորհրդի անդամների ընտրության համար բավարար է պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությունը (հոդված 201, մաս 1):

## **15. Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն**

Փոփոխված Սահմանադրության 15-րդ գլուխը նվիրված է Սահմանադրության ընդունմանը, փոփոխությանը և հանրաքվեին: Այս գլխում կատարված փոփոխությունները

- հստակեցնում են Սահմանադրության ընդունման ու փոփոխության սահմանադրական հիմքերը, հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը,
- առավել ճկուն են դարձնում սահմանադրական փոփոխությունների գործընթացը՝ դրանում բարձրացնելով խորհրդարանի դերը,
- նախատեսում են քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեների անցկացում,
- սահմանում են վերաբեռնական միջազգային կազմակերպություններին միանալու վերաբերյալ հարցերով հանրաքվե անցկացնելու պահանջ:

Փոփոխված Սահմանադրությունը պահպանում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության այն պահանջը, ըստ որի՝ նոր Սահմանադրության ընդունումը հնարավոր է միայն հանրաքվեի միջոցով: Ինչ վերաբերում է Սահմանադրության փոփոխություններին, ապա 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը որդեգրել է տարբերակված մոտեցում: Սահմանադրական կարգի հիմունքների, մարդու իրավունքների և ազատությունների և առանցքային նշանակություն ունեցող այլ դրույթների փոփոխությունը, ըստ Սահմանադրության

202-րդ հոդվածի 1-ին մասի, կարող է կատարվել բացառապես հանրաքվեի միջոցով: Որպես նախաձեռնող սուբյեկտներ այդ հարցերով կարող են հանդես գալ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Եթե համապատասխան նախագիծն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, ապա այն պարտադիր կերպով դրվում է հանրաքվեի:

Ինչ վերաբերում է Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններին, ապա դրանք ընդունվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի: Եթե Ազգային ժողովում համապատասխան նախագիծը չի ստանում պատգամավորների ընդհանուր թվի երկու երրորդի աջակցությունը, ապա այն պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ կարող է դրվել հանրաքվեի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության անփոփոխ 1-ին հոդվածը հստակորեն ամրագրել է ինքնիշխանության սկզբունքը, և որ 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իշխանությունը պատկանում է ժողովրդին, Սահմանադրության 205-րդ հոդվածը սահմանում է, որ վերապետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և տարածքի փոփոխության հարցերը պետք է պարտադիր կերպով լուծվեն հանրաքվեի միջոցով:

Կարևորելով քաղաքացիական նախաձեռնությունների դերը՝ Սահմանադրության 204-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում, որ Ազգային ժողովի կողմից չընդունված քաղաքացիական նախաձեռնությունները հանրաքվեի դրվեն, եթե նման նախաձեռնությանը երկու ամսվա ընթացքում միանում է ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացի:

## **16. Եզրափակիչ և անցումային դրույթներ**

Սահմանադրության 16-րդ գլուխը բովանդակում է երկու տեսակի նորմատիվ դրույթներ՝ եզրափակիչ և անցումային:

Եզրափակիչ դրույթներով կարգավորվում են նոր խմբագրությամբ Սահմանադրության ուժի մեջ մտնելու ժամկետները: Փոփոխված Սահմանադրության տարբեր գլուխների և հոդվածների ուժի մեջ մտնելու համար՝ կախված դրանց կարգավորման առարկայից, Սահմանադրության 209-րդ հոդվածով սահմանված է հետևյալ ժամկետներից որևէ մեկը՝ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելու հաջորդ օրը (մաս 1), Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը (մաս 3),

նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման պահը (մաս 6) կամ սահմանվում է կոնկրետ ամսաթիվ (մասեր 4 և 5):

Այսպես, սահմանադրական կարգի հիմունքներին, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքներին և պետության քաղաքականության հիմնական նպատակներին, տեղական ինքնակառավարման մարմիններին, Մարդու իրավունքների պաշտպանին վերաբերող գլուխների ուժի մեջ մտնելու համար ժամկետ է նախատեսված «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելու հաջորդ օրը:

Պետության կառավարման համակարգին վերաբերող Սահմանադրության նախագծի 4-6-րդ գլուխների ուժի մեջ մտնելու համար նախատեսված են տարբերակված ժամկետներ: Մասնավորապես, Սահմանադրության 4-րդ գլխի այն դրույթները, որոնք վերաբերում են Ազգային ժողովի գործունեության ներքին կարգին, ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը: Մինչդեռ Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի փոխհարաբերություններին, Կառավարությանը, դատական իշխանությանը, դատախազությանը և քննչական մարմիններին և 12-14-րդ գլուխներով նախատեսված մարմիններին վերաբերող դրույթների ուժի մեջ մտնելու ժամկետը պայմանավորված է նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու պահով:

Սահմանադրության անցումային դրույթները մի կողմից ապահովում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նոր համակարգի փուլային անցումը, մյուս կողմից՝ նախատեսում են կոնկրետ ժամկետներ դրանց իրականացման համար: Ի տարբերություն եզրափակիչ դրույթների՝ անցումային դրույթներն ունեն ժամանակավոր բնույթ և իրացումից հետո կորցնում են իրենց կարգավորիչ նշանակությունը:

Այսպես, Սահմանադրության 210-րդ հոդվածը սահմանում է այն իրավական ակտերը, որոնցում Սահմանադրության ընդունման կապակցությամբ պետք է կատարվեն փոփոխություններ կամ ընդունվեն նոր ակտեր: Սահմանադրական նորմերի ուժի մեջ մտնելու կամ դրանց կենսագործման հետ անմիջականորեն պայմանավորված՝ 210-րդ հոդվածով սահմանվում են նաև սահմանադրական օրենքների և առանձին այլ օրենքների ուժի մեջ մտնելու տարբերակված հստակ ժամկետներ:

Սահմանադրության 211-220-րդ հոդվածները կարգավորում են 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հիման վրա նշանակված կամ ընտրված մի շարք պաշտոնատար անձանց պաշտոնավարման ժամկետների հետ կապված առանձնահատկությունները:

## **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ**

**Հոդված 1.** 1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ 2005 թվականի փոփոխություններով, շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

### **ԳԼՈՒԽ 1 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

**Հոդված 2.** Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

**Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները**

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:



3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

#### **Հոդված 4. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը**

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

#### **Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը**

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

#### **Հոդված 6. Օրինականության սկզբունքը**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

#### **Հոդված 7. Ընտրական իրավունքի սկզբունքները**

Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

#### **Հոդված 8. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը**

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը:

2. Կուսակցությունները կազմավորվում և գործում են ազատորեն: Կուսակցությունների համար օրենքով երաշխավորվում են գործունեության հավասար իրավական հնարավորություններ:

3. Կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:

4. Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին:

### **Հոդված 9. Տեղական ինքնակառավարման երաշխավորումը**

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը:

### **Հոդված 10. Սեփականության երաշխավորումը**

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

### **Հոդված 11. Տնտեսական կարգը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

### **Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**

1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

### **Հոդված 13. Արտաքին քաղաքականությունը**

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

### **Հոդված 14. Զինված ուժերը և պաշտպանությունը**

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են:

3. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

**Հոդված 15. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը**

1. Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը:  
2. Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

**Հոդված 16. Ընտանիքի պաշտպանությունը**

Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

**Հոդված 17. Պետությունը և կրոնական կազմակերպությունները**

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:  
2. Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:

**Հոդված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին**

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

**Հոդված 19. Հայկական սփյուռքի հետ կապերը**

1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:

2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

**Հոդված 20. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն**

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

### **Հողված 21. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերը**

1. Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով:

2. Հայաստանի Հանրապետության զինանշանն է. կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

3. Դրոշի և զինանշանի մանրամասն նկարագրությունը սահմանվում է օրենքով:

4. Հայաստանի Հանրապետության օրհներգը սահմանվում է օրենքով:

### **Հողված 22. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը**

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է:

## **ԳԼՈՒԽ 2**

### **ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **Հողված 23. Մարդու արժանապատվությունը**

Մարդու արժանապատվությունն անխախտելի է:

### **Հողված 24. Կյանքի իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:

2. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

### **Հողված 25. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:

2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

4. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

## **Հողված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը**

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

## **Հողված 27. Անձնական ազատությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

6. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

### **Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը**

Բոլորը հավասար են օրենքի առջև:

### **Հոդված 29. Խտրականության արգելքը**

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

### **Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը**

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

### **Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

### **Հոդված 32. Բնակարանի անձեռնմխելիությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր:

### **Հողված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

### **Հողված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:

### **Հողված 35. Ամուսնանալու ազատությունը**

1. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:

2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:

3. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:

### **Հողված 36. Ծնողների իրավունքները և պարտականությունները**

1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:

3. Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

### **Հողված 37. Երեխայի իրավունքները**

1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:

4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:

### **Հողված 38. Կրթության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

### **Հողված 39. Մարդու ազատ գործելու իրավունքը**

Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:



#### **Հողված 40. Ազատ տեղաշարժվելու իրավունքը**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

#### **Հողված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:

4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

#### **Հողված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

#### **Հոդված 43. Ստեղծագործության ազատությունը**

Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:

#### **Հոդված 44. Հավաքների ազատությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

2. Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:

3. Օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

4. Հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

5. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

#### **Հոդված 45. Միավորումների ազատությունը**

1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

2. Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

3. Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և

բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ:

#### **Հոդված 46. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը**

1. Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության:

2. Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ: Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:

3. Կուսակցությունները տարեկան հաշվետվություններ են հրապարակում իրենց ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև իրենց գույքի մասին:

4. Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ:

#### **Հոդված 47. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

2. Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

4. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից: Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

6. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը, ինչպես նաև դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:

7. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև 5-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:

#### **Հոդված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը**

1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:

2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

#### **Հոդված 49. Հանրային ծառայության անցնելու իրավունքը**

Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 50. Պատշաճ վարչարարության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

### **Հոդված 51. Տեղեկություններ ստանալու իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:

### **Հոդված 52. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը**

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 53. Հանրագիր ներկայացնելու իրավունքը**

Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 54. Քաղաքական ապաստանի իրավունքը**

Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք: Քաղաքական ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 55. Արտաքսման կամ հանձնման արգելքը**

1. Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

### **Հոդված 56. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք:

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

3. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացումը կարգավորվում է օրենքով:

### **Հոդված 57. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները**

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

3. Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին ունի հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունք: Յուրաքանչյուր աշխատող ծնող երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում ունի արձակուրդի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

4. Մինչև տասնվեց տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

5. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է: Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝

1) այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը.

2) գինվորական կամ այլընտրանքային ծառայությունը.

3) յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ:

### **Հոդված 58. Գործադուլի իրավունքը**

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Գործադուլի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

2. Գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

### **Հոդված 59. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը**

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

### **Հոդված 60. Սեփականության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

**Հողված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

**Հողված 62. Վնասի հատուցման իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

**Հողված 63. Արդար դատաքննության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դժնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

**Հողված 64. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբաններ



րի կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 65. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը**

Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

### **Հոդված 66. Անմեղության կանխավարկածը**

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

### **Հոդված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը**

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.

3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.

5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին:

### **Հոդված 68. Կրկին դատվելու արգելքը**

1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:

### **Հոդված 69. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը**

Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք:

### **Հոդված 70. Ներման խնդրանքի իրավունքը**

Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման, ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 71. Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը**

1. Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:
2. Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

### **Հոդված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը**

Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

### **Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը**

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:
2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

### **Հոդված 74. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ**

Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությանմբ կիրառելի են դրանց նկատմամբ:

### **Հոդված 75. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը**

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

**Հողված 76. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ**

Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

**Հողված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը**

Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնականատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

**Հողված 78. Համաչափության սկզբունքը**

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

**Հողված 79. Որոշակիության սկզբունքը**

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

**Հողված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը**

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

**Հողված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան**

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

**ԳԼՈՒԽ 3**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ  
ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

**Հողված 82. Աշխատանքային պայմանները**

Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

**Հողված 83. Սոցիալական ապահովությունը**

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

**Հողված 84. Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը**

1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:

**Հողված 85. Առողջության պահպանությունը**

1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

2. Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

### **Հողված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները**

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

- 1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.
- 2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.
- 3) բնակարանային շինարարության խթանումը.
- 4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.
- 5) ծնելիության և բազմազավակության խթանումը.
- 6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.
- 7) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
- 8) հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.
- 9) սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը.
- 10) տարածքային համաչափ զարգացումը.
- 11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.
- 12) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը.
- 13) անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը.
- 14) հիմնարար և կիրառական գիտության զարգացումը.
- 15) ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը.
- 16) բարեգործության խթանումը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

### **Հողված 87. Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները:
2. Կառավարությունը Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ:

## **ԳԼՈՒԽ 4**

### **ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ**

#### **Հոդված 88. Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները**

1. Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է:
2. Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը:
3. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:
4. Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:
5. Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան:

#### **Հոդված 89. Ազգային ժողովի կազմը և ընտրության կարգը**

1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:
2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:
3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

#### **Հոդված 90. Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը**

1. Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով:
2. Հերթական ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նախորդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:
3. Եթե մինչև գործող Ազգային ժողովի լիազորությունների ավարտը նորընտիր Ազգային ժողով չի կազմավորվում, ապա գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:
4. Եթե ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի ընտրությունն անցկացվել է Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ապա գործող Ազգային ժողովի լիազորությունների

ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:

5. Արտահերթ ընտրության դեպքում գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:

6. Ազգային ժողովի կազմավորված լինելը հավաստվում է Ընտրական օրենսգրքին համապատասխան:

### **Հոդված 91. Ազգային ժողովի հերթական ընտրությունը**

1. Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ շուտ, քան վաթսուն, և ոչ ուշ, քան հիսուն օր առաջ:

2. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում: Այս դեպքում Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:

### **Հոդված 92. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունը**

1. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով, 151-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերում Ազգային ժողովի արձակվելուց հետո:

2. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի արձակվելուց ոչ շուտ, քան երեսուն, և ոչ ուշ, քան քառասունհինգ օր հետո:

### **Հոդված 93. Ազգային ժողովի ընտրությունների նշանակումը**

Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունները նշանակում է Հանրապետության նախագահը:

### **Հոդված 94. Ներկայացուցչական մանդատը**

Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

### **Հոդված 95. Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունը**

Պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

### **Հողված 96. Պատգամավորի անձեռնմխելիությունը**

1. Պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար:

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

### **Հողված 97. Պատգամավորի վարձատրության չափը և գործունեության այլ երաշխիքները**

Պատգամավորի վարձատրության չափը և գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով:

### **Հողված 98. Պատգամավորի լիազորությունների դադարումը և դադարեցումը**

1. Պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրան ազատազրկման դատապարտելու վերաբերյալ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

2. Պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու, ինչպես նաև Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքերում:

### **Հողված 99. Ազգային ժողովի հերթական նստաշրջանները**

Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ՝ հունվարի երրորդ երկուշաբթիից մինչև հունիսի երրորդ հինգշաբթին և սեպտեմբերի երկրորդ երկուշաբթիից մինչև դեկտեմբերի երրորդ հինգշաբթին:

### **Հողված 100. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը և նիստը**

1. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի կամ Կառավարության նախաձեռնությամբ:



2. Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

### **Հոդված 101. Ազգային ժողովի նիստերի հրապարակայնությունը**

1. Ազգային ժողովի նիստերը հրապարակային են:

2. Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կամ Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, անցկացնում է փակ նիստ: Փակ նիստում քվեարկությունն արգելված է:

### **Հոդված 102. Ազգային ժողովի նիստերի իրավազորությունը**

Ազգային ժողովի նիստն իրավազոր է, եթե նիստի սկզբում գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

### **Հոդված 103. Օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունումը**

1. Օրենքները, Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

2. Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

3. Սահմանադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ:

4. Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:

### **Հոդված 104. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները և Ազգային ժողովի խորհուրդը**

1. Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ և նրա երեք տեղակալ: Տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալներն ընտրվում և հետ են կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

3. Ազգային ժողովում ձևավորվում է Ազգային ժողովի խորհուրդ, որը կազմված է Ազգային ժողովի նախագահից, նրա տեղակալներից, խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից և մշտական հանձնաժողովների նախագահներից: Ազգային ժողովի խորհուրդը հաստատում է հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը, ինչպես նաև իրականացնում է Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

### **Հոդված 105. Ազգային ժողովի խմբակցությունները**

1. Խմբակցությունները նպաստում են Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը:

2. Խմբակցության մեջ ընդգրկվում են միայն միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորները:

### **Հոդված 106. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները**

1. Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ: Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով:

2. Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

### **Հոդված 107. Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովները**

Առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:

### **Հոդված 108. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովները**

1. Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:

2. Քննիչ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը: Քննիչ հանձնաժողովում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը:

3. Քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են հանձնաժողովին տրամադրել հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ:

4. Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով:

5. Քննիչ հանձնաժողովների գործունեության մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:

### **Հոդված 109. Օրենսդրական նախաձեռնությունը**

1. Օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորը, Ազգային ժողովի խմբակցությունը և Կառավարությունը:

2. Օրենսդրական նախաձեռնության հեղինակը կարող է ցանկացած ժամանակ հետ կանչել իր ներկայացրած օրենքի նախագիծը:

3. Եթե Կառավարության եզրակացության համաձայն՝ օրենքի նախագիծն էականորեն նվազեցնում է պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնում պետության ծախսերը, ապա Կառավարության պահանջով այդ օրենքը կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4. Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծն ընդունվում կամ մերժվում է երկամսյա ժամկետում:

5. Այն օրենքների նախագծերը, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը, քվեարկության կարող են դրվել միայն Կառավարության համար ընդունելի ուղղումներով:

6. Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:

### **Հոդված 110. Պետական բյուջեի ընդունումը**

1. Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ: Պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը:

2. Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ:

3. Պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը: Այդ ժամկետում պետական բյուջեն չընդունվելու դեպքում, մինչև պետական բյուջեի ընդունումը, ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

### **Հոդված 111. Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը**

1. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

2. Ազգային ժողովը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, քննարկում և որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ:

### **Հոդված 112. Պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը**

1. Հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում:

2. Պատգամավորներն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու իրավունք: Գրավոր հարցերի պատասխաններն Ազգային ժողովի նիստում չեն ներկայացվում:

### **Հոդված 113. Հարցապնդումները**

1. Ազգային ժողովի խմբակցություններն ունեն Կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք: Կառավարության անդամները հարցապնդմանը պատասխանում են այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում:

2. Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկությամբ հարցապնդման պատասխանը քննարկվում է: Եթե քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից ներկայացվում է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, ապա կիրառվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի դրույթները: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:

### **Հոդված 114. Հրատապ թեմայով քննարկումները**

Հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պա-

հանջով կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ:

### **Հոդված 115. Վարչապետին անվստահություն հայտնելը**

1. Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը միայն այն դեպքում, եթե որոշման նախագծով միաժամանակ առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու:

2. Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասունութ, և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամ հետո: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Որոշման ընդունման դեպքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել: Այս դեպքում Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-4-րդ մասերի դրույթները կիրառելի չեն:

3. Վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո: Եթե վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

4. Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել:

### **Հոդված 116. Միջազգային պայմանագրեր վավերացնելը, կասեցնելը և չեղյալ հայտարարելը**

1. Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը՝

1) որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին.

2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ.

3) որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը.

4) որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ.

5) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր.

6) որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում.

7) որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր:

2. Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, միջազգային պայմանագրերը վավերացնում, կասեցնում և չեղյալ է հայտարարում օրենքով՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ:

3. Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

### **Հոդված 117. Համաներումը**

Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել համաներման մասին օրենք:

### **Հոդված 118. Պատերազմի հայտարարումը և խաղաղության հաստատումը**

1. Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում:

2. Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Կառավարությունը:

### **Հոդված 119. Ռազմական դրությունը**

1. Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:

2. Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

3. Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:

4. Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

### **Հոդված 120. Արտակարգ դրությունը**

1. Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

2. Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

3. Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:

4. Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

### **Հողված 121. Վարչատարածքային միավորները և բաժանումը**

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Վարչատարածքային բաժանումը, Կառավարության ներկայացմամբ, սահմանվում է օրենքով:

### **Հողված 122. Ինքնավար մարմինները**

1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ:

2. Ինքնավար մարմինների անդամները նշանակվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Ինքնավար մարմիններին օրենքով կարող է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն:

4. Ինքնավար մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

## **ԳԼՈՒԽ 5**

### **ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ**

### **Հողված 123. Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները**

1. Հանրապետության նախագահը պետության գլուխն է:

2. Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը:

3. Հանրապետության նախագահն իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է և առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով:

4. Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով:

### **Հողված 124. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջները**

1. Հանրապետության նախագահն ընտրվում է յոթ տարի ժամկետով:

2. Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտա-

պես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

3. Նույն անձը Հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

4. Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք:

5. Հանրապետության նախագահին իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

### **Հոդված 125. Հանրապետության նախագահի ընտրության կարգը**

1. Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից:

2. Հանրապետության նախագահի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

3. Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

4. Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Երկրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

5. Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա տասնօրյա ժամկետում անցկացվում է Հանրապետության նախագահի նոր ընտրություն:

6. Հանրապետության նախագահի ընտրության կարգի մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:

### **Հոդված 126. Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունը**

Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց ոչ շուտ, քան քսանհինգ, և ոչ ուշ, քան երեսունհինգ օր հետո անցկացվում է Հանրապետության նախագահի արտահերթ ընտրություն:



### **Հողված 127. Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը**

1. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Հանրապետության նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը:

2. Արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո՝ տասներորդ օրը:

3. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով և իմ ողջ ուժը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում»:

### **Հողված 128. Հանրապետության նախագահի ուղերձը**

Հանրապետության նախագահն իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ կարող է ուղերձ հղել Ազգային ժողովին:

### **Հողված 129. Օրենքի ստորագրումը և հրապարակումը**

1. Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահն ստորագրում և հրապարակում է քաննակետային ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով:

2. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:

3. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:

### **Հողված 130. Կառավարության հրաժարականի ընդունումը**

Սահմանադրության 158-րդ հոդվածով սահմանված դեպքերում Հանրապետության նախագահն անհապաղ ընդունում է Կառավարության հրաժարականը:

### **Հողված 131. Փոփոխություններ Կառավարության կազմում**

Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:

**Հոդված 132. Հանրապետության նախագահի լիազորություններն արտաքին քաղաքականության բնագավառում**

1. Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) Կառավարության առաջարկությամբ կնքում է միջազգային պայմանագրեր.

2) վարչապետի առաջարկությամբ նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին.

3) ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը:

2. Հանրապետության նախագահը, Կառավարության առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:

3. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է բարձրագույն դիվանագիտական աստիճաններ:

**Հոդված 133. Հանրապետության նախագահի լիազորությունները զինված ուժերի բնագավառում**

1. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը:

2. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ:

**Հոդված 134. Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը**

Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:

**Հոդված 135. Ներում շնորհելը**

Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը:

**Հոդված 136. Պարգևատրումը և պատվավոր կոչումների շնորհումը**

Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում է պատվավոր կոչումներ:

### **Հողված 137. Բարձրագույն դասային աստիճանների շնորհումը**

Հանրապետության նախագահին օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է բարձրագույն դասային աստիճաններ:

### **Հողված 138. Պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը**

Եթե Ազգային ժողովը եռամսյա ժամկետում Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 192-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 2-րդ մասով, 197-րդ հոդվածի 2-րդ մասով, 199-րդ հոդվածի 2-րդ մասով և 201-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձանց, ապա մինչև Ազգային ժողովի կողմից նրանց ընտրությունը Հանրապետության նախագահին օրենքով սահմանված հիմքերով և կարգով նշանակում է ժամանակավոր պաշտոնակատարներ:

### **Հողված 139. Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները**

1. Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ:

2. Հանրապետության նախագահը Սահմանադրության 131-137-րդ հոդվածներով, 155-րդ հոդվածի 3-րդ մասով, 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

3. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

### **Հողված 140. Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը**

1. Հանրապետության նախագահն անձեռնմխելի է:

2. Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:

3. Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն իր լիազորությունների ավարտից հետո:

### **Հողված 141. Հանրապետության նախագահի պաշտոնանկությունը**

1. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:

2. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան:

3. Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

#### **Հոդված 142. Հանրապետության նախագահի հրաժարականը**

Հանրապետության նախագահին իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը համարվում է ընդունված օրենքով սահմանված կարգով այն հրապարակելու պահից:

#### **Հոդված 143. Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինությունը**

Հանրապետության նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տևականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը, Սահմանադրական դատարանը Կառավարության դիմումի հիման վրա որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին:

#### **Հոդված 144. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամանակավոր կատարումը**

Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը:

#### **Հոդված 145. Հանրապետության նախագահի գործունեության ապահովումը**

1. Հանրապետության նախագահի աշխատակազմի ձևավորման կարգը սահմանվում է օրենքով: Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Հանրապետության նախագահի աշխատակազմի պաշտոններում:

2. Հանրապետության նախագահի վարձատրության չափը, սպասարկման և անվտանգության ապահովման կարգը սահմանվում են օրենքով:

## **ԳԼՈՒԽ 6**

### **ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Հոդված 146. Կառավարության կարգավիճակը և գործառույթները**

1. Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է:
2. Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:
3. Կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը:
4. Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Կառավարության իրավասությանն են ենթակա գործադիր իշխանությանը վերաբերող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների:

#### **Հոդված 147. Կառավարության կազմը և կառուցվածքը**

1. Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:
2. Նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով: Փոխվարչապետների թիվը չի կարող գերազանցել երեքը, իսկ նախարարներինը՝ տասնուօր:

#### **Հոդված 148. Կառավարության անդամին ներկայացվող պահանջները**

1. Կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները:
2. Կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրա համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

#### **Հոդված 149. Վարչապետի ընտրությունը և նշանակումը**

1. Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին:
2. Վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ճայների մեծամասնությամբ:
3. Վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վար-

չապետի թեկնածուները: Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

4. Վարչապետի ընտրությունն անցկացվում է անվանական քվեարկությամբ:

5. Հանրապետության նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին:

### **Հոդված 150. Կառավարության կազմավորումը**

Կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Իր նշանակումից հետո վարչապետը հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին առաջարկում է փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին: Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանը դիմումը քննում և որոշում է կայացնում հնգօրյա ժամկետում: Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով:

### **Հոդված 151. Կառավարության ծրագիրը**

1. Կառավարության կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, վարչապետն Ազգային ժողով է ներկայացնում Կառավարության ծրագիրը:

2. Ազգային ժողովը Կառավարության ծրագրին հավանություն է տալիս յոթնօրյա ժամկետում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Եթե Ազգային ժողովը հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին և Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան չի ընտրում նոր վարչապետ, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Եթե Ազգային ժողովն ընտրում է վարչապետին, սակայն կրկին հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասը չի տարածվում Սահմանադրության 115-րդ հոդվածին համապատասխան կազմավորված Կառավարության ծրագրի վրա: Եթե այդ Կառավարության ծրագիրը հավանության չի արժանանում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

### **Հոդված 152. Վարչապետի և Կառավարության մյուս անդամների իրավասությունները**

1. Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության ան-

դամների աշխատանքը: Վարչապետը կարող է Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

2. Փոխվարչապետները վարչապետի հանձնարարությամբ իրականացնում են Կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը: Փոխվարչապետներից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ:

3. Յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը:

4. Կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

### **Հոդված 153. Կառավարության նիստերը և որոշումները**

1. Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը:

2. Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը:

3. Կառավարությունն իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

### **Հոդված 154. Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը**

1. Կառավարությունն իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականություն:

2. Կառավարությունը կառավարում է պետական սեփականությունը:

### **Հոդված 155. Զինված ուժերը**

1. Զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են: Զինված ուժերի կիրառման մասին որոշումն ընդունում է Կառավարությունը: Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման մասին որոշումը, պաշտպանության նախարարի առաջարկությամբ, կայացնում է վարչապետը և այդ մասին անհապաղ տեղեկացնում Կառավարության անդամներին:

2. Պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը: Պաշտպանության նախարարն այդ հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է զինված ուժերի ղեկավարումը:

3. Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով: Ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին:

4. Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է:

5. Զինված ուժերի ենթակայության, ղեկավարման, ինչպես նաև այլ մանրա-

մասներ սահմանվում են օրենքով:

### **Հոդված 156. Կառավարության տարեկան զեկույցն Ազգային ժողովին**

Յուրաքանչյուր տարվա համար Կառավարությունը զեկույց է ներկայացնում Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին:

### **Հոդված 157. Կառավարության վստահության հարցը**

1. Կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ:

2. Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծն ընդունվելու դեպքում Կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված:

3. Կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վստահության հարցը նույն նստաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ:

4. Կառավարությունը սահմանադրական օրենքի նախագծի ընդունման առնչությամբ չի կարող դնել իր վստահության հարցը:

5. Կառավարությունը չի կարող դնել իր վստահության հարցը ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

### **Հոդված 158. Կառավարության հրաժարականը**

Կառավարությունը Հանրապետության նախագահին ներկայացնում է իր հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի, Կառավարությանը վստահություն չհայտնելու, Կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր Կառավարության կազմավորումը:

### **Հոդված 159. Պետական կառավարման համակարգի մարմինները**

Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով:



### **Հողված 160. Կառավարության տարածքային քաղաքականության իրագործումը**

1. Կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով:

2. Մարզպետներին նշանակում և ազատում է Կառավարությունը: Մարզպետները համակարգում են պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

3. Երևանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

### **Հողված 161. Հանրային խորհուրդը**

Հանրային խորհուրդը Կառավարության խորհրդակցական մարմին է: Հանրային խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

## **ԳԼՈՒԽ 7**

### **ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

### **Հողված 162. Արդարադատության իրականացումը**

1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

### **Հողված 163. Դատարանները**

1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

2. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

### **Հողված 164. Դատավորի կարգավիճակը**

1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

3. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:

4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

6. Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

7. Դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ:

8. Դատավորի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա հրաժարականի, մահվան դեպքերում:

9. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիու-

թյան պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում:

10. Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:

11. Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

### **Հոդված 165. Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները**

1. Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

2. Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է նշանակվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

3. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

4. Դատավորների թեկնածուները պետք է տիրապետեն հայերենին:

5. Դատավորների թեկնածուների համար Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

### **Հոդված 166. Դատավորների ընտրության և նշանակման կարգը**

1. Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորներ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

2. Սահմանադրական դատարանն իր կազմից՝ վեց տարի ժամկետով, ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի:

3. Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից:

4. Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ:

5. Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

6. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

7. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, երեք տարի ժամկետով: Դատարանի նախագահին իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:

8. Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսուհինգ, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուն տարին լրանալը:

9. Դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

### **Հոդված 167. Սահմանադրական դատարանը**

1. Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

2. Արդարադատություն իրականացնելիս Սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը:

3. Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

### **Հողված 168. Սահմանադրական դատարանի լիազորությունները**

Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

4) լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը.

5) լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

6) որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ.

7) եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

8) որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին.

9) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

10) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը.

11) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

12) օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ:

### **Հողված 169. Սահմանադրական դատարան դիմելը**

1. Սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված դեպքերում, Սահմանադրության 168-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ

ընդունված որոշմամբ, իսկ Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ.

2) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ կետերով սահմանված դեպքերում.

3) Ազգային ժողովի խմբակցությունը՝ հանրաքվեի և Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

4) Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով, 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 150-րդ հոդվածով, ինչպես նաև 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում.

5) Կառավարությունը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ և 12-րդ կետերով սահմանված դեպքերում.

6) Բարձրագույն դատական խորհուրդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում.

7) տեղական ինքնակառավարման մարմինները՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով, ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում.

8) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը.

9) գլխավոր դատախազը՝ դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված դեպքում.

10) Մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

11) Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

12) Հանրապետության նախագահի թեկնածուները՝ Հանրապետության նախագահի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

13) Սահմանադրական դատարանի առնվազն երեք դատավոր՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված դեպքում:

2. Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխությանը, վերաբեռական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով: Քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը:

3. Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը:

4. Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ սովյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

5. Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովի խորհուրդը:

6. Սահմանադրական դատարան դիմելու կարգի մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

7. Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

### **Հոդված 170. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները**

1. Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ:

2. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

3. Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

4. Սահմանադրական դատարանը Սահմանադրության 168-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ, բացառությամբ 7-րդ կետով նախատեսված հարցի, ընդունում է որոշումներ, իսկ 168-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված հարցով՝ եզրակացություն:

5. Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ կետերով նախատեսված հարցերով որոշումները, ինչպես նաև եզրակացություններն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առ-

նվազն երկու երրորդով, մյուս որոշումները՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Եթե Սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից:

### **Հոդված 171. Վճռաբեկ դատարանը**

1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

### **Հոդված 172. Վերաքննիչ դատարանները**

Վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են:

### **Հոդված 173. Բարձրագույն դատական խորհուրդը**

Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

### **Հոդված 174. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը**

1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից:

2. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ:

3. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:



4. Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

5. Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության պահանջներ:

6. Դատական օրենսգրքով կարող է սահմանվել Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ:

7. Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

8. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման մանրամասները սահմանվում են Դատական օրենսգրքով:

### **Հոդված 175. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները**

1. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.

3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

5) լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

8) լուծում է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը.

9) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

10) օրենքին համապատասխան ձևավորում է իր աշխատակազմը:

2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված

այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

3. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

4. Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով:

## ԳԼՈՒԽ 8

### ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

#### **Հոդված 176. Դատախազությունը**

1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

#### **Հոդված 177. Գլխավոր դատախազը**

1. Գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ:

2. Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

3. Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

**Հոդված 178. Քննչական մարմինները**

1. Քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը:

2. Քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

**ԳԼՈՒԽ 9**

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

**Հոդված 179. Տեղական ինքնակառավարման իրավունքը**

1. Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

2. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

**Հոդված 180. Համայնքը**

1. Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է:

2. Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

**Հոդված 181. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները**

1. Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Համայնքի ղեկավարի ուղղակի ընտրության դեպքում կիրառվում են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Ընտրական օրենսգրքով:

**Հոդված 182. Համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները**

1. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր

խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով:

2. Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում:

4. Համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը: Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև:

5. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 183. Համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունը**

1. Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:

2. Տեղական հանրաքվեի անցկացման կարգը, ինչպես նաև համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 184. Համայնքի սեփականությունը**

1. Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

2. Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:

3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:

### **Հոդված 185. Համայնքի բյուջեն, տեղական հարկերը, տուրքերը և վճարները**

1. Համայնքն ունի իր բյուջեն, որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է համայնքի ավագանին:

2. Համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակներում սահմանում է տեղական հարկեր և տուրքեր:

4. Համայնքի ավագանին կարող է համայնքի մատուցած ծառայությունների համար սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ:

#### **Հոդված 186. Համայնքի ֆինանսավորումը**

1. Համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանվում են հարկային և ոչ հարկային այնպիսի աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների իրականացումն ապահովելու համար:

2. Համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

3. Պետությունն իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:

#### **Հոդված 187. Տեղական ինքնակառավարումը Երևանում**

Երևանը համայնք է: Երևանում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

#### **Հոդված 188. Իրավական և մասնագիտական հսկողությունը**

1. Համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն:

2. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական և մասնագիտական հսկողություն:

#### **Հոդված 189. Միջհամայնքային միավորումները**

1. Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են ստեղծել միջհամայնքային միավորումներ: Հանրային շահերից ելնելով՝ միջհամայնքային միավորումներ կարող են ստեղծվել նաև օրենքով՝ Կառավարության առաջարկությամբ:

2. Միջհամայնքային միավորումը կարող է իրականացնել միայն այնպիսի լիազորություններ, որոնք նրան վերապահված են օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով:

3. Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

#### **Հոդված 190. Համայնքների միավորումը և բաժանումը**

Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:

**ԳԼՈՒԽ 10**  
**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ**

**Հոդված 191. Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները և լիազորությունները**

1. Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

2. Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Հաղորդումը կարող է պարունակել օրենսդրական կամ այլ բնույթի միջոցառումների վերաբերյալ առաջարկներ:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:

4. Մարդու իրավունքների պաշտպանի այլ լիազորությունները սահմանվում են Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով:

**Հոդված 192. Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը**

1. Մարդու իրավունքների պաշտպանին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

2. Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:

**Հոդված 193. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները**

1. Մարդու իրավունքների պաշտպանի վրա տարածվում է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիության իրավունքը: Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը Ազգային ժողովը լուծում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

2. Մարդու իրավունքների պաշտպանի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

3. Մարդու իրավունքների պաշտպանն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նա պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն:

4. Պետությունն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը:

5. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները դադարում են նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

6. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այլ երաշխիքները սահմանվում են Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով:

## ԳԼՈՒԽ 11

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԸ

#### **Հոդված 194. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթները, լիազորությունները և ընտրական հանձնաժողովների համակարգը**

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

2. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության մասին:

4. Ընտրական հանձնաժողովների համակարգը, ընտրական հանձնաժողովների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը, գործունեության երաշխիքները սահմանվում են Ընտրական օրենսգրքով:

**Հոդված 195. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը**

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է յոթ անդամից:
2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ներառյալ հանձնաժողովի նախագահ:
3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք:
4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:
5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:
6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

**ԳԼՈՒԽ 12**

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ**

**Հոդված 196. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները**

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:
2. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակային և մրցութային կարգով հատկացնում է եթերային հաճախություններ:
3. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում տեղեկատվա-



կան, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման նկատմամբ:

4. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, հեռուստատեսությունում և ռադիոյում տեղեկատվության ազատության վիճակի մասին:

5. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

6. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:

### **Հոդված 197. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը**

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը կազմված է յոթ անդամից:

2. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ, ներառյալ հանձնաժողովի նախագահ:

3. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք, որը զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ է: Հանձնաժողովի անդամների նկատմամբ օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

4. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

5. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

**ԳԼՈՒԽ 13**  
**ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԸ**

**Հոդված 198. Հաշվեքննիչ պալատի գործառույթները և լիազորությունները**

1. Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ: Հաշվեքննիչ պալատն իրավաբանական անձանց մոտ ստուգումներ կատարելու իրավունք ունի միայն օրենքով սահմանված դեպքերում:

2. Հաշվեքննիչ պալատը գործում է իր հաստատած գործունեության ծրագրի հիման վրա:

3. Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողով է ներկայացնում՝

1) տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ.

2) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը.

3) օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ:

4. Հաշվեքննիչ պալատի լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:

**Հոդված 199. Հաշվեքննիչ պալատի կազմը և կազմավորման կարգը**

1. Հաշվեքննիչ պալատը կազմված է յոթ անդամից:

2. Հաշվեքննիչ պալատի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ պալատի նախագահ:

3. Հաշվեքննիչ պալատի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք: Հաշվեքննիչ պալատի անդամների նկատմամբ օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

4. Հաշվեքննիչ պալատի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

5. Հաշվեքննիչ պալատի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները դադարեցնում է

Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

## **ԳԼՈՒԽ 14**

### **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ**

#### **Հոդված 200. Կենտրոնական բանկի հիմնական նպատակները և գործառույթները**

1. Հայաստանի Հանրապետության ազգային բանկը Կենտրոնական բանկն է: Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս անկախ է:

2. Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են գների և ֆինանսական կայունության ապահովումը:

3. Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

4. Կենտրոնական բանկը թողարկում է Հայաստանի Հանրապետության արժույթը՝ հայկական դրամը:

5. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Կենտրոնական բանկն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

6. Կենտրոնական բանկը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության վերաբերյալ:

7. Կենտրոնական բանկի այլ նպատակները, խնդիրները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:

#### **Հոդված 201. Կենտրոնական բանկի նախագահը և խորհուրդը**

1. Կենտրոնական բանկի խորհուրդը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նրա երկու տեղակալից և հինգ անդամից: Կենտրոնական բանկի նախագահին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական բանկի նախագահ: Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով:

2. Կենտրոնական բանկի խորհրդի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք: Կենտրոնական բանկի խորհրդի անդամների նկատմամբ օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

3. Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի մյուս անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության

պահանջները: Կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի մյուս անդամներն իրավունք ունեն առևտրային կազմակերպություններում և հիմնադրամներում զբաղեցնելու իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոններ:

4. Կենտրոնական բանկի խորհրդի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Կենտրոնական բանկի նախագահի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, իսկ մյուս անդամներինը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալների և խորհրդի անդամների լիազորությունները սահմանվում են օրենքով:

## **ԳԼՈՒԽ 15**

### **ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՔԿԵՆ**

#### **Հոդված 202. Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը**

1. Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածների, Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա պատգա-

մավորների ընդհանուր թվի ճայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:

### **Հոդված 203. Սահմանադրության անփոփոխելի հոդվածները**

Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն:

### **Հոդված 204. Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հանրաքվեն**

1. Եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով: Նման փոփոխություն կարող է կատարվել համապատասխան օրենքի ընդունումից առնվազն մեկ տարի հետո:

3. Հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև Հանրաքվեի մասին օրենքով սահմանված այլ հարցերի:

### **Հոդված 205. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և տարածքի փոփոխության հարցերով հանրաքվեները**

1. Վերպետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումը Կառավարության առաջարկությամբ ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ճայների մեծամասնությամբ:

### **Հոդված 206. Հանրաքվեի նշանակումը**

Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրու-

թյանը համապատասխանության մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե: Հանրաքվեն անցկացվում է հանրաքվե նշանակվելուց ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:

#### **Հոդված 207. Հանրաքվեի դրված ակտի ընդունումը**

Հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը:

#### **Հոդված 208. Հանրաքվե անցկացնելու արգելքը**

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում:

### **ԳԼՈՒԽ 16**

#### **ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### **Հոդված 209. Սահմանադրության առանձին դրույթների ուժի մեջ մտնելը**

1. Սահմանադրության 1-3-րդ գլուխները, 103-րդ հոդվածի 2-րդ մասը, 9-րդ գլուխը, բացառությամբ 182-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասության դրույթի, ինչպես նաև 10-րդ գլուխն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» Սահմանադրության փոփոխությունները հրապարակվելու հաջորդ օրվանից:

2. 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 4-րդ գլխի դրույթները, բացառությամբ 83.5-րդ հոդվածի, գործում են մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:

3. Սահմանադրության 88-րդ հոդվածի, 90-102-րդ հոդվածների, 103-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի, 104-107-րդ, 109-112-րդ հոդվածների, 113-րդ հոդվածի 1-ին մասի, 114-րդ, 116-րդ և 121-րդ հոդվածների դրույթներն ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից: Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից սկսած մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնումը շարունակում են գործել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված համապատասխան հոդվածների դրույթները:

4. Սահմանադրության 89-րդ հոդվածը, ինչպես նաև Սահմանադրության 11-րդ գլուխն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունիսի 1-ից:

5. Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասության դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

6. Սահմանադրության 108-րդ հոդվածի, 113-րդ հոդվածի 2-րդ մասի, 115-րդ, 117-120-րդ, 122-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև 5-8-րդ, 12-15-րդ գլուխներն ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: Մինչ այդ շարունակում են գործել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները:

### **Հոդված 210. Օրենքների համապատասխանեցումը Սահմանադրության փոփոխություններին**

1. Ընտրական օրենսգիրքը համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունիսի 1-ից:

2. Ազգային ժողովի կանոնակարգը, Կուսակցությունների մասին սահմանադրական օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքը համապատասխանեցվում են Սահմանադրությանը և ուժի մեջ են մտնում մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:

3. Այլ սահմանադրական օրենքները համապատասխանեցվում են Սահմանադրությանը և ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

4. Տեղական ինքնակառավարման մասին օրենքը համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

5. Դատախազության, Հեռուստատեսության և ռադիոյի, Հաշվեքննիչ պալատի և Կենտրոնական բանկի մասին օրենքները համապատասխանեցվում են Սահմանադրությանը և ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

### **Հոդված 211. Հանրապետության նախագահի ընտրության ժամկետը**

Սահմանադրության 125-րդ հոդվածով սահմանված կարգով Հանրապետության նախագահի առաջին ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ: Հանրապետության նախագահի ընտրության երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում առավել ձայներ ստացած թեկնածուն:

### **Հոդված 212. Կառավարության հրաժարականը**

Նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը Կառավարությունը ներկայացնում է իր հրաժարականը: Հանրապետության նախագահն անհապաղ ընդունում է Կառավարության հրաժարականը:

### **Հոդված 213. Սահմանադրական դատարանի անդամների և նախագահի պաշտոնավարումը**

Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահ-

մանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորների թափուր տեղերի համար առաջադրումները կատարում են հաջորդաբար Հանրապետության նախագահը, դատավորների ընդհանուր ժողովը և Կառավարությունը:

#### **Հոդված 214. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումը**

1. Բարձրագույն դատական խորհուրդը, Սահմանադրության 174-րդ հոդվածին համապատասխան, կազմավորվում է Դատական օրենսգրքի համապատասխան դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո՝ Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

2. Արդարադատության խորհրդի անդամների լիազորությունները դադարում են, իսկ Բարձրագույն դատական խորհուրդն իր լիազորությունները ստանձնում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտման օրը:

3. Ազգային ժողովը և դատավորների ընդհանուր ժողովը Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի համապատասխան երեքական անդամների ընտրում են հինգ, իսկ երկուական անդամների՝ երեք տարի ժամկետով:

#### **Հոդված 215. Դատավորների, դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների պաշտոնավարումը**

1. Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատավորները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

2. Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատարանների նախագահները և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակվելը կամ ընտրվելը, որն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումից հետո՝ ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում:

3. Եթե մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատարանների նախագահները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում չեն նշանակվում համապատասխան դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներ, ապա նրանք շարունակում են պաշտոնավարել համապատասխան դատարաններում որպես դատավորներ:

#### **Հոդված 216. Գլխավոր դատախազի պաշտոնավարումը**

Մինչև Սահմանադրության 8-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված գլխավոր դատախազը շարունակում է պաշտոնավարել մինչև իր լիազորությունների՝



2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

**Հոդված 217. Համայնքի ավագանու անդամների և համայնքի ղեկավարի պաշտոնավարումը**

Մինչև Սահմանադրության 9-րդ գլխի ուժի մեջ մտնելը ընտրված համայնքի ավագանու անդամները և համայնքի ղեկավարը շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ սահմանված դրույթը կիրառվում է Տեղական ինքնակառավարման մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո:

**Հոդված 218. Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնավարումը**

Մինչև Սահմանադրության 10-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Մարդու իրավունքների պաշտպանը շարունակում է պաշտոնավարել մինչև իր լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

**Հոդված 219. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորումը**

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Սահմանադրության 11-րդ գլխով սահմանված կարգով կազմավորվում է մինչև 2016 թվականի նոյեմբերի 1-ը: Մինչև Սահմանադրության 11-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունները դադարում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորման պահից:

**Հոդված 220. Սահմանադրության 12-14-րդ գլուխներով նախատեսված մարմինների անդամների պաշտոնավարումը**

Սահմանադրության 12-14-րդ գլուխների ուժի մեջ մտնելուց հետո այդ գլուխներով նախատեսված մարմինների անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված ժամկետի ավարտը: Վերահսկիչ պալատի անդամները շարունակում են պաշտոնավարել որպես Հաշվեքննիչ պալատի անդամներ:»:

**Հոդված 2.** Սույն Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Սահմանադրության 2015 և 2005 թթ. խմբագրությունների համեմատական աղյուսակ<sup>1</sup>**

<p><b>2015 ԹՎԱԿԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p><b>2005 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ</b></p>
<p>Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:</p>	<p><i>Նույնն է</i></p>

1 Աղյուսակում ներկայացված է 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության Սահմանադրության համեմատականը 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հետ: Համեմատությունն արվել է դրույթ առ դրույթ, որպեսզի տարբերությունները առավել հեշտ ու ընկալելի լինեն: Այն դրույթները, որոնք 2005 թ. և 2015 թ. խմբագրություններով Սահմանադրությունում տառացիորեն և շարադասությամբ նույնանում են, նշված են «Նույնն է» արտահայտությամբ: Այն դեպքերում, երբ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը չի պարունակում համապատասխան նորմ, նշված է «Նախատեսված չէ» արտահայտությամբ: Այնու բոլոր դեպքերում 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության յուրաքանչյուր դրույթի դիմաց գետնելված է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության համապատասխան դրույթը:

<p><b>Հոդված 1.</b></p>	<p>Նույնն է</p>
<p><b>Հոդված 2.</b></p>	<p>Նույնն է</p>
<p><b>Հոդված 3.</b> Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները</p> <p><b>Հոդված 3, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է:</p> <p><b>Հոդված 3, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անբաժանելի հիմքն է:</p> <p><b>Հոդված 3, մաս 2</b></p> <p>2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:</p>	<p><b>Հոդվածներ 3. և 14.</b></p> <p><b>Հոդված 3, մաս 1</b></p> <p>Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:</p> <p><b>Հոդված 14.</b></p> <p>Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:</p> <p><b>Հոդված 3, մաս 2</b></p> <p>Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:</p>

<p><b>Հողված 3, մաս 3</b></p> <p>3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:</p>	<p><b>Հողված 3, մաս 3</b></p> <p>Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:</p>
<p><b>Հողված 4. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը</b></p> <p>Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:</p>	<p><b>Հողված 5, մաս 1</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հողված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը</b></p> <p><b>Հողված 5, մաս 1</b></p> <p>1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:</p> <p><b>Հողված 5, մաս 2</b></p> <p>2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:</p>	<p><b>Հողված 6.</b></p> <p><b>Հողված 6, մաս 1</b></p> <p>Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:</p> <p><b>Հողված 6, մաս 2</b></p> <p>Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:</p>

<p><b>Հոդված 5, մաս 3</b></p> <p>3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:</p>	<p><b>Հոդված 6, մաս 4, նախադասություն 3</b></p> <p>Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:</p>
<p><b>Հոդված 6. Օրինականության սկզբունքը</b></p> <p><b>Հոդված 6, մաս 1</b></p> <p>1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:</p> <p><b>Հոդված 6, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությանը նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:</p>	<p><b>Հոդվածներ 5. և 6.</b></p> <p><b>Հոդված 5, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 6, մաս 5</b></p> <p>Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով:</p>

<p><b>Հողված 6, մաս 2, նախադասություն 2</b> Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:</p> <p><b>Հողված 6, մաս 3</b> 3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 6, մաս 3</b> Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:</p>
<p><b>Հողված 7. Ընտրական իրավունքի սկզբունքները</b> Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:</p>	<p><b>Հողված 4.</b> Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:</p>
<p><b>Հողված 8. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը</b> <b>Հողված 8, մաս 1</b> 1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը:</p>	<p><b>Հողված 7.</b> <b>Հողված 7, մաս 1</b> Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը:</p>

<p><b>Հողված 8, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Կուսակցությունները կազմավորվում և գործում են ազատորեն:</p> <p><b>Հողված 8, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Կուսակցությունների համար օրենքով երաշխավորվում են գործունեության հավասար իրավական հնարավորություններ:</p> <p><b>Հողված 8, մաս 3</b></p> <p>3. Կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:</p> <p><b>Հողված 8, մաս 4</b></p> <p>4. Կուսակցությունների կառուցվածքը և գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին:</p> <p><b>Հողված 9. Տեղական ինքնակառավարման երաշխավորումը</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական իմպերից մեկը:</p>	<p><b>Հողված 7, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն...:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 7, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>Կուսակցությունները ... նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը:</p> <p><b>Հողված 7, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին:</p> <p><b>Հողված 11.2.</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը:</p>
--	---

<p><b>Հողված 10. Սեփականության երաշխավորումը</b></p> <p><b>Հողված 10, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:</p> <p><b>Հողված 10, մաս 2</b></p> <p>2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:</p>	<p><b>Հողված 8.</b></p> <p><b>Հողված 8, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 11. Տնտեսական կարգը</b></p> <p>Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:</p>	<p><b>Հողված 8, մաս 2</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:</p>



<p><b>Հոդված 12. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը</b></p> <p><b>Հոդված 12, մաս 1</b></p> <p>1. Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պայմանների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:</p> <p><b>Հոդված 12, մաս 2</b></p> <p>2. Ցուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:</p>	<p><b>Հոդվածներ 10., 33.2. և 48.</b></p> <p><b>Հոդված 10.</b></p> <p>Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պայմանների ողջամիտ օգտագործումը:</p> <p><b>Հոդված 48, մաս 10</b></p> <p>Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝</p> <p>...</p> <p>10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնական պահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն.</p> <p><b>Հոդված 33.2, մաս 1</b></p> <p>Ցուրաքանչյուր ոք ... պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:</p>
--	---

<p><b>Հողված 13. Արտաքին քաղաքականությունը</b></p> <p>Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:</p>	<p><b>Հողված 9.</b></p> <p>Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:</p>
<p><b>Հողված 14. Հինված ուժերը և պաշտպանությունը</b></p> <p><b>Հողված 14, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը</p> <p><b>Հողված 14, մաս 2</b></p> <p>2. Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են:</p> <p><b>Հողված 14, մաս 3</b></p> <p>3. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:</p>	<p><b>Հողվածներ 8.2. և 46.</b></p> <p><b>Հողված 8.2, նախադասություն 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը:</p> <p><b>Հողված 8.2, նախադասություն 2</b></p> <p>Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:</p> <p><b>Հողված 46.</b> Նույնն է</p>

<p><b>Հոդված 15. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը</b></p> <p><b>Հոդված 15, մաս 1</b></p> <p>1. Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը:</p> <p><b>Հոդված 15, մաս 2</b></p> <p>2. Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են:</p>	<p><b>Հոդվածներ 11. և 48.</b></p> <p><b>Հոդված 48, մաս 9</b></p> <p>Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝</p> <p>... 9) նպաստել գիտության և մշակույթի զարգացմանը.</p> <p><b>Հոդված 11, մաս 1</b></p> <p>Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո:</p>
<p><b>Հոդված 16. Ընտանիքի պաշտպանությունը</b></p> <p>Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:</p>	<p><b>Հոդվածներ 35. և 48.</b></p> <p><b>Հոդված 35, մաս 1</b></p> <p>Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:</p> <p><b>Հոդված 48, մաս 1</b></p> <p>Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝</p> <p>1) պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը.</p>

<p><b>Հողված 17. Պետությունը և կրոնական կազմակերպությունները</b></p> <p><b>Հողված 17, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:</p> <p><b>Հողված 17, մաս 2</b></p> <p>2. Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:</p>	<p><b>Հողված 8.1.</b></p> <p><b>Հողված 8.1, մաս 3</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:</p> <p><b>Հողված 8.1, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:</p>
<p><b>Հողված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին</b></p> <p><b>Հողված 18, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:</p>	<p><b>Հողված 8.1.</b></p> <p><b>Հողված 8.1, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p>

<p><b>Հորված 18, մաս 2</b></p> <p>2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:</p>	<p><b>Հորված 8.1, մաս 4</b></p> <p><i>Նույն է</i></p>
<p><b>Հորված 19. Հայկական սփյուռքի հետ կապերը</b></p> <p><b>Հորված 19, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:</p> <p><b>Հորված 19, մաս 2</b></p> <p>2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:</p>	<p><b>Հորված 11.</b></p> <p><b>Հորված 11, մաս 2</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը...</p> <p><b>Հորված 11, մաս 2</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը... այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:</p>

<p><b>Հողված 20. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն</b></p> <p>Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:</p>	<p><b>Հողված 12.</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հողված 21. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերը</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով:</p> <p>2. Հայաստանի Հանրապետության զինանշանն է. կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խորձ, շղթա և ժապավեն:</p>	<p><b>Հողված 13.</b></p> <p><i>Նույնն է</i></p>

<p>3. Դրոշի և գինանշանի մանրամասն նկարագրությունը սահմանվում է օրենքով:</p> <p>4. Հայաստանի Հանրապետության օրիներգը սահմանվում է օրենքով:</p>	
<p><b>Հոդված 22. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը</b></p> <p>Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է:</p>	<p><b>Հոդված 13, մաս 5</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 23. Մարդու արժանապատվությունը</b></p> <p>Մարդու արժանապատվությունն անխախտելի է:</p>	<p><b>Հոդված 14.</b></p> <p>Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:</p>
<p><b>Հոդված 24. Կյանքի իրավունքը</b></p> <p><b>Հոդված 24, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:</p>	<p><b>Հոդված 15.</b></p> <p><b>Հոդված 15, նախադասություն 1</b></p> <p><i>Նույնն է</i></p>

<p><b>Հողված 24, մաս 2</b> 2. Ոչ որ չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:</p> <p><b>Հողված 24, մաս 3</b> 3. Ոչ որ չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 15, նախադասություն 2</b> <i>Նույնն է</i></p>
<p><b>Հողված 25.</b> Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը</p> <p><b>Հողված 25, մաս 1</b> 1. Յուրաքանչյուր որ ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:</p> <p><b>Հողված 25, մաս 2</b> 2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հողվածներ 16. և 17.</b></p> <p><b>Հողված 16, մաս 1, նախադասություն 1</b> Յուրաքանչյուր որ ունի ... անձեռնմխելիության իրավունք:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>



<p><b>Հոդված 25, մաս 3</b></p> <p>3. Բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են ելֆենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 25, մաս 4</b></p> <p>4. Ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:</p>	<p><b>Հոդված 17, մաս 2</b></p> <p>Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:</p>
<p><b>Հոդված 26. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը</b></p> <p><b>Հոդված 26, մաս 1</b></p> <p>1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:</p> <p><b>Հոդված 26, մաս 2</b></p> <p>2. Մարմնական պատիժներն արգելվում են:</p>	<p><b>Հոդված 17.</b></p> <p><b>Հոդված 17, մաս 1, նախաառաջում 1</b></p> <p>Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հողված 26, մաս 3</b></p> <p>3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:</p>	<p><b>Հողված 17, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Ձերբակալված, կայանավորված և ազատագրված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:</p>
<p><b>Հողված 27. Անձնական ազատությունը</b></p> <p><b>Հողված 27, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝</p> <p>1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.</p> <p>2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.</p> <p>3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.</p>	<p><b>Հողված 16.</b></p> <p><b>Հողված 16, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության ... իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝</p> <p>1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.</p> <p>2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.</p> <p>3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.</p>

<p>4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.</p> <p>5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.</p> <p>6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.</p> <p>7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության տուրքը կանխելու նպատակով:</p>	<p>4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.</p> <p>5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով.</p> <p>6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով.</p> <p>7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:</p>
---	--

<p><b>Հողված 27, մաս 2</b></p> <p>2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:</p> <p><b>Հողված 27, մաս 3, նախադասություն 1</b></p> <p>3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը:</p> <p><b>Հողված 27, մաս 3, նախադասություն 2</b></p> <p>Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:</p>	<p><b>Հողված 16, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:</p> <p><b>Հողված 16, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	--

<p><b>Հողված 27, մաս 4</b></p> <p>4. Եթե սույն հողվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուններկու ժամկա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:</p>	<p><b>Հողված 16, մաս 3</b></p> <p>Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամկա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:</p>
<p><b>Հողված 27, մաս 5</b></p> <p>5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկվելը ոչ իրավաչափ է:</p>	<p><b>Հողված 16, մաս 4</b></p> <p>Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում:</p>
<p><b>Հողված 27, մաս 6</b></p> <p>6. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:</p>	<p><b>Հողված 16, մաս 5</b></p> <p>Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:</p>

<p><b>Հողված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը</b></p> <p>Բոլորը հավասար են օրենքի առջև:</p>	<p><b>Հողված 14.1, մաս 1</b></p> <p>Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:</p>
<p><b>Հողված 29. Խտրականության արգելքը</b></p> <p>Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությունը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:</p>	<p><b>Հողված 14.1, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հողված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը</b></p> <p>Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հոդված 31. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը</b></p> <p><b>Հոդված 31, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:</p> <p><b>Հոդված 31, մաս 2</b></p> <p>2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հոդված 23.</b></p> <p><b>Հոդված 23, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:</p> <p><b>Հոդված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p>
---	--

<p><b>Հողված 32. Բնակարանի անձեռնմխելիությունը</b></p> <p><b>Հողված 32, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:</p> <p><b>Հողված 32, մաս 2</b></p> <p>2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p> <p><b>Հողված 32, մաս 3, նախադասություն 1</b></p> <p>3. Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:</p>	<p><b>Հողված 24.</b></p> <p><b>Հողված 24, մաս 1, նախադասություն 1</b> Նույնն է</p> <p><b>Հողված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով սմբագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p> <p><b>Հողված 24, մաս 2</b></p> <p>Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:</p>
---	--



<p><b>Հոդված 32, մաս 3, նախադասություն 2</b></p> <p>Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր:</p>	<p><i>Նախադեպակած չէ</i></p>
<p><b>Հոդված 33. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը</b></p> <p><b>Հոդված 33, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:</p> <p><b>Հոդված 33, մաս 2</b></p> <p>2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հոդված 23.</b></p> <p><b>Հոդված 23, մաս 5</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, ...:</p> <p><b>Հոդված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p>

<p><b>Հողված 33, մաս 3</b></p> <p>3. Հարորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հարորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:</p>	<p><b>Հողված 23, մաս 5</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:</p>
<p><b>Հողված 34. Անձնական տվյալների պաշտպանությունը</b></p> <p><b>Հողված 34, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:</p> <p><b>Հողված 34, մաս 2</b></p> <p>2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:</p>	<p><b>Հողված 23.</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 23, մաս 2</b></p> <p>Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:</p>

<p><b>Հոդված 34, մաս 3</b></p> <p>3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:</p> <p><b>Հոդված 34, մաս 4</b></p> <p>4. Անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հոդված 23, մասեր 3 և 4</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:</p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:</p> <p><b>Հոդված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p>
--	---

<p><b>Հոդված 34, մաս 5</b></p> <p>5. Անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 35. Ամուսնանալու ազատությունը</b></p> <p><b>Հոդված 35, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Անուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն:</p> <p><b>Հոդված 35, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հոդված 35, մաս 2</b></p> <p>2. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ:</p> <p><b>Հոդված 35, մաս 3</b></p> <p>3. Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հոդված 35.</b></p> <p><b>Հոդված 35, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>Անուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 35, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հողված 36. Ծնողների իրավունքները և պարտականությունները</b></p> <p><b>Հողված 36, մաս 1</b></p> <p>1. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:</p> <p><b>Հողված 36, մաս 2</b></p> <p>2. Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով:</p> <p><b>Հողված 36, մաս 3, նախադասություն 1</b></p> <p>3. Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների մասին:</p> <p><b>Հողված 36, մաս 3, նախադասություն 2</b></p> <p>Մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հողված 36.</b></p> <p><b>Հողված 36, մաս 1</b></p> <p>Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:</p> <p><b>Հողված 36, մաս 2</b></p> <p>Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:</p> <p><b>Հողված 36, մաս 3</b></p> <p><i>Նույն է</i></p> <p><i>Նախադասված չէ</i></p>
--	--

<p><b>Հողված 37. Երեխայի իրավունքները</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:</li> <li>2. Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ռազմարության արժանանան:</li> <li>3. Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Մանրամասները սահմանվում են օրենքով:</li> <li>4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:</li> </ol>	<p>Նախատեսված չէ</p>
<p><b>Հողված 38. Կրթության իրավունքը</b></p> <p><b>Հողված 38, մաս 1, նախադասություն 1</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:</li> </ol>	<p><b>Հողված 39, մաս 1</b> Նույն է</p>

<p><b>Հողված 38, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հողված 38, մաս 1, նախադասություն 3</b></p> <p>Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:</p> <p><b>Հողված 38, մաս 2</b></p> <p>2. Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:</p> <p><b>Հողված 38, մաս 3</b></p> <p>3. Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:</p>	<p><b>Հողված 39, մաս 2</b></p> <p>Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:</p> <p><b>Հողված 39, մաս 3</b></p> <p>Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:</p> <p><b>Հողված 39, մաս 6, նախադասություն 1</b></p> <p>Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով:</p> <p><b>Հողված 39, մաս 4</b></p> <p>Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակարթության սկզբունքները որոշվում են օրենքով:</p>
--	--

<p><b>Հողված 39. Մարդու ազատ գործելու իրավունքը</b></p> <p>Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:</p>	<p><b>Հողված 42, մաս 2</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:</p>
<p><b>Հողված 40. Ազատ տեղաշարժվելու իրավունքը</b></p> <p><b>Հողված 40, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:</p> <p><b>Հողված 40, մաս 2</b></p> <p>2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:</p> <p><b>Հողված 40, մաս 3</b></p> <p>3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:</p>	<p><b>Հողված 25.</b></p> <p><b>Հողված 25, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:</p> <p><b>Հողված 25, մաս 2</b></p> <p><i>Նույն է</i></p> <p><b>Հողված 25, մաս 3</b></p> <p>Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք:</p>



<p><b>Հոդված 40, մաս 4, նախադասություն 1</b></p> <p>4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p> <p><b>Հոդված 40, մաս 4, նախադասություն 2</b></p> <p>Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:</p>	<p><b>Հոդված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p> <p><i>Նախադասված չէ:</i></p>
---	--

<p><b>Հողված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը</b></p> <p><b>Հողված 41, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ հանձնումները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ձևակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:</p> <p><b>Հողված 41, մաս 2</b></p> <p>2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p> <p><b>Հողված 41, մաս 3</b></p> <p>3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ հանձնումներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությանը փոխարինելու իրավունք:</p>	<p><b>Հողված 26.</b></p> <p><b>Հողված 26, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ հանձնումները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ձևակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:</p> <p><b>Հողված 26, մաս 2</b></p> <p>Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	---

<p><b>Հոդված 41, մաս 4</b></p> <p>4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p>	<p><i>Նախադրեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը</b></p> <p><b>Հոդված 42, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք:</p> <p><b>Հոդված 42, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:</p>	<p><b>Հոդված 27.</b></p> <p><b>Հոդված 27, մաս 1, նախադասություն 1</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 27, մաս 2</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:</p>

<p><b>Հողված 42, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:</p> <p><b>Հողված 42, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:</p> <p><b>Հողված 42, մաս 3</b></p> <p>Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հողված 27, մաս 3</b></p> <p>Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:</p> <p><b>Հողված 27, մաս 4</b></p> <p>Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:</p> <p><b>Հողված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p>
---	--

<p><b>Հորված 43. Ստեղծագործության ազատությունը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն:</p>	<p><b>Հորված 40.</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:</p>
<p><b>Հորված 44. Հավաքների ազատությունը</b></p> <p><b>Հորված 44, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:</p> <p><b>Հորված 44, մաս 2</b></p> <p>2. Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբուխ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում:</p>	<p><b>Հորված 29.</b></p> <p><b>Հորված 29, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:</p> <p><i>Նախադեպված չէ:</i></p>

**Հոդված 44, մաս 3**

3. Օրենքով կարող են սահմանվել դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների հավաքների ազատության իրավունքի իրականացման սահմանափակումներ:

**Հոդված 44, մաս 4**

4. Հավաքների ազատության իրականացման և պաշտպանության պայմաններն ու կարգը սահմանվում են օրենքով:

**Հոդված 44, մաս 5**

5. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

**Հոդված 29, մաս 2**

Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով:

*Նախատեսված չէ*

**Հոդված 43, մաս 1**

Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

<p><b>Հոդված 45. Միավորումների ազատությունը</b></p> <p><b>Հոդված 45, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:</p> <p><b>Հոդված 45, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:</p> <p><b>Հոդված 45, մաս 2</b></p> <p>2. Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p>	<p><b>Հոդված 28.</b></p> <p><b>Հոդված 28, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:</p> <p><b>Հոդված 28, մաս 4</b></p> <p>Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	---

**Հոդված 45, մաս 3**

3. Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

**Հոդված 45, մաս 4**

4. Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ:

**Հոդված 43, մաս 1**

Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

**Հոդված 28, մաս 5**

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:



<p><b>Հողված 46. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը</b></p> <p><b>Հողված 46, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք:</p> <p><b>Հողված 46, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության:</p> <p><b>Հողված 46, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Դատավորները, դատախազները և քննիչները չեն կարող լինել կուսակցության անդամ:</p> <p><b>Հողված 46, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ոստիկանազնված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:</p>	<p><b>Հողվածներ 7., 28., 98. և 100.</b></p> <p><b>Հողված 28, մաս 2</b></p> <p>Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և որանց անդամագրվելու իրավունք:</p> <p><b>Հողված 28, մաս 4</b></p> <p>Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման:</p> <p><b>Հողված 98, մաս 2</b></p> <p>Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:</p> <p><b>Հողված 28, մաս 3</b></p> <p>Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:</p>
---	---

<p><b>Հողված 46, մաս 3</b></p> <p>3. Կուսակցությունները տարեկան հաշվետվություններ են հրապարակում իրենց ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև իրենց գույքի մասին:</p> <p><b>Հողված 46, մաս 4</b></p> <p>4. Օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ:</p>	<p><b>Հողված 7, մաս 3</b></p> <p>Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը:</p> <p><b>Հողված 100, մաս 9</b></p> <p>Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝</p> <p>9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:</p>
<p><b>Հողված 47. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը</b></p> <p><b>Հողված 47, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:</p>	<p><b>Հողվածներ 30.1. և 11.3.</b></p> <p><b>Հողված 30.1, մաս 1, նախադասություն 1</b> Նույնն է</p>

<p><b>Հողված 47, մաս 2</b></p> <p>2. Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:</p> <p><b>Հողված 47, մաս 3</b></p> <p>3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:</p> <p><b>Հողված 47, մաս 4</b></p> <p>4. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք են բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:</p> <p><b>Հողված 47, մաս 5</b></p> <p>5. Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող գրկվել քաղաքացիությունից: Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող գրկվել քաղաքացիությունը փոխելու իրավունքից:</p>	<p><b>Հողված 30.1, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 11.3, մաս 2</b></p> <p>Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:</p> <p><b>Հողված 30.1, մաս 2</b></p> <p>Ոչ ոք չի կարող գրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից:</p>
--	---

<p><b>Հողված 47, մաս 6</b></p> <p>6. Սույն հորվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը, ինչպես նաև դարարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հողված 47, մաս 7</b></p> <p>7. Սույն հորվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև 5-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հողված 30.1, մաս 1, նախադասություն 3</b></p> <p>Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը սահմանվում է օրենքով:</p> <p><b>Հողված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p>
---	---

<p><b>Հոդված 47, մաս 8</b></p> <p>8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:</p>	<p><b>Հոդված 11.3, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:</p>
<p><b>Հոդված 48. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը</b></p> <p><b>Հոդված 48, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:</p> <p><b>Հոդված 48, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:</p>	<p><b>Հոդվածներ 30. և 60.</b></p> <p><b>Հոդված 30, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու ... իրավունք:</p> <p><b>Հոդված 64.</b></p> <p>Պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:</p>

<p><b>Հողված 48, մաս 3, նախադասություն 1</b></p> <p>3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնույթ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:</p> <p><b>Հողված 48, մաս 3, նախադասություն 2</b></p> <p>Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական կառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:</p> <p><b>Հողված 48, մաս 4</b></p> <p>4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորյալ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:</p>	<p><b>Հողված 30, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության՝ տասնույթ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:</p> <p><b>Հողված 30, մաս 2</b></p> <p><i>Նույն է</i></p> <p><b>Հողված 30, մաս 3</b></p> <p>Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:</p>
---	---

<p><b>Հոդված 49. Հանրային ծառայության անցնելու իրավունքը</b></p> <p><b>Հոդված 49, նախադասություն 1</b> Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք:</p> <p><b>Հոդված 49, նախադասություն 2</b> Մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 30.2.</b></p> <p><b>Հոդված 30.2, մաս 1</b> Քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք:</p> <p><b>Հոդված 30.2, մաս 2</b> Հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով:</p>
<p><b>Հոդված 50. Պատշաճ վարչարարության իրավունքը</b></p> <p><b>Հոդված 50, մաս 1</b> 1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:</p> <p><b>Հոդված 50, մաս 2</b> 2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:</p>	<p><b>Հոդվածներ 18. և 23.</b></p> <p><b>Հոդված 18, մաս 1</b> Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների ... պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:</p> <p><b>Հոդված 23, մաս 3</b> Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:</p>

<p>Նախադրեսված չէ</p>	<p><b>Հոդված 50, մաս 3</b></p> <p>3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:</p>
<p>Նախադրեսված չէ</p>	<p><b>Հոդված 51. Տեղեկություններ ստանալու իրավունքը</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:</p> <p>2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p> <p>3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:</p>



<p><b>Հոդված 52. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 18, մաս 3</b></p> <p>Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:</p>
<p><b>Հոդված 53. Հանրագիր ներկայացնելու իրավունքը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 27.1.</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավատու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:</p>

<p><b>Հոդված 54. Քաղաքական ապաստանի իրավունքը</b></p> <p>Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք: Քաղաքական ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:</p>	<p>Նախատեսված չէ</p>
<p><b>Հոդված 55. Արտաքսման կամ հանձնման արգելքը</b></p> <p><b>Հոդված 55, մաս 1</b></p> <p>1. Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:</p> <p><b>Հոդված 55, մաս 2</b></p> <p>2. Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:</p>	<p>Հոդված 30.1.</p> <p>Նախատեսված չէ</p> <p>Հոդված 30.1, մաս 3 Նույն է</p>

<p><b>Հոդված 56. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը</b></p> <p><b>Հոդված 56, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք:</p> <p><b>Հոդված 56, մաս 2</b></p> <p>2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:</p> <p><b>Հոդված 56, մաս 3</b></p> <p>3. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացումը կարգավորվում է օրենքով:</p>	<p><b>Հոդված 41.</b></p> <p><b>Հոդված 41, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք:</p> <p><b>Հոդված 41, մաս 2</b></p> <p><i>Նույն է</i></p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 57. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները</b></p> <p><b>Հոդված 57, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:</p>	<p><b>Հոդվածներ 32. և 35.</b></p> <p><b>Հոդված 32, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:</p>

<p><b>Հոդված 57, մաս 2</b></p> <p>2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հոդված 57, մաս 3</b></p> <p>3. Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին ունի հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունք: Յուրաքանչյուր աշխատող ծնող երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում ունի արձակուրդի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հոդված 57, մաս 4</b></p> <p>4. Մինչև տասնվեց տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հոդված 57, մաս 5, նախադասություն 1</b></p> <p>5. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 35, մաս 3</b></p> <p>Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:</p> <p><b>Հոդված 32, մաս 4</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 32, մաս 5</b></p> <p>Հարկադիր աշխատանքն արգելվում է:</p>
---	--

<p><b>Հոդված 57, մաս 5, նախադասություն 2</b></p> <p>Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) այն աշխատանքը, որը, օրենքին համապատասխան, կատարում է դատապարտված անձը.</li> <li>2) գինվորական կամ այլընտրանքային ծառայությունը.</li> <li>3) յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտա-կարգ իրավիճակների ժամանակ:</li> </ol>	<p><i>Նախադրեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 58. Գործարույի իրավունքը</b></p> <p><b>Հոդված 58, մաս 1</b></p> <p>1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործարույի իրավունք: Գործարույի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:</p>	<p><b>Հոդված 32.</b></p> <p><b>Հոդված 32, մաս 3</b></p> <p>Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործարույի իրավունք, որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով:</p>

<p><b>Հոդված 58, մաս 2</b></p> <p>2. Գործադրույի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p>	<p><b>Հոդված 43, մաս 1</b></p> <p>Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:</p>
<p><b>Հոդված 59. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը</b></p> <p><b>Հոդված 59, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 33.1.</b></p> <p><b>Հոդված 33.1, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունք:</p>

<p><b>Հոդված 59, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հոդված 59, մաս 2</b></p> <p>2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:</p> <p><b>Հոդված 59, մաս 3</b></p> <p>3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 33.1, մաս 3</b></p> <p>Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:</p> <p><b>Հոդված 33.1, մաս 2</b></p> <p>Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:</p> <p><b>Հոդվածներ 31. և 45.</b></p> <p><b>Հոդված 31, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:</p>
<p><b>Հոդված 60. Սեփականության իրավունքը</b></p> <p><b>Հոդված 60, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:</p>	

<p><b>Հողված 60, մաս 2</b></p> <p>2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:</p> <p><b>Հողված 60, մաս 3</b></p> <p>3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:</p> <p><b>Հողված 60, մաս 4</b></p> <p>4. Ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:</p> <p><b>Հողված 60, մաս 5</b></p> <p>5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:</p>	<p><b>Հողված 31, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ ... կտակելու իր սեփականությունը:</p> <p><i>Նախադասված չէ</i></p> <p><b>Հողված 31, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հողված 31, մաս 3</b></p> <p>Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:</p>
---	---



<p><b>Հողված 60, մաս 6</b></p> <p>6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:</p> <p><b>Հողված 60, մաս 7</b></p> <p>7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:</p> <p><b>Հողված 60, մաս 8</b></p> <p>8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:</p>	<p><b>Հողված 31, մաս 4</b></p> <p><i>Նույն է</i></p> <p><b>Հողված 31, մաս 5</b></p> <p><i>Նույն է</i></p> <p><b>Հողված 45.</b></p> <p>Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:</p>
<p><b>Հողված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը</b></p> <p><b>Հողված 61, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:</p>	<p><b>Հողված 18.</b></p> <p><b>Հողված 18, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական ... պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:</p>

<p><b>Հոդված 61, մաս 2</b></p> <p>2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:</p>	<p><b>Հոդված 18, մաս 4</b></p> <p>Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:</p>
<p><b>Հոդված 62. Վնասի հատուցման իրավունքը</b></p> <p><b>Հոդված 62, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 16.</b></p> <p><b>Հոդված 16, մաս 4</b></p> <p>Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով պատճառված վնասի հատուցման:</p>

<p><b>Հողված 62, մաս 2</b></p> <p>2. Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատափճով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:</p>	<p><i>Նախադրեսված չէ</i></p>
<p><b>Հողված 63. Արդար դատաքննության իրավունքը</b></p> <p><b>Հողված 63, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:</p>	<p><b>Հողվածներ 19. և 22.</b></p> <p><b>Հողված 19, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:</p>

<p><b>Հոդված 63, մաս 2</b></p> <p>2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասվոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:</p> <p><b>Հոդված 63, մաս 2</b></p> <p>3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:</p>	<p><b>Հոդված 19, մաս 2</b></p> <p>Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել:</p> <p><b>Հոդված 22, մաս 2</b></p> <p>Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:</p>
<p><b>Հոդված 64. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը</b></p> <p><b>Հոդված 64, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:</p>	<p><b>Հոդված 20.</b></p> <p><b>Հոդված 20, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:</p>

<p><b>Հոդված 64, մաս 2</b></p> <p>2. Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:</p>	<p><i>Նախադրեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 65. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը</b></p> <p>Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:</p>	<p><b>Հոդված 22, մաս 1</b></p> <p>Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:</p>
<p><b>Հոդված 66. Անմեղության կանխավարկածը</b></p> <p>Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:</p>	<p><b>Հոդված 21, մաս 1</b></p> <p><i>Նույնն է</i></p>

<p><b>Հողված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը</b></p> <p><b>Հողված 67, կետ 1</b></p> <p>Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր որոշումի՝</p> <p>1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.</p> <p><b>Հողված 67, կետ 2</b></p> <p>2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.</p> <p><b>Հողված 67, կետ 3-5</b></p> <p>3) իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած փաստաբանի հետ հաղորդակցվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունք.</p> <p>4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկվելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.</p> <p>5) թարգմանչի անվճար ծառայությունից օգտվելու իրավունք, եթե նա չի տիրապետում հայերենին:</p>	<p><b>Հողվածներ 16. և 20.</b></p> <p><b>Հողված 16, մաս 2</b></p> <p>Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառներին, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաեւ մեղադրանքի մասին:</p> <p><b>Հողված 20, մաս 2</b></p> <p>Յուրաքանչյուր որոշումի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

<p><b>Հոդված 68. Կրկին դատվելու արգելքը</b></p> <p><b>Հոդված 68, մաս 1</b></p> <p>1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:</p> <p><b>Հոդված 68, մաս 2</b></p> <p>2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել իիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:</p>	<p><b>Հոդված 22.</b></p> <p><b>Հոդված 22, մաս 7</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 69. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը</b></p> <p>Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունք:</p>	<p><b>Հոդված 20, մաս 3</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք:</p>
<p><b>Հոդված 70. Ներման խնդրանքի իրավունքը</b></p> <p>Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման, ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 20, մաս 4</b></p> <p>Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք:</p>

<p><b>Հողված 71. Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը</b></p> <p>1. Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:  2. Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:</p>	<p>Նախատեսված չէ</p>
<p><b>Հողված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը</b></p> <p><b>Հողված 72, նախադասություն 1</b></p> <p>Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել:</p> <p><b>Հողված 72, նախադասություն 2</b></p> <p>Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին:</p>	<p><b>Հողված 22.</b></p> <p><b>Հողված 22, մաս 4</b></p> <p>Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:</p> <p><b>Հողված 22, մաս 3</b></p> <p>Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով:</p>



<p><b>Հոդված 72, նախադասություն 3</b> Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:</p>	<p><b>Հոդված 22, մաս 5</b> <i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը</b></p> <p><b>Հոդված 73, մաս 1</b></p> <p>1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:</p> <p><b>Հոդված 73, մաս 2</b></p> <p>2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:</p>	<p><b>Հոդված 42.</b></p> <p><b>Հոդված 42, մաս 3</b> <i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 42, մաս 4</b> Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:</p>

<p><b>Հոդված 74. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ</b></p> <p>Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությունամբ կիրառելի են դրանց նկատմամբ:</p>	<p><b>Հոդված 42.1.</b></p> <p>Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությունամբ կիրառելի են դրանց նկատմամբ:</p>
<p><b>Հոդված 75. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը</b></p> <p>Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հողված 76. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ</b></p> <p>Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:</p>	<p><b>Հողված 44.</b></p> <p>Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:</p>
<p><b>Հողված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը</b></p> <p>Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բողոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:</p>	<p><b>Հողված 47, մաս 2</b></p> <p><i>Նույն է</i></p>

<p><b>Հոդված 78. Համաչափության սկզբունքը</b></p> <p>Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 79. Որոշակիության սկզբունքը</b></p> <p>Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրանրեղյու համապատասխան վարքագիծ:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը</b></p> <p>Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հոդված 81.</b> Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան</p> <p><b>Հոդված 81, մաս 1</b></p> <p>1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:</p>	<p><b>Հոդված 43.</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 81, մաս 2</b></p> <p>2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:</p>	<p><b>Հոդված 43, մաս 2</b></p> <p>Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:</p>

<p><b>Հողված 82. Աշխատանքային պայմանները</b></p> <p>Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:</p>	<p><b>Հողվածներ 32. և 33.</b></p> <p><b>Հողված 32, մաս 2</b></p> <p>Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:</p> <p><b>Հողված 33.</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով:</p>
<p><b>Հողված 83. Սոցիալական ապահովությունը</b></p> <p>Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:</p>	<p><b>Հողված 37.</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:</p>

<p><b>Հոդված 84. Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը</b></p> <p><b>Հոդված 84, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:</p> <p><b>Հոդված 84, մաս 2</b></p> <p>2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:</p>	<p><b>Հոդված 32, մաս 2</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 32, մաս 2</b></p> <p>Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաեւ անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:</p>
<p><b>Հոդված 85. Առողջության պահպանությունը</b></p> <p><b>Հոդված 85, մաս 1</b></p> <p>1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:</p>	<p><b>Հոդված 38.</b></p> <p><b>Հոդված 38, մաս 1</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:</p>

<p><b>Հոդված 85, մաս 2</b></p> <p>2. Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:</p>	<p><b>Հոդված 38, մաս 2</b></p> <p>Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով:</p>
<p><b>Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները</b></p> <p>Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝</p> <p><b>Հոդված 86, կետ 1</b></p> <p>1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.</p> <p><b>Հոդված 86, կետ 2</b></p> <p>2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.</p> <p><b>Հոդված 86, կետ 3</b></p> <p>3) բնակարանային շինարարության խթանումը.</p>	<p><b>Հոդվածներ 48., 31.1. և 89.</b></p> <p>Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 2</b></p> <p>2) նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը.</p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 3</b></p> <p>3) խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը.</p>



<p><b>Հոդված 86, կետեր 4-6</b></p> <p>4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.</p> <p>5) ծնելիության և բազմազավակության խթանումը.</p> <p>6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.</p> <p><b>Հոդված 86, կետ 7</b></p> <p>7) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.</p> <p><b>Հոդված 86, կետ 8</b></p> <p>8) հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 4</b></p> <p>4) իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը.</p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 7</b></p> <p>7) իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին.</p>
--	--

<p><b>Հոդված 86, կետ 9</b></p> <p>9) սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը:</p> <p><b>Հոդված 86, կետ 10</b></p> <p>10) տարածքային համաչափ զարգացումը:</p> <p><b>Հոդված 86, կետ 11</b></p> <p>11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը:</p> <p><b>Հոդված 86, կետ 12</b></p> <p>12) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը:</p> <p><b>Հոդված 86, կետ 13</b></p> <p>13) անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը:</p>	<p><b>Հոդված 31.1.</b></p> <p>Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 6</b></p> <p>6) խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը:</p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 5</b></p> <p>5) նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին:</p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 8</b></p> <p>8) նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը:</p>
---	---

<p><b>Հոդված 86, կետ 14</b> 14) հիմնարար և կիրառական գիտության զարգացումը.</p> <p><b>Հոդված 86, կետ 15</b> 15) ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը.</p> <p><b>Հոդված 86, կետ 16</b> 16) բարեգործության խթանումը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:</p>	<p><b>Հոդված 48, մաս 1, կետ 9</b> 9) նպաստել գիտության և մշակույթի զարգացմանը.</p> <p><b>Հոդված 48, մաս 1, կետ 11</b> 11) նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը.</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 87. Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը</b></p>	<p><b>Հոդված 48.</b></p>

<p><b>Հողված 87, մաս 1</b></p> <p>1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները:</p> <p>2. Կառավարությունը Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված գեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ:</p> <p><b>Հողված 87, մաս 2</b></p> <p>2. Կառավարությունը Սահմանադրության 156-րդ հոդվածով նախատեսված գեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ:</p>	<p><b>Հողված 48, մաս 2</b></p> <p>Պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 88. Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները</b></p> <p><b>Հողված 88, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է:</p>	<p><b>Հողվածներ 62. և 77.</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հողված 88, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը:</p> <p><b>Հողված 88, մաս 3</b></p> <p>3. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործարհիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառնություններ:</p> <p><b>Հողված 88, մաս 4</b></p> <p>4. Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:</p> <p><b>Հողված 88, մաս 5</b></p> <p>5. Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան:</p>	<p><b>Հողված 62, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 62, մաս 3</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հողված 62, մաս 4</b></p> <p>Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով:</p>
---	--

<p><b>Հոդված 89. Ազգային ժողովի կազմը և ընտրության կարգը</b></p> <p><b>Հոդված 89, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:</p> <p><b>Հոդված 89, մասեր 2-3</b></p> <p>2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:</p> <p>3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:</p>	<p><b>Հոդված 63.</b></p> <p><b>Հոդված 63, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովը կազմված է հարյուր երեսունմեկ պատգամավորից:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

<p><b>Հոդված 90. Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը</b></p> <p><b>Հոդված 90, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով:</p> <p><b>Հոդված 90, մաս 2</b></p> <p>2. Հերթական ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նախորդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:</p> <p><b>Հոդված 90, մաս 3</b></p> <p>3. Եթե մինչև գործող Ազգային ժողովի լիազորությունների ավարտը նորընտիր Ազգային ժողով չի կազմավորվում, ապա գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:</p>	<p><b>Հոդվածներ 63. և 68.</b></p> <p><b>Հոդված 63, մաս 2, նախադասություն 1</b> <i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 63, մաս 2, նախադասություն 2</b> Նրա լիազորությունների ժամկետը սկսվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահից:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	---

<p><b>Հոդված 90, մաս 4</b></p> <p>4. Եթե ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի ընտրությունն անցկացվել է Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ապա գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:</p> <p><b>Հոդված 90, մաս 5</b></p> <p>5. Արտահերթ ընտրության դեպքում գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին:</p> <p><b>Հոդված 90, մաս 6</b></p> <p>6. Ազգային ժողովի կազմավորված լինելը հավաստվում է Ընտրական օրենսգրքին համապատասխան:</p>	<p><b>Հոդված 63, մաս 4</b></p> <p>Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում, իսկ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսուն օրվա ընթացքում անցկացվում է Ազգային ժողովի ընտրություն:</p> <p><b>Հոդված 68, մաս 5</b></p> <p>Արտահերթ ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երկրորդ հինգշաբթի օրը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	--



<p><b>Հոդված 91. Ազգային ժողովի հերթական ընտրությունը</b></p> <p><b>Հոդված 90, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ շուտ, քան վաթսուն, և ոչ ուշ, քան հիսուն օր առաջ:</p> <p><b>Հոդված 90, մաս 2</b></p> <p>2. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում: Այս դեպքում Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:</p>	<p><b>Հոդվածներ 68. և 63.</b></p> <p><b>Հոդված 68, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտին նախորդող ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:</p> <p><b>Հոդված 63, մաս 4</b></p> <p>Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում, իսկ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսուն օրվա ընթացքում անցկացվում է Ազգային ժողովի ընտրություն:</p>
--	--

<p><b>Հողված 92. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունը</b></p> <p>1. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով, 151-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դեպքերում Ազգային ժողովի արձակվելուց հետո:</p> <p>2. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի արձակվելուց ոչ շուտ, քան երեսուն, և ոչ ուշ, քան քառասունհինգ օր հետո:</p>	<p><b>Հողված 68.</b></p> <p><b>Հողված 68, մաս 2</b></p> <p>Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովն արձակվելուց հետո ոչ շուտ, քան երեսուն, և ոչ ուշ, քան քառասուն օրվա ընթացքում:</p>
<p><b>Հողված 93. Ազգային ժողովի ընտրությունների նշանակումը</b></p> <p>Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունները նշանակում է Հանրապետության նախագահը:</p>	<p><b>Հողված 68, մաս 3</b></p> <p>Ազգային ժողովի ընտրությունը նշանակվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:</p>
<p><b>Հողված 94. Ներկայացուցչական մանդատը</b></p> <p>Պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:</p>	<p><b>Հողված 66, մաս 1</b></p> <p>Պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:</p>

<p><b>Հորված 95. Պատգամավորական մանրատի անհամատեղելիությունը</b></p> <p>Պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:</p>	<p><b>Հորված 65, մաս 1</b></p> <p>Պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:</p>
<p><b>Հորված 96. Պատգամավորի անձեռնմխելիությունը</b></p> <p><b>Հորված 96, մաս 1</b></p> <p>1. Պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար:</p>	<p><b>Հորված 66.</b></p> <p><b>Հորված 66, մաս 2</b></p> <p>Պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնաձև կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում:</p>

<p><b>Հողված 96, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ:</p> <p><b>Հողված 96, մաս 2, նախադասություններ 2-4</b></p> <p>Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:</p>	<p><b>Հողված 66, մաս 3</b></p> <p>Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության:</p> <p><b>Հողված 66, մաս 4</b></p> <p>Պատգամավորին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:</p>
<p><b>Հողված 97. Պատգամավորի վարձատրության չափը և գործունեության այլ երաշխիքները</b></p> <p>Պատգամավորի վարձատրության չափը և գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հողված 65, մաս 3</b></p> <p>Պատգամավորի կարգավիճակը և գործունեության երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:</p>

<p><b>Հողված 98. Պատգամավորի լիազորությունների դադարումը և դադարեցումը</b></p> <p><b>Հողված 98, մաս 1</b></p> <p>1. Պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրան ազատագրկման դատապարտելու վերաբերյալ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:</p> <p><b>Հողված 98, մաս 2</b></p> <p>2. Պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու, ինչպես նաև Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքերում:</p>	<p><b>Հողված 67.</b></p> <p><b>Հողված 67, մաս 1</b></p> <p>Պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Ազգային ժողովն արձակվելու, Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու, մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու, ազատագրկման դատապարտվելու, անգործունակ ճանաչվելու և հրաժարականի դեպքերում:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

<p><b>Հողված 99. Ազգային ժողովի հերթական նստաշրջանները</b></p> <p>Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ՝ հունվարի երրորդ երկուշաբթից մինչև հունիսի երրորդ հինգշաբթին և սեպտեմբերի երկրորդ երկուշաբթից մինչև դեկտեմբերի երրորդ հինգշաբթին:</p>	<p><b>Հողված 69, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով:</p>
<p><b>Հողված 100. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը և նիստը</b></p> <p><b>Հողված 100, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի կամ Կառավարության նախաձեռնությամբ:</p> <p><b>Հողված 100, մաս 2</b></p> <p>2. Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:</p>	<p><b>Հողված 70.</b></p> <p><b>Հողված 70, նախադասություն 1</b></p> <p>Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության Նախագահի, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ:</p> <p><b>Հողված 70, նախադասություն 2</b></p> <p><i>Նույն է</i></p>

<p><b>Հորված 101. Ազգային ժողովի նիստերի հրապարակայնությունը</b></p> <p><b>Հորված 101, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովի նիստերը հրապարակային են:</p> <p><b>Հորված 101, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կամ Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված դրոշմամբ, անցկացնում է փակ նիստ:</p> <p><b>Հորված 101, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Փակ նիստում քվեարկությունն արգելված է:</p>	<p><b>Հորված 69.</b></p> <p><b>Հորված 69, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>Ազգային ժողովի նիստերը դռնբաց են:</p> <p><b>Հորված 69, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Դռնփակ նիստ կարող է գումարվել Ազգային ժողովի որոշմամբ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հորված 102. Ազգային ժողովի նիստերի իրավագրությունը</b></p> <p>Ազգային ժողովի նիստն իրավագոր է, եթե նիստի սկզբում գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հողված 103. Օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունումը</b></p> <p><b>Հողված 103, մաս 1</b></p> <p>1. Օրենքները, Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները, բացառությամբ Սահմանադրության հայտարարության սահմանված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:</p> <p><b>Հողված 103, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են և ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:</p>	<p><b>Հողվածներ 71. և 62.</b></p> <p><b>Հողված 71.</b></p> <p>Օրենքները և Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությանը նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	--



<p><b>Հորված 103, մաս 3</b></p> <p>3. Սահմանադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ:</p> <p><b>Հորված 103, մաս 4</b></p> <p>4. Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:</p>	<p><b>Հորված 62, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ...</p> <p><b>Հորված 62, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>... Ազգային ժողովն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:</p>
--	--

<p><b>Հոդված 104. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները և Ազգային ժողովի խորհուրդը</b></p> <p><b>Հոդված 104, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ և նրա երեք տեղակալ:</p> <p><b>Հոդված 104, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից:</p> <p><b>Հոդված 104, մաս 1, նախադասություն 3</b></p> <p>Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալներն ընտրվում և հետ են կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>	<p><b>Հոդված 79.</b></p> <p><b>Հոդված 79, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում է Ազգային ժողովի նախագահ:</p> <p><b>Հոդված 79, մաս 3</b></p> <p>Ազգային ժողովն ընտրում է Ազգային ժողովի նախագահի երկու տեղակալ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 79, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում է Ազգային ժողովի նախագահ:</p>
---	--

<p><b>Հոդված 104, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:</p>	<p><b>Հոդված 79, մաս 2</b></p> <p>Ազգային ժողովի նախագահը վարում է նիստերը, տնօրինում է Ազգային ժողովի նյութական միջոցները, ապահովում նրա բնականոն գործունեությունը:</p>
<p><b>Հոդված 104, մաս 3</b></p> <p>3. Ազգային ժողովում ձևավորվում է Ազգային ժողովի խորհուրդ, որը կազմված է Ազգային ժողովի նախագահից, նրա տեղակալներից, խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից և մշտական հանձնաժողովների նախագահներից: Ազգային ժողովի խորհուրդը հաստատում է հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը, ինչպես նաև իրականացնում է Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 105. Ազգային ժողովի խմբակցությունները</b></p> <p>1. Խմբակցությունները նպաստում են Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը:</p> <p>2. Խմբակցության մեջ ընդգրկվում են միայն միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորները:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հոդված 106. Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները</b></p> <p><b>Հոդված 106, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ:</p> <p><b>Հոդված 106, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով:</p> <p><b>Հոդված 106, մաս 2</b></p> <p>2. Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համանասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համանասնությամբ:</p>	<p><b>Հոդված 73.</b></p> <p><b>Հոդված 73, մաս 2</b></p> <p>Մշտական հանձնաժողովներն ստեղծվում են օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար:</p> <p><b>Հոդված 73, մաս 1</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	---

<p><b>Հողված 107. Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովները</b></p> <p>Առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:</p>	<p><b>Հողված 73, մաս 3</b></p> <p>Անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ՝ առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման ... համար:</p>
<p><b>Հողված 108. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովները</b></p> <p><b>Հողված 108, մաս 1</b></p> <p>1. Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:</p> <p><b>Հողված 108, մաս 2-5</b></p> <p>2. Քննիչ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է Ազգային ժողովը: Քննիչ հանձնաժողովում նախագահում է պահանջը ներկայացնող պատգամավորներից մեկը:</p>	<p><b>Հողված 73, մաս 3</b></p> <p>Անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ՝ ... որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>

3. Քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդի պահանջով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են հանձնաժողովին տրամադրել հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, եթե դրանց տրամադրումն օրենքով արգելված չէ:

4. Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով:

5. Քննիչ հանձնաժողովների գործունեության մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:

<p><b>Հոդված 109. Օրենսդրական նախաձեռնությունը</b></p> <p><b>Հոդված 109, մաս 1</b></p> <p>1. Օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորը, Ազգային ժողովի խմբակցությունը և Կառավարությունը:</p> <p><b>Հոդված 109, մաս 2</b></p> <p>2. Օրենսդրական նախաձեռնության հեղինակը կարող է ցանկացած ժամանակ հետ կանչել իր ներկայացրած օրենքի նախագիծը:</p> <p><b>Հոդված 109, մաս 3</b></p> <p>3. Եթե Կառավարության եզրակացության համաձայն՝ օրենքի նախագիծն էականորեն նվազեցնում է պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնում պետության ծախսերը, ապա Կառավարության պահանջով այդ օրենքը կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>	<p><b>Հոդված 75.</b></p> <p><b>Հոդված 75, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 75, մաս 3</b></p> <p>Կառավարության եզրակացության համաձայն՝ պետական բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերն Ազգային ժողովն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>
---	---

<p><b>Հոդված 109, մաս 4</b></p> <p>4. Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծն ընդունվում կամ մերժվում է երկամսյա ժամկետում:</p> <p><b>Հոդված 109, մաս 5</b></p> <p>5. Այն օրենքների նախագծերը, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը, քվեարկության կարող են դրվել միայն Կառավարության համար ընդունելի ուղղումներով:</p> <p><b>Հոդված 109, մաս 5</b></p> <p>6. Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:</p> <p><b>Հոդված 110. Պետական բյուջեի ընդունումը</b></p> <p><b>Հոդված 110, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 75, մաս 2</b></p> <p>Կառավարությունը կարող է սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդակարգությունը և պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 110. Պետական բյուջեի ընդունումը</b></p> <p><b>Հոդված 110, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Ազգային ժողովը պետական բյուջեն ընդունում է Կառավարության ներկայացմամբ:</p>	<p><b>Հոդվածներ 76. և 90.</b></p> <p><b>Հոդված 76, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն:</p>



<p><b>Հոդված 110, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Պետական բյուջեն օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 110, մաս 2</b></p> <p>2. Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ:</p>	<p><b>Հոդված 90, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ...</p>
<p><b>Հոդված 110, մաս 3</b></p> <p>3. Պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը: Այդ ժամկետում պետական բյուջեն չընդունվելու դեպքում, մինչև պետական բյուջեի ընդունումը, ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:</p>	<p><b>Հոդված 76, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:</p>

<p><b>Հողված 111. Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը</b></p> <p><b>Հողված 111, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:</p> <p><b>Հողված 111, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովը, Հաշվեքննիչ պալատի եզրակացության առկայությամբ, քննարկում և որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ:</p>	<p><b>Հողված 77.</b></p> <p><b>Հողված 77, մաս 1</b> <i>Նույնն է</i></p> <p><b>Հողված 77, մաս 2</b></p> <p>Ազգային ժողովը վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը:</p>
<p><b>Հողված 112. Պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը</b></p> <p><b>Հողված 112, մաս 1</b></p> <p>1. Հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում:</p>	<p><b>Հողված 80.</b></p> <p><b>Հողված 80, մաս 1, նախադասություններ 2 և 3</b></p> <p>Հերթական նստաշրջանի նիստերի գումարման շաբաթվա մեկ նիստում վարչապետը և կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների հարցերին: Պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում:</p>

<p><b>Հոդված 112, մաս 2</b></p> <p>2. Պատգամավորներն ունեն կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու իրավունք: Գրավոր հարցերի պատասխաններն Ազգային ժողովի նիստում չեն ներկայացվում:</p>	<p><b>Հոդված 80, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Պատգամավորներն իրավունք ունեն գրավոր և բավոր հարցերով ... դիմելու կառավարությանը:</p>
<p><b>Հոդված 113. Հարցապնդումները</b></p> <p><b>Հոդված 113, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Ազգային ժողովի խմբակցություններն ունեն կառավարության անդամներին գրավոր հարցապնդումներով դիմելու իրավունք:</p> <p><b>Հոդված 113, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Կառավարության անդամները հարցապնդմանը պատասխանում են այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում:</p>	<p><b>Հոդված 80.</b></p> <p><b>Հոդված 80, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Պատգամավորներն իրավունք ունեն գրավոր և բավոր հարցերով, իսկ խմբակցությունները և խմբերը նաև հարցապնդումներով դիմելու կառավարությանը:</p> <p><b>Հոդված 80, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:</p>

<p><b>Հողված 113, մաս 2</b></p> <p>2. Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում: Խմբակցության առաջարկության հարցապնդման պատասխանը քննարկվում է: Եթե քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից ներկայացվում է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ, ապա կիրառվում են Սահմանադրության 115-րդ հոդվածի դրույթները: Հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:</p>	<p><b>Հողված 80, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:</p>
<p><b>Հողված 114. Հրատապ թեմայով քննարկումները</b></p> <p>Հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հոդված 115. Վարչապետին անվտանգություն հայտնելը</b></p> <p><b>Հոդված 115, մաս 1</b></p> <p>1. Վարչապետին անվտանգություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը միայն այն դեպքում, եթե որոշման նախագծով միաժամանակ առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու:</p> <p><b>Հոդված 115, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Վարչապետին անվտանգություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասունութ, և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամ հետո:</p> <p><b>Հոդված 115, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ:</p>	<p><b>Հոդված 84.</b></p> <p><b>Հոդված 84, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>Կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծը կարող է ներկայացվել Հանրապետության Նախագահի կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից:</p> <p><b>Հոդված 84, մաս 3</b></p> <p>Կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասունութ, և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում:</p> <p><b>Հոդված 84, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է անվտանգություն հայտնել կառավարությանը:</p>
--	--

<p><b>Հողված 115, մաս 2, նախադասություններ 3 և 4</b></p> <p>Որոշման ընդունման դեպքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել: Այս դեպքում Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-4-րդ մասերի դրույթները կիրառելի չեն:</p> <p><b>Հողված 115, մաս 3</b></p> <p>3. Վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան մեկ տարի հետո: Եթե վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո:</p> <p><b>Հողված 115, մաս 4</b></p> <p>4. Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 84, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ նման որոշման նախագիծ չի կարող ներկայացվել:</p>
--	---

<p><b>Հորված 116.</b> Միջազգային պայմանագրեր վավերացնելու կասեցնելը և չեղյալ հայտարարելը</p> <p><b>Հորված 116, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը՝</p> <p><b>Հորված 116, մաս 1, կետ 1</b></p> <p>1) որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին.</p> <p><b>Հորված 116, մաս 1, կետ 2</b></p> <p>2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ.</p>	<p><b>Հորվածներ 81. և 6.</b></p> <p><b>Հորված 81, մաս 1, կետ 2</b></p> <p>Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝</p> <p>2) վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:</p> <p><b>Հորված 81, մաս 1, կետ 2, ենթակետ «բ»</b></p> <p>բ) որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին,</p> <p><b>Հորված 81, մաս 1, կետ 2, ենթակետ «ա»</b></p> <p>ա) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ ...</p>
--	---

<p><b>Հողված 116, մաս 1, կետ 3</b></p> <p>3) որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը</p> <p><b>Հողված 116, մաս 1, կետ 4</b></p> <p>4) որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ.</p> <p><b>Հողված 116, մաս 1, կետ 5</b></p> <p>5) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր.</p> <p><b>Հողված 116, մաս 1, կետ 6</b></p> <p>6) որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում.</p> <p><b>Հողված 116, մաս 1, կետ 7</b></p> <p>7) որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 81, մաս 1, կետ 2, ենթակետ «գ»</b></p> <p>գ) որոնք ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Հայաստանի Հանրապետության համար,</p> <p><b>Հողված 81, մաս 1, կետ 2, ենթակետ «դ»</b></p> <p>դ) որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր,</p> <p><b>Հողված 81, մաս 1, կետ 2, ենթակետ «ե»</b></p> <p>ե) որոնցով նախատեսված է վավերացում,</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	---



<p><b>Հոդված 116, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, միջազգային պայմանագրերը վավերացնում, կասեցնում և չեղյալ է հայտարարում օրենքով՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p> <p><b>Հոդված 116, մաս 3</b></p> <p>3. Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:</p>	<p><i>Նախադրեսված չէ</i></p> <p><b>Հոդված 6, մաս 4, նախադասություն 4</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 117. Համաներումը</b></p> <p>Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել համաներման մասին օրենք:</p>	<p><b>Հոդված 81, մաս 1, կետ 1</b></p> <p>Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝</p> <p>1) հայտարարում է համաներում.</p>
<p><b>Հոդված 118. Պատերազմի հայտարարումը և խաղաղության հաստատումը</b></p> <p><b>Հոդված 118, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում:</p>	<p><b>Հոդված 81.</b></p> <p><b>Հոդված 81, մաս 1, կետ 3, նախադասություն 1</b></p> <p>Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝</p> <p>3) որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին:</p>

<p><b>Հողված 118, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Կառավարությունը:</p>	<p><b>Հողված 81, մաս 1, կետ 3, նախադասություն 2</b></p> <p>Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Հանրապետության Նախագահը:</p>
<p><b>Հողված 119. Ռազմական դրությունը</b></p> <p><b>Հողված 119, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղեղծով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:</p> <p><b>Հողված 119, մաս 2</b></p> <p>2. Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:</p>	<p><b>Հողվածներ 55. և 81.</b></p> <p><b>Հողված 55, կետ 13, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>13) Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին:</p> <p><b>Հողված 55, կետ 13, մաս 3</b></p> <p>Զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքերում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:</p>

<p><b>Հորված 119, մաս 3</b></p> <p>3. Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ոազմական գրությունը կամ չեղյալ հայտարարել ոազմական գրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:</p>	<p><b>Հորված 81, մաս 2</b></p> <p>Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել Սահմանադրության 55-րդ հորվածի 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացումը:</p>
<p><b>Հորված 119, մաս 4</b></p> <p>4. Ռազմական գրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>	<p><b>Հորված 55, կետ 13, մաս 4</b></p> <p>Ռազմական գրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով.</p> <p>Հորված 71. Օրենքները ... ընդունվում են քվեարկությամբ մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությամբ մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:</p>

<p><b>Հողված 120. Արտակարգ դրությունը</b></p> <p><b>Հողված 120, մաս 1</b></p> <p>1. Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:</p> <p><b>Հողված 120, մաս 2</b></p> <p>2. Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:</p> <p><b>Հողված 120, մաս 3</b></p> <p>3. Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:</p>	<p><b>Հողվածներ 55., 7.1 և 81.</b></p> <p><b>Հողված 55, կետ 14, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը 14) սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:</p> <p><b>Հողված 55, կետ 14, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հողված 81, մաս 2</b></p> <p>Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացումը:</p>
---	--

<p><b>Հոդված 120, մաս 4</b></p> <p>4. Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>	<p><b>Հոդված 55, կետ 14, մաս 3</b></p> <p>Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով:</p> <p><b>Հոդված 71.</b></p> <p>Օրենքները ... ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:</p>
<p><b>Հոդված 121. Վարչատարածքային միավորները և բաժանումը</b></p> <p><b>Հոդված 121, նախադասություն 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:</p> <p><b>Հոդված 121, նախադասություն 2</b></p> <p>Վարչատարածքային բաժանումը, հառավարության ներկայացմամբ, սահմանվում է օրենքով</p>	<p><b>Հոդվածներ 11.1. և 82.</b></p> <p><b>Հոդված 11.1.</b></p> <p>Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:</p> <p><b>Հոդված 82.</b></p> <p>Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ սահմանում է Հանրապետության վարչատարածքային բաժանումը:</p>

<p><b>Հողված 122. Ինքնավար մարմինները</b></p> <p>1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ:</p> <p>2. Ինքնավար մարմինների անդամները նշանակվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p> <p>3. Ինքնավար մարմիններին օրենքով կարող է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն:</p> <p>4. Ինքնավար մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 123. Հանրապետության նախագահի կարգավիճակը և գործառույթները</b></p> <p><b>Հողված 123, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահը պետության գլուխն է:</p>	<p><b>Հողված 49.</b></p> <p><b>Հողված 49, մաս 1</b></p> <p><i>Նույնն է</i></p>

<p><b>Հոդված 123, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը:</p> <p><b>Հոդված 123, մաս 3</b></p> <p>3. Հանրապետության նախագահն իր լիազորություններն իրականացնելիս անաչտ է և առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով:</p> <p><b>Հոդված 123, մաս 4</b></p> <p>4. Հանրապետության նախագահն իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով:</p>	<p><b>Հոդված 49, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը...</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 124. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջները</b></p> <p><b>Հոդված 124, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահն ընտրվում է յոթ տարի ժամկետով:</p>	<p><b>Հոդված 50.</b></p> <p><b>Հոդված 50, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահն ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով:</p>

<p><b>Հողված 124, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:</p> <p><b>Հողված 124, մաս 3</b></p> <p>3. Նույն անձը Հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:</p> <p><b>Հողված 124, մասեր 4-5</b></p> <p>4. Հանրապետության նախագահը չի կարող գրաղեցնել որևէ այլ պաշտոն, գրաղվել ձեռնարկատիրական գործունեությանը, կատարել վճարովի այլ աշխատանք:</p> <p>5. Հանրապետության նախագահն իր լիազորությունների հրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:</p>	<p><b>Հողված 50, մաս 2</b></p> <p>Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:</p> <p><b>Հողված 50, մաս 3</b></p> <p>Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	---



<p><b>Հոդված 125. Հանրապետության նախագահի ընտրության կարգը</b></p> <p><b>Հոդված 125, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից:</p> <p><b>Հոդված 125, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:</p> <p><b>Հոդված 125, մաս 3</b></p> <p>3. Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու հրավումք ունի պատգամավորների ընդհանուր թվի աննվազն մեկ քառորդը:</p>	<p><b>Հոդված 51.</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 51, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Հանրապետության Նախագահի ընտրությունը անցկացվում է նրա լիազորությունների ավարտից հիսուն օր առաջ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

**Հոդված 125, մաս 4**

4. Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների անցյալը և երեք քառորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Երկրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

**Հոդված 125, մաս 5**

5. Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա տասնօրյա ժամկետում անցկացվում է Հանրապետության նախագահի նոր ընտրություն:

**Հոդված 51, մասեր 2 - 4**

Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին:

Եթե քվեարկվել է երկուսից ավելի թեկնածու, և նրանցից ոչ մեկին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ, ապա քվեարկությունից հետո՝ տասնչորսերորդ օրը, անցկացվում է Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլ: Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլին կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Երկրորդ փուլում Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, սից քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:

**Հոդված 51, մաս 6**

Եթե Հանրապետության Նախագահ չի ընտրվում, ապա նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություն նշանակվելուց հետո՝ քառասուներորդ օրը:

<p><b>Հոդված 125, մաս 6</b></p> <p>6. Հանրապետության նախագահի ընտրության կարգի մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 126. Հանրապետության նախագահի արտահերթ ընտրությունը</b></p> <p>Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարակալի կամ մահվան դեպքերում Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց ոչ շուտ, քան քսանհինգ, և ոչ ուշ, քան երեսունհինգ օր հետո անցկացվում է Հանրապետության նախագահի արտահերթ ընտրություն:</p>	<p><b>Հոդված 53.</b></p> <p>Հանրապետության Նախագահի հրաժարակալի, մահվան, լիազորությունների կատարման անհնարինության կամ մահվան դեպքերում 57-րդ հոդվածով սահմանված կարգով նրան պաշտոնանկ անելու դեպքերում նշանակվում է Հանրապետության Նախագահի արտահերթ ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ քառասուներորդ օրը:</p>
<p><b>Հոդված 127. Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը</b></p> <p><b>Հոդված 127, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Հանրապետության նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը:</p>	<p><b>Հոդվածներ 51. և 54.</b></p> <p><b>Հոդված 51, մաս 7</b></p> <p>Հանրապետության Նախագահն իր պաշտոնն ստանձնում է Հանրապետության նախորդ Նախագահի լիազորությունների ավարտման օրը:</p>

<p><b>Հոդված 127, մաս 2</b></p> <p>2. Արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո՝ տասներորդ օրը:</p> <p><b>Հոդված 127, մաս 3</b></p> <p>3. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով և իմ ողջ ուժը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում»:</p>	<p><b>Հոդված 51, մաս 8</b></p> <p>Նոր կամ արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության նախագահը պաշտոնն ստանձնում է ընտրությունից հետո՝ քսաներորդ օրը:</p> <p><b>Հոդված 54.</b></p> <p>Հանրապետության նախագահը պաշտոնն ստանձնում է օրենքով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել նարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի»:</p>
<p><b>Հոդված 128. Հանրապետության նախագահի ուղերձը</b></p> <p>Հանրապետության նախագահն իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ կարող է ուղերձ հղել Ազգային ժողովին:</p>	<p><b>Հոդված 55, կետ 1</b></p> <p>Հանրապետության նախագահը՝</p> <p>1) ուղերձով դիմում է ժողովրդին և Ազգային ժողովին.</p>

<p><b>Հորված 129. Օրենքի ստորագրումը և հրապարակումը</b></p> <p><b>Հորված 129, մաս 1</b></p> <p>1. Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահն ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով:</p> <p><b>Հորված 129, մաս 2-3</b></p> <p>2. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:</p> <p>3. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հորվածով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:</p>	<p><b>Հորված 55.</b></p> <p><b>Հորված 55, կետ 2, մաս 1</b></p> <p>2) Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	--

<p><b>Հոդված 130. Կառավարության հրաժարականի ընդունումը</b></p> <p>Սահմանադրության 158-րդ հոդվածով սահմանված դեպքերում Հանրապետության նախագահն անհապաղ ընդունում է Կառավարության հրաժարականը:</p>	<p><b>Հոդված 55, կետ 4, մաս 3, նախադասություն 1</b></p> <p>Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, կառավարության անվստահություն հայտնվելու, կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը:</p>
<p><b>Հոդված 131. Փոփոխություններ Կառավարության կազմում</b></p> <p>Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:</p>	<p><b>Հոդված 55, կետ 4, մաս 2</b></p> <p>Հանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին:</p>

<p><b>Հոդված 132.</b> Հանրապետության նախագահի լիազորություններն արտաքին բաղաբաղականության բնագավառում</p> <p><b>Հոդված 132, մաս 1, կետ 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝</p> <p>1) Կառավարության առաջարկությամբ կնքում է միջազգային պայմանագրեր.</p> <p><b>Հոդված 132, մաս 1, կետեր 2 և 3</b></p> <p>1. Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝</p> <p>2) վարչապետի առաջարկությամբ նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին.</p> <p>3) ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը:</p>	<p><b>Հոդված 55.</b></p> <p><b>Հոդված 55, կետ 7</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ ...կնքում է միջազգային պայմանագրեր...,</p> <p><b>Հոդված 55, կետ 8</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 8) նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը.</p>
--	--

<p><b>Հոդված 132, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահը, Կառավարության առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացրած միջազգային պայմանագրերը:</p> <p><b>Հոդված 132, մաս 3</b></p> <p>3. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է բարձրագույն դիվանագիտական աստիճաններ:</p>	<p><b>Հոդված 55, կետ 7</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 7) ... կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացրած միջազգային պայմանագրերը.</p> <p><b>Հոդված 55, կետ 16</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 16) ... շնորհում բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ, բարձրագույն դիվանագիտական և այլ դասային աստիճաններ.</p>
<p><b>Հոդված 133. Հանրապետության նախագահի լիազորությունները զինված ուժերի բնագավառում</b></p> <p><b>Հոդված 133, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը:</p>	<p><b>Հոդված 55.</b></p> <p><b>Հոդված 55, կետ 12</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 12) ... նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը.</p>



<p><b>Հոդված 133, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ:</p>	<p><b>Հոդված 55, կետ 16, նախադասություն 2</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 16) ... շնորհում բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ ...</p>
<p><b>Հոդված 134. Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծումը</b></p> <p>Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:</p>	<p><b>Հոդված 55, կետ 15</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 15) օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը.</p>
<p><b>Հոդված 135. Ներում շնորհելը</b></p> <p>Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը:</p>	<p><b>Հոդված 55, կետ 17</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 17) ներում է շնորհում դատապարտյալներին:</p>

<p><b>Հողված 136. Պարզկատրույնը և պատվավոր կոչումների շնորհումը</b></p> <p>Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարզկատրույն է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում է պատվավոր կոչումներ:</p>	<p><b>Հողված 55, կետ 16</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 16) պարզկատրույն է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ ...</p>
<p><b>Հողված 137. Բարձրագույն դասային աստիճանների շնորհումը</b></p> <p>Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է բարձրագույն դասային աստիճաններ:</p>	<p><b>Հողված 55, կետ 16</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 16) ... շնորհում ... բարձրագույն դիվանագիտական և այլ դասային աստիճաններ.</p>

<p><b>Հոդված 138. Պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը</b></p> <p>Եթե Ազգային ժողովը եռամսյա ժամկետում Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 192-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 2-րդ մասով, 197-րդ հոդվածի 2-րդ մասով, 199-րդ հոդվածի 2-րդ մասով և 201-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձանց, ապա մինչև Ազգային ժողովի կողմից նրանց ընտրությունը Հանրապետության նախագահին օրենքով սահմանված հիմքերով և կարգով նշանակում է ժամանակավոր պաշտոնակատարներ:</p>	<p>Նախատեսված չէ</p>
<p><b>Հոդված 139. Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները</b></p> <p><b>Հոդված 139, մաս 1</b></p> <p>1. Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ:</p>	<p><b>Հոդված 56.</b></p> <p><b>Հոդված 56</b></p> <p>Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ...</p>

<p><b>Հողված 139, մասեր 2-3</b></p> <p>2. Հանրապետության նախագահը Սահմանադրության 131-137-րդ հոդվածներով, 155-րդ հոդվածի 3-րդ մասով, 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություններ կայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ դիմում է Սահմանադրական դատարան:</p> <p>3. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, ապա համապատասխան ակտն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 140. Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը</b></p> <p><b>Հողված 140, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահն անձեռնմխելի է:</p>	<p><b>Հողված 56.1.</b></p> <p><b>Հողված 56.1, մաս 1</b></p> <p><i>Նույնն է</i></p>

<p><b>Հոդված 140, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:</p> <p><b>Հոդված 140, մաս 3</b></p> <p>3. Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն իր լիազորությունների ավարտից հետո:</p>	<p><b>Հոդված 56.1, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 56.1, մաս 3</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 141. Հանրապետության նախագահի պաշտոնանկությունը</b></p> <p><b>Հոդված 141, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:</p>	<p><b>Հոդված 57.</b></p> <p><b>Հոդված 57, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար:</p>

<p><b>Հոդված 141, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան:</p> <p><b>Հոդված 141, մաս 3</b></p> <p>3. Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:</p>	<p><b>Հոդված 57, մաս 2</b></p> <p>Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան:</p> <p><b>Հոդված 57, մաս 3</b></p> <p>Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:</p>
<p><b>Հոդված 142. Հանրապետության նախագահի հրաժարականը</b></p> <p>Հանրապետության նախագահն իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը համարվում է ընդունված օրենքով սահմանված կարգով այն հրապարակելու պահից:</p>	<p><b>Հոդված 58.</b></p> <p>Հանրապետության Նախագահն իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետը լրանալուն պես, երկօրյա ժամկետում հրաժարականը կրկին ներկայացնելու դեպքում Հանրապետության Նախագահի հրաժարականը համարվում է ընդունված, և Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում անցկացվում է արտահերթ ընտրություն:</p>

<p><b>Հողված 143. Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինությունը</b></p> <p>Հանրապետության նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տևականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը, Սահմանադրական դատարանը կառավարության դիմումի հիման վրա որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին:</p>	<p><b>Հողված 59, նախադասություն 1</b></p> <p>Հանրապետության Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տևականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը, Ազգային ժողովը կառավարության առաջարկով և սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին:</p>
<p><b>Հողված 144. Հանրապետության նախագահի լիազորությունների ժամանակավոր կատարումը</b></p> <p>Հանրապետության նախագահի պաշտոնակության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը:</p>	<p><b>Հողված 60, նախադասություն 1</b></p> <p>Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտիր Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, Հանրապետության Նախագահի պարտականությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա վարչապետը:</p>

<p><b>Հոդված 145. Հանրապետության նախագահի գործունեության ապահովումը</b></p> <p><b>Հոդված 145, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահի աշխատակազմի ձևավորման կարգը սահմանվում է օրենքով:</p> <p><b>Հոդված 145, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Հանրապետության նախագահի աշխատակազմի պաշտոններում:</p> <p><b>Հոդված 145, մաս 2</b></p> <p>2. Հանրապետության նախագահի վարձատրության չափը, սպասարկման և անվտանգության ապահովման կարգը սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 61.</b></p> <p><b>Հոդված 61, նախադասություն 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը օրենքով սահմանված կարգով ձևավորում է իր աշխատակազմը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 61, նախադասություն 2</b></p> <p>Հանրապետության Նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման կարգը սահմանվում է օրենքով:</p>
---	---



<p><b>Հողված 146. Կառավարության կարգավիճակը և գործառույթները</b></p> <p><b>Հողված 146, մաս 1</b></p> <p>1. Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է:</p> <p><b>Հողված 146, մաս 2</b></p> <p>2. Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:</p> <p><b>Հողված 146, մաս 3</b></p> <p>3. Կառավարությունն իրականացնում է պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարումը:</p> <p><b>Հողված 146, մաս 4, նախադասություն 1</b></p> <p>4. Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:</p>	<p><b>Հողված 85.</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 85, մաս 1, նախադասություններ 1 և 2</b></p> <p>Կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 85, մաս 5</b></p> <p><i>Նույնն է</i></p>
--	--

<p><b>Հողված 146, մաս 4, նախադասություն 2</b></p> <p>Կառավարության իրավասության են ենթակա գործարարի իշխանությանը վերաբերող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների:</p>	<p><b>Հողված 85, մաս 1, նախադասություն 3</b></p> <p>Կառավարության իրավասության են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների:</p>
<p><b>Հողված 147. Կառավարության կազմը և կառուցվածքը</b></p> <p><b>Հողված 147, մաս 1</b></p> <p>1. Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:</p> <p><b>Հողված 147, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Նախարարությունների ցանկը և Կառավարության գործունեության կարգը Կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով:</p> <p><b>Հողված 147, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Փոխվարչապետների թիվը չի կարող գերազանցել երեքը, իսկ նախարարներինը՝ տասնութ:</p>	<p><b>Հողված 85.</b></p> <p><b>Հողված 85, մաս 3, նախադասություն 1</b></p> <p>Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից:</p> <p><b>Հողված 85, մաս 6</b></p> <p>Կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Կառավարության ... գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հոդված 148. Կառավարության անդամին ներկայացվող պահանջները</b></p> <p><b>Հոդված 148, մաս 1</b></p> <p>1. Կառավարության անդամը պետք է բավարարի պատգամավորին ներկայացվող պահանջները:</p> <p><b>Հոդված 148, մաս 2</b></p> <p>2. Կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրա համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:</p>	<p><b>Հոդվածներ 85. և 88.</b></p> <p><b>Հոդված 85, մաս 4</b></p> <p>Վարչապետը և նախարարները պետք է լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի:</p> <p><b>Հոդված 88</b></p> <p>Կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:</p>
<p><b>Հոդված 149. Վարչապետի ընտրությունը և նշանակումը</b></p> <p><b>Հոդված 149, մաս 1</b></p> <p>1. Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին:</p>	<p><b>Հոդված 55.</b></p> <p><b>Հոդված 55, կետ 4, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը</p> <p>4) Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին:</p>

**Հոդված 149, մասեր 2-5**

2. Վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջարկելու վարչապետի թեկնածուներ: Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջարկած վարչապետի թեկնածուները: Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

4. Վարչապետի ընտրությունն անցկացվում է անվանական քվեարկությամբ:

5. Հանրապետության նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին:

*Նախատեսված չէ*

<p><b>Հորված 150. Կառավարության կազմավորումը</b></p> <p><b>Հորված 150, նախադասություն 1</b></p> <p>Կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:</p> <p><b>Հորված 150, նախադասություն 2</b></p> <p>Իր նշանակումից հետո վարչապետը հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին առաջարկում է փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին:</p> <p><b>Հորված 150, նախադասություն 3</b></p> <p>Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան:</p> <p><b>Հորված 150, նախադասություններ 4-5</b></p> <p>Սահմանադրական դատարանը դիմումը քննում և որոշում է կայացնում հնգօրյա ժամկետում: Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով:</p>	<p><b>Հորված 55.</b></p> <p><b>Հորված 55, կետ 4, մաս 1, նախադասություն 3</b></p> <p>Կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հորված 55, կետ 4, մաս 2</b></p> <p>Հանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

<p><b>Հոդված 151. Կառավարության ծրագիրը</b></p> <p><b>Հոդված 151, մաս 1</b></p> <p>1. Կառավարության կազմավորումից հետո՝ քանօրյա ժամկետում, վարչապետն Ազգային ժողով է ներկայացնում Կառավարության ծրագիրը:</p> <p><b>Հոդված 151, մաս 2</b></p> <p>2. Ազգային ժողովը Կառավարության ծրագրին հավանություն է տալիս յոթնօրյա ժամկետում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>	<p><b>Հոդվածներ 74. և 74.1.</b></p> <p><b>Հոդված 74, նախադասություն 1</b></p> <p>Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քանօրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը:</p> <p><b>Հոդված 74, նախադասություններ 2-3</b></p> <p>Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ և քվեարկության դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>
--	--

<p><b>Հոդված 151, մաս 3</b></p> <p>3. Եթե Ազգային ժողովը հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին և Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան չի ընտրում նոր վարչապետ, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Եթե Ազգային ժողովն ընտրում է վարչապետին, սակայն կրկին հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:</p> <p><b>Հոդված 151, մաս 4</b></p> <p>4. Սույն հոդվածի 3-րդ մասը չի տարածվում Սահմանադրության 115-րդ հոդվածին հանապատասխան կազմավորված Կառավարության ծրագրի վրա: Եթե այդ Կառավարության ծրագիրը հավանության չի արժանանում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:</p>	<p><b>Հոդված 74.1, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	---

<p><b>Հոդված 152. Վարչապետի և Կառավարության մյուս անդամների իրավասությունները</b></p> <p><b>Հոդված 152, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը:</p> <p><b>Հոդված 152, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Վարչապետը կարող է Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ:</p> <p><b>Հոդված 152, մաս 1, նախադասություն 3</b></p> <p>Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p>	<p><b>Հոդվածներ 55., 85. և 87.</b></p> <p><b>Հոդված 87, մաս 1</b></p> <p>Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:</p> <p><i>Նախադեսված չէ</i></p> <p><b>Հոդված 55, կետ 6</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 6) կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդ և նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ:</p>
--	--



<p><b>Հոդված 152, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Փոխվարչապետները վարչապետի հանձնարարությամբ իրականացնում են Կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը:</p> <p><b>Հոդված 152, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Փոխվարչապետներից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ:</p> <p><b>Հոդված 152, մաս 3</b></p> <p>3. Յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը:</p> <p><b>Հոդված 152, մաս 4</b></p> <p>4. Կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:</p>	<p><i>Նախարեսված չէ</i></p> <p><b>Հոդված 85, մաս 3, նախադասություն 2</b></p> <p>Նախարարներից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ Հանրապետության Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վարչապետին վերջինիս բացակայության ժամանակ:</p> <p><i>Նախարեսված չէ</i></p> <p><b>Հոդված 87, մաս 2</b></p> <p>Վարչապետն ընդունում է որոշումներ՝ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով:</p>
---	---

<p><b>Հոդված 153. Կառավարության նիստերը և որոշումները</b></p> <p><b>Հոդված 153, մաս 1</b></p> <p>1. Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը:</p> <p><b>Հոդված 153, մաս 2</b></p> <p>2. Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը:</p> <p><b>Հոդված 153, մաս 3</b></p> <p>3. Կառավարությունն իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:</p>	<p><b>Հոդված 86.</b></p> <p><b>Հոդված 86, մաս 1</b> Նույնն է</p> <p><b>Հոդված 86, մաս 3</b> Նույնն է</p> <p>Նախատեսված չէ</p>
<p><b>Հոդված 154. Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը</b></p> <p><b>Հոդված 154, մաս 1</b></p> <p>1. Կառավարությունն իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականություն:</p>	<p><b>Հոդված 89.</b></p> <p><b>Հոդված 89, կետ 4</b> Կառավարությունը՝ 4) իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը.</p>

<p><b>Հորված 154, մաս 2</b></p> <p>2. Կառավարությունը կառավարում է պետական սեփականությունը:</p>	<p><b>Հորված 89, կետ 3</b></p> <p>Կառավարությունը՝</p> <p>3) կառավարում է պետական սեփականությունը.</p>
<p><b>Հորված 155. Զինված ուժերը</b></p> <p><b>Հորված 155, մաս 1</b></p> <p>1. Զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են: Զինված ուժերի կիրառման մասին որոշումն ընդունում է Կառավարությունը: Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման մասին որոշումը, պաշտպանության նախարարի առաջարկությամբ, կայացնում է վարչապետը և այդ մասին անհապաղ տեղեկացնում Կառավարության անդամներին:</p>	<p><b>Հորված 55.</b></p> <p><b>Հորված 55, կետ 12, նախադասություն 2 և կետ 13, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>12) ... համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում...</p> <p>13) Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին:</p>

<p><b>Հոդված 155, մասեր 2-3</b></p> <p>2. Պաշտպանության ուղղուի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը: Պաշտպանության նախարարն այդ հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է գինված ուժերի ղեկավարումը:</p> <p>3. Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով: Ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին:</p> <p><b>Հոդված 155, մաս 4</b></p> <p>4. Պատերազմի ժամանակ գինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է:</p> <p><b>Հոդված 155, մաս 5</b></p> <p>5. Զինված ուժերի ենթակայության, ղեկավարման, ինչպես նաև այլ մանրամասներ սահմանվում են օրենքով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 55, կետ 12</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝ 12) գինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է...</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	--

<p><b>Հոդված 156. Կառավարության տարեկան գեկույցն Ազգային ժողովին</b></p> <p>Յուրաքանչյուր տարվա համար Կառավարությունը գեկույց է ներկայացնում Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին:</p>	<p>Նախատեսված չէ</p>
<p><b>Հոդված 157. Կառավարության վստահության հարցը</b></p> <p><b>Հոդված 157, մաս 1</b></p> <p>1. Կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամկա ընթացքում: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ:</p> <p>Հոդված 157, մաս 2</p> <p>2. Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծն ընդունվելու դեպքում Կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված:</p>	<p><b>Հոդված 75.</b></p> <p><b>Հոդված 75, մաս 4</b></p> <p>Կառավարությունն իր կողմից ներկայացված օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Եթե կառավարության կողմից իր վստահության հարցը դնելուց հետո՝ քսանչորս ժամկա ընթացքում, Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը չի ներկայացնում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ կամ նման նախագիծ ներկայացվելու դեպքում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ 84-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված ժամկետում որոշում չի ընդունում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին, ապա վերջինիս ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված:</p>

<p><b>Հոդված 157, մաս 3</b></p> <p>3. Կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վստահության հարցը նույն նստաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ:</p> <p><b>Հոդված 157, մասեր 4-5</b></p> <p>4. Կառավարությունը սահմանադրական օրենքի նախագծի ընդունման առնչությամբ չի կարող դնել իր վստահության հարցը:</p> <p>5. Կառավարությունը չի կարող դնել իր վստահության հարցը ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:</p>	<p><b>Հոդված 75, մաս 5</b></p> <p>Կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վստահության հարցը նույն նստաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

<p><b>Հորված 158. Կառավարության հրաժարականը</b></p> <p>Կառավարությունը Հանրապետության նախագահին ներկայացնում է իր հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի, Կառավարությանը վստահություն չհայտնելու, Կառավարության ծրագրին հավանություն չառելու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր Կառավարության կազմավորումը:</p>	<p><b>Հորված 55, կետ 4, նախադասություն 3</b></p> <p>Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, կառավարության անվստահություն հայտնվելու, կառավարության ծրագրին հավանություն չառելու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Հանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության կազմավորումը:</p>
<p><b>Հորված 159. Պետական կառավարման համակարգի մարմինները</b></p> <p>Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հորված 85, մաս 6</b></p> <p>... Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:</p>

<p><b>Հոդված 160. Կառավարության տարածքային քաղաքականության իրագործումը</b></p> <p><b>Հոդված 160, մաս 1</b></p> <p>1. Կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով:</p> <p><b>Հոդված 160, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Մարզպետներին նշանակում և ազատում է Կառավարությունը:</p> <p><b>Հոդված 160, մաս 2, նախադասություն 2</b></p> <p>Մարզպետները համակարգում են պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:</p> <p><b>Հոդված 160, մաս 3</b></p> <p>3. Երևանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 88.1.</b></p> <p><b>Հոդված 88.1, մաս 2</b></p> <p>Մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը...</p> <p><b>Հոդված 88.1, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Մարզպետները նշանակվում և ազատվում են կառավարության որոշմամբ:</p> <p><b>Հոդված 88.1, մաս 2</b></p> <p>Մարզպետներն ... համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:</p> <p><b>Հոդված 88.1, մաս 3</b></p> <p><i>Նույնն է</i></p>
--	---



<p><b>Հոդված 161. Հանրային խորհուրդը</b></p> <p>Հանրային խորհուրդը կառավարության խորհրդակցական մարմին է: Հանրային խորհրդի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p>	<p>Նախատեսված չէ</p>
<p><b>Հոդված 162. Արդարադատության իրականացումը</b></p> <p><b>Հոդված 162, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:</p> <p><b>Հոդված 162, մաս 2</b></p> <p>2. Արդարադատության իրականացմանը որևէ միջանտույն արգելվում է:</p>	<p>Հոդված 91.</p> <p>Հոդված 91, մաս 1 Նույն է</p> <p>Նախատեսված չէ</p>

<p><b>Հոդված 163. Դատարանները</b></p> <p><b>Հոդված 163, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:</p> <p><b>Հոդված 163, մաս 2</b></p> <p>2. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:</p>	<p><b>Հոդված 92.</b></p> <p><b>Հոդված 92, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին աստիճանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:</p> <p><b>Հոդված 92, մաս 3</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 164. Դատավորի կարգավիճակը</b></p> <p><b>Հոդված 164, մաս 1</b></p> <p>1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:</p>	<p><b>Հոդվածներ 55., 83., 97. և 98.</b></p> <p><b>Հոդված 97, մաս 1</b></p> <p>Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին:</p>

**Հոդված 164, մաս 2**

2. Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնաձև կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

**Հոդված 164, մասեր 3 և 4**

3. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Սահմանադրական դատարանի նախագահը:

*Նախատեսված չէ*

4. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող գրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից գրկվել չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից գրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը:

**Հոդված 164, մաս 5**

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:

**Հոդված 97, մաս 3**

Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կայանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության: Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և համապատասխանաբար վճռաբեկ դատարանի նախագահը կամ սահմանադրական դատարանի նախագահը:

**Հոդված 97, մաս 2**

Դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրության և օրենքով:

<p><b>Հողված 164, մաս 6, նախադասություն 1</b></p> <p>6. Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:</p>	<p><b>Հողված 98, մաս 1</b></p> <p>Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:</p>
<p><b>Հողված 164, մաս 6, նախադասություն 2</b></p> <p>Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 164, մաս 7</b></p> <p>7. Դատավորը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ:</p>	<p><b>Հողված 98, մաս 2</b></p> <p>Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:</p>

**Հոդված 164, մաս 8**

8. Դատավորի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա հրաժարականի, մահվան դեպքերում:

**Հոդված 164, մաս 9**

9. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում:

**Հոդված 96, նախադասություններ 1 և 3**

Դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի են: ... Նրանց լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

**Հոդված 83, կետ 3**

Ազգային ժողովը՝

3) սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները, համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կայանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

<p><b>Հոդված 164, մասեր 10-11</b></p> <p>10. Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:</p> <p>11. Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:</p>	<p><b>Հոդված 55, կետ 10, մաս 2</b></p> <p>Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	--

**Հողված 165. Դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները**

1. Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:
2. Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է նշանակվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:
3. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:
4. Դատավորների թեկնածուները պետք է տիրապետեն հայերենին:
5. Դատավորների թեկնածուների համար Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

*Նախատեսված չէ*



<p><b>Հողված 166. Դատավորների ընտրության և նշանակման կարգը</b></p> <p><b>Հոդված 166, մաս 1</b></p> <p>1. Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորներ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ:</p>	<p><b>Հողվածներ 55., 83., 96.</b></p> <p><b>Հոդված 83, կետ 1</b></p> <p>Ազգային ժողովը՝</p> <p>1) Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ:</p> <p>2) սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսնորյա ժամկետում, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ:</p> <p><b>Հոդված 55, կետ 10, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>10) նշանակում է սահմանադրական դատարանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ:</p>
---	---

<p><b>Հոդված 166, մաս 2</b></p> <p>2. Սահմանադրական դատարանն իր կազմից՝ վեց տարի ժամկետով, ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի:</p> <p><b>Հոդված 166, մաս 3</b></p> <p>3. Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից:</p>	<p><b>Հոդված 83, կետ 2</b></p> <p>Ազգային ժողովը՝</p> <p>2) սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ:</p> <p><b>Հոդված 55, կետ 10, մաս 1</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>10) ... իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ:</p> <p><b>Հոդված 55, կետ 11</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>...</p> <p>11) արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին աստիճանի և մասնագիտացված դատարանների նախագահներին...</p>
---	--

<p><b>Հոդված 166, մաս 4</b></p> <p>4. Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ:</p>	<p><b>Հոդված 55, կետ 11</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>11) արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին...</p>
<p><b>Հոդված 166, մաս 5</b></p> <p>5. Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:</p>	<p><b>Հոդված 55, կետ 11</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>11) արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին...</p>
<p><b>Հոդված 166, մաս 6</b></p> <p>6. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:</p>	<p><b>Հոդված 55, կետ 11, նախադասություն 4</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>11) արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին.</p>

<p><b>Հոդված 166, մաս 7</b></p> <p>7. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, երեք տարի ժամկետով: Դատարանի նախագահին իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:</p> <p><b>Հոդված 166, մաս 8</b></p> <p>8. Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսունհինգ, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուն տարին լրանալը:</p> <p><b>Հոդված 166, մաս 9</b></p> <p>9. Դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով:</p>	<p><b>Հոդված 55, կետ 11</b></p> <p>Հանրապետության Նախագահը՝</p> <p>11) արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին...</p> <p><b>Հոդված 96, նախադասություն 2</b></p> <p>Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում են մինչև 65 տարին լրանալը:</p> <p><i>Նախադրեալված չէ</i></p>
--	---

<p><b>Հոդված 167. Սահմանադրական դատարանը</b></p> <p><b>Հոդված 167, մաս 1</b></p> <p>1. Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:</p> <p><b>Հոդված 167, մաս 2</b></p> <p>2. Արդարադատություն իրականացնելիս Սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը:</p> <p><b>Հոդված 167, մաս 3</b></p> <p>3. Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:</p>	<p><b>Հոդվածներ 93., 94. և 97.</b></p> <p><b>Հոդված 93.</b></p> <p>Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը</p> <p><b>Հոդված 97, մաս 1</b></p> <p>Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին:</p> <p><b>Հոդված 94, մաս 3</b></p> <p>Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով:</p>
--	--

<p><b>Հոդված 168. Սահմանադրական դատարանի լիազորությունները</b></p> <p>Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝</p> <p><b>Հոդված 168, կետ 1</b></p> <p>1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը.</p> <p><b>Հոդված 168, կետ 2</b></p> <p>2) մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը.</p> <p><b>Հոդված 168, կետ 3</b></p> <p>3) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.</p>	<p><b>Հոդված 100.</b></p> <p>Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝</p> <p><b>Հոդված 100, կետ 1</b></p> <p>1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 100, կետ 2</b></p> <p><i>Նույնն է</i></p>
--	---

<p><b>Հոդված 168, կետ 4</b></p> <p>4) լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը.</p> <p><b>Հոդված 168, կետ 5</b></p> <p>5) լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.</p> <p><b>Հոդված 168, կետ 6</b></p> <p>6) որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ.</p> <p><b>Հոդված 168, կետ 7</b></p> <p>7) եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 100, կետեր 3 և 3.1</b></p> <p>3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.</p> <p>3.1) լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 100, կետ 5</b></p> <p><i>Նույնն է</i></p>
--	---

<p><b>Հոդված 168, կետ 8</b></p> <p>8) որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին.</p> <p><b>Հոդված 168, կետ 9</b></p> <p>9) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.</p> <p><b>Հոդված 168, կետ 10</b></p> <p>10) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը.</p> <p><b>Հոդված 168, կետ 11</b></p> <p>11) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.</p>	<p><b>Հոդված 100, կետ 6</b></p> <p>6) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 100, կետ 7</b></p> <p>7) եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.</p> <p><b>Հոդված 100, կետ 7</b></p> <p>7) եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.</p>
---	---



<p><b>Հոդված 168, կետ 12</b></p> <p>12) օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ:</p>	<p><b>Հոդված 100, կետ 9</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 169. Սահմանադրական դատարան դիմելը</b></p> <p><b>Հոդված 169, մաս 1, կետ 1</b></p> <p>Սահմանադրական դատարան կարող են դիմել՝</p> <p>1) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված դեպքերում, Սահմանադրության 168-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, իսկ Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ.</p> <p><b>Հոդված 169, մաս 1, կետ 2</b></p> <p>2) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ կետերով սահմանված դեպքերում.</p>	<p><b>Հոդված 101.</b></p> <p><b>Հոդված 101, մաս 1, կետ 2</b></p> <p>Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝</p> <p>2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.</p> <p><b>Հոդված 101, մաս 1, կետ 3</b></p> <p>3) պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.</p>

<p><b>Հողված 169, մաս 1, կետ 3</b></p> <p>3) Ազգային ժողովի խմբակցությունը՝ հանրաքվեի և Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով:</p> <p><b>Հողված 169, մաս 1, կետ 4</b></p> <p>4) Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով, 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 150-րդ հոդվածով, ինչպես նաև 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում:</p> <p><b>Հողված 169, մաս 1, կետ 5</b></p> <p>5) Կառավարությունը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ և 12-րդ կետերով սահմանված դեպքերում:</p> <p><b>Հողված 169, մաս 1, կետ 6</b></p> <p>6) Բարձրագույն դատական խորհուրդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հողված 101, մաս 1, կետ 1</b></p> <p>1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում:</p> <p><b>Հողված 101, մաս 1, կետ 4</b></p> <p>4) Կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

<p><b>Հողված 169, մաս 1, կետ 7</b></p> <p>7) տեղական ինքնակառավարման մարմինները՝ Սահմանարության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանարությամբ համապատասխանության հարցով, ինչպես նաև Սահմանարության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում.</p>	<p><b>Հողված 101, մաս 1, կետ 5</b></p> <p>5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող ակտական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանարությամբ համապատասխանության հարցով.</p>
<p><b>Հողված 169, մաս 1, կետ 8</b></p> <p>8) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանարության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը.</p>	<p><b>Հողված 101, մաս 1, կետ 6</b></p> <p>6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.</p>

<p><b>Հոդված 169, մաս 1, կետ 9</b></p> <p>9) գլխավոր դատախազը՝ դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված դեպքում:</p> <p><b>Հոդված 169, մաս 1, կետ 10</b></p> <p>10) Մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:</p> <p><b>Հոդված 169, մաս 1, կետ 11</b></p> <p>11) Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերով:</p>	<p><b>Հոդված 101, մաս 1, կետ 7</b></p> <p>7) դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով:</p> <p><b>Հոդված 101, մաս 1, կետ 8</b></p> <p>8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	---

<p><b>Հոդված 169, մաս 1, կետ 12</b></p> <p>12) Հանրապետության նախագահի թեկնածուները՝ Հանրապետության նախագահի ընտրության արդյունքով ընդունված դրոշումների հետ կապված վեճերով:</p> <p><b>Հոդված 169, մաս 1, կետ 13</b></p> <p>13) Սահմանադրական դատարանի առնվազն երեք դատավոր՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված դեպքում:</p> <p><b>Հոդված 169, մաս 2</b></p> <p>2. Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխությանը, վերաբերող միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով: Քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը:</p>	<p><b>Հոդված 101, մաս 1, կետ 9</b></p> <p>9) Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	---

<p><b>Հոդված 169, մաս 3</b></p> <p>3. Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանն ղիմում է Կառավարությունը:</p> <p><b>Հոդված 169, մաս 4</b></p> <p>4. Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով ղիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:</p>	<p><b>Հոդված 101, մաս 1, կետ 1</b></p> <p>Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են ղիմել՝</p> <p>1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի ... 2 ... կետերով նախատեսված դեպքերում.</p> <p><b>Հոդված 101, մաս 1, կետ 7</b></p> <p>Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են ղիմել՝</p> <p>7) դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.</p>
---	---

<p><b>Հոդված 169, մասեր 5-6</b></p> <p>5. Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանն դիմում է Ազգային ժողովի խորհուրդը:</p> <p>6. Սահմանադրական դատարանն դիմելու կարգի մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով:</p> <p><b>Հոդված 169, մաս 7</b></p> <p>7. Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 101, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 170. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները</b></p> <p><b>Հոդված 170, մաս 1</b></p> <p>1. Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ:</p>	<p><b>Հոդված 102.</b></p> <p><b>Հոդված 102, մաս 1</b></p> <p>Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ՝ Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված ժամկետներում և կարգով:</p>

<p><b>Հոդված 170, մաս 2</b></p> <p>2. Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:</p> <p><b>Հոդված 170, մաս 3</b></p> <p>3. Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:</p> <p><b>Հոդված 170, մաս 4</b></p> <p>4. Սահմանադրական դատարանը Սահմանադրության 168-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ, բացառությամբ 7-րդ կետով նախատեսված հարցի, ընդունում է որոշումներ, իսկ 168-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված հարցով՝ եզրակացություն:</p>	<p><b>Հոդված 102, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 102, մաս 3</b></p> <p>Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:</p> <p><b>Հոդված 102, մաս 4, նախադասություն 1</b></p> <p>Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-4-րդ և 9-րդ կետերով նախատեսված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 5-8-րդ կետերով նախատեսված հարցերով՝ եզրակացություններ:</p>
---	--



<p><b>Հոդված 170, մաս 5</b></p> <p>5. Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ կետերով նախատեսված հարցերով որոշումները, ինչպես նաև եզրակացություններն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մյուս որոշումները՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p> <p><b>Հոդված 170, մաս 6</b></p> <p>6. Եթե Սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից:</p>	<p><b>Հոդված 102, մաս 4, նախադասություն 2</b></p> <p>Եզրակացությունները և 9-րդ կետով նախատեսված հարցերով որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մնացած որոշումները՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p> <p><b>Հոդված 102, մաս 5</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 171. Վճռաբեկ դատարանը</b></p> <p><b>Հոդված 171, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:</p>	<p><b>Հոդված 92.</b></p> <p><b>Հոդված 92, մաս 2</b></p> <p>Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Վճռաբեկ դատարանն է ...</p>

<p><b>Հողված 171, մաս 2, կետ 1</b></p> <p>2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝</p> <p>1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:</p>	<p><b>Հողված 92, մաս 2</b></p> <p>Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 171, մաս 2, կետ 2</b></p> <p>2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 172. Վերաքննիչ դատարանները</b></p> <p>Վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 173. Բարձրագույն դատական խորհուրդը</b></p> <p>Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հողված 174. Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը</b></p> <p><b>Հողված 174, մասեր 1-4</b></p> <p>1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից:</p> <p>2. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավոր- ների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր աստիճանների դատարաննե- րից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռա- բեկ դատարանի պալատի նախագահ:</p>	<p><b>Հողված 94.1.</b></p> <p><b>Հողված 94.1, մաս 2</b></p> <p>Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհա- նուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տա- րի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրա- վաբան-գիտնականներ:</p>
---	--

3. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական հրավույնք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառության իրավաբան գիտնականների և այլ հենդինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:

4. Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

#### **Հոդված 174, մասեր 5-7**

5. Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության պահանջներ:

6. Դատական օրենսգրքով կարող է սահմանվել Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ:

*Նախադրեւված չէ*

<p>7. Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներին:</p> <p><b>Հոդված 174, մաս 8</b></p> <p>8. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման մասնաճյուղերը սահմանվում են Դատական օրենսգրքով:</p>	<p><b>Հոդված 94.1, մաս 1</b></p> <p>Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդը:</p>
<p><b>Հոդված 175. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները</b></p> <p>Բարձրագույն դատական խորհուրդը՝</p> <p><b>Հոդված 175, մաս 1, կետ 1</b></p> <p>1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխարհացման ենթակա թեկնածուների ցուցակները:</p>	<p><b>Հոդված 95.</b></p> <p>Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝</p> <p><b>Հոդված 95, կետ 1</b></p> <p>1) կազմում և Հանրապետության Նախագահի հաստատման է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխարհացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները:</p>

<p><b>Հոդված 175, մաս 1, կետ 2</b></p> <p>2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակված ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.</p> <p><b>Հոդված 175, մաս 1, կետ 3 և 4</b></p> <p>3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակված ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.</p> <p>4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.</p> <p><b>Հոդված 175, մաս 1, կետ 5</b></p> <p>5) լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.</p>	<p><b>Հոդված 95, կետ 1</b></p> <p>1) կազմում և Հանրապետության Նախագահի հաստատման է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները.</p> <p><b>Հոդված 95, կետ 3</b></p> <p>3) առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները.</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	---

<p><b>Հողված 175, մաս 1, կետ 6</b></p> <p>6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.</p> <p><b>Հողված 175, մաս 1, կետ 7</b></p> <p>7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.</p> <p><b>Հողված 175, մաս 1, կետ 8</b></p> <p>8) լուծում է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը.</p>	<p><b>Հողված 95, կետ 5</b></p> <p>5) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կայանափոխելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրան կատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:</p> <p><b>Հողված 95, կետ 5</b></p> <p>5) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության...</p> <p><b>Հողված 95, կետ 5</b></p> <p>5) ... առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին ...</p>
---	--

**Հոդված 175, մաս 1, կետեր 9-10**

9) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

10) օրենքին համապատասխան ձևավորում է իր աշխատակազմը:

**Հոդված 175, մասեր 2-4**

2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

3. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

4. Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով:

*Նախատեսված չէ*

*Նախատեսված չէ*



<p><b>Հոդված 176. Դատախազությունը</b></p> <p><b>Հոդված 176, մաս 1</b></p> <p>1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:</p> <p><b>Հոդված 176, մաս 2</b></p> <p>2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝</p> <p><b>Հոդված 176, մաս 2, կետ 1</b></p> <p>1) հարուցում է քրեական հետապնդում:</p> <p><b>Հոդված 176, մաս 2, կետ 2</b></p> <p>2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:</p> <p><b>Հոդված 176, մաս 2, կետ 3</b></p> <p>3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը:</p>	<p><b>Հոդված 103.</b></p> <p><b>Հոդված 103, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:</p> <p><b>Հոդված 103, մաս 4</b></p> <p>Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝</p> <p><b>Հոդված 103, մաս 4, կետ 1</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 103, մաս 4, կետ 2</b></p> <p>2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ:</p> <p><b>Հոդված 103, մաս 4, կետ 3</b></p> <p><i>Նույնն է</i></p>
---	--

<p><b>Հոդված 176, մաս 2, կետ 4</b></p> <p>4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.</p> <p><b>Հոդված 176, մաս 2, կետ 5</b></p> <p>5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:</p> <p><b>Հոդված 176, մաս 3</b></p> <p>3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:</p> <p><b>Հոդված 176, մաս 4</b></p> <p>4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:</p>	<p><b>Հոդված 103, մաս 4, կետ 5</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 103, մաս 4, կետ 6</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հոդված 103, մաս 4, կետ 4</b></p> <p>Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝</p> <p>4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.</p> <p><b>Հոդված 103, մաս 5</b></p> <p><i>Նույնն է</i></p>
--	--

<p><b>Հոդված 176, մաս 5</b></p> <p>5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 177. Գլխավոր դատախազը</b></p> <p><b>Հոդված 177, մաս 1</b></p> <p>1. Գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ:</p> <p><b>Հոդված 177, մաս 2</b></p> <p>2. Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի համար օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:</p>	<p><b>Հոդված 103.</b></p> <p><b>Հոդված 103, մաս 2</b></p> <p>Գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հոդված 177, մաս 3</b></p> <p>3. Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ծայնների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:</p>	<p><b>Հոդված 103, մաս 3</b></p> <p>Օրենքով սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ծայնների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:</p>
<p><b>Հոդված 178. Քննչական մարմինները</b></p> <p>1. Քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը:</p> <p>2. Քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 179. Տեղական ինքնակառավարման իրավունքը</b></p> <p><b>Հոդված 179, մաս 1</b></p> <p>1. Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ հայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:</p>	<p><b>Հոդված 104.</b></p> <p><b>Հոդված 104, մաս 2</b></p> <p>Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:</p>

<p><b>Հոդված 179, մաս 2</b></p> <p>2. Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:</p>	<p><b>Հոդված 104, մաս 1</b></p> <p><i>Նույնն է</i></p>
<p><b>Հոդված 180. Համայնքը</b></p> <p><b>Հոդված 180, մաս 1</b></p> <p>1. Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է:</p> <p><b>Հոդված 180, մաս 2</b></p> <p>2. Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:</p>	<p><b>Հոդված 104.1.</b></p> <p><b>Հոդված 104.1, մաս 1</b></p> <p>Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է:</p> <p><b>Հոդված 104.1, մաս 2</b></p> <p>Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:</p>
<p><b>Հոդված 181. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները</b></p> <p><b>Հոդված 181, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:</p>	<p><b>Հոդված 107.</b></p> <p><b>Հոդված 107, մաս 1</b></p> <p>Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով, որոնք օրենքով սահմանված կարգով ընտրվում են չորս տարի ժամկետով:</p>

<p><b>Հոդված 181, մաս 1, նախադասություններ 2 և 3</b></p> <p>Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Համայնքի ղեկավարի ուղղակի ընտրության դեպքում կիրառվում են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները:</p> <p><b>Հոդված 181, մաս 2</b></p> <p>2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Ընտրական օրենսգրքով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 107, մաս 1</b></p> <p>Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով, որոնք օրենքով սահմանված կարգով ընտրվում են չորս տարի ժամկետով:</p>
<p><b>Հոդված 182. Համայնքի խնդիրները և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները</b></p> <p><b>Հոդված 182, մաս 1</b></p> <p>1. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով:</p>	<p><b>Հոդված 105.</b></p> <p><b>Հոդված 105, մաս 1</b></p> <p>Համայնքի սեփականությունը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ: Համայնքի սեփական լիազորությունների մի մասն օրենքով կարող է սահմանվել որպես պարտադիր:</p>

<p><b>Հոդված 182, մաս 2</b></p> <p>2. Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:</p> <p><b>Հոդված 182, մաս 3</b></p> <p>3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում:</p> <p><b>Հոդված 182, մաս 4</b></p> <p>4. Համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը: Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև:</p> <p><b>Հոդված 182, մաս 5</b></p> <p>5. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 105, մաս 2</b></p> <p>Պետական իշխանության մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:</p> <p><b>Հոդված 107, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ... ընդունում է համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր:</p> <p><b>Հոդված 107, մաս 3</b></p> <p>Համայնքի ղեկավարի լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով:</p> <p><i>Նախադասված չէ</i></p>
---	---

<p><b>Հոդված 183. Համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունը</b></p> <p><b>Հոդված 183, մաս 1</b></p> <p>1. Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:</p> <p><b>Հոդված 183, մաս 2</b></p> <p>2. Տեղական հանրաքվեի անցկացման կարգը, ինչպես նաև համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 107.</b></p> <p><b>Հոդված 107, մաս 4, նախադասություն 1</b></p> <p>Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:</p> <p><b>Հոդված 107, մաս 4, նախադասություն 2</b></p> <p>Տեղական հանրաքվեի անցկացման կարգը սահմանվում է օրենքով:</p>
<p><b>Հոդված 184. Համայնքի սեփականությունը</b></p> <p><b>Հոդված 184, մաս 1</b></p> <p>1. Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:</p>	<p><b>Հոդվածներ 105.1. և 107.</b></p> <p><b>Հոդված 104.1, մաս 2</b></p> <p>Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:</p>



<p><b>Հոդված 184, մաս 2</b></p> <p>2. Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:</p> <p><b>Հոդված 184, մաս 3</b></p> <p>3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:</p>	<p><b>Հոդված 105.1.</b></p> <p>Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողը, բացառությամբ պետական կարիքների համար անհրաժեշտ, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:</p> <p><b>Հոդված 107, մաս 2,</b></p> <p>Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը...</p>
<p><b>Հոդված 185. Համայնքի բյուջեն, տեղական հարկերը, տուրքերը և վճարները</b></p> <p><b>Հոդված 185, մաս 1</b></p> <p>1. Համայնքն ունի իր բյուջեն, որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է համայնքի ավագանին:</p> <p><b>Հոդված 185, մաս 2</b></p> <p>2. Համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:</p>	<p><b>Հոդված 106.</b></p> <p><b>Հոդված 106, մաս 1</b></p> <p>Համայնքներն իրենց բյուջեն ձևավորում են ինքնուրույն:</p> <p><b>Հոդված 106, մաս 2</b></p> <p>Համայնքների եկամուտների աղբյուրները սահմանվում են օրենքով:</p>

<p><b>Հոդված 185, մաս 3</b></p> <p>3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակներում սահմանում է տեղական հարկեր և տուրքեր:</p> <p><b>Հոդված 185, մաս 4</b></p> <p>4. Համայնքի ավագանին կարող է համայնքի մատուցած ծառայությունների համար սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ:</p>	<p><b>Հոդված 106, մաս 5, նախադասություն 1</b></p> <p>Համայնքները սահմանում են տեղական հարկեր և տուրքեր՝ օրենքով նախատեսված սահմաններում:</p> <p><b>Հոդված 106, մաս 5, նախադասություն 2</b></p> <p>Համայնքներն իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կարող են սահմանել վճարներ:</p>
<p><b>Հոդված 186. Համայնքի ֆինանսավորումը</b></p> <p><b>Հոդված 186, մաս 1</b></p> <p>1. Համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանվում են հարկային և ոչ հարկային այնպիսի աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների իրականացումն ապահովելու համար:</p> <p><b>Հոդված 186, մաս 2</b></p> <p>2. Համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:</p>	<p><b>Հոդված 106.</b></p> <p><b>Հոդված 106, մաս 3</b></p> <p>Օրենքով սահմանվում են համայնքների ֆինանսավորման այնպիսի աղբյուրներ, որոնք ապահովում են նրանց լիազորությունների իրականացումը:</p> <p><b>Հոդված 106, մաս 4</b></p> <p>Համայնքներին պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:</p>

<p><b>Հոդված 186, մաս 3</b></p> <p>3. Պետությունն իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 187. Տեղական ինքնակառավարումը Երևանում</b></p> <p>Երևանը համայնք է: Երևանում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 108, նախադասություններ 1 և 2</b></p> <p>Երևանը համայնք է: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:</p>
<p><b>Հոդված 188. Իրավական և մասնագիտական հսկողությունը</b></p> <p><b>Հոդված 188, մաս 1</b></p> <p>1. Համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն:</p>	<p><b>Հոդված 108.1.</b></p> <p><b>Հոդված 108.1, նախադասություն 2</b></p> <p>Համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողության կարգը սահմանվում է օրենքով:</p>

<p><b>Հոդված 188, մաս 2</b></p> <p>2. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական և մասնագիտական հսկողություն:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 189. Միջհամայնքային միավորումները</b></p> <p><b>Հոդված 189, մաս 1</b></p> <p>1. Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են ստեղծել միջհամայնքային միավորումներ: Հանրային շահերից ելնելով՝ միջհամայնքային միավորումներ կարող են ստեղծվել նաև օրենքով՝ Կառավարության առաջարկությամբ:</p> <p><b>Հոդված 189, մաս 2</b></p> <p>2. Միջհամայնքային միավորումը կարող է իրականացնել միայն այնպիսի լիազորություններ, որոնք նրան վերապահված են օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով:</p>	<p><b>Հոդված 110.</b></p> <p><b>Հոդված 110, մաս 3</b></p> <p>Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>

<p><b>Հոդված 189, մաս 3</b></p> <p>3. Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 190. Համայնքների միավորումը և բաժանումը</b></p> <p><b>Հոդված 190, նախադասություն 1</b></p> <p>Հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել:</p> <p><b>Հոդված 190, նախադասություն 2</b></p> <p>Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:</p>	<p><b>Հոդված 110.</b></p> <p><b>Հոդված 110, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել:</p> <p><b>Հոդված 110, մասեր 1, նախադասություններ 3-5</b></p> <p>Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից:</p>

<p><b>Հողված 191. Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները և լիազորությունները</b></p> <p><b>Հողված 191, մաս 1</b></p> <p>1. Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:</p> <p><b>Հողված 191, մաս 2</b></p> <p>2. Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին: Հաղորդումը կարող է պարունակել օրենսդրական կամ այլ բնույթի միջոցառումների վերաբերյալ առաջարկներ:</p>	<p><b>Հողված 83.1.</b></p> <p><b>Հողված 83.1, մաս 4</b></p> <p>Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
---	--

<p><b>Հոդված 191, մաս 3</b></p> <p>3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:</p> <p><b>Հոդված 191, մաս 4</b></p> <p>4. Մարդու իրավունքների պաշտպանի այլ լիազորությունները սահմանվում են Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով:</p>	<p><b>Հոդված 83.1, մաս 5</b></p> <p>Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք համագործակցում են մարդու իրավունքների պաշտպանի հետ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 192. Մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունը</b></p> <p><b>Հոդված 192, մաս 1</b></p> <p>1. Մարդու իրավունքների պաշտպանին Ազգային ժողովի իրավասու նշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:</p>	<p><b>Հոդված 83.1, մաս 1</b></p> <p>Ազգային ժողովը մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով:</p>

<p><b>Հոդված 192, մաս 2</b></p> <p>2. Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:</p>	<p><b>Հոդված 83.1, մաս 2</b></p> <p>Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող անձը, որը համապատասխանում է պատգամավորին ներկայացվող պահանջներին:</p>
<p><b>Հոդված 193. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները</b></p> <p><b>Հոդված 193, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Մարդու իրավունքների պաշտպանի վրա տարածվում է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիության իրավունքը:</p> <p><b>Հոդված 193, մաս 1, նախադասություն 2</b></p> <p>Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը Ազգային ժողովը լուծում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:</p>	<p><b>Հոդված 83.1.</b></p> <p><b>Հոդված 83.1, մաս 6</b></p> <p>Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>



**Հոդված 193, մասեր 2-5**

2. Մարդու իրավունքների պաշտպանի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

3. Մարդու իրավունքների պաշտպանն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նա պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն:

4. Պետությունն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը:

5. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները դադարում են նրա լիազորությունների ժամկետն ավարտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու, նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու, նրա մահվան, հրաժարականի դեպքերում:

*Նախատեսված չէ*

<p><b>Հոդված 193, մաս 6</b></p> <p>6. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այլ երաշխիքները սահմանվում են Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով:</p>	<p><b>Հոդված 83.1, մաս 6</b></p> <p>Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով:</p>
<p><b>Հոդված 194. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթները, լիազորությունները և ընտրական հանձնաժողովների համակարգը</b></p> <p>1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:</p> <p>2. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:</p> <p>3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության մասին:</p> <p>4. Ընտրական հանձնաժողովների համակարգը, ընտրական հանձնաժողովների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը, գործունեության երաշխիքները սահմանվում են Ընտրական օրենսգրքով:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>

**Հոդված 195. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը**

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է յոթ անդամից:
2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Սույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ներառյալ հանձնաժողովի նախագահ:
3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք:
4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

*Նախատեսված չէ*

<p>5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:</p> <p>6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:</p>	
<p><b>Հոդված 196. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները</b></p> <p><b>Հոդված 196, մաս 1</b></p> <p>1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:</p>	<p><b>Հոդված 83.2.</b></p> <p><b>Հոդված 83.2, նախադասություն 1</b></p> <p>Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից էլնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին...</p>

**Հոդված 196, մասեր 2-6**

2. Հետուատեսության և ուղիղի հանձնաժողովը հրապարակային և մրցութային կարգով հատկացնում է եթերային հաճախություններ:

3. Հետուատեսության և ուղիղի հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում հանրային հեռուստատեսությունում և ուղիղում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման նկատմամբ:

4. Հետուատեսության և ուղիղի հանձնաժողովը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության, հեռուստատեսությունում և ուղիղում տեղեկատվության ազատության վիճակի մասին:

5. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Հետուատեսության և ուղիղի հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

6. Հետուատեսության և ուղիղի հանձնաժողովի լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:

*Նախատեսված չէ*

<p><b>Հոդված 197. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմը և կազմավորման կարգը</b></p> <p><b>Հոդված 197, մաս 1</b></p> <p>1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը կազմված է յոթ անդամից:</p> <p><b>Հոդված 197, մաս 2, նախադասություն 1</b></p> <p>2. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայնների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:</p> <p><b>Հոդված 197, մաս 2, նախադասություններ 2 և 3</b></p> <p>Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ, ներառյալ հանձնաժողովի նախագահ:</p>	<p><b>Հոդված 83.2.</b></p> <p><i>Նախադրեալված չէ</i></p> <p><b>Հոդված 83.2.</b> Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ծայնների մեծամասնությամբ:</p> <p><i>Նախադրեալված չէ</i></p>
--	--

**Հոդված 197, մասեր 3-6**

3. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք, որը զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ է: Հանձնաժողովի անդամների նկատմամբ օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

4. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

4. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

5. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զուգակցություն:

*Նախատեսված չէ*

<p>6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Հետաատաեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:</p>	<p><b>Հոդված 198. Հաշվեքննիչ պալատի գործառույթները և լիազորությունները</b></p> <p><b>Հոդված 198, մաս 1</b></p> <p>1. Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ: Հաշվեքննիչ պալատն իրավաբանական անձանց մոտ ստուգումներ կատարելու իրավունք ունի միայն օրենքով սահմանված դեպքերում:</p> <p><b>Հոդված 198, մաս 2</b></p> <p>2. Հաշվեքննիչ պալատը գործում է իր հաստատած գործունեության ծրագրի հիման վրա:</p>
	<p><b>Հոդված 83.4.</b></p> <p><b>Հոդված 83.4, մաս 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:</p> <p><b>Հոդված 83.4, մաս 2</b></p> <p>Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը:</p>



<p><b>Հոդված 198, մաս 3, կետ 1</b></p> <p>3. Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողով է ներկայացնում՝</p> <p>1) տարեկան հաղորդում իր գործունեության վերաբերյալ:</p> <p><b>Հոդված 198, մաս 3, կետեր 2 և 3</b></p> <p>3. Հաշվեքննիչ պալատն Ազգային ժողով է ներկայացնում՝</p> <p>2) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը:</p> <p>3) օրենքով սահմանված դեպքերում՝ ընթացիկ եզրակացություններ:</p> <p><b>Հոդված 198, մաս 4</b></p> <p>4. Հաշվեքննիչ պալատի լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հոդված 83.4, մաս 3</b></p> <p>Վերահսկիչ պալատը տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 83.4, մաս 4</b></p> <p>Վերահսկիչ պալատի գործունեության կարգը և իրավասությունը սահմանվում են օրենքով:</p>
---	---

**Հողված 199. Հաշվեքննիչ պալատի կազմը և կազմավորման կարգը**

1. Հաշվեքննիչ պալատը կազմված է յոթ անդամից:
2. Հաշվեքննիչ պալատի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ պալատի նախագահ:
3. Հաշվեքննիչ պալատի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք: Հաշվեքննիչ պալատի անդամների նկատմամբ օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:
4. Հաշվեքննիչ պալատի անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրանց համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:
5. Հաշվեքննիչ պալատի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական գսավածություն:

*Նախատեսված չէ*

<p>6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:</p>	<p><b>Հոդված 200. Կենտրոնական բանկի հիմնական նպատակները և գործառույթները</b></p> <p><b>Հոդված 200, մաս 1</b></p> <p>1. Հայաստանի Հանրապետության ազգային բանկը Կենտրոնական բանկն է: Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս անկախ է:</p> <p><b>Հոդված 200, մաս 2</b></p> <p>2. Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են գների և ֆինանսական կայունության ապահովումը:</p>
	<p><b>Հոդված 83.3.</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 83.3, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է:</p>

<p><b>Հողված 200, մաս 3</b></p> <p>3. Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:</p> <p><b>Հողված 200, մաս 4</b></p> <p>4. Կենտրոնական բանկը թողարկում է Հայաստանի Հանրապետության արժույթը՝ հայկական դրամը:</p> <p><b>Հողված 200, մասեր 5-7</b></p> <p>5. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Կենտրոնական բանկն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:</p> <p>6. Կենտրոնական բանկը տարեկան հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության վերաբերյալ:</p> <p>7. Կենտրոնական բանկի այլ նպատակները, խնդիրները, գործունեության կարգը և երաշխիքները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հողված 83.3, մաս 1, նախադասություն 2</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><b>Հողված 83.3, մաս 2</b></p> <p><i>Նույնն է</i></p> <p><i>Նախադասված չէ</i></p>
--	---

<p><b>Հոդված 201. Կենտրոնական բանկի նախագահը և խորհուրդը</b></p> <p><b>Հոդված 201, մաս 1, նախադասություն 1</b></p> <p>1. Կենտրոնական բանկի խորհուրդը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նրա երկու տեղակալից և հինգ անդամից:</p> <p><b>Հոդված 201, մաս 1, նախադասություններ 2 և 3</b></p> <p>Կենտրոնական բանկի նախագահին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական բանկի նախագահ:</p> <p><b>Հոդված 201, մաս 1, նախադասություն 3</b></p> <p>Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով:</p>	<p><b>Հոդված 83.3.</b></p> <p><i>Նախատեսված չէ</i></p> <p><b>Հոդված 83.3, մաս 4</b></p> <p>Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Կենտրոնական բանկի նախագահ:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

**Հողված 201, մասեր 2-4**

2. Կենտրոնական բանկի խորհրդի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող և պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք: Կենտրոնական բանկի խորհրդի անդամների նկատմամբ օրենքով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ:

3. Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի մյուս անդամների վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի մյուս անդամներն իրավունք ունեն առևտրային կազմակերպություններում և հիմնադրամներում զբաղեցնելու իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոններ:

4. Կենտրոնական բանկի խորհրդի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական գուպվածություն:

*Նախատեսված չէ*

<p><b>Հողված 201, մաս 5</b></p> <p>5. Սույն հողվածի 3-րդ և 4-րդ մասերի պայմաններից որևէ մեկը խախտելու դեպքում Կենտրոնական բանկի նախագահի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, իսկ մյուս անդամներինը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p> <p><b>Հողված 201, մաս 6</b></p> <p>6. Կենտրոնական բանկի նախագահի, նախագահի տեղակալների և խորհրդի անդամների լիազորությունները սահմանվում են օրենքով:</p>	<p><b>Հողված 83.3, մաս 5</b></p> <p>Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել կենտրոնական բանկի նախագահին:</p> <p><i>Նախատեսված չէ</i></p>
--	--

<p><b>Հողված 202. Սահմանադրության ընդունումը և փոփոխությունը</b></p> <p><b>Հողված 202, մաս 1</b></p> <p>1. Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:</p>	<p><b>Հողված 111.</b></p> <p><b>Հողված 111, մասեր 1-2</b></p> <p>Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Սախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ:</p> <p>Հանրաքվեն նշանակում է Հանրապետության Սախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ: Համապատասխան որոշումը Ազգային ժողովն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>
---	--



<p><b>Հոդված 202, մասեր 2-3</b></p> <p>2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածների, Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:</p> <p>3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հոդված 203. Սահմանադրության անփոփոխելի հոդվածները</b></p> <p>Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն:</p>	<p><b>Հոդված 114.</b></p> <p>Սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն:</p>

**Հողված 204. Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հանրաքվեն**

1. Եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ վաթսուս օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով: Նման փոփոխություն կարող է կատարվել համապատասխան օրենքի ընդունումից առնվազն մեկ տարի հետո:

3. Հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև Հանրաքվեի մասին օրենքով սահմանված այլ հարցերի:

*Նախատեսված չէ*

<p><b>Հողված 205. Վերաբերողական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և տարածքի փոփոխության հարցերով հանրաքվեները</b></p> <p>1. Վերաբերողական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով:</p> <p>2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումը Կառավարության առաջարկությամբ ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>	<p><i>Նախատեսված չէ</i></p>
<p><b>Հողված 206. Հանրաքվեի նշանակումը</b></p> <p>Քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե անցկացվում է հանրաքվե նշանակվելուց ոչ 2ուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսունհինգ օր հետո:</p>	<p><b>Հողված 111, մաս 2</b></p> <p>Հանրաքվե նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ: Համապատասխան որոշումը Ազգային ժողովն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:</p>

<p><b>Հոդված 207. Հանրաքվեի դրված ակտի ընդունումը</b></p> <p>Հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը:</p>	<p><b>Հոդված 113.</b></p> <p>Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:</p>
<p><b>Հոդված 208. Հանրաքվե անցկացնելու արգելքը</b></p> <p>Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում:</p>	<p><b>Հոդված 44.</b></p> <p>Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:</p>
<p><b>Եզրափակիչ և անցումային դրույթներ</b></p> <p><b>Հոդված 209-220</b></p>	<p><b>Եզրափակիչ և անցումային դրույթներ</b></p> <p><b>Հոդվածներ 115-117</b></p>

**2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության  
առարկայական ցանկ<sup>1</sup>**

**Ա**

Ազատ գործելու իրավունք 39

Ազատությունից զրկելը 27, 96, 164, 168, 175, 193

Ազգային անվտանգության մարմին 44, 46

Ազգային բանկ, տե՛ս Կենտրոնական բանկ

Ազգային ժողով գլուխ 4.

- Ազգային ժողովի խորհուրդ 104, 169
- Ազգային ժողովի կանոնակարգ 88, 103, 104, 108, 125, 210
- Ազգային ժողովի նախագահ 104, 96, 100, 103, 129, 144
- Ազգային ժողովի նախագահի տեղակալ 104
- արձակում 149, 151
- ժամանակավոր հանձնաժողովներ 107
- լիազորություններ 103, 110-122
- լիազորությունների ժամկետ 90
- խմբակցություններ 105
- խորհրդարանական վերահսկողություն 88, 106, 111
- կազմ և ընտրության կարգ 89
- կարգավիճակ և գործառույթներ 88
- հատուկ նիստ 119, 120, 127
- հերթական և արտահերթ ընտրություն 91-93
- հրատապ թեմայով քննարկումներ 114
- մշտական հանձնաժողովներ 106, 108, 177, 192, 195, 197, 199, 201
- նիստերի իրավազորություն 102
- նիստերի հրապարակայնություն 101
- նստաշրջան կամ նիստ 99, 100, 104
- քննիչ հանձնաժողով 108
- օրենսդրական նախաձեռնության իրավունք 109
- օրենքների, որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունում 103

տե՛ս նաև Հաղորդումներ Ազգային ժողովին, Մեծամասնություն, Ներկայացուցչական մարմին

Ազգային ինքնություն 18, 56

<sup>1</sup> Հղումներն արված են Սահմանադրության նախաբանին, հոդվածներին և գլուխներին:

Ազգային միասնություն 127  
 Ազգային փոքրամասնություն 29, 56, 89  
 Ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակցվելը 86, տե՛ս նաև  
 Համամարդկային արժեք  
 Ակադեմիական ազատություն 38  
 Ամուսին 65  
 Ամուսնանալու ազատություն 35, տե՛ս նաև Ընտանիք  
 Այլընտրանքային ծառայություն 41, 57  
 Այլոց հիմնական իրավունքներ և ազատությունները՝ որպես հիմնական  
 իրավունքների սահմանափակման հիմք 25, 31-34, 40-42, 44, 45, 51, 58,  
 60  
 Անգործունակ 48, 98, 164, 193  
 Անկախության մասին հռչակագիր Սահմանադրության նախաբան  
 Անհամատեղելիության պահանջներ, տե՛ս Պատգամավոր, Կառավարու-  
 թյուն, Դատավոր, Բարձրագույն դատական խորհուրդ, Մարդու իրա-  
 վունքների պաշտպան, Կենտրոնական ընտրական հանձնաժողով,  
 Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով, Հաշվեքննիչ պալատ,  
 Կենտրոնական բանկ  
 Անհայտ բացակայող 98, 164, 193  
 Անհետաձգելի նախագիծ 109  
 Անձնական ազատություն 27  
 Անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ 29  
 Անձնական տվյալների պաշտպանություն 34  
 Անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք 26  
 Անմեղության կանխավարկած 66  
 Անմիջականորեն գործող իրավունք 3  
 Անվանական քվեարկություն 115, 149, 157  
 Անվստահություն հայտնելը, տե՛ս Ազգային ժողով, Վարչապետին անվստա-  
 հություն հայտնել  
 Անվտանգության խորհուրդ 152, 155  
 Անվտանգություն 14, 204, տե՛ս նաև Պետական անվտանգությունը՝ որպես  
 հիմնական իրավունքների սահմանափակման հիմք  
 Աշխատանք.  
 - աշխատաժամանակ 82  
 - աշխատանքային պայմաններ 82, 86  
 - աշխատանքի ազատ ընտրության իրավունք 57  
 - աշխատանքից ազատում 57  
 - աշխատավարձ 84  
 - բնակչության զբաղվածություն 86  
 - հարկադիր կամ պարտադիր աշխատանք 57

Աշխարհայացք 29

Ապացույց 63

Առողջության պահպանություն 85, 86

- *առողջությունը՝ որպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմք 25, 31-35, 40-42, 44, 45*

Առևտրային կազմակերպություն 95, 164, 201

Ավագանի 181, 7, 182, 184, 185, 189

Ավանդույթ 56

Արդար դատաքննության իրավունք 63

Արդարադատության խորհուրդ 214, տես նաև Բարձրագույն դատական խորհուրդ

Արդարադատություն 162, 164, 167, 171

- *արդարադատության շահերը՝ որպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմք 63*

Արդարացի քննություն 50, 63

Արդարացում 62

Արժանապատիվ գոյություն 84

Արժանապատվություն 3, 23

Արժույթ 200

Արհեստակցական միություն 45

Արձակուրդի իրավունք 57, 82

Արտակարգ դատարաններ 163

Արտակարգ դրություն 120, 76, 90, 91, 157, 208

Արտակարգ իրավիճակ 57

Արտաքին քաղաքականություն 13, 132, 146, տես նաև Քաղաքականություն

Արտաքսում 55, 27

## **Բ**

Բազմազավակություն 83, 86

Բազմակարծություն, տես Գաղափարախոսական բազմակարծություն

Բարեգործություն 86

Բարեկեցություն Սահմանադրության նախաբան, տես նաև Տնտեսական բարեկեցություն

Բարձրագույն արժեք 3

Բարձրագույն դատական խորհուրդ 173-175, 169, 164, 166, 214

Բարձրագույն իրավաբանական ուժ 5

Բարոյականությունը՝ որպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմք 25, 31-35, 40-42, 44, 45, 63

Բժշկական փորձ 25

Բյուջե.

- Կառավարության տարեկան հաշվետվություն բյուջեի կատարման մասին 111
- համայնքի բյուջե 185
- պետական բյուջեի ընդունում 88, 110
- պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն 111
- եկամուտներ և ծախսեր 109, 110, 185

Բնական պաշար 12

Բնակարանի անձեռնմխելիության իրավունք 32

Բնակարանային շինարարություն 86

## Գ

Գաղափարախոսական բազմակարծություն 8

Գենետիկական հատկանիշ 29

Գերագույն հրամանատար, տե՛ս Զինված ուժեր

Գերակա շահ 60

Գերիշխող դիրք 59

Գիտություն 15, 86

- գիտական աշխատանք 95, 164
- գիտական սպեղծագործություն 43
- գիտական փորձ 25

Գլխավոր շտաբի պետ, տե՛ս Զինված ուժեր

Գործադիր իշխանություն 4, 146, տե՛ս նաև Կառավարություն, Նախարար, Պետական կառավարման համակարգի մարմիններ, Վարչապետ

Գործադուլի իրավունք 58

Գործարար միջավայր 86

Գործունեության կարգ.

- Ազգային ժողովի 88
- Անվտանգության խորհրդի 152
- Բարձրագույն դատական խորհրդի 175
- Դատախազության 176
- ընտրական հանձնաժողովների 194
- ինքնավար մարմինների 122
- Կառավարության 147
- Կենտրոնական բանկի 200
- կրոնական կազմակերպությունների 41
- Հանրային խորհրդի 161
- Հաշվեքննիչ պալատի 198
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 196
- միավորումների 45
- Սահմանադրական դատարանի 167



- *քննչական մարմինների 178*

Գույքային վիճակ 29

## **Դ**

Դաշինք, տե՛ս Կուսակցություն

Դասային աստիճան 137

Դատախազություն գլուխ 7, 176

- *գլխավոր դատախազ 177, 169, 216*
- *դատախազ 44, 46*
- *Դատախազության մասին օրենք 176, 210*

Դատական ակտ 164, 171, 172

Դատական իշխանություն 4

- *Դատական օրենսգիրք 103, 164-166, 174, 175*
- *դատավորների ընդհանուր ժողով 166, 174, 213*
- *դատարաններ 162, 163, 174*
- *դատարանների ծախսերի նախահաշիվ 175*
- *վարչական դատարան 163*
- *վերադաս դատական ապյան 69*
- *վերաքննիչ դատարաններ 172*
- *Վճռաբեկ դատարան 171*

տե՛ս նաև Դատավոր, Բարձրագույն դատական խորհուրդ, Սահմանադրական դատարան

Դատական կարգ 60

Դատական պաշտպանության իրավունք 61

Դատական վարույթ 63

Դատապարտյալ 70, 135

- *դատապարտված անձ 48, 57, 62*

Դատապարտվածի բողոքարկման իրավունք 69

Դատավճիռ 48, 62, 66, 69, 98, 164, 176, 193

Դատավոր.

- *անաչառություն 164*
- *անկախություն 164, 173*
- *անհամարելիության պահանջներ 164*
- *անձեռնմխելիություն 164*
- *դատավորի կարգավիճակ 164, 44, 46,*
- *դատավորների ընտրության և նշանակման կարգ 166, 175*
- *դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջներ 165*
- *լիազորությունները դադարումը և դադարեցումը 164, 175*
- *կարգապահական պատասխանատվություն 164, 168, 175*
- *հրաժարական 164*

- վարձավորության չափ 164

Դատարան գլուխ 7, տե՛ս նաև Դատական իշխանություն

- անաչառություն 63

- անկախություն 63, 173

- դատարանի նախագահ 166, 175, 215

- դատարանի որոշում 32, 33, 36, 37, 45, 63

- դատարանի վճիռ 48, 98, 164, 176, 193

Դիվանագիտական աստիճան 132

Դիվանագիտական ներկայացուցիչ 132

Դրոշ 21

## **Ե**

Եթերային հաճախականություն 196

Եկեղեցի, տե՛ս Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի

Եկեղեցական արարողություն 41

Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ 5, 6, 122, 152, 153, 168, 171, 175, 182, 194, 196, 200

Եվգենիկական փորձ 25

Երաշխիք.

- գործունեության երաշխիք 97, 193, 194, 196, 198, 200

- տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքներ և պետության քաղաքականության հիմնական նպատակներ գլուխ 3

Երդում 127

Երեխայի իրավունքներ 36, 37

- դաստիարակություն 36, 86, 27

- երեխային աշխատանքի ընդունելը 57

- երեխայի շահեր 36, 37, 63

- երեխայի քաղաքացիություն 47

Երիտասարդություն 86

## **Զ**

Չենք 44

Չինանշան 21

Չինված հարձակում 119

Չինված ուժեր 14, 155, 44, 46, 133

- բարձրագույն հրամանատարական կազմ 133

- գերագույն հրամանատար 155

- գլխավոր շտաբի պետ 155

Զինվորական.

- ծառայություն 57
- կոչում 133

Զորահավաք 119

## Է

Էթիկա 107

Էթնիկ ինքնություն 56

Էթնիկ ծագում, տե՛ս Ծագում

## Ը

Ընդերք 10

Ընտանիք 16, 35

Ընտրական իրավունք 7, 48, 181

- Ընտրական օրենսգիրք 89, 103, 181, 194, 210
- ընտրելու իրավունք և ընտրվելու իրավունք 48

## Թ

Թարգմանիչ 67

## Ժ

Ժառանգելու իրավունք 60

Ժողովրդավարական պետություն 1, 2

- ժողովրդավարություն 8, 9

Ժողովուրդ Սահմանադրության նախաբան, 2, 8, 18, 88, 94, 119, 120, 127

## Ի

Ինքնավար մարմիններ 122

Ինքնիշխանություն 1, Սահմանադրության նախաբան

Իշխանության յուրացում 2

Իշխանությունների բաժանում և հավասարակշռում 4

Իրավաբանական անձ 74, 184, 198

- հանրային իրավունքի իրավաբանական անձ 180, 189

Իրավաբանական օգնություն 64

Իրավաբան գիտնական 174

Իրավական հսկողություն 188

Իրավական նորմերի աստիճանակարգություն 5

Իրավական պետություն 1

Իրավահավասարություն, տե՛ս Հավասարություն

Իրավաչափություն 27, 34, 62

Իրավունքի ուժով 108, 119, 120, 139, 149-151

## **L**

Լեզու 27, 29, 56, 67

- *հայոց լեզու 15, 19, 20*
- *պեղական լեզու 20*

## **Խ**

Խոշտանգում 26, 55

Խոսքի ազատություն, տե՛ս Կարծիքի արտահայտման ազատություն  
Խորհրդանիշեր 21

Խորհրդարանական մեծամասնություն 89, 149, տե՛ս նաև Կայուն խորհրդա-  
րանական մեծամասնություն

Խտրականության արգելք 29

## **Ծ**

Ծագում 29

- *էթնիկ, սոցիալական ծագում 29*

Ծիսակատարություն 41

Ծնելիություն 86

Ծնունդ 29

Ծնող 37, 47, 57

- *ծնողների իրավունքներ և պարտականություններ 36*
- *ծնողական խնամք 37*

## **Կ**

Կայուն զարգացում 12

Կայուն խորհրդարանական մեծամասնություն 89

Կառավարություն գլուխ 6.

- *Կառավարության կազմ և կառուցվածք 147*
- *Կառավարության անդամ 112, 113, 152, 155, 158, տե՛ս նաև Նախարար*
- *Կառավարության անդամին ներկայացվող անհամապետելիության պահանջներ 148*
- *Կառավարության անդամին ներկայացվող պահանջներ 148*
- *Կառավարության իրավասություն 152, 146*
- *Կառավարության ծրագիր 151, 146*
- *Կառավարության կազմավորում 150, 151, 158*
- *Կառավարության հրաժարական 158, 130, 212*
- *Կառավարության նիստ և որոշում 153*
- *Կառավարության վստահության հարց 157*
- *Կառավարության կարգավիճակ և գործառույթներ 146*
- *Կառավարության տարեկան զեկույց 156, 87*

տեն նաև Վարչապետ, Փոխվարչապետ, Նախարար  
Կարիքավոր.

- ծնող 36
- մարդ 84

Կարծիքի արտահայտման ազատություն 42, 37

Կենտրոնական բանկ 200, 201

- *անհամապեղելիության պահանջներ* 201
- *Կենտրոնական բանկի մասին օրենք* 200, 201, 210
- *Կենտրոնական բանկի նախագահ և տեղակալներ* 201
- *Կենտրոնական բանկի խորհուրդ* 201

Կենտրոնական ընտրական հանձնաժողով 194, 195

- *անհամապեղելիության պահանջներ* 195

Կին 30, 35, 57, 86

Կլոնավորում 25

Կյանքի իրավունք 24

Կոալիցիա, տեն Կուսակցություն

Կուսակցություն 8, 46, 168, 169

- *անդամագրվելու արգելք* 46, 124, 193, 195, 197, 199, 201
- *արգելք, գործունեության կասեցում* 46, 168, 169
- *փարեկան հաշվետվություն* 46
- *կուսակցությունների դաշինք* 89, 105, 169
- *կուսակցությունների կոալիցիա* 89
- *Կուսակցությունների մասին օրենք* 103, 8, 46, 210

Կրթություն 15, 36, 38, 86

Կրթական աշխատանք 95, 164

Կրկին դատվելու արգելք 68

Կրոն 29, 56

- *կրոնի ազատություն* 41
- *կրոնական կազմակերպություն* 17, 41

## Ը

Հաղորդակցության ազատություն և գաղտնիություն 33

Հաղորդումներ Ազգային ժողովին.

- *Կենտրոնական բանկ* 200
- *Կենտրոնական ընտրական հանձնաժողով* 194
- *Հաշվեքննիչ պալատ* 198
- *Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով* 196
- *Մարդու իրավունքների պաշտպան* 191

Համազգային.

- *նպատակներ Սահմանադրության նախաբան*

- *շահեր 123, 127*
- Համակարգում 152, 160
- Համամասնական ընտրակարգ 89
- Համայնք 121, 179-190, 217
  - *համայնքի պարտադիր և կամավոր խնդիրներ 182*
  - *համայնքի սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորություններ 182, 186, 188*
- տե՛ս նաև Տեղական ինքնակառավարում
- Համայնքի ղեկավար, տե՛ս Տեղական ինքնակառավարման մարմիններ
- Համաներում 117
  - *Համաներման մասին օրենք 117*
- Համաչափության սկզբունք 78
  - *պատժի համաչափության սկզբունք 71*
- Համամարդկային արժեք Սահմանադրության նախաբան
- Համապետական շահեր 123, 127
- Համոզմունք 41, 94
- Հայ 18, 19, 47
- Հայապահպանում 19
- Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի 18
- Հայոց պետականության հիմնարար սկզբունքներ Սահմանադրության նախաբան
- Հայրենադարձություն 19
- Հայրենիք Սահմանադրության նախաբան
- Հանձնարարական 152
- Հանձնում 55
- Հանրագիր 53
- Հանրային իշխանություն 3
- Հանրային իրավունքի իրավաբանական անձ, տե՛ս Իրավաբանական անձ
- Հանրային խորհուրդ 161
- Հանրային ծառայություն 49
- Հանրային շահ 47, 51, 58, 59, 122, 189, 190
- Հանրային ֆինանսներ 198
- Հանրապետության նախագահ գլուխ 5.
  - *անձեռնմխելիություն 140*
  - *արտահերթ ընտրություն 126*
  - *գործունեության ապահովում 145*
  - *ընտրության կարգ 125*
  - *լիազորություններ 128-138*
  - *լիազորությունների ժամանակավոր կատարում 144*
  - *լիազորությունների կատարման անհնարինություն 143*

- լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջներ 124
- կարգավիճակ և գործառույթներ 123
- հրաժարական 142
- հրամանագրեր և կարգադրություններ 139
- պաշտոնանկություն 141
- պաշտոնի ստանձնում 127
- վարձատրության չափ 145

Հանրապետություն 1, 2

Հանրաքվե 2, 7, 48, 168, 169, 183, 194, 202, 204-208

- Հանրաքվեի մասին օրենք 103, 204
- տեղական հանրաքվե 48, 183

Հանցագործություն 2, 72

- հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունք 72
- հանցագործությունների կանխում կամ բացահայտում՝ որպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմք 25, 27, 31-34, 40, 44, 47
- ծանր հանցագործություն 48, 141
- հանցանք 27, 62, 69, 71, 96, 164

Հաշմանդամություն 29, 83, 86

Հաշվեքննիչ պալատ 198-199

- անհամատեղելիության պահանջներ 199
- Հաշվեքննիչ պալատի մասին օրենք 198, 199, 210

Հասարակական կարգը՝ որպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմք 25, 31-34, 40-42, 44, 45, 63

Հավասարություն.

- իրավահավասարություն 30, 35, 86
  - փաստացի հավասարություն 86
  - օրենքի առջև ընդհանուր հավասարություն 28
- տե՛ս նաև Խտրականության արգելք

Հավատարմագիր 132

Հավաքների ազատություն 44

- ինքնաբուխ հավաք 44
- իրազեկում 44
- բացօթյա տարածքներում հավաք 44

Հարկ 60, 185, 204

Հարցապնդում 113

Հարցաքննություն 67

Հարցման ենթարկելը 67

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով 196, 197

- անհամատեղելիության պահանջներ 197

- Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենք 196, 197, 210
- Հեռուստատեսություն 42, 196
- Հետադարձ ուժ 72, 73
- Հետազոտությունների ազատություն 38
- Հետկանչագիր 132
- Հիմնական իրավունքներ և ազատություններ գլուխ 2.
  - արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներ 76
  - իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր 75
  - հարգում և պաշտպանություն 3
  - հիմնական իրավունքների վերաբերյալ դրույթների էության անխախտելիություն 80
  - չարաշահման արգելք 77
  - սահմանափակումներ 25, 31-36, 40-42, 44-48, 51, 58, 60, 81
  - սահմանափակումների հիմքեր, փեն Արդարադատություն, Պետական անվտանգություն, Հանցագործությունների կանխում կամ բացահայտում, Հասարակական կարգ, Առողջություն, Բարոյականություն, Տնտեսական բարեկեցություն, Պատիվ ու բարի համբավ, Այլոց հիմնական իրավունքներ և ազատություններ
  - սահմանափակումներին ներկայացվող պահանջներ 78-82
- Հիվանդություն 27, 83, 143

## **Ձ**

- Ձեռնարկատիրական գործունեություն 59, 95, 124, 164
  - ձեռնարկատիրություն 86
  - ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք 95, 124, 164, 193, 195, 197, 199, 201

## **Ղ**

- Ղեկավարում 152, 155, 176,
  - ընդհանուր ղեկավարում 146, 182

## **Մ**

- Մահապատիժ 24, 55
- Մամուլ 42
- Մայրաքաղաք 22
- Մայրություն 16, 57, 83
- Մանդատ.
  - հրամայական մանդատի արգելք 94
  - ներկայացուցչական մանդատ 94



տեն նաև Պատգամավոր

Մանկություն 16

Մաշկի գույն 29

Մասնագիտական հսկողություն 188, տեն նաև Իրավական հսկողություն

Մասնավոր կյանք 63

- մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիություն 31

Մարդասիրական վերաբերմունքի իրավունք 26

Մարդու իրավունքներ, տեն Հիմնական իրավունքներ և ազատություններ

Մարդու իրավունքների պաշտպան գլուխ 10, 169, 218

- անհամարեղելիության պահանջներ 193

- լիազորությունների դադարում 193

- հրաժարական 193

- Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունք 52

- Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենք 103, 191, 193, 210

- պատշաճ ֆինանսավորում 193

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ 61

Մարդու օրգաններ և հյուսվածքներ 25

Մարզ 121, 160

Մարզպետ 160

Մարմնական պատիժ, տեն Պատիժ

Մեծամասնություն.

- պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի մեծամասնություն 103, 125, 166, 169, 174, 177, 192, 193, 195, 197, 199, 201, 202

- պատգամավորների ընդհանուր թվի երեք քառորդի մեծամասնություն 125

- պատգամավորների ընդհանուր թվի երկու երրորդի մեծամասնություն 141, 202

- պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնություն 101, 104, 109, 115-120, 122, 125, 141, 149, 151, 157, 166, 169, 201, 205

- քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնություն 103

Մեղադրանք 27, 67, 176

Մեղադրանքից պաշտպանվելու իրավունք 67

Մեղք 66

- մեղքի սկզբունք 71

Մենաշնորհ 59

Մերձավոր ազգական 65

Միավորումների ազատություն 45

Մինչդատական քրեական վարույթ 176, 178

Միջազգային.

- *իրավունք 13, 19*
- *պայմանագիր 5, 55, 61, 81, 132, 204*
- *պայմանագրի վավերացում 116, 168*
- *պրակտիկա 81*
- *կազմակերպություն 111, 116, 132, տես նաև Վերպեդական միջազգային կազմակերպություն*

Միջամտող անհատական ակտ 50

Միջհամայնքային միավորումներ 189

Մշակույթ 15, 18, 42, 86, 196

Մտավոր սեփականություն, տես Սեփականություն

Մտքի, խղճի, կրոնի ազատություն, տես Կրոնի ազատություն

Մրցակցություն 59, 11

## **Ն**

Նախարար 147, 150, 152, տես նաև Կառավարության անդամ, Պաշտպանության նախարար

Նախարարություն 152, 159

- *նախարարությունների ցանկ 147*

Ներկայացուցչական մարմին 88

Նամակագրության գաղտնիության իրավունք, տես Հաղորդակցության ազատություն

Ներում.

- *ներման խնդրանքի իրավունք 70*
- *ներում շնորհելը 135*

Նոր կամ նոր երևան եկած հանգամանք 62, 68

## **Շ**

Շուկա 59

Շուկայական տնտեսություն 11

Շրջակա միջավայր 12

Շքանշան 136

## **Ո**

Ողջամիտ ժամկետ 27, 44, 50, 53, 63

Ոստիկանություն 44, 46

Որոշակիության սկզբունք 6, 79

## **Պ**

Պաշտամունք 41

Պաշտոնակատար 138

Պաշտոնատար անձ 2, 6, 50-53, 62, 108, 138, 155, 191

Պաշտպանության նախարար 155

Պատգամավոր.

- *անհամարեղելիության պահանջներ 95*
- *հրաժարական 98*
- *պարգամավորի անձեռնմխելիություն 96*
- *պարգամավորի բանավոր և գրավոր հարցեր 112*
- *պարգամավորի լիազորությունների դադարում և դադարեցում 98, 168*
- *պարգամավորին ներկայացվող պահանջներ 48*
- *վարձարրության չափ 97*

Պատերազմ 77, 119, 155

- *պարերազմի հայտարարում և խաղաղության հաստատում 118*

Պատիժ 26, 71, 72

- *անմարդկային կամ նվաստացնող պատիժ 26*
- *մարմնական պատիժ 26*
- *պատժի համաչափության սկզբունք, տե՛ս Համաչափության սկզբունք*

Պատիվ և բարի համբավ.

- *որպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմք 42*
- *պարվի և բարի համբավի անձեռնմխելիություն 31*

Պատվավոր կոչում 136

Պատվիրակված լիազորություններ 182, 186, 188

Պարտադիր վճար 60, 185, 204

Պետական անվտանգությունը՝ որպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմք 25, 31-34, 40-42, 44, 45, 47, 63

Պետական դավաճանություն 141

Պետական լեզու, տե՛ս Լեզու

Պետական կառավարման համակարգի մարմիններ 146, 159, 160

Պետական մարմին 2, 6, 34, 42, 50-53, 62, 87, 95, 108, 164, 173, 182, 191, 194, 196, 198

Պետական շահեր 123, 127, 176

Պետական իշխանություն 4

Պետության քաղաքականության նպատակներ, տե՛ս Քաղաքականություն, Երաշխիք

## **Ջ**

Ջրային ռեսուրսներ 10

## **Ռ**

Ռադիո 42, 196

Ռազմականացված մարմին 44, 46

Ռազմական դրություն 119, 76, 90, 91, 115, 157, 208

Ռասա 29

## Ս

Սահմանադրական արդարադատություն 167

Սահմանադրական դատարան.

- *անկախություն 167*
- *լիազորություններ 168, 46, 129, 139, 143, 150, 204*
- *կարգավիճակ 163, 167*
- *Սահմանադրական դատարանի դիմելը 169*
- *Սահմանադրական դատարանի մասին օրենք 103, 164-169*
- *Սահմանադրական դատարանի նախագահ 164, 166, 213*
- *Սահմանադրական դատարանի փոխնախագահ 166*
- *Սահմանադրական դատարանի որոշումներ և եզրակացություններ 170*
- *Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցում 164, 168*

Սահմանադրական կարգ, գլուխ 1, 120

- *սահմանադրական կարգի բռնի տապալում 46, 77*

Սահմանադրական մարմին 168

Սահմանադրական օրենք 5, 103, 157, 204

Սահմանադրության գերակայություն 167, տե՛ս նաև Բարձրագույն իրավաբանական ուժ

Սահմանադրության ընդունում և փոփոխություն 202

- *անփոփոխելի հոդվածներ 203*

Սահմանների անձեռնմխելիություն 14

Սեռ 29

Սեփականություն 10, 60

- *բացառիկ սեփականություն 10*
- *համայնքի սեփականություն 184*
- *հողի սեփականություն 60*
- *մասնավոր սեփականություն 11*
- *մտավոր սեփականություն 60*
- *պետական սեփականություն 154*
- *սեփականության օտարում 60*
- *սեփականությունից զրկում 60*
- *տիրապետում, օգտագործում և տնօրինում 60*

Սոցիալական ապահովություն 83

Սոցիալական արդարություն 11

Սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիք, տե՛ս Երաշխիք

Սոցիալական ծագում, տե՛ս Ծագում

Սոցիալական շուկայական տնտեսություն, տե՛ս Շուկայական տնտեսություն  
Սոցիալական պետություն 1  
Սոցիալական շահ 58  
Սպառողների շահեր 86  
Սպորտ 86  
Ստեղծագործական աշխատանք 95, 164  
Ստեղծագործության ազատություն 43  
Սփյուռք 19

## **Վ**

Վարչական դատարան, տե՛ս Դատական իշխանություն  
Վարչական մարմին 50  
Վարչական վարույթ 50  
Վարչապետ 147

- *անվտանգություն հայտնելը 115, 113*
- *ընտրություն և նշանակում 149*
- *իրավասություն 131-133, 152, 153, 155*
- *իրաժարական 115, 149*

Վարչատարածքային միավորներ, բաժանում 121  
Վարչարարություն 50, 62  
Վերահսկիչ պալատ 220, տե՛ս նաև Հաշվեքննիչ պալատ  
Վերաքննիչ դատարան, տե՛ս Դատական իշխանություն  
Վերպետական միջազգային կազմակերպություն 169, 205  
Վճռաբեկ դատարան, տե՛ս Դատական իշխանություն  
Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ 166, 175, 215  
Վնասի հատուցման իրավունք 62

## **Տ**

Տարածքային ամբողջականություն 14  
Տարածքային կառավարում 160  
Տարածքային համաչափ զարգացում 86  
Տարեց մարդ 84  
Տարիք 29  
Տեղական ինքնակառավարում 9, գլուխ 9, տե՛ս նաև Համայնք  
Տեղական ինքնակառավարման մասին օրենք 182-190  
Տեղական ինքնակառավարման մարմիններ 2, 6, 34, 42, 48, 50-53, 62, 87,  
95, 108, 146, 164, 169, 179, 181, 182, 191, 194, 217

- *ավագանի 181, 182, 184, 185, 189, 217*
- *համայնքի ղեկավար 181, 182, 185, 217*

Տեղաշարժվելու իրավունք 40

Տեղեկություններ ստանալու իրավունք 51

Տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու  
ազատություն 42

Տղամարդ 30, 35, 86

Տնտեսական բարեկեցություն 11

- *որպես հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք 31-34*

Տնտեսական գործունեության ազատություն 11, 59

Տնտեսական կարգ 11

Տուրք 60, 185, 204

## **Ց**

Ցուցմունք 65, 67

Ցույց, տե՛ս Հավաքների ազատություն

## **ՈՒ**

Ուղերձ 103, 107, 119, 120, 128

Ուսումնական հաստատություն 38

## **Փ**

Փաստաբան 64, 67

Փաստաբանություն 64

Փաստաթղթերին ծանոթանալու իրավունք 50, 51

Փոխվարչապետ 147, 150, 152

## **Ք**

Քաղաքական ապաստան 54

Քաղաքական գործունեության արգելք 164, 193, 195, 197, 199, 201

Քաղաքական կամ այլ հայացքներ 29

Քաղաքական կամք 8, 105

Քաղաքականություն 11, 19, 152, 155, 160, 200

- *արտաքին քաղաքականություն 13, 132, 146*

- *ներքին քաղաքականություն 146*

- *պեղծության քաղաքականության նպատակներ 87, տե՛ս նաև Երաշխիք*

- *տարածքային քաղաքականություն 160*

- *տնտեսական և ֆինանսական քաղաքականություն 154*

Քաղաքական չեզոքություն 14

Քաղաքացիաիրավական պարտավորություններ 27

Քաղաքացիական նախաձեռնություն 109, 169, 204, 206

Քաղաքացիական վերահսկողություն 14

Քաղաքացիական համերաշխություն Սահմանադրության նախաբան

Քաղաքացիություն 47, 48, 98, 134, 164, 193

- միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի 48, 124, 165, 174, 177

- այլ պետության քաղաքացի 60, 98, 164, 193

- քաղաքացիություն չունեցող անձ 48, 60

Քարոզ 41

Քարոզելը 46, 77

Քննիչ 44, 46

Քննչական մարմիններ գլուխ 7, 178

Քրեական հետապնդում 96, 164, 168, 175, 176, 193

## **O**

Օրենսդիր իշխանություն 4, 88, տե՛ս նաև Ազգային ժողով

Օրենսդրական երաշխիքներ և պետության քաղաքականության հիմնական նպատակներ տե՛ս Երաշխիք

Օրենք 4-6, 8, 14, 18, 21, 25, 27, 28, 31-42, 44-54, 56-60, 62-66, 68-73, 75, 76, 79, 82-85, 97, 103, 106-110, 116, 117, 120-122, 129, 132-138, 142, 145-148, 152, 155, 157, 159-169, 171, 172, 175-179, 182-191, 193-201, 203, 204, 206, 210, 217, 220

- միապետակ կիրառություն 171

Օրինականության սկզբունք 6, տե՛ս նաև Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունք

Օրհներգ 21

## **Ֆ**

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք 25

Ֆիզկուլտուրա 86

Ֆինանսական կայունություն 200

ՎԱՐԴԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
2015 Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՄԱՌՈՏ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

VARDAN POGHOSYAN NORA SARGSYAN

**CONSTITUTION OF THE REPUBLIC OF ARMENIA  
IN THE VERSION OF 2015  
BRIEF EXPLANATIONS**

ВАРДАН ПОГОСЯН НОРА САРГСЯН

**КОНСТИТУЦИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
В РЕДАКЦИИ 2015 Г.  
КРАТКИЕ РАЗЪЯСНЕНИЯ**

Պատվեր՝ 2493: Տպաքանակ՝ 20000:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում